ԱՎԵՏԻՍ ԱՀԱՐՈՆՅԱՆ

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻՑ ՄԻՆՉԵՎ ՍԵՎՐ ԵՎ ԼՈՋԱՆ

ԱՎԵՏԻՍ ԱՀԱՐՈՆՅԱՆ

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻՑ ՄԻՆՉԵՎ ՍԵՎՐ ԵՎ ԼՈՋԱՆ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Հ. Յ. Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷԻ

ԱՒԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆ

ՍԱՐԴԱՐԱՊԵՏԻՑ

ՄԻՆՉԵՒ

ՍԵՒՐ ԵՒ ԼՈՉԱՆ

(ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԳԻՐ)

«ՀԱՅՐԵՆԻՔ»Ի ՏՊԱՐԱՆ
ՊՈՍԹՐՆ
1943

9(47.925)
Հ-42

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՎԵՏԻՍ ԱՀԱՐՈՆՅԱՆ

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻՑ

ՄԻՆՉԵՎ

ՍԵՎՐ ԵՎ ԼՈՉԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԳԻՐ
1919-1927

3211

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 2001

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Ա 420

Հրատարակության պատրաստեց՝ Լ.Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ա 420 Ահարոնյան Ա. - Սարդարապատից մինչև Սևր և Լոզան: ԵՊՀ.-Եր.:Երևանի համալս. հրատ., 2001, 252 էջ:

«Սարդարապատից մինչև Սևր և Լոզան» քաղաքական օրագրությամբ հայ նշանավոր արձակագիր Ավետիս Ահարոնյանը ընթերցողին ներկայանում է դիվանագիտական, պետական ու ազգային գործունեությամբ:

Գիրքն ընդգրկում է Հայոց պատմության շրջադարձային փուլում՝ 20-րդ դարի սկզբներին, Հայաստանի նորանկախ Հանրապետության արտաքին քաղաքականության բանակցային ոլորտը՝ դեպքերի հանգամանալից նկարագրությամբ, քաղաքական այրերով, նուրբ մանրամասներով:

Նյութը ներկայացված է գրական արևելահայերենի ուղղագրությամբ՝ հրնթացս վերացնելով նախորդ հրատարակության (Բոստոն, 1943 թ.) տպագրական վրիպակները: Հավելվել են նոր ծանոթագրություններ՝ շեղ տառատեսակով, անձնանունների և տեղանունների ցանկեր:

Ուսանելի է պատմաբանների, քաղաքագետների, դիվանագետների, Հայաստանի և հարակից երկրների պատմություններով հետաքրքրվողների համար:

Ա $\frac{0503020913}{704(02)}$ 2001 ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 5-8084-0374-X
© Երևանի համալս. հրատ., 2001 թ.





ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայաստանի Պատվիրակության նախագահի հան-գամանքով, Ավետիս Ահարոնյան, հարկավ, պաշտոնական զեկուցագրերով օրավուր հաղորդած է Հայաստանի Կա-ռավարության Պատվիրակության կատարած աշխատու-թյուններու մասին: Սակայն, այդ պաշտոնական զեկու-ցագրերու հետ զուգընթաց ան պահած է նաև իր անձ-նական օրագիրը, որուն մեջ օրը օրին արձանագրած է, երբեմն ընդարձակ, երբեմն հապճեպ և հակիրճ կերպով, Եվրոպայի և Ամերիկայի պետական գոր-ծիչներուն հետ Հայոց Հարցի մասին իր ունեցած տեսակ-ցություններեն և զրույցներեն ստացած տպավորությունները:

Հայության համար պատմական մեծ արժեք ներ-կայացնող այդ խիստ շահեկան ու հետաքրքրական օրա-գիրն է ահա, որ կուտանք ներկա հատորով՝ արտատպելով «Հայրենիք» ամսագրեն:

Իբր ծանոթություն ավելորդ չենք նկատեր հոս հիշելու, որ օրագիրը գրված է չորս տետրակներու մեջ, գրեթե ամբողջու-թյամբ Ա. Ահարոնյանի ձեռքով: Քանի մը էջեր միայն թելադրված են անոր կողմե և գրի առնված Հայաստանի Հանրապետության Պատվիրակության քար-տուղար Գ. Ղազարյանի, գանձապահ հանգուցյալ Հ. Քոչարյանի և Վ. Ահարոնյանի կողմե:

Օրագրի քանի մը տասնյակ էջեր գրված են զատ թերթիկներու վրա, երբ, իր ճամփորդություններու ըն-թացքին, Ա. Ահարոնյան ձեռքի տակ չէ ունեցած իր օրագրի տետրակները: Այսպես, օրինակ, բազմաթիվ էջեր գրված են Լոնդոնի Hotel Rembrandt-ի նամակաթղթերուն վրա:

Օրագիրն սկսված է 1919-ի փետրվարի 10-ին և դադարեցված 1927-ի սեպտեմբերի 27-ին:

Այս օրագիրը գրական տեսակետով մշակության կամ նույնիսկ սրբագրության չէ ենթարկված հեղինակի կողմեն և կիրատարակվի այնպես, ինչպես որ գրի առնված է առաջին անգամ, երբեմն հապճեպ, թռուցիկ կերպով: Այդ թերու-թյունը,

սակայն, բնավ չի կարող նսեմացնել օրագրի պատմական արժեքը:

Ավելորդ չենք նկատեր հիշատակել նաև, որ հատորիս վերնագիրը՝ «Սարդարապատից մինչև Սևր և Լոզան» հեղինակինը չէ, այլ տրված է խմբագրության կողմե՝ նկատի ունենալով օրագրի բովանդակությունը:

Ծանոթությունները գրված են խմբագրության կողմե:[1]

[1] *Շեղ տառատեսակով տրված են երկրորդ հրատարակության ծանոթագրությունները:*

ԶՐՈՒՅՑ
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ Ս. ՊԻՇՈՆԻ ՀԵՏ

Փետրվար 10, 1919

Ներկայացանք Փաշայի[2] հետ:

– Թույլ տվեք ինձ, պ. նախարար, հանուն Հայաստանի Հանրապետության, ողջունելու Ձեզ՝ ազնիվ Ֆրանսիայի ներկայացուցչին և ասելու, որ շնորհիվ ձեր փառավոր ու քաջարի բանակի հաղթության՝ արդարությունն ու իրավունքը աշխարհում տիրապետող դարձան: Հայաստանը, համայն հայ ժողովուրդը, ազգերի փրկության սեղանի վրա, Դաշնակիցների կողքին, դրեց բոլորն ինչ ուներ, անգամ իր գոյությունը: Մասնավորապես, մենք մեն-մենակ բռնեցինք ռուսների լքած ճակատը, որ, կարող եմ ասել հպարտությամբ իմ ազգի համար, դարձավ հայկական ճակատ: Հանուն Դաշնակիցների, հանուն Ֆրանսիայի ամբողջ 8 ամիս մենք կռվեցինք թուրք–թաթարական–քրդական կոալիցիայի դեմ: Ձենք համարձակվում մտածել և հուսալ, թե փառապանծ Ֆրանսիան պիտի սքանչանա մեր ժողովրդի անձնվիրությամբ և արիության գործերով, քանի որ Հանրապետական Ֆրանսիան էր, որ սքանչացրեց աշխարհը, բայց խնդրում եմ հավատալ, որ մենք հայերս մինչև վերջը լիապես կատարեցինք մեր պարտքը: Ես եկած եմ հանուն Հայաստանի Հանրապետության ասելու այս բոլորը և լսելու Դաշնակիցների խոսքը մեր բախտի վճռական տնօրինության համար:

Ս. Պիշոն. – Զգացված եմ և Ձեր ազնիվ զգացումների համար շնորհապարտ: Խնդրում եմ հավատալ՝ Հայաստանի Դատն ու ապագան միշտ խիստ մոտ է եղել Ֆրանսիայի սրտին և մոտ էլ կլինի միշտ: Ֆրանսիան միշտ պատրաստ է հզորապես աջակցել ձեր ժողովրդի փրկության գործի լավագույն ելքի համար:

Ես. – Շնորհակալ եմ, պ. նախարար, և երջանիկ եմ, որ առա-

[2] Պողոս Նուպար Փաշա, նախագահ Ազգային Պատվիրակության

ջին դիմումը Ֆրանսիային ենք ուղղում: Մեզ մեծ ցավ է պատճառել, որ հակառակ մեր այնքան անշահախնդիր և անվերապահ անձնվիրության՝ ազգերի դատին այսօր Հայաստանը belligerant[3] չէ նկատված և չէ ընդունված Խաղաղության Կոնգրեսում:

Ս. Պիշոն. – Ճշմարիտ է, այդ ցավալի է, բայց նկատի առեք, որ Կոնգրեսում մասնակցում են միայն կազմակերպված պետությունները:

Ես. – Անշուշտ: Սակայն, եթե Թուրքա-Հայաստանը տակավին պետություն չէ, Կովկասյան Հայաստանը, որ պատիվ ունեմ ներկայացնել, արդեն շուտով 10 ամիս է՝ ինչ պետություն է՝ կազմակերպված ու հաստատուն: Կարծում եմ, որ հայության Հանրապետությունը կարող էր և իրավունք ուներ ընդունվելու Խաղաղության Կոնգրեսում, քանի որ յուգո-սլավները[4], արաբները, չեխո-սլովակները ընդունված են: Մեզ մերժելու պատճառը լավ չեմ հասկանում:

Ս. Պիշոն. – Ռուսական պրոբլեմը կա:

Ես. – Կարծում եմ, սակայն, որ ռուսական պրոբլեմը ընկնում է Լեհաստանի փաստով, Ֆինլանդիայի անկախությամբ, Բեսարաբիայի զիջումով Ռումանիային[5]:

Ս. Պիշոն. – Ֆինլանդիան տարբեր պարագա է, Լեհաստանը ճանաչել են իրենք՝ ռուսները, իսկ Բեսարաբիան իրենք՝ դարձյալ ռուսները, թեև բոլշևիկ, Բրեստ-Լիտովսկի դաշնագրով զիջել են իրենց բշնամուն:

Ես. – Բավական նշանակալից անալոգիա[6] կա մեր և Բեսարաբիայի մեջ: Ռուսները ոչ միայն մեզ լքեցին ու հեռացան, թողնելով մեզ ժառանգություն մի պատերազմ, որ մեր ուժերից վեր էր միանակ տանել, այլև նույն Ձեր հիշատակած դաշնագրով մեր երկրի մի քանի մասերը՝ Կարս, Արդահան, Կաղզվան զիջեցին թուրքերին:

Ս. Պիշոն. – Իրավունք ունիք, այո, իրավունք ունիք, անալոգիա կա: Ներկայացրեք մեր գրույցի իմաստով մի հիշատակագիր Խաղաղության Կոնգրեսին, և ես Ձեզ խոստանում եմ իմ լիակատար աջակցությունը:

Այդ հիշատակագիրը ես ներկայացրի Կոնգրեսին:

[3] Համապատերազմիկ, պատերազմող:

[4] Հարավսլավցիներ:

[5] Ռումինիա:

[6] Նմանություն:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
TEMPS[7] ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐԱՊԵՏ HERBETTE-Ի ՀԵՏ

Փետրվար 15, 1919

Ես. – Պ. խմբագրապետ,– ասացի ես,– Դուք կամեցել էիք մի ինտերվյու[8] հրատարակել ձեր թերթում մեր խնդրի մասին: Շնորհակալ եմ և պատրաստ եմ տալ այդ ինտերվյուն:

J. Herbette. – Այդ շատ լավ. բայց Դուք գիտեք, որ Կիլիկիան մեզ հետաքրքրում է առանձնապես, ուստի չեք զարմանա, եթե ես իմ զրույցն սկսեմ Կիլիկիայից: Ի՞նչ է Ձեր կարծիքը Կիլիկիայի մասին:

Ես. – Հայաստանը միշտ թույլ է մնացել, ի միջի այլոց, ծովի պակասությունից, մանավանդ մեծ ծովի: Ձեզ չեմ զարմացնի, եթե ասեմ, որ մեր անցյալի և շատ մոտիկ անցյալի դառն փորձերից խրատված՝ մենք ստիպված ենք, այո, անպատճառ ելք ունենալ դեպի Միջերկրական: Եվ այս, նկատի առեք, ոչ թե Կիլիկիայի բամբակի կամ այլ հարստության համար, այլ որովհետև մենք Արևմուտքի ազգերեն մեկն ենք, ընկած Ասիայի մեջ և պետք է մեր ճամփան բաց լինի դեպի Արևմուտք: Այս պատերազմը ցույց տվեց, որ առանց ծովի, եթե նույնիսկ մեր բարեկամ պետությունները կամենան, չպիտի կարողանան մեզ օգնության հասնել վտանգի ժամին, ինչպես չկարողացան Դաշնակիցները, հակառակ իրենց կամքի:

J. Herbette. – Կիլիկիան ստանալու ձեր ցանկությունը ինձ խիստ տխրեցնում է, Ֆրանսիան չի կարող համաձայնել ձեզ հետ:

Ես. – Բայց, ներեցեք, մենք մինչև այժմ ենթադրել ենք, թե մեր հակառակորդը Կիլիկիայի խնդրում Սյուրիան[9] է, և ոչ թե Ֆրանսիան: Մեզ համար խորունկ ցավ է, որ Ֆրանսիան մեզ հակառակորդ նկատի:

J. Herbette. – Ֆրանսիան դարերե ի վեր ահագին շահեր ունի Կիլիկիայում, իսկ դուք՝ հայերդ...

Ես. – Ներեցեք, պ. խմբագրապետ, Կիլիկիան չորս դար հայ պետություն է ունեցել, և վերջին թագավորը Լևոն V-ը[10] տակավին հանգչում է St. Denis-ի գերեզմանատունը՝ այստեղ,

[7] Ֆրանսական կառավարութեան կիսապաշտոնական թերթը:

[8] Տեսակցութիւն: *Հարցազրույց:*

[9] *Սիրիա:*

[10] *Գուցե տպագրական վրիպակ է: Կիլիկիայի վերջին թագավորը Լևոն Զ.-VI - (Լուսինյան)-ն է, որը թաղվել է Կոնստանդնյանց վանքում: Տապանաքարը փոխադրվել է Սեն-Դընի արքայական դամբարանը Ֆրանսիական մեծ հեղափոխությունից հետո:*

Փարիզում, ձեր թագավորների շարքում: Կարծեմ սա բավարար տիտղ[11] է, եթե ուրիշ հիմունքներ չունենայինք:

J. Herbette. – Դա հին բան է, պատմական իրավունքը հաշվի առնելու չէ: Կիլիկիան պիտի կցվի Սյուրիային, որ առանց Կիլիկիայի ապրել չի կարող:

Ես. – Հայաստանը նույնպես աղքատ և շատ աղքատ երկիր է, և առանց Կիլիկիայի ապրել չի կարող, մանավանդ առանց Միջերկրականի: Հայ ժողովրդի համակրությունները դեպի Ֆրանսիան չափազանց խորն են և հաստատ, որպեսզի նա կարողանա որևէ վատ զգացում տածել դեպի Ֆրանսիան: Իրապես չափազանց արտասովելի կլինի, եթե Ֆրանսիան կամենա մեզնից շորթել Կիլիկիան՝ Սյուրիային կցելու համար:

J. Herbette. – Շատ ցավում եմ և ես, որ Հայաստանը, տակավին չկազմակերպված, իմպերիալիստական[12] հողեր է առնում:

Ես. – Հեռու լինի մեզնից իմպերիալիզմը, որ այնքան ծիծաղելի է, երբ կցվում է այսօր հայ անվան: Ձեզ բացատրեցի այն պայմանները, որոնք մեզ հրամայողաբար թելադրում են Կիլիկիան պահանջել: Եթե չկարողացա Ձեզ համոզել, շատ ցավում եմ:

Մի քանի օր հետո՝ փետրվար 27-ին, Temps-ը, խոսելով մեր պահանջների մասին՝ Կոնգրեսին ներկայացրած, հոդվածի վերջավորությանը գրել էր՝ «L'Empire Arménien» – Հայկական Կայսրություն:

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՆԳՐԵՍՈՒՄ

I

Փետրվար 25, 1919

Երեկ՝ փետրվար 24-ի երեկոյան, ինձ մոտ ընթրիքի էին Westerman, ժուրնալիստ[13] ամերիկացի Gibbons, Պողոս Փաշա, Հովհաննես Խան և Աճեմյան[14]:

[11] Իրավունքի հիմ:

[12] Աշխարհակալական:

[13] *Ժուռնալիստ, լրագրող:*

[14] Հովհաննես Խան Մասեհյան այդ ժամանակ Պարսկաստանի դիվանագիտական ներկայացուցիչն էր Լոնդոնի մեջ, Շեյքսպիրի գործերի հայերեն թարգմանիչը: Մ. Աճեմյան՝ Ռուսաստանի Պետական Դումայի հայազգի պատգամավորներեն մեկն էր:

Ընթրիքից վերջը անակնկալ կերպով ստացա Խաղաղության Կոնգրեսի հրավերը՝ հաջորդ օրը, ճաշից հետո, ժամը 4-ին ներկայանալ Տասնի Խորհրդին[15] հայկական պահանջները ներկայացնելու: Բոլոր ներկաներին այդ ուրախություն պատճառեց, մնում էր միայն ճշտել՝ թե արդյոք Պողոս Փաշա՞ն էլ ստացել է նման հրավեր, թե՞ ոչ: Հավատացած էինք, որ նույնպիսի հրավեր ղրկված կլինի Փաշայի բնակարանը:

Հեռախոսով եղած հարցումը, սակայն, բացասական պատասխան ստացավ: Անհանգիստ եղանք ամենքս էլ, իսկ Փաշան հուզված էր մինչև զայրույթ և շտապով տուն գնաց: Քիչ հետո՝ մեկնեց նաև Westerman՝ մի քանի գործնական խորհուրդներ տալուց հետո, խոստանալով հաջորդ առավոտ ինձ մոտ գալ դարձյալ մի քանի ձևական նշանակություն ունեցող հարցերի մասին խոսելու: Մեկնեց նաև Gibbons:

Ես արտակարգ նիստ հրավիրեցի Պատվիրակության, ներկայությամբ իմ, Օհանջանյանի, Վարանդյանի[16], Աճեմյանի, Հովհաննես Խանի՝ հաջորդ օրվա իմ ասելիքները, որ վաղուց հետե պատրաստել էի, նրանց քննության բովից անցնելու համար:

Մտքերի փոխանակությունից հետո, որոշվեց՝ եթե Փաշան մինչև վաղը չհրավիրվի, և ես մենակ մնամ Կոնգրեսում, ապա ամբողջական Հայաստանի Դատը պաշտպանեմ ինքս. իսկ եթե Փաշան հաջողեցնի ներկայանալ, այդ դեպքում, ես պիտի ծանրանամ Կովկասյան Հայաստանի քաղաքական ու էտնոգրաֆիական[17] և փաստական գոյության վրա, իսկ Փաշան պաշտպանելու է Թուրքաց Հայաստանի իրավունքը, և երկուսս վճռապես, առանց վերապահության, պիտի հայարարենք և պնդենք հայության երկու խոշոր հատվածների անդառնալի որոշման վրա՝ միանալ իրար հետ և կազմել Միացյալ Հայաստան – Խրամ գետից ու Ղարաբաղից սկսյալ մինչև Կիլիկիա, մինչև Միջերկրականի ափերը: Միաժամանակ, մասնավորապես Կովկասյան Հայաստանի Հանրապետության ճանաչումը պիտի պահանջեի, ինչպես և նրա արժանի տեղը Կոնգրեսում, որպես կովող պետություն՝ Etat belligérant[18]:

---

[15] Conseil de Dix (ֆրանս.) - Տասնի Խորհուրդ:

[16] Բժ. Համո Օհանջանյան՝ Պատվիրակության անդամ, իսկ 1920-ին Հայաստանի Հանրապետության վարչապետ: Միքայել Վարանդյան՝ Նուբար Փաշայի գլխավորած Ազգային պատվիրակության անդամ:

[17] Ազգագրական:

[18] Համապատերազմիկ, *պատերազմող պետություն:*

Փետրվար 26

Համապատասխան մտքով թուղթ պատրաստեցի գիշերը և հաջորդ առավոտ, մինչև ժամը 12-ը, մեր բարեկամ Վիկտոր Բերարի սիրալիր աջակցությամբ: Եվ այդ իսկ ժամին իմացա Փաշայից, որ նա, չստանալով հրավեր, շտապել է Անգլիական պատվիրակություն, դիմել Սըր Լուի Մալլինեռին, ու նրա հետ միասին գնացել են Բալֆուրի մոտ: Բալֆուրը ապա հեռախոսով դիմել է Ֆրանսիական Արտաքին Գործոց նախարար Ս. Պիշոնին, որ նախագահն էր Խաղաղության Կոնգրեսի՝ Կլեմանսոյի[19] հիվանդության պատճառով, և Պիշոնը համաձայնել է Պողոս Փաշայի ներկայությանը Կոնգրեսում:

Այսպիսով, թեև առանց գրավոր պաշտոնական հրավերի, Պողոս Փաշային հաջողվեց ներկայանալ Կոնգրեսին ինձ հետ միասին:

Ուստի, ըստ մեր կանխավ համաձայնության՝ Պողոս Փաշայի հետ.

Ես պիտի խոսեի առաջինը;

Ես պիտի ծանրանայի Հայաստանի Հանրապետության իրավունքների վրա, իսկ Փաշան՝ Թուրքաց Հայաստանի և մասնավորապես պետք է ուժ տար Կիլիկիայի Խնդրին;

Երկուսով էլ մեր պահանջները պիտի վերջացնեինք վճռական հայտարարությամբ՝ երկու Հայաստանի միության:

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՆԳՐԵՍՈՒՄ

II

26 փետրվար, 1919

Եվ այսպես՝ այսօր ճաշից հետո ժամը 4-ին, ես ու Պողոս Փաշան հանդիպեցինք իրար Արտաքին Գործոց նախարարության շենքի մեջ: Պողոս Փաշան շատ հուզված էր և անվերջ թղթատում էր գրած հիշատակագրի այս կամ այն մասը, գանգատվելով, որ իրեն ժամանակ չեն տվել պետք եղած ձևով պատրաստվելու համար: Գոհ էր, սակայն, որ հաջողեցրել էր Տասնի Խորհրդին ներ-

[19] Ժ. Կլեմանսո՝ Ֆրանսիայի վարչապետը պատերազմի ընթացքին և Խաղաղության Ժողովի ժամանակ:

կայանալ այսօր ինձ հետ: Վերստին մեծ հուզմունքով պատմեց ինձ, թե Gunt, Ֆրանսիական Արտաքին Գործոց նախարարության ինտրիգներով[20], աշխատել է իրեն Փաշային չթողնել այսօր Conférence[21]: Իմ թուղթը պատրաստ էր, և ես բոլորովին պատրաստ էի իմ հայտարարությունն անելու: Վճռել էի, իհարկե, կարդալ:

Փաշան հարցրեց ինձ, թե ո՞վ պիտի առաջինը խոսի՝ ի՞նքը թե՞ ես: Ես պատասխանեցի, առանց որևէ պատճառի, թե լավ կլիներ, որ առաջինը ես խոսեի: Զարմացած մնացի, որ Պողոս Փաշան համաձայնվեց: Անկասկած, վերջինը խոսելուն նա առանձին կարևորություն է տալիս, նկատելով այդ իբրև ավելի վայել **իր դիրքին և տարիքին**: Այդ շատ անգամ եմ նկատել – նրա խոսքն է՝ «Les petits roles passent le premier»[22]:

Թեև մենք հրավիրված էինք ժամը 4-ին, բայց արդեն 5-ն էր, և մենք դեռ սպասում էինք:

Ներսում Տասնի Խորհուրդը զբաղված էր Վերսայի դաշնագրի մի կարևոր զեկույցը լսելով: Ժամը 5-ից անց, վերջապես, դուրս եկավ Ջինվորական Հանձնաժողովը: Միաժամանակ մեզ մոտ եկավ Gunt-ը և հրավիրեց ներս:

Նախագահում էր Ֆրանսիական Արտաքին Գործոց նախարար Ս. Պիշոն, փոխանակ Կլեմանսոյի, որ տակավին չէր ապաքինված մի երկու շաբաթ առաջ իր դեմ եղած մահափորձին ստացած վերքերից:

Ներկա էին Ամերիկայի կողմից՝ Լանսինգ և Ուայթ, Անգլիայի կողմից Բալֆուր և Հարթինգ, Իտալիայի կողմից՝ Սոնինո և Մարքիզ Ռաջչի, Ճապոնիայի ներկայացուցիչների անունները չգիտեմ: Կային և բազմաթիվ խորհրդականներ: Ամբողջը՝ մոտ 25-30 մարդ:

Ինձ առաջինը հրավիրեցին խոսք առնել:

Մենք նախ ցրեցինք բոլոր անդամներին մեր մեմորանդումի[23] մի-մի օրինակ, և նրա կարտը[24] բացած՝ նրանք սկսեցին հետևել: Ես բարձրաձայն ու հանդարտ սկսեցի կարդալ իմ հիշատակագիրը ֆրանսերեն:

Նստած էի Պիշոնի դեմ ու դեմ՝ մի փոքրիկ սեղանի առջև: Մի

---

[20] *Խառնակչություն:*

[21] *Կոնֆերանս:*

[22] «Փոքր դերերը ավելի առաջ կներկայացվեն» (ֆրանսերեն):

[23] Հիշատակագիր:

[24] Քարտեզ:

փոքր հեռու, Բալֆուրի և Լանսինգի դեմ առ դեմ նստած անգլիացի սպան, իմ ամեն մի պարբերությունից հետո, հիշատակագիրս թարգմանում էր անգլիերեն: Վերջում, իմ ընթերցումն ավարտելուց հետո, հարցրեց ժողովականներին թե՝ հարց տվող չկա՞: Ոչ:

Հեռացա սեղանից, և իմ տեղն անցավ Պողոս Նուպար Փաշան: Նա ավելի երկարորեն ծանրացավ՝

1) Հայ ժողովրդի թվի վրա, ցրելով մեր փոքրամասնության մասին մեր հակառակորդների արգումենտները[25] և ցույց տալով միաժամանակ, որ մեր զոհերն այս պատերազմում՝ բոնի նվազումը մեր թվի, ոչ արդար և ոչ իրավական արգումենտ կարող է լինել մեր դեմ;

2) Ավելի մեծ եռանդով ծանրացավ Կիլիկիայի Խնդրի վրա՝ պնդելով այդ հայ երկրամասի անհրաժեշտությունը մեր պետության կենսունակության համար:

Նույն ձևով Պողոս Փաշայի ասածները թարգմանվեցին անգլիերեն:

Ժողովը ոտքի ելավ: Պատվիրակներից ոմանք մոտեցան մեզ և իրենց գոհունակությունը հայտնեցին մեր հիշատակագրի առթիվ[26]:

ԶՐՈՒՅՑ ԱՄԵՐԻԿԱՑԻՆԵՐԻ ՀԵՏ

26 մարտ 1919
Փարիզ

Ես ասացի Westerman-ին.

«Մեր վիճակի մեջ զինադադարից ի վեր ոչ միայն որևէ փոփոխություն չկա, այլ նույնիսկ, ընդհանուր առմամբ, հայությունն ավելի վատթար օրեր է ապրում: Հալեպում՝ կոտորած, Կիլիկիայում՝ ջարդի սպառնալիք. մեր երկիրն ավեր ու անապատ, մեր փախստականները տակավին հայրենիքից դուրս, մեր կանայք ու երեխաները հարյուր հազարներով թուրքերի ձեռքին. ի լրումն այս բոլոր թշվառության, սովի գործած ավերածը Հայաստանի Հանրապետության սահմաններում սաստկանում է օրավուր: Եվ,

[25] *Փաստարկները:*

[26] Հայկական հիշատակագրի ներկայացումը ընկարագրող այս էջերեն հետո բաց ձգված են քանի մը չգրված էջեր, որոնց վրա, ըստ երևույթին, պիտի արձանագրվեր Խաղաղության Կոնգրեսին ներկայացված վերոհիշյալ հիշատակագիրը, որ, սակայն, մեջ բերված չէ:

սակայն, այնքան հեշտ էր այս բոլորի առաջն առնել: Ամիսներից ի վեր ես խնդրել եմ Խաղաղության Կոնգրեսից և դիմել եմ Դաշնակից պետությունների ներկայացուցիչներին առանձին-առանձին՝ ցույց տալով հետևյալ միջոցները:

1) Ճանաչել Հայաստանի Հանրապետությունը և այսպիսով հնար տալ պետական ձեռներեցությամբ օգնության հասնելու մեր սովալլուկ ժողովրդին;

2) Հաց և այլ մթերք հասցնել Հայաստան – Հյուսիսային Կովկասից՝ հաց և Եվրոպայից՝ այլ մթերքներ;

3) Հայ գաղթականները տեղավորել Թուրքաց Հայաստանում, հնար տալով նրանց դաշտային աշխատանքները սկսել այս գարնան՝ առաջիկա տարվան սովը կանխելու համար;

4) Նույն նպատակով իսկույն գրավել Թուրքաց Հայաստանի գավառները հայկական և դաշնակից զորքերով»:

Professeur W.L.Westerman, Chief of Division of Western Asia[27], որ շատ համակիր է եղել մեզ և հզորապես աջակցել յուրաքանչյուր առթիվ, ինձ հետ համաձայնում է, որ հանդեպ հայերի կատարվել և կատարվում է մեծ անիրավություն, և, ապացուցանելու համար, որ ինքը իր կողմից միշտ կատարել է պետք եղած դիմումները, տալիս է ինձ կարդալու մի փաստաթուղթ, որով ինքը՝ Westerman, հրավիրում է Ամերիկյան դելեգատների[28] ուշադրությունը հայերի ծանր վիճակի վրա և առաջարկում է՝ նույն միջոցները, որ ես եմ թելադրել:

– Ես կարող եմ ասել,– ավելացնում է Westerman,– որ ինչպես տեսնում եք, գեթ իմ խիղճն արդար է:

Ես խնդրում եմ, որ տեսակցություն հաջողցնե ինձ գնդապետ House-ի կամ, եթե հնար է, նախագահ Վիլսոնի հետ: Westerman ինձ առաջնորդում է Roy Steward Baker-ի մոտ: Վերջինս ամերիկյան Press Bureau-ի[29] գլխավորն է, նախագահ Վիլսոնի մտերիմը ու նրա վրա ահագին ազդեցություն ունի:

Baker-ը համաձայն է մեզ հետ և խորհուրդ է տալիս խնդիրը բացատրել Միստր Bowman-ին, որ գնդապետ House-ի գործակիցն է: Թեև 40-ը անց, բայց բոլորովին երիտասարդ, խելացի դեմքով մեկն է Միստր Բաուման: Westerman իմ փոխարեն խոսք է առնում և քարտեզի առաջ կանգնած՝ երկարորեն բացատրում է, թե որքան հեշտ է գրավել բրիտանական զորքերով թուրքահայ գավառները,

[27] *Պրոֆեսոր Վ. Լ. Վեսթերման, Արևմտյան Ասիայի բաժնի պետ:*

[28] *Պատվիրակների:*

[29] *Մամլո Բյուրո:*

գեթ 100-150 կիլոմետր խորությամբ, և թե ինչ լավ գործակից կարող են լինել Հայաստանի Հանրապետության զորքերը այդ գրավումն իրագործելու համար:

Բաուման սկզբում՝ սառն, քանի գնում է՝ հափշտակվում է Վեսթերմանի արգումենտացիայով[30], բայց և այնպես առարկում է, որ պետությունների վատ մրցակցությունը արգելք է դառնում այդ գրավումին, թե հայերը զոհ են գնում այդ անիրավ «marchandage»-ին[31]: Այնուամենայնիվ Վեսթերման և Բաուման գալիս են այն եզրակացության, որ այդ գրավումը կարող է լինել միայն անգլիացիների ձեռքով, քանի որ միայն նրանք Կովկասում զորքեր ունին և քանի որ «ամերիկյան բանակը տակավին հրահանգ չունի Ֆրանսիայից ու Գերմանիայից դուրս այլ տեղ գնալ»: Ուստի երկուսով հանձն են առնում հաջորդ օրն իսկ խոսել Լանսինգին ու նախագահ Վիլսոնին: Ինձ խորհուրդ են տալիս հաջորդ օրը իմ կողմից դիմել անգլիացիներին և հատարարել հետևյալը վճռապես՝ որ եթե Լլոյդ Ջորջը Կոնգրեսում այժմ խնդիր հանի Հայաստանի զինվորական գրավման մասին, նախագահ Վիլսոնը կպաշտպանի անպատճառ. ես արտոնություն ունիմ հայտարարել այս մասին անգլիացիներին:

Զմոռանամ ավելացնել, իմ հարցին թե՝ ինչու՞ անգլիացիք վարանում են գրավել Թուրքաց Հայաստանը, Westerman պատասխանեց.

– Վախենում են Ֆրանսիական մրցակցությունից, որոնք իսկույն հարավից (Կիլիկիա) կշարժվին վեր՝ հյուսիս:

ԶՐՈՒՅՑ ԱՆԳԼԻԱՑԻՆԵՐԻ ՀԵՏ

Մարտ 27, 1919

Այսօր առավոտ գնացի Պողոս Փաշայի մոտ, պատմեցի իմ տեսակցությունը ամերիկացիների հետ և առաջարկեցի միասին գնալ Անգլիական պատվիրակության մոտ խնդրելու Հայկական գավառների զինվորական գրավումը:

Այս տեսակցությունը տեղի ունեցավ ճաշից հետո, ժամը 4-ին, Hotel Astoria-ում:

Մեզ ընդունեցին Սըր Լուի Մալլետ, անգլիական նախկին դեսպան Կ. Պոլսում և այժմ Արևելյան Գործերի գլխավոր վարիչ և

[30] Փաստարկություն:

[31] Առևտուր:

իր օգնական Թոյնբի: Ես ներկայացրի հարցը իր բոլոր լայնությամբ, ավելացնելով, որ ամերիկացիներից համաձայնություն ունիմ հայտարարելու, որ եթե Անգլիան կամենա գրավել, իր կամ Հայ Հանրապետության զորքերով, Թուրքահայ գավառները, Լանսինգ և նախագահ Վիլսոն կպաշտպանեն այս առաջարկը:

Սըր Լուի Մալլետ պատասխանեց.

– Մեր Զինվորական նախարարությունը դեմ է այդ գրավման. և նույնիսկ մենք մտադիր ենք,– ասաց,– քաշել մեր զորքերը Կովկասից: Եվ առհասարակ,– ավելացրեց նա,– ես ամերիկացիների դիրքը լավ չեմ հասկանում. չորս կողմում խոսում են, թե Ամերիկան է լինելու Հայաստանի հովանավորը, իսկ ուզում են, որ մենք գրավենք Հայաստանը: Ոչ, ես վճռապես ասում եմ, մենք անկարող ենք: Խնդրեցեք ամերիկացիներին. մենք զինվոր չունենք:

– Excellence[32], – ասացի,– եթե դուք զինվոր չունեք, գուցե հնարավոր կհամարեք այդ անիրաժեշտ գրավումի համար օգտագործել Հայաստանի Հանրապետության՝ մինչև 30 հազարի հասնող կանոնավոր բանակը, որ շատ հեշտ է ոտքի հանել և շարժել, եթե պետք եղած ռազմամթերքն ու կենսամթերքն ու զգեստն ունենան:

– Այդ անկարելի է,– պատասխանեց Լուի Մալլետ,– հայ զորքերի երևալը կլինի ընդհանուր ցեղային կռվի ազդանշան:

– Սակայն, մեր զորքերը դրված կլինին Դաշնակից սպաների հրամանատարության տակ, և հետո, դրանք սոսկական կամավորներ չեն, այլ 4-5 տարի զինվորություն արած, մարզված, կարգապահ զինվորներ,– պատասխանեցի ես:

– Այդ միևնույն է, մենք չենք կարող,– եղավ պատասխանը:

– Excellence,– ասացի,– բայց նկատի առեք, խնդրեմ, կացությունը մեր ժողովրդի, որ կոտորվում է քաղցից և հիվանդություններից. այսպիսով մեր հայրենիքի վերածնությունը դառնում է անկարելի: Մենք չորս տարի ամեն զոհողություն տարանք, սպասելով Դաշնակիցներին, որպես գերագույն փրկություն: Դուք եկաք ահա, և մենք դարձյալ կոտորվում ենք: Ես կարծում եմ, մեր Ժողովուրդը դժվար կկարողանա բացատրել և այս անիրավությունը, և իմ ու Պողոս Փաշայի ներկայությունն այստեղ՝ Կոնգրեսի կողքին:

– Շատ ցավում եմ, բայց մեր Զինվորական նախարարությունը վճռապես հրաժարվում է գրավել Հայաստանը և խոր-

[32] *(Ֆրդ) Գերազանցություն:*

հուրդ է տալիս հայերին սպասել և համբերել:

Մեկնեցինք ձեռնունայն ու դառնացած:

ԶՐՈՒՅՑ ԱՄԵՐԻԿԱՑԻՆԵՐԻ ՀԵՏ

Մարտ 28, 1919

Երեկ երեկո ստացա մեր Արտաքին Գործոց նախարար Ս. Տիգրանյանի այն հեռագիրը, որով հաղորդում է ինձ թաթարների արշավանքի մասին, թյուրք սպաների առաջնորդությամբ, Շարուր - Դարալագյազի, Նախիջևանի, Ղարաբաղի, Սուրմալուի շրջաններում, և խնդրում է դիմել պետությունների աջակցության:

Այս հեռագիրը ձեռքիս այսօր երեկոյան ժամը 3-ին Վեսբերմանի հետ Միստր Բաումանին գնացի:

Ես ասացի.

– Այս նոր շարժումը թաթարական ոչ այլ ինչ է, եթե ոչ մի նոր ակտ երիտ. թյուրքերի սկսած շարժման Հալեպում, Կիլիկիայում, Եգիպտոսում: Ավելացրի, որ 4-5 տարի թյուրքո-թաթարական կոալիցիայի[33] և քաղցի ու թշվառության դեմ կռվելուց հետո մեր ժողովուրդն այլևս ի վիճակի չէ նոր պատերազմ վարելու: Քանի որ անգլիացիք չեն կամենում մեզ օգնել, պետք է որ Ամերիկան ձեռք առնի մեր օգնության գործը: Հուսահատական է, որ ինձ Crillon հյուրանոցից (Ամերիկա) ուղարկեն Astoria հյուրանոց (Անգլիա) և այնտեղից էլ՝ առաջին տեղը: Մեր ժողովրդի հուսահատությունն ու հուսախաբությունը անսահման է: Իմ տպավորությունն այն է, որ անգլիացիք իրենց զորքերը Կովկասից քաշելու չեն, որովհետև հեշտությամբ չեն թողնի Բաքում–Բաքու–Թիֆլիս գիծը, որ գնում է Պարսկաստան և Հնդկաստան, բայց և մեզ օգնելու չեն: Եթե Ամերիկան մեզ չօգնի, մենք կորած ենք: Կրկնում եմ, Հայաստանը իբրև պետություն կամ այսօր պիտի կազմվի ձեր օգնությամբ, կամ նա կորած է հավետ: Քանի որ mandat-ի[34] գործը ձգձգվում է, մնում է, որ Ամերիկան անմիջապես ուղարկի Կովկասյան Հայաստան պետք եղած քանակությամբ սպաներ, դրամ և ռազմամթերք՝ մեր բանակը կազմակերպելու համար, որ մի ուժեղ կորիզ կլինի բոլոր տեսակի վտանգների առաջ:

[33] *Միավորում, պետական-քաղաքական գործակցություն:*

[34] *Մանդատ՝ լիազորաթուղթ Ազգերի Լիգայում, որի ուժով Լիգայի մի որևէ անդամ-պետություն իր խնամակալության տակ է առնում մեկ այլ պետություն Ազգերի Լիգայի անունից:*

– Ո՞րչափ դրամ և ո՞րչափ սպաներ են հարկավոր,– հարցրեց Բաումանն:

Խնդրեցի մի քանի ժամ տալ ինձ՝ այդ ներկայացնելու գրավոր:

Բաումանն հեռագրի պատճենն առավ ու գնաց Լանսինգին համոզելու՝ իմ առաջարկած ծրագիրն իրագործելու համար, խոստանալով ինձ պատասխանել այս երեկո ժամը 7-ին:

– Լանսինգն,– ասաց Բաումանն,– վարանող բնավորություն ունի. եթե ես չհաջողեցնեմ նրա հետ, այն ժամանակ խոստանում եմ Ձեզ նախագահ Վիլսոնին ներկայացնել, որ Դուք անձամբ նրան ներկայացնեք ձեր դրությունը և ձեր պահանջները:

Որչափ ցավում եմ, որ մեր կառավարությունը չընդունեց գեն. Կորգանովի այստեղ ներկայության անհրաժեշտությունը:

ԶՐՈՒՅՑ Լ. ԲՈՒՐԺՈՒԱՅԻ ՀԵՏ

Ապրիլ 9, 1919

Այսօր առավոտյան ժամը 11-ին տեսակցություն ունեցա Լ. Բուրժուայի հետ, որ նախագահն է Ligue des Nations-ի[35] հանձնաժողովի: Զրույցի նյութն էր Հայկական Հարցի ներկա անստույգ վիճակը, Հայաստանի անմխիթար դրությունը, թրքահայ գաղթականների խնդիրը և Կովկասյան Հայաստանում թաթարա-թյուրքական շարժումը, որ անշուշտ երիտ. թյուրքերի գործն է: Մասնավորապես ես ծանրացա այն մասին, թե ինչ արգելք կա Հայաստանի Հանրապետությունը ճանաչել որպես Belligérant և ընդունել Խաղաղության Congrès-ում:

Լ. Բուրժուա. – Քանի որ Դուք արդեն կանչվեցիք Խաղաղության Congrès, ձեր պահանջները ներկայացնելու, ես չեմ հասկանում Ձեր ընդունելության հապաղումը: Խոստանում եմ Ձեզ՝ այդ խնդրով **լրջորեն** զբաղվել:

Ես. – Ձեր ուշադրությունն եմ հրավիրում այն հանգամանքի վրա, որ ռուսները դեմ չեն երկու Հայաստանների միացումի՝ integrale[36] Հայաստանը կազմելու համար: Երբ ռուսներն անգամ չեն հակառակում, ինձ թվում է՝ մեր հարցը այժմ ևեթ արմատապես լուծելու հնարը կա:

Լ. Բուրժուա. – Համաձայն եմ Ձեզ. սա կարևոր պարագա է: Գրեցեք ինձ, խնդրեմ, ամփոփ ձեր բոլոր պահանջները, և ես Ձեզ

[35] *Ազգերի Լիգա:*

[36] Ամբողջական, միացյալ, *անքակտելի:*

խոստանում եմ այս օրերս պատասխանել: Կխոսեմ մեր Արտաքին Գործոց նախարարին:

Ես. – Սակայն այդ խնդիրները միայն պ. Pichon-ի բարյացակամությունից կախված չեն:

Լ. Բուրժուա. – Գիտեմ: Կփորձեմ բոլոր միջոցներին դիմել Ձեզ պատասխան տալու և գոհացնելու համար: Չգիտե՞ք արդյոք, թե պետություններից ո՞րն է հակառակ ձեր Հարցի անմիջական լուծման և Ձեր Congrès հրավիրվելուն:

Ես. – Չգիտեմ, և շատ երախտապարտ կլինեմ, եթե Դուք, պ. Բուրժուա, հնար ունենաք այս հարցի վրա փոքրիկ լույս սփռել: Ես տակավին չկարողացա իմանալ: Գիտեք, թե Չորսի Խորհուրդը որքան նախանձախնդիր է գաղտնապահության: Ավելացնեմ նաև, որ Դաշնակիցների վերջին որոշումը՝ միջազգային հանձնաժողով ղրկել Արևելք՝ տեղի վրա ժողովուրդների ցանկություններն ու պահանջները ճշտելու, մեզ համար ծանր անակնկալ է. այսպիսով մեր հարցի լուծումը կարող է շատ ուշանալ. ես Ձեզ պարզեցի, թե որքան մահացու հարված է մեր Հարցի լուծումը ուշացնել: Ձեր միջամտությունը կարող էր մեզ հզորապես օժանդակել:

Լ. Բուրժուա. – Համաձայն եմ, որ այդ որոշումը néfaste[37] է, ծախորդ է: Ես հույս ունեմ, որ դա անիրագործելի է: Տարաբախտաբար Խաղաղության Congrès-ը շատ դանդաղ է գործում առհասարակ: Ամեն պարագայի ես Ձեզ խոստանում եմ իմ լիակատար աջակցությունը: Գրեցեք ինձ, խնդրեմ, այս օրվա մեր զրույցի նյութ եղող գլխավոր կետերը:

* * *

Լ. Բուրժուան իմ տեսած ֆրանսիացիներից ամենեն ուշադիրն է և ամենեն խելահասը. արագ և սուր ընմռնում ունի, և քիչ բառերով, առանց կեղծիքի խոսելու շատ հաճելի ձև, որ տրամադրում է: Ճաշից հետո, այսօր անմիջապես ուղարկեցի իր ցանկացած թուղթը:

ԶՐՈՒՅՑ WESTERMAN-Ի ՀԵՏ

Ապրիլ 10, 1919

Երկու օրից ի վեր Westermam ինձ թելադրում է Montgomery-ի միջոցով ամերիկական մանդատը Հայաստանի վրա խնդրել հրապարակով: Ես և Փաշան confidentiel[38] ձևով այդ մանդատը Նախագահ Վիլսոնից խնդրելուց ի վեր, նոր քայլեր արած չենք: Մենք այն կարծիքի ենք եղել, թե՝ քանի որ Ամերիկան (հասարակական կարծիք և կառավարություն) միաձայն չէ այդ մանդատ ընդունելու խնդրում և Մոնրոյի սկզբունքը տակավին արգելք է այդ միաձայնության, մեր հրապարակական արտահայտությունն այդ մասին վաղաժամ է: Montgomery-ն պնդում էր, ասելով որ դրանով կհուզենք ամերիկական հասարակական կարծիքը և լուծումը կփութացնենք: Այսօր այս մասին փոքրիկ խորհրդակցություն ունեցանք ես, Փաշան և Westerman: Նորից դրվեց նույն հարցը, անմիջապես պաշտոնական հրապարակական հայտարարություն անել մեր մանդատի վերաբերմամբ՝ ուղղված Ամերիկային: Westerman-ը հավատացնում է, որ իր առաջարկը լոկ բարեկամական խորհուրդ է իր կողմից, առանց պաշտոնական հանգամանքի: Իմ տպավորությունն այն է, որ Լանսինգը կամ նույնիսկ Նախագահը անմասն չեն: Ըստ երևույթին Նախագահը մի այդպիսի հայտարարության պետք ունի՝ իր հակառակորդների համառությունը կոտրելու համար այս խնդրում:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱԳԱՀ ՎԻԼՍՈՆԻ ՀԵՏ

Ապրիլ 17, 1919

Ճաշից հետո՝ ժամը 5-ին, ներկայացանք ես, Փաշան, պրոֆեսոր Տեր Հակոբյան, որ թարգմանում էր:

Նախագահ. – Հույս ունեմ գոհ եք, որ ձեր Խնդիրը լավ է ընթանում:

Փաշա. – Լավ կլինի այն ժամանակ, երբ Ձեր շնորհիվ Ամերիկան կընդունի Հայաստանի մանդատ:

Նախագահ.

«– **Մանդատի խնդիր** – Ես էլ ցանկանում եմ, որ Հայաստանի մանդատ Ամերիկան ընդունի: Կարող եմ վստահեցնել ձեզ, որ Ամերիկայի բոլոր լավագույն քաղաքացիների մտածումն ու զգացումն էլ այդ է: Եվ եթե երբեք[39] Ամերիկան որևէ մանդատ հանձն առնի,

---

[37] Չարագուշակ:

[38] Գաղտնի, փոխվստահությամբ, *գաղտնապահորեն:*

[39] *Երբևիցե:*

այդ կլինի Հայաստանինը: Ես իմ ընկերակիցներին (Կոնգրեսի) ասել եմ հաճախ, որ Ամերիկային որևէ մանդատ տալու դեպքում լավագույնը Հայաստանի մանդատ է, որովհետև այդ ավելի հեշտ կընդունվի շնորհիվ այն խորունկ համակրության, որ Ամերիկան տածում է դեպի հայ ժողովուրդը:

«– **Տերիտորիա** – Ձեր տերիտորիայի[40] համար ես աշխատում եմ: Ցանկությունս է ձեր պահանջած սահմաններում Հայաստանի տերիտորիա ապահովել: Մրցում կա. ուրիշներն էլ պահանջներ ունեն, բայց ես աշխատում եմ:

«– **Ազգերի Լիգան** – Ազգերի Լիգան այսուհետև լավ հովանավոր կլինի: Մինչև այժմ, երբ որևէ պետություն ուրիշ պետության գործերին միջամտում էր, դա համարվում էր թշնամություն: Այսուհետև Ազգերի Լիգան միջամտելու իրավունք կունենա, առանց որ այդ թշնամություն նկատվի»:

Տեսակցությունը տևեց քսան րոպե:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԷՄ. ԴԻԼԼՈՆԻ ՀԵՏ

Մայիս 9, 1919

Ժուրնալիստ Է. Դիլլոն «**Դեյլի Քրոնիկլ**»-ի մեջ մի հոդված ուներ, որով հայտարարում էր Թյուրքիային վերաբերյալ պայմանները: Ըստ Դիլլոնի՝ որոշված է Թյուրքիային թողնել մոտավորապես Սամսոն–Ատալիա[41] գիծը միայն որպես պետություն, իսկ մնացածը՝ Կիլիկիայից մինչև Կովկաս Ամերիկայի մանդատի տակ կազմել Հայ Պետություն: Ամերիկայի մանդատի տակ է լինելու նաև Կ. Պոլիսը իր շրջակայքով:

– Այս բոլորն ինձ հաղորդել է մի վստահելի բարձրաստիճան ամերիկացի,– ասաց Դիլլոնը:

Նրա կարծիքով մի երկու շաբաթից ի վեր Հայաստանի Խնդրի շուրջը ինտրիգներ են անում զանազան ամերիկացի ֆինանսիստներ՝ իրենց աջակից ունենալով ամերիկացի միսիոնարներին[42], որոնց նպատակն է թույլ չտալ, որ Հայաստանը իր անկախ պետություն բաժանվի Թյուրքիայից, այլ աշխատել իրագործել թյուրքերի ծրագիրը, որ է՝ Հայաստանը և Թյուրքիան հանձնել Ամերիկայի մանդատին: «Այսպիսով թե՛ ֆինանսիստները և թե՛

[40] Հող, երկիր: *Տարածք:*

[41] Սամսոն (Սամսուն) – *քաղաք և նավահանգիստ Թուրքիայի հյուսիսում, Սև ծովի ափին: Ատալիա - քաղաք Կիլիկիայում:*

[42] *Միսիոներ, կրոնական քարոզիչ:*

միսիոնարները գործունեության լայն ասպարեզ կունենան»: Բայց նա հույս ունի, որ Անգլիան այդ թույլ չի տա և որ Թյուրքիայի բաժանումի խնդիրը անդառնալի կերպով վճռված է:

Խոստացավ գրել «**Դեյլի Քրոնիկլ**»-ի մեջ Հայաստանի արդի ծանր կացության մասին, ինչպես որ մի անգամ արդեն գրեց մեր առաջին տեսակցությունից հետո, մարտ ամսին:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԻՐԵԿՏՈՐ J. GUNT-Ի ՀԵՏ

Մայիս 9, 1919

Գնացի իմանալու, թե ի՞նչ է մտածում ֆրանսիական կառավարությունը բրիտանական զորքը Կովկասից դուրս քաշելու մասին, որը հաղորդում է ինձ Ա. Խատիսյան իր վերջին հեռագրով: Gunt հայտնեց, որ դա անկարելի չէ, բայց հազիվ թե Կովկասը թողնեն առանց դաշնակից զորքերի:

– Այնտեղ ձգտում են այժմ իտալացիք: Համենայն դեպս,– ասաց Gunt,– Ֆրանսիան ոչ մի զինվոր ղրկելու հնար չունի: Նույնիսկ,– շարունակեց նա,– Կիլիկիա մենք հրաժարվում ենք զորք ղրկել, հակառակ անգլիացիների հրավերի: Քանի որ Կիլիկիան միանալու է Հայաստանին,– ասաց նա դառնությամբ,– Ամերիկայի մանդատի տակ, ես չեմ հասկանում, թե մենք ինչու՞ պետք է զորք ղրկենք:

Իմ հարցին, թե ի՞նչ է մտածում նա Ղարաբաղի խնդրում անգլիացիների դիրքի մասին, Gunt պատասխանեց թե՝

– Ըստ իս՝ անգլիացիներն աշխատում են մի մեծ Աղրբեյջան ստեղծել իրենց որոշ քաղաքական նպատակների համար, որի մեջ անմասն չէ Բաքուն պահելու ցանկությունը:

Իմ հարուցած զրույցով զարմանք հայտնեց, որ գալիս է մենակ գեներալ Կորգանով՝ առանց Բաբաջանյանի, քանի որ ինքը երկսի համար է կարգադրություն արել:

Հայաստանի անկախությունը ճանաչելու առթիվ իմ արած նոր դիմումի առթիվ խորհուրդ տվեց անպատճառ տեսնվել Կլեմանսոյի հետ:

ԶՐՈՒՅՑ
ՍԸՐ ԼՈՒԻ ՄԱԼԼԵՏԻ ՀԵՏ

Մայիս 16, 1919

Խնդիրը Ղարաբաղի մասին անգլիացոց բռնած դիրքն է և առհասարակ կովկասյան քաղաքականությունը: Ես ասացի, որ մեր ժողովուրդը ծանր անակնկալի է եկել, չկարողանալով բացատրել ու հասկանալ անգլիական բարձր հրամանատարության բռնած դիրքը Կովկասում ու նրանց քաղաքականությունը Կարսում, Ղարաբաղում և այլուր: Ինձ են դիմում Հայաստանից որևէ լուսաբանություն ունենալու համար, ստեղծված կնճռոտ կացության մասին:

Սըր Մալլետ խույս է տալիս ինձ պատասխանելու ընդհանուր քաղաքականության մասին և ծանրանում է Ղարաբաղի խնդրի վրա, որը տարաբախտաբար նա չի ճանաչում, ասում է ինքը: Նա փռում է իմ առջև Կովկասի մի քարտեզ, խնդրելով ցույց տալ Հայաստանի սահմանները և մասնավորապես հայկական Ղարաբաղինը: Ես ցույց եմ տալիս:

– Մի՞թե Ղարաբաղը հայաբնակ է,– հարցնում է ինձ դիտավորյալ թե իրական տգիտությամբ:

– Պ. Դեսպան, Ղարաբաղում 300 հազար հայ կա՝ ընդդեմ 70-80 հազար թաթարների, և հայերը եկվորներ չեն, այլ հինավուրց բնակիչներ, հազարավոր տարիներից ի վեր:

Ապա շարունակում եմ նրան բացատրել Ղարաբաղի հայության դերը անցյալում, ներկայում և նրա արժեքը մեր պետության կենսունակության տեսակետից:

– Ախ, այդպե՞ս,– բացականչում է Մալլետ,– բայց հնարավոր չէ՞ թաթարների հետ փոխանակություն անել,– ավելացնում է նա:

– Նախ՝ անհնարին է տեղահան անել այդքան բազմություն: Երկրորդ՝ այդ ժողովուրդը, ասացի, հազարավոր տարիներից ի վեր այդ լեռներում սնած ու իր հողին կպած, երբեք չի համաձայնի շարժվել իր տեղից և ոչ մի ուժ նրան չի ստիպի կրել մուսուլմանական բռնություն, ինչպես այդ ապացուցել է անցյալում: Եվ վերջապես մենք երբեք չենք կարող համաձայնել, որ այդ հայկական Լեռնաստանը, որ մեր աշխարհի մշտական պարիսպն է եղել ընդդեմ Ասիայի հորդաների, թաթարների ձեռքն ընկնի:

– Բայց նրանց՝ թաթարների հողը շատ քիչ է. եթե Ադրբեյջանը պետություն է դառնալու, նա էլ պետք է երկիր ունենա,– ասաց Մալլետ, ձեռքը տանելով քարտեզի վրա:

– Սակայն, իբրև հողամաս, նրանցը՝ իրենց թվին նայելով և՛

մերինից շատ է, և՛ մերինից գերազանց: Այս ամբողջ բերրի հարթությունը նրանցն է՝ Բաքվի անբավ հարստության հետ: Մեր հողը նրանց կեսի չափ էլ չէ,– պատասխանեցի:

– Դուք ստանալու եք ահա այս բոլորը,– Սըր Մալլետ ձեռքը տարածեց Թյուրքաց Հայաստանի վրա:

– Եվ ա՛յդ դեպքում մենք չենք կարող զիջել Ղարաբաղը, պ. Դեսպան,– ասացի,– այնտեղ մենք 300 հազար կորովի, շինարար, ստեղծագործող հայություն ունինք, որ մեր վերածնվող հայրենիքի կորիզն է լինելու: Այդ տարածությունը, որ Դուք ցույց տվիք, գիտեք անշուշտ, որ թյուրքական թարթարոսության երեսից անապատ է այսօր: Ղարաբաղի նման մեր գավառները,– ինչպես և Լոռի, Ախալքալակ,– զիջելով, մենք անհնարին կդարձնենք հայկական պետության ստեղծումը:

Սըր Մալլետ խնդրեց ուղարկել իրեն Ղարաբաղի և առհասարակ վիճելի գավառների մասին մեր տեսությունը:

Տպավորությունս այն է, որ անգլիացիք Ադրբեյջանը զորացնելու մեջ իրենց շահն են տեսնում:

ԶՐՈՒՅՑ
Կ. ՊՈԼՍԻ ՌՈՒՍԱՑ ՆԱԽԿԻՆ ԴԵՍՊԱՆ ԳԻՐՍԻ ՀԵՏ

Մայիս 19, 1919

Այսօր նախաճաշեցինք Պոլսի ռուսաց նախկին դեսպան Գիրսի և նրա խորհրդական Մանդելշտամի հետ: Մասնակցում էին Պողոս Փաշա, Հ. Օհանջանյան, Մ. Աջեմյան, Գ. Փաստրմաջյան: Նախաճաշից վերջը՝ Գիրսը ինձ հետ ունեցավ հետևյալ զրույցը:

– Պ. Դեսպան,– ասացի,– ըստ երևույթին պետությունները տրամադիր են ճանաչել Կոլչակի կառավարությունը: Չե՞մ սխալվում արդյոք:

Գիրսը կարծես իմ հարցին էր սպասում՝ զրույց սկսելու համար:

– Ո՛չ, չեք սխալվում. նա հավանաբար շուտով ճանաչվի, և այս պարագան կարող է ահագին ազդեցություն ունենալ մեր աշխարհի, ինչպես և Կովկասի բախտի վրա:

– Կարո՞ղ եմ արդյոք Ձեր գաղափարն իմանալ, ինչ վերաբերում է Կովկասին և կովկասյան պետություններին:

Գիրսը մի փոքր վարանումից հետո՝ ասաց.–

– Կխոսեմ Ձեզ անկեղծորեն և կհայտնեմ իմ անհատական կարծիքը: Կխնդրեի, սակայն, ասածս բացառապես մեր մեջ մնա: Մենք կույր չենք և լավ գիտենք Ռուսիայի բարեկամներն ու թշնամիները: Հայերի հավատարմությունը մեզ համար կմնա անմոռանալի և դա, հավատացել ենք, կարտահայտվի քաղաքականապես: Կարող եմ Ձեզ վստահեցնել, որ մենք բնավ հակառակ չենք Միացյալ Անկախ Հայաստանին, որովհետև նախ՝ հայերը դրան արժանի են իրենց խոր զգացումով դեպի իրենց հայրենիքը, և երկրորդ՝ դա նաև մեր շահն է: Նախ՝ մանդատի խնդիրը.– մենք բոլորովին համամիտ ենք ձեզ, որ Ամերիկան լավագույն մանդատատարն է: Անկեղծ եմ ասում. և այդ նրա համար, որ նա նվաճողական քաղաքականություն չունի Արևելքում և վերջ ի վերջո հեռանալու է: Եվ մենք, հույս ունեմ, **կմնանք դաշնակիցներ**: Որպեսզի բոլորովին անկեղծորեն խոսած լինեմ, կավելցնեմ. այլ կլիներ մեր վերաբերմունքը, եթե դուք Կիլիկիան չստանայիք. և այլ՝ եթե ստանաք և՛ Կիլիկիան:

– Խնդրեմ պարզել Ձեր միտքը:

– Կիլիկիա՝ նշանակում է Միջերկրական ծով, որին մենք ձգտել ենք՝ առանց հասնելու: Մենք չենք ստացել այն և չենք էլ կամենա, որ նա որևէ մեծ պետության ձեռք անցնի: Մինչդեռ Հայաստանը, որպես փոքր պետություն և մանավանդ մեր ապագա դաշնակիցը, մեզ համար ոչ միայն անվտանգ է, այլ նույնիսկ շահավետ: Տնտեսական տեսակետից մենք կարող ենք այդ կացությունից մեծ շահեր ունենալ: Ձեր շահն էլ անկասկած պահանջում է ունենալ մեր բարեկամությունը,– մեր դաշնակցությունը, որովհետև Ամերիկայի հեռանալով՝ դուք դարձյալ ճակատ առ ճակատ պիտի մնաք մուսուլման աշխարհի հետ: Ահա այս դեպքում մենք միշտ այնտեղ ենք, ինչպես անցյալում:

– Բայց դուք պետք է այժմ ևեթ կիսապաշտոնապես հայտարարեք, որ դեմ չեք Հայաստանի միության՝ սահմանների այս ու այն կողմում: Սա կլինի ձեր բարյացակամության լավագույն արտահայտությունը:

– Եթե մենք լռում ենք, դա միայն նրա համար է, որ հիմքեր չտանք Ռուսաստանի շուրջը կազմված բոլոր մանր պետություններին նույնը պահանջել: Բայց մենք այդ կանենք, երբ Կոլչակի կառավարությունը ճանաչվի: Մենք Հայաստանի միությունից ու անկախությունից դուրս ուրիշներին ոչինչ չենք զիջի, այո՛, զանազան Ադրբեյջաններին:

ԶՐՈՒՅՑ
ՓԱՐԻԶԻ ՌՈՒՍԱՑ ԴԵՍՊԱՆ ՄԱԿԼԱԿՈՎԻ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՌՈՒՍ ԴԵՍՊԱՆ ԲԱԽՄԵԳԻԵՎԻ ՀԵՏ

Մայիսի 22, 1919

Այսօր նախաճաշի էին հրավիրված Մակլակով, Բախմեդիև: Ներկա էին Աջեմյան և մեր երկու Պատվիրակությանց անդամները: Զրույցի նյութն եղավ դարձյալ միացյալ Հայաստանի Խնդիրը: Թե՛ Մակլակով և թե՛ Բախմեդիև գրեթե բառ առ բառ կրկնեցին նույնը, ինչ ասել էր Գիրս երեք օր առաջ: Նորը այս էր. երկու դեսպանները գտնում էին, որ միանգամայն դեմ չլինելով Կովկասյան և Թյուրքաց Հայաստանի միությանը՝ իրենք (ռուսները) սակայն ստիպված են **ձևականորեն** բողոքել, եթե այդ միությունը Խաղաղության Կոնգրեսն իրագործի՝ նախքան նոր Ռուսաստանի կազմակերպումը և առանց ռուս կառավարության հաճության: Նրանք ավելացնում էին, որ իրենք ստիպված են այդ ձևական բողոքն անել, որպեսզի մյուս ժողովուրդները (Ռուսիայի) Հայաստանի Խնդիրը հիմք չծառայեցնեն պահանջելու իրենց անջատումը Ռուսաստանից: Բայց որպես ապացույց իրենց բացարձակ համաձայնության այժմեն իսկ, նրանք արտոնում են (Բախմեդիևի խոսքերն ինձ ուղղած)՝ իրենց անունից ասել ում հարկն է, թե ռուսները դեմ չեն Կովկասյան և Թյուրքաց Հայաստանի միության և թե ի-րենք ևս այդ կասեն, եթե նրանց հարցնեն: Երկու դեսպանները նույնպես ցույց էին տալիս Ամերիկան ռուս շահերի տեսակետից ընդունելի մանդատեր և Հայաստանը Ռուսիայի ապագա դաշնակից՝ ընդդեմ Ասիայի բարբարոսների:

Մեզ չգոհացրեց նրանց՝ թեկուզ ձևական, բողոքի արգումենտացիան:

ԶՐՈՒՅՑ
ԱԴՐԲԵՅՋԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԱԼԻ ՄԱՐԴԱՆ ԲԵՅ ԹՈՓՉԻԲԱՇԵՎԻ ՀԵՏ

Մայիս 31, 1919

Այսօր փոխայցելության գնացինք Թոփչիբաշևին բժ. Օհանջանյան և ես: Իր այցին, մի քանի օր առաջ Թոփչիբաշև վճռական առաջարկ արեց մեզ կովկասյան ժողովուրդների միությունը

(ֆեդերատիվ կամ կոնֆեդերատիվ) կազմել, ավելացնելով, որ այդ մասին Հյուսիսային Կովկասի Հանրապետությունը, ինչպես և վրացիք սկզբունքային համաձայնություն տվել են: Մենք խոստացանք այդ մասին խոսել իր հետ մեր առաջիկա այցին, որ տեղի ունեցավ այսօր:

Ներկա էին ինքը՝ Թոփչիբաշև և Հաջինսկին: Նախ զրույցը դարձավ Նախագահ Վիլսոնի Ադրբեյջանի և Հյուսիսային Լեռնականների պատվիրակության արած այցին, որ տեղի էր ունեցել նախընթաց օրը: Թոփչիբաշևի պատմածից երևաց, որ Վիլսոնը նրանց տված մեմորանդումին տվել է երեք կետից բաղկացած հետևյալ բերանացի պատասխանը.–

Վիլսոնը կարծում է.

1. Որ հնարավոր չէ աշխարհը վերածել մանր միությունների:
2. Նրանց՝ Ադրբեյջանի և Հյուսիսային Կովկասի Լեռնականների խնդիրները կապված են Ռուսական պրոբլեմին, հետևապես անհնարին է այդ ժողովուրդներին վերաբերյալ քաղաքական հարցերը լուծել, առանց կանխապես լուծելու Ռուսական Հարցը:
3. Այլ կլիներ նրանց հարցը, եթե նրանք ներկայանային Խաղաղության Կոնգրեսին ոչ այդպես զատ-զատ փոքր ազգեր, այլ միացած որևէ ձևի քաղաքական ամբողջությամբ, օրինակ՝ ֆեդերացիա:

Այս պատասխանը ըստ երևույթին ծանր տպավորություն է թողել Ադրբեյջանի պատվիրակության վրա, քանի որ նրանց անկախության և Ռուսաստանից անջատվելու հարցին նպաստավոր լինելուց շատ հեռու էր:

Պատրվակ բռնելով Վիլսոնի ակնարկած ֆեդերացիան՝ Թոփչիբաշև նորից խոսքը դարձրեց այդ մասին: Ես հիշեցրի, որ Անդրկովկասում դա գրեթե իրականացել էր. Թոփչիբաշևը երևի չի կարողանա պնդել, թե մենք՝ հայերս եղանք այդ միության քանդողները: Նա համաձայն է, որ մենք իրավունք ունինք: Ես հիշեցնում եմ նաև, որ այս առաջարկը չի համապատասխանում Վրաց և Ադրբեյջանի կառավարությունների տեղի վրա հարուցած սահմանային վեճերին ընդդեմ հայերի, ինչպես Ղարաբաղում և Լոռի–Ախալքալակում: Թոփչիբաշևը կարծում է, որ այդ բոլոր վեճերը կարելի է հարթել խորհրդակցությամբ և միջնորդով – արբիտրաժով[43]: Մենք պատասխանում ենք, որ այդ արբիտրաժը կա – Խաղաղության Կոնֆերանսը: Ինչ վերաբերում է ֆեդերացիային, մենք պատասխանում ենք, որ երբեք դեմ չենք եղել և

[43] *Երրորդ դատարան, իրավարար:*

այժմ էլ չենք լինի հակառակ՝ կովկասյան ժողովուրդների միության, բայց նախ պետք է որ դրանցից յուրաքանչյուրը իր պետությունն ունենա: Մեզ համար առայժմ այդ խնդիրը բարդանում է Թյուրքաց Հայաստանով, որին մենք պիտի միանանք. բայց այդ հարցը դեռ պաշտոնապես որոշված չլինելով, մենք անկարող ենք նոր կոմբինացիաներ[44] անել քաղաքական՝ առանց թյուրքահայերի: Իսկ մինակ Կովկասյան Հայաստանը երբեք չի հանձն առնի այլևս առանձին ներկայանալ:

Զրույցը վերջացավ:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՎԵՆԻԶԵԼՈՍԻ ՀԵՏ

Հունիս 1, 1919

Այս իմ երկրորդ տեսակցությունն էր Վենիզելոսի հետ. առաջինը տեղի էր ունեցել մարտ ամսին, ընկերակցությամբ Վիկտոր Բերարի:

Երկու շաբաթից ի վեր մեր Հարցի շուրջը տիրող լռության առթիվ ուզում էի ունենալ Վենիզելոսի կարծիքը: Վենիզելոսի ասելով այդ լռությունը մեզ համար անախորժ ոչինչ չի ծածկում: Երկու հիմնական հարցեր լուծված են հօգուտ մեզ –

1. Մեր մանդատերը լինելու է Ամերիկան. Վիլսոնն ընդունել է այդ պայմանական, սպասելով Սենատի համաձայնության և
2. Կովկասյան և նախկին Թյուրքաց Հայաստանը **անպատճառ** միանալու են:

– Այս մասին կասկած լինել չի կարող,– ավելացրեց Վենիզելոս:

Իմ հարցին, թե՝ ինչու՞ հանկարծ այս լռությունը և ինչու՞ չեն հայտարարում մեր հարցի մասին վճիռը, Վենիզելոս պատասխանեց.

– Զարմանալու ոչինչ չկա: Ես ամբողջ երեք ամիս ստիպված էի **բոլորովին առանց պատճառի** սպասել, մինչև որ այս օրերս թույլ տվին ինձ գրավել Զմյուռնիան, թեև վաղուց հետե 350 հազարնոց մեր բանակը սպասում էր այդ օրին: Երբ ես շարունակ

[44] *Համակցում, համափոփոխում:*

պնդում, խնդրում էի, ջոջերը լռում էին. և հանկարծ, երբ ես վճռել էի համբերել, հանկարծ ինձ թույլ տվին գրավել Զմյուռնիան և գրավեցի: Այսպես է միշտ: Իզուր է փնտրել սիստեմ կամ դիտավորություն ամեն անգամ Կոնֆերանսի վճիռներում: Սպասեցեք էլի մի փոքր. և հավատացեք ինձ, որ ձեր Հարցը լավ ճամփու վրա է:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՊՐՈՖԵՍՈՐ ՍԵՄՊՈՆՆԻ ՀԵՏ (ԱՆԳԼԻԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ)

Հունիս 16, 1919

Իմ հարցին՝ ճշմարի՞տ է, որ անգլիացիները թողնում են Կովկասը և ե՞րբ, Սեմպոնը պատասխանեց.

– Այո, անգլիացիք թողնում են Կովկասը և մտնելու են իտալացիք, բայց այդ կլինի աստիճանաբար:

– Արդյոք իսպա՞ն եք հեռանում:

– Այո՛, մենք իսպան հեռանում ենք Կովկասից: Ձեզ մոտ այժմ գործերն ավելի լավ են այն ժամանակից, ինչ Ալ. Խատիսյան անցել է կառավարության գլուխը: Ես ճանաչում եմ նրան Կովկասից:

Ղարաբաղի մասին երկարորեն խոսեցի, բացատրեցի մեր իրավունքները:

– Այս մասին,– ասաց Սեմպոնը,– գեներալ Թոմսոնը պընդում է թողնել Ղարաբաղը թաթարներին, բայց ինձ հայտնի չեն նրա պատճառները:

Ես ավելացրի, որ այդ անհնարին կլինի նույնիսկ այն դեպքում, եթե մինչև իսկ մեր կառավարությունը համաձայնի. Ղարաբաղի ժողովուրդը այդ չի ընդունի:

Երկու Հայաստանի միացումի մասին նա հարցրեց.

– Ճշմարի՞տ է որ ռուսահայերը չեն ուզում միանալ թյուրքահայերին և կգերադասեին ռուսներին: Ես անձամբ լսել եմ այդպիսի կարծիք Բաքվի և Թիֆլիսի հայերից:

Ես պատասխանեցի.

– Ձեր այդ կարծիքն ինձ համար նորություն է. համայն հայության ամենաջերմ ցանկությունն է ժամ առաջ միացած տեսնել Հայաստանը:

Եվ այս մասին բազմաթիվ ապացույցներ բերի համոզելու նրան:

Խնդրեցի իր աջակցությունը Թյուրքահայ նահանգները գրավելու կամ դաշնակից, կամ մեր զորքերով՝ իրենց հրամանատարության տակ:

Հարցրեց՝ ի՞նչ են մտածում ռուսները Հայաստանի մասին:

Ես հաղորդեցի, որ Փարիզի ռուսները՝ Գիրս, Մակլակով են, դեմ չեն Կովկասյան և Թյուրքաց Հայաստանի միացման: Նա զարմացավ:

– Չգիտե՞ք արդյոք պատճառը:

– Այն՝ ինչ ասում են, հետևյալն է.– Թե կուզեին իրենց կայսրության հարավում քրիստոնյա փոքրիկ պետություն ունենալ, ինչպես Ֆինլանդիան հյուսիսում: Կարող են սակայն այլ հիմքեր ու պատճառ ունենալ:

Նա ժպտալով ասաց.

– Անշուշտ:

– Քանի որ Բեսարաբիան հանձնվում է Ռումանիային, կարծում եմ,– ասացի,– հիմք չկա այլևս մեզ մերժելու միանալ Թյուրքաց Հայաստանին:

– Իրավունք ունիք,– ասաց:

Խոստացավ այս մտքով զեկույց ներկայացնել Բալֆուրին: Իմ բոլոր ասածները գրի առավ:

ԶՐՈՒՅՑ ՄԱԿԼԱԿՈՎԻ ՀԵՏ

Հուլիս 10, 1919

Այսօր, ճաշից հետո, ժամը 6-ին այցելեցինք ռուսաց դեսպան Մակլակովին՝ Հ. Քաջազնունին և ես: Մակլակովը այսպես բացատրեց իրենց քաղաքական հայեցակետը դեպի Միացյալ և Անկախ Հայաստանի խնդիրը:

– Ժողովուրդների իրավունքը՝ ինքնօրինաբար տնօրինել իրենց բախտը,– ասաց Մակլակով,– մենք բացարձակ չենք համարում: Անհնարին է թույլատրել, որ յուրաքանչյուր ժողովուրդ, իր ուզած ժամին զատվի այս կամ այն պետությունից: Բայց մենք ընդունում ենք, որ կան հանգամանքներ, երբ այդպիսի անջատումը անխուսափելի է և ընդունելի: Այսպես: Մինչդեռ մենք ոչ մի պայմանով չենք համաձայնի, օրինակ, մի Աղրբեյջանի կամ մի Վրաստանի անջատումին մեզնից, մենք ընդառաջ կերթանք հաճությամբ կովկասյան հայերի վճռական ցանկության՝ միանալ Թյուրքաց Հայաստանին ու այսպես թե այնպես անկախ լինելու.

մանավանդ որ մենք հավատացած ենք, որ այսպիսով ստեղծված Միացյալ Հայաստանը լինելու է Ռուսաստանի բարեկամը և գուցե դաշնակիցը Արևելքում: Եվ մեր այդ բարեկամությունը ոչ միայն արդյունք է հայերի՝ դեպ Ռուսիան ցուցաղրած անխախտ հավատարմության, այլ մանավանդ, կրկնում եմ, մեր խորին համոզման, որ ինչ և լինի ապագա Միացյալ Հայաստանը, նա անխուսափելիորեն մեզ բարեկամ կմնա, միակ քրիստոնյա պետության Արևելքում: Եվ այս ոչ միայն իմ տեսակետն է, այլև ռուս քաղաքական բոլոր գործիչների Փարիզում:

Մեր հարցին թե՝ ի՞նչ արգելք կա այս հայտարարությունն անելու այժմ, թեկուզ կիսապաշտոնապես, քանի որ դա այնքան անհրաժեշտ է մեր Խնդրի շուտափույթ լուծման տեսակետից, Մակլակով պատասխանեց թե՝

– Տարաբախտաբար այդ անկարելի է, քանի որ իսկապես պատասխանատու և լիազոր օրինական օրգան տակավին պակասում է քառտիկ Ռուսաստանում՝ այդ վճռական, թեկուզ կիսապաշտոնական հայտարարությունն անելու համար: Մենք Փարիզում նստած ռուս Conférence Politique-ի անդամներս[45], ոչ այլ ինչ ենք, եթե ոչ պահապաններ ռուսական ժառանգության, որի միակ տերն ու տնօրենը լինելու է ռուսական Սահմանադիր Ժողովը: Մենք մինչև այն աստիճան զգույշ ենք ու նախանձախնդիր, որ նույնիսկ Ֆինլանդիայի անջատումի առթիվ մենք բողոքեցինք, թեև կարող եմ ձեզ վստահացնել, որ Ֆինլանդիան մեր համոզմունքով իրավունք ունի ինքզինքը հռչակել անկախ թեկուզ հենց նրա համար, որ նա կապված էր Ռուսաստանի մոնարխի[46] անձնավորության, որ այժմ չկա: Հիշատակածս պատճառներով՝ մենք, հակառակ որ լիապես ճանաչում ենք ձեր իրավունքը՝ անջատվել մեզանից և միանալ Մեծ Հայաստանին, եթե դուք այսօր ձեզ հայտարարեք **Միացյալ**, մենք ստիպված ենք ձևականորեն, մեղմորեն բողոքել մեր երկրի ամբողջության սկզբունքը պաշտպանելու համար, մինչև որ Սահմանադիր Ժողովն ասի իր խոսքը, որ համոզված ենք, հօգուտ ձեզ է լինելու: Ավելացնեմ, սակայն, որ դուք ինչ և անելու լինեք ձեր միացումի

[45] *Կոնֆերանսի քաղաքական անդամներ:*

[46] *Միապետ:*

մասին, ինչ քայլեր և կատարեք դրա համար, մենք չենք վշտանա. մենք կվշտանանք միայն, եթե դուք միանաք այս կամ այն ժողովրդի բողոքին մեր դեմ:

Մեր առարկության, թե մենք անվերջ չենք կարող սպասել, մինչև որ Ռուսաստանի Սահմանադիր Ժողովը հավաքվի, որը շատ պրոբլեմատիկ է, նա պատասխանեց թե՝

– Պետք է մի ժամանակավոր ֆորմուլա[47], մի կոմպրոմիս[48] գտնել, որ անհնարին չէ: Օրինակ, մասնավորապես այսպիսի ձև թե՝ «Վստահ լինելով որ Ռուս Սահմանադիր Ժողովը, եթե նա լիներ այսօր, չէր հակառակի մեր արդար իրավունքին, մենք, կովկասյան հայերս հայտարարում ենք մեզ միացած Թյուրքաց Հայաստանին»:

– Սա մի ձև է,– շարունակեց Մակլակով,– որ մեզ բնավ չի վիրավորի և ընդունելի կլինի, մյուս կողմից մեր իրավունքը չի արհամարհվի: Նկատի առեք, խնդրեմ, որ Եվրոպան մեզ շատ է վիրավորել և վիրավորում է: Գուցե կգա մի օր, երբ մենք հաշիվ կպահանջենք, բայց կուզեինք, որ մեր բարեկամ, մեզ միշտ հավատարիմ հայերը մեզ չվիրավորեին, միանգամայն անգիտանալով մեր իրավունքը:

Ասացինք, որ մեր թյուրքահայերը կասկածում են ռուսներից, նրանց ապագա քաղաքականությունից. պետք է նկատի առնել նրանց հոգեկան անհանգստությունը:

Մակլակովը պատասխանեց, թե իրենք էլ ունեն իրենց իմպերիալիստները, որոնք նեղում են իրենց, հետևապես լավագույնը միջին, ընդունելի ֆորմուլա գտնելն է:

Ես ու Քաջազունին դուրս եկանք այն համոզումով, որ սա վերջին խոսքն է ռուսների: Ես մնացի այն կարծիքի, որ Կոլչակի հանդեպ պետությունների ցույց տված ուշադրությունը զգալապես պահանջկոտ է դարձրել անգամ Մակլակովին:

[47] *Բանաձև:*

[48] *Զիջում:*

ՎԻՆԱՎԵՐ ԵՎ ՄՈՐԳԵՆԹԱՈՒ

Հուլիս 10, 1919

Այսօր իմացա, որ Վինավեր ու Մորգենթաու[49] երկար զրույց են ունեցել: Ի միջի այլոց Մորգենթաու՝ հայտնել է Վինավերին, որ

1. Հայաստանի անկախությունը վճռված է;
2. Միացյալ Հայաստանը կասկածից դուրս է, Կիլիկիայով միասին;
3. Ամերիկան գրեթե հաստատապես ընդունելու է Միացյալ Հայաստանի մանդատ;
4. Գուցեև ինքը՝ Մորգենթաու լինի Հայաստանում Ամերիկայի ներկայացուցիչը:

Հուլիս 10, 1919

Այսօր մեկ մեծ պետության գաղտնի զեկույցը կարդացին ինձ Ղարաբաղի խնդրի և նույն վայրերում կատարված թաթարական խժդժությունների մասին: Զեկույցը հաստատում էր՝

1. Հինգ հայ գյուղերի կողոպուտն ու ավերածը;
2. Որ դա արդյունք է նահանգապետ Սուլթանովի դավադիր, կանխամտածված ծրագրի;
3. Անգլիացի ներկայացուցիչները պատասխանատու են այդ արյունին, թույլ տալով Սուլթանովի պես բարբարոս, վայրագ թաթարին նահանգապետ դառնալ հայ գավառին: Մասնավորապես մեղավոր են գեն. Թոմսոն և իր անմիջական գործակիցները՝ Շաթելվորթ և Մաք-Մեզոն;
4. Անգլիական հիշյալ ներկայացուցիչները ըստ ամենայնի աջակցել են թաթարական կառավարության՝ հաստատելու թաթար իշխանություն Հայ Ղարաբաղի վրա: Նրանք դիտավորյալ ձևով անտես են առել հայերի արդարացի բողոքները, որովհետև «հետապնդում են Կովկասում մուսուլման քաղաքականություն»;
5. Թոմսոն և իր ընկերակիցները լավ գիտեին, որ Սուլթանով երիտասարդ թյուրքերի ագենտ[50] է եղել, չար է և կլինի, և որ նա հայտնի ջարդարար է;
6. Հայերի իրավունքը Ղարաբաղի վրա ամեն տեսակետով անժխտելի է:

---

[49] *Հենրի Մորգենթաու, իրավաբան, դիվանագետ, ԱՄՆ-ի դեսպանը Թուրքիայում 1913-1916թթ.*

[50] *Գործակալ:*

Անցնելով կովկասյան ժողովուրդների գնահատության, հիշյալ զեկույցը քաղաքական շատ թերություններ է գտնում ամենքի մոտ, բայց ամենից ավելի բարձր և գնահատելի է համարում հայ ժողովուրդը և մանավանդ հայ գյուղացիությունը, հայ հարուստներին համարելով գծուծ, անսիրտ ու կողոպտիչ: Թաթարական կառավարությունն ու ժողովուրդը համարում է կիսավայրենի բանդա[51]: Վրացիներին՝ անկարող ու ծույլ: Հայերին՝ ապագա խոստացող: Ընդունում է, որ հայ կառավարությունը շարունակ լարել է Ղարաբաղի հայ ժողովրդին թաթար իշխանության դեմ, բայց ավելացնում է, «մեղքը **Թոմսոնին** և Ադրբեյջանի նահանգապետինն է»:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ԴԻ ՄԱՐՏԻՆՈ-Ի ՀԵՏ

Հուլիս 17, 1919

Գնացի իմանալու, թե որքան ճշմարիտ է իտալական զորքերը Կովկաս փոխադրելու լուրը՝ անգլիականի փոխարեն:

Զրույցի ընթացքում Դի Մարտինո հայտնեց հետևյալը.–

1. Իտալական զորքերը Կովկաս փոխադրելու մասին լուրջ դիտավորություն կար, և այս մասին առանձնապես պնդում էին անգլիացիք, բայց այժմ այդ որոշումը ետ է վերցված. իտալացիք Կովկաս գնալու չեն:
2. Թյուրքահայ գաղթականների մասին ասաց, թե Կոնֆերանսը հրաման արձակեց հայ գաղթականները տանիլ, վերահաստատել իրենց տեղերը:
3. Ամերիկացի գնդապետ Հասքել նշանակված է Հայաստանի Haut Commissair[52], պարենավորման և քաղաքական լիազորություններով Conférence-ի կողմից:
4. Իմ հարցին՝ Հայաստան ասելով պե՞տք է հասկանալ արդյոք միայն Թյուրքաց Հայաստանը, թե նաև Կովկասյան, Դի Մարտինոն պատասխանեց.

– Հայաստան ասելով հասկանում ենք ամբողջական Հայաստան՝ Կովկասյան և Թյուրքական:

---

[51] *Հրոսակախումբ:*

[52] Բարձր հանձնակատար:

* * *

Տուն դառնալով՝ երկտող ստացա Վարանդյանից՝ Լոնդոնից, որով նա հաղորդում էր, թե անգլիական Զին. նախարար Չըրչիլ Համայնքների Պալատում հայտարարել է թե՝ անգլիական զորքերը Կովկասից քաշվելու են միայն աշնանը և թե այնուհետև Սևծովյան ափերում (երևի Բաթումի շրջանում) կմնա 10.000 անգլիական կամավորական բանակ:

Նույն օրը Temps և մյուս թերթերը հաղորդեցին նաև, որ Conférence-ը հրաման է արձակել վրացական կառավարության՝ արգելքներ չհանել Հայաստան անցնող պաշարեղենի տրանզիտի[53] դեմ:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԼԵՈՆ ԲՈՒՐԺՈՒԱՅԻ ՀԵՏ

Սեպտեմբեր 30, 1919

Այսօր, առավոտյան ժամը 11-ին, տեսակցություն ունեցա Լ. Բուրժուայի հետ իր բնակարանում (Rue Paluben N.3): Զրույցի նյութը Հայաստանի և հայ ժողովրդի արդի կացությունն էր: Կարդացի նրան Խատիսյանի սեպտեմբեր 10-ի հեռագիրը, մեր պարլամենտի կոչը և Ստ. Մամիկոնյանի նամակը, խնդրելով աջակցել ինձ՝ անմիջական օգնություն ձեռք բերելու համար Conférence-ից և ազդել այդ մտքով Կլեմանսոյի վրա, որ ըստ երևույթին խույս է տալիս Հայ Պատվիրակության հետ տեսակցություն ունենալուց՝ ներկա փափուկ հագամանքներում:

– Տարաբախտաբար,– ասաց Լ. Բուրժուա,– Ֆրանսիան մենակ անզոր է մեր մեծ համակրությամբ: Congrès-ը իր ամբողջությամբ պետք է որոշումներ անի ձեզ համար: Ցավալի է, որ աշխարհի քաղաքականությունը այժմ վարում է Անգլիան, իսկ Ամերիկայի Միացյալ Նահանգները նրան աջակցում են: Վիլսոնը ինքնագլուխ վճիռներ է արձակում մեն մենակ և հեռագրական կարգադրություններ անում: Ֆրանսիան անզոր է, բայց և այնպես ձեր դրությունը անմիջական դարման է պահանջում՝ անկախ մանդայից: Ամերիկյան մանդատն կասկածելի է թվում ինձ: Անմիջական միջոցների ռեզյումեն[54] ունի՞ք:

[53] *Տարանցիկ փոխադրում, տարանցում:*

[54] *Համառոտություն, ամփոփում, ամփոփագիր, ռեզյումե:*

Ես տվի պատրաստ ռեզյումեն.–

1. Ազատ տրանզիտ;
2. Մեր զորքի վերակազմություն՝ զենքով և ռազմամթերքներով;
3. Պարենավորում;
4. Դաշնակիցների միջամտություն ընդդեմ Մուսթաֆա Քեմալի;
5. Մեր անկախության ճանաչում:

– Կուզեի, որ գեթ մեր այս օրվան զրույցը գործնական արդյունք տար՝ Ձեր ազդու միջամտությամբ,– ասացի:

– Մի քանի օրից նորից հանդիպեցեք ինձ:

Բաժանվեցինք:

***

Լ. Բուրժուայի տրտունջը՝ Ամերիկայից և Անգլիայից, տարբեր ձևով լսվում է և Իտալիայում: Տիտոնին իր վերջին ճառում ակնարկում է այդ՝ ասելով հետևյալը Ֆիումեի առթիվ. «Մենք դիպլոմատիական[55] պարտություն ենք կրել Conférence-ում, և ոչ միայն մենք, այլ մեզ հետ նաև Ֆրանսիան»:

Ֆրանսիայի պարտությունը կայանում է նրանում, որ նա հակառակ իր բոլոր ճիգերին, չկարողացավ Թյուրքիայի համեմատական ամբողջությունը փրկել: Հայտնի է, որ այդ նպատակով Ֆրանսական կառավարությունը Փարիզ բերել տվեց Թյուրք պատվիրակությունը Ֆերիտ փաշայի նախագահությամբ, որ սակայն ձախողեց շնորհիվ Անգլիայի և Ամերիկայի: Ֆերիտ փաշային հանուն Conférence-ի[56] Կլեմանսոյի տված պատասխանը խմբագրել է Բալֆուր: Եվ հետագայում Temps-ը դիպլոմատիական աշխարհին անվայել ոճով երևան հանեց այդ՝ ասելով, թե «այդ փաստաթղթի թարգմանված լինելը ակնհայտ է»:

---

[55] *Դիվանագիտական:*

[56] *Կոնֆերանսի անունից:*

Լոնդոն
Հոկտեմբեր 20, 1919

Հոկտեմբերի 12-ին հեռագիր ստացա Լոնդոնի մեր ժամանակավոր գործակալ անգլիացի Ա. Մյուրեից, թե Արտաքին Գործոց նախարար Լորդ Քըրզընի կարգադրությամբ ինձ ընդունելու է նախարարի օգնական Սըր Ջոն Թիլլե: Հոկտեմբերի 13-ին մեկնեցի Լոնդոն և 14-ին տեսակցեցի Սըր Ջոն Թիլլեի հետ: Տեսակցությունը տևեց մի ժամ ու քառորդ, որի ընթացքում ես ներկայացրի նրան մեր երկրի ու ժողովրդի ճշգրիտ վիճակը և դարման խնդրեցի անգլիական կառավարությունից: Տպավորությունս այն էր, որ անգլիական կառավարությունը մեր հանդեպ իր ռեզերվից[57] դուրս գալու վրա է:

Իմ գրած խնդիրներն էին՝

1. Տրանզիտի հարցը;
2. Գաղթականների վերադարձը;
3. Մեր երկրի պարենավորումը;
4. Մեր սահմանների ճշտումը մեր հարևանների հետ;
5. Մեր զորքերի նպաստավորումը ռազմամթերքով ու զգեստով;
6. Մեր պետության ճանաչումը, որպես միակ դարման մեր պետական տնտեսությունը վերականգնելու՝ փոխառության միջոցով:

Երկու օր հետո գրավոր պատասխան ստացա թե՝

1. Տրանզիտի խնդիրը կարգադրված է անգլիական ներկայացուցչի ջանքերով Հայ և Վրացի կառավարությունների միջև;
2. Սահմանների ճշտումը կկատարի Conférence-ը Հասքելի առաջնորդությամբ;
3. Մեր երկրի պարենավորման համար Լորդ Քըրզընն դիմել է Հռոմում գումարված Միջ-Դաշնակից Կոնգրեսին:

Սըր Ջոն Թիլլեից հետո՝ ես տեսնվեցի Լլոյդ Ջորջի առաջին քարտուղար Ֆիլիփ Քըռի հետ: Ես նրան ներկայացրի հետևյալ խնդիրները.

1. Մեր զորքի վերակազմությունը;

57 *Պահեստ, պաշար, ռեզերվ:*

2. Մեր գաղթականների վերադարձը;
3. Մեր սահմանների որոշումը;
4. Մեր պետության ճանաչումը:

Ֆիլիփ Քըռ խոստացավ այս բոլորը ներկայացնել Լ. Ջորջին և խնդրեց միաժամանակ իսկույն իրեն հաղորդել, թե ինչ ծախք կպահանջի 50 հազարանոց հայկական մի բանակ:

Ես խոստացա մեր զինվորական խորհրդականների հետ կազմել և ղրկել նրան այդ հաշիվը:

Ապա նա հանկարծ ավելացրեց թե՝

– Եթե դուք կամենում եք խորհրդականներ, գրեցեք և այդ:

Վերջին առաջարկն ինձ համար անսպասելի էր և ապացուցանում է, որ Անգլիա, ինչպես վերևում ասացի, մեր հանդեպ ռեզերվից դուրս գալու նշաններ է ցույց տալիս:

Իմ հասնելուց 3-4 օր հետո՝ հեռագիր ստացա Օհանջանյանից, թե Պողոս Փաշան նույնպես գալու է Լոնդոն: Այս ինձ համար անսպասելի էր, քանի որ մեկնելիս, հրաժեշտի ժամին նա ինձ ոչինչ չասաց այդ մասին: Պարզ էր, որ իմ մեկնումը Լոնդոն նրան թելադրել էր նույն բանն անել: Անախորժ և մեր Դատի համար այսքան կորստաբեր մրցակցության զգացումը, հակառակ իմ բոլոր ջանքերի, չի թողնում Փաշան: Իմանալով նրա գալու մասին՝ ես վճռեցի ընդհատել իմ տեսակցությունները և սպասել մինչև նա հասնի՝ **միասին ու միաբան** քայլեր անելու համար: Տարաբախտաբար, Պողոս Փաշան հասավ և առանց ինձ ասելու, տեսակցություն խնդրեց Քըրզընից ու գնաց մենակ:

Քըրզընն ասել է հետևյալները.–

1. Ամերիկան Հայաստանի մանդատն ընդունելու չէ;
2. Թյուրքական և Հայկական Խնդիրները կքննվին ի մոտո, հավանաբար Լոնդոնում;
3. Քանի որ ամերիկյան մանդատ չկա, անհնարին է Մեծ Հայաստան Կիլիկիայով, որը պիտի մնա Ֆրանսիային;
4. Մեր դրությունը ծանրանում է նրանով, որ Մուստաֆա Քեմալը 100 հազար զորք ունի և որևէ պետություն հանձն չի առնի նրան այդտեղից զենքի ուժով հեռացնելու պատիվը: **Հարկ կլինի գործել դիպլոմատիական ճամփով;**
5. Ցավ է հայտնել, որ զինադադարի պայմանները լավ չսահմանեցին Հայաստանի գրավումը սկզբից;
6. Գրեթե վճռապես հայտնել է, որ քրդական պետություն պիտի կազմվի Միջագետքի հյուսիսում և շատ գոհ է եղել, որ մենք թուրք ենք ստորագրել քյուրդերի ներկայացուցիչ

Շերիֆ փաշայի հետ, որին, ասել է, սակայն, ես չեմ հավատում և չեմ վստահում;

Ասել է,

7. Որ «հայերդ պիտի բավականանաք Կովկասյան Հայաստանի և Թյուրքաց Հայաստանի երեք վիլայեթների միացումով»;
8. Որ ո՛չ Անգլիան, ո՛չ Ֆրանսիան ու Իտալիան չեն կարող ընդունել Հայաստանի մանդատը: Ինչ վերաբերում է փոքր պետություններին, ինչպես Հոլանդիա, Շվեյցարիա, Կանադա և այլն, նրանք չեն կարող, որովհետև Հայաստանում կարգ պահելու համար պետք է 150 հազարնոց բանակ;
9. Ցույց է տվել ապշեցուցիչ անծանոթություն մեր ժողովրդի՝ հայտարարելով թե Հանրապետության սահմաններում հայերի թիվը ընդամենը 400 հազար է (Փաշան հերքել է):

Մեզ խորհուրդ տվին խսկույն դառնալ Փարիզ:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՉԱՅԿՈՎՍԿՈՒ ՀԵՏ

Դեկտեմբեր 6, 1919

Չայկովսկին իր մոտ ժողովի էր հրավիրել Ռուսաստանի այն ազգերի ներկայացուցիչներին, որոնք «ձգտում են վերստին միանալ Ռուսիային»: Հրավիրել էր և մեզ: Ես ու Համոն[58] գնացինք մասնավոր զրույցով պարզելու, թե ինչու մենք՝ հակառակ բոլոր համակրության դեպի ռուսները, անկարող ենք հիշյալ ժողովներին մասնակցել:

Ես ասացի, որ անկասկած պ. Չայկովսկին և ընկերները հավատում են մեր զգացումներին դեպի Ռուսիան, որի արագ վերածնությունն ու վերակազմությունը՝ լայն ազատական հիմունքներով, մեր ամենաբուռն իղձն է, քանի որ անկախ Հայաստանը թուրանական ծովի մեջ միայն և միայն Ռուսաստան ունի որպես հենարան: Բայց և ստիպված ենք չմասնակցել «ռուսներին միանալ ցանկացող ազգերի» ժողովներին, քանի որ՝

– Մենք արդեն իսկ միացած ենք Թյուրքաց Հայաստանին և այդ հիմքով է, որ պաշտպանել ենք ու պաշտանում ենք մեր Դատը

[58] *Համո Օհանջանյան:*

Conférence-ի առաջ: Գրեթե ամբողջ մի տարի մեզ Թյուրքաց Հայաստանին միացած հայտարարելուց հետո, այժմ գալ և մենակ մասնակցել այդպիսի ժողովի, դա կլիներ համազոր վերջին պահուն մեր հայրենիքի խոշոր մասից՝ Թյուրքաց Հայաստանից հրաժարելուն, ինչ որ Դուք, Պ. Չայկովսկի, մեզնից չեք պահանջի և մենք էլ հանձն առնել չենք կարող: Մենք այսուհետև կարող ենք և պետք ենք դաշնակից լինել Ռուսաստանին, բայց ոչ թե միանալ նրան:

Չայկովսկին պատասխանեց թե՝

– Իրավունք ունիք:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՊԱՎԻՐԱԿ ՈՒԱՅԹԻ ՀԵՏ

Դեկտեմբեր 8, 1919

Այսօր ճաշից հետո ժամը 3-ին Պողոս Փաշա և ես գնացինք տեսակցության ամերիկյան երկրորդ պատվիրակ Ուայթի հետ: Մեր զրույցի նյութն էր՝ իմանալ, թե ի՞նչ պիտի անենք այն դեպքում, եթե պետությունները, առանց սպասելու Ամերիկայի պատասխանին, ձեռք առնեն ու վճռեն Արևելյան և մասնավորապես Հայոց Հարցը:

Զրույցի ընթացքում Ուայթ հայտնեց հետևյալները.–

1. – Անկարելի չէ, որ պետությունները դիտմամբ չկամենան սպասել և վճռեն Հայոց ու Թյուրքիայի Խնդիրները, մասնավորապես Ֆրանսիա, որ այդ միջոցով հույս ունի պահել Կիլիկիան: Դուք գիտեք անշուշտ,– ասաց Ուայթ,– որ Կիլիկիան մենք ենք պահանջել:
2. – Խորհուրդ չէի տա Ձեզ՝ Ամերիկայի մերժումը բացարձակ ընկատել և նոր քայլեր առնել ըստ այս համոզումի: Ամերիկան կարող է անակնկալ ձևով հաստատել Դաշնագիրը, թեև,– ավելացրեց Ուայթ,– ես հույս չունեմ, թե նա կընդունի Հայաստանի մանդատը: Իսկ ուրիշ օգնության եղանակ ես տակավին չեմ տեսնում (Իմ խոսքին, թե «Օրինակ՝ Պարսկաստանի և Անգլիայի համաձայնությունը հիմ ունենալով, հնար չէ՞ այդպիսի մի համաձայնությամբ մեզ օգնել», նա ավելացրեց, թե՝ «Այդ անհնարին չէ, բայց դրա համար դարձյալ մեր հասարակական կարծիքի պատրաստություն է պետք»):

3. – Դաշնագիրը կարող է հաստատվել վերապահումներով, ինչպես այդ գրում է Temps-ը, և դա լավագույն ձևն է:
4. – Ես հույս ունեմ՝ Ամերիկա հասնելով՝ պարզել շատ բան: Կարծում եմ, որ այնտեղ ձեզ ավելի օգտակար կլինեմ, քան այստեղ: Համենայն դեպս, դուք հուսահատվելու չեք;
5. – Մեր պատվիրակության մեկնելով,– ասաց,– դուք հարաբերություն կպահպանեք մեր դեսպանի հետ, որին մենք կխոսենք այդ մասին:

Հաջորդ օրը Ամերիկյան ամբողջ պատվիրակությունը մեկնեց Փարիզից:

ԿԼԵՄԱՆՍՈՆ ԼՈՆԴՈՆՈՒՄ

Դեկտեմբեր 10, 1919

Այսօր իմանալով, որ Կլեմանսոն Բերքլոյի հետ Լ. Ջորջի հրավերով մեկնում է Լոնդոն, ուր պիտի քննվի, ի միջի այլոց, և Թյուրքական Պրոբլեմը[59], հեռախոսով խնդրեցի Պողոս Փաշային, որ մենք երկսով անմիջապես մեկնենք Լոնդոն: Եվ ավելացրի, որ նույնիսկ այն դեպքում, որ մեր ճամփորդությունը անհետևանք մնա, դարձյալ մեզ վրա պատասխանատվություն կա անպատճառ այս պահուն Լոնդոն գտնվել: Պողոս Փաշան առարկեց, թե անօգուտ է այդ ճամփորդությունը, որովհետև՝

1. Կլեմանսոն կլինի Լոնդոնում հինգշաբթի ու ետ կգա շաբաթ. այդքան կարճ ժամանակում անհնարին է Արևելյան Կոնֆիրը քննել;

2. Որչափ ինքը գիտե, Արևելյան Հարցի համար չէ, որ Կլեմանսոն գնում է, այլ ֆինանսական խնդիրների և, մեկ էլ, Գերմանիայի համար:

Փորձեցի համոզել, որ սխալվում է. իզուր անցավ: Հայտարարեցի, թե ես գնում եմ: Գնալու իմ որոշումը նրան շատ դժկամակեց:

Տոմսակն առա և չորեքշաբթի երեկո գնացի Պողոս Փաշային մնաք բարևի, որ հինգշաբթի առավոտ մեկնեմ: Նա նորից սկսեց ինձ համոզել, թե ես սխալ եմ գործում գնալով, թե այդ ճամփորդությունից բան դուրս չի գա, թե Կլեմանսոն շուտով ետ պիտի գա, թե Կլեմանսոյին շատ մոտիկ մի մարդ իրեն այդպես է ասել: Եվ

[59] *Խնդիր, հարց:*

երբ ես առարկեցի դարձյալ, նա մեջտեղ նետեց մի արգումենտ, որ ինձ ճնշեց: Նա ասաց.

– Ձեր ճամփորդությունը Լոնդոն ոչ միայն օգտակար չի լինի, այլև վնաս կբերի, քանի որ Կլեմանսոն, որ առանց այն էլ մեզ հետ լավ չէ, պիտի նկատի որպես մի act inamicale[60] գնալ նրա քթի տակ տեսակցության անգլիացոց հետ. ավելի լավ է չգնաք:

Ես զիջեցի վերջին արգումենտին. տոմսակը ետ տալ տվի:

* * *

Երբ Կլեմանսոն 4 օր հետո վերադարձավ, հասկացա, որ մեծ սխալ էր չգնալը իմ կողմից և ես պիտի չլսեի Փաշային, որ ինքը կնոջ պատճառով անկարող տեղից շարժվելու, ինձ էլ դիտմամբ խափանեց գնալ:

[60] Անբարյացակամ ակտ:

1920

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
Ա. ՔԱՐՏՈՒՂԱՐ PHILIPPE KERR-Ի ՀԵՏ

Լոնդոն
Հունվար 6, 1920

Ես հարցրի Կիլիկիայի մասին:

Philippe Kerr (Ֆիլիպ Քըռ). – Կիլիկիայի խնդիրը մեր և ֆրանսացիների մեջ կարգադրված է վերջնականապես: Կիլիկիան թողնված է Ֆրանսային: Մենք չէինք կարող ուրիշ կերպ վարվել, որովհետև ամերիկյան մանդատ Հայաստանի վրա այլևս անհույս է: Այստեղ ես տեսել եմ մի շարք ամերիկացիների, որոնք բոլորը միաբերան վկայում են, որ միանգամայն հոգնած են Եվրոպայի այս անմիտ միջամտություններից և կուզեին վերջ տալ այդ դրությանը:

Ես. – Մենք ստիպված ենք այսպիսով անել bonne mine à mauvais jeu[61], իսկապես էլ գոհ ենք: Եթե Կիլիկիան մեզ չպիտի հասնի, գոնե թյուրքերին չմնա, այլ Ֆրանսիային: Այս նոր պայմաններում, սակայն, կուզեինք գեթ՝

ա) Ֆրանսիային թողված տերիտորիային սահմանակից լինել,

բ) հայ բնակչության ազգային շահերը ապահովված տեսնել մի ռեժիմով[62], որ համապատասխան լիներ Ֆրանսիայի մեզ արած խոստումներին այս մասին.

գ) քանի որ մենք այսպես հեռանում ենք Միջերկրական ծովից, Ֆրանսիան բարի գտնվեր մեզ երկաթուղային ելք տար դեպի Միջերկրական ծով:

Ֆիլիպ Քըռ. – Այդ բոլորի մասին համաձայնության գալու է Ֆրանսիայի հետ:

Ես. – Այո, բայց ձեր աջակցությունը մեր ճիգերին՝ արդյունք կտա և կապահովե: Հետո, Կիլիկիայից դուրս մնացած մեր 6 վիլայեթները անշուշտ մեզ պիտի պատկանեն և պիտի կցվեն Հայաստանին: Այնպես չէ՞:

Ֆիլիպ Քըռ. – Չեմ կարող ասել, բայց Հայաստանի երկու հատվածները պիտի միանան: Այս մասին կարող եք հանգիստ լինել:

Ես. – Շնորհակալ եմ: Բայց մենք անհանգիստ ենք մեր շրջապատի պատճառով: Մի կողմից Մուստաֆա Քեմալ, մյուս կողմից Ադրբեյջան, իսկ հյուսիսից բոլշևիկյան մոտեցող քառը: Իրերի այս կացության մեջ արդյոք Անգլիայի շահերը չե՞ն պահանջում ռազմամթերքով և նյութական միջոցներով կազմակերպել մեր բանակը:

Ֆիլիպ Քըռ. – Այս մասին անպատճառ խոսեցեք Զինվորական նախարար Չըրչիլին և պարզեցեք ասիական մեր տիրապետություններին սպառնացող վտանգը: Առայժմ շատ կխնդրեի պատասխանել. ի՞նչ ներշնչում կարող էիք մեզ անել այն պարագային, եթե Մուստաֆա Քեմալ չկամենա դատարկել թյուրքահայ նահանգները՝ ձեզ հանձնելու համար: Նկատի առեք, որ զինվորական կամ քաղաքական ճնշում չենք կարող գործ դնել ո՛չ Պոլսում, որ արդեն մեր ձեռքն է, ո՛չ էլ Թյուրքիայի այն մասում, որին Դաշնակիցները տիրել են:

Ես. – Նախքան Ձեր հարցին պատասխանելը՝ պարզենք, թե ինչ ուժ է ներկայացնում Մուստաֆա Քեմալ: Չգիտեմ, ինչ է Ձեր կարծիքը, բայց մեր զինվորական կայանի տեղեկությանց նայելով՝ Մուստաֆա Քեմալի շարժման մեջ **պլոխը**[63] մեծ բաժին ունի: Նրա զորքի թիվը 10-12 հազարից չի անցնում, այն էլ վատ հագված, վատ պատրաստված: Մեկ-երկու հազար էլ քրդական հեծելազորք կարող է լինել: Համենայն դեպս, 15.000-ից ավելի չի լինի մեր շրջաններում. նույնքան էլ հույների դեմ: Այդպես էր վկայում նաև ամերիկյան զինվորական միսիայի[64] պետ, զորավար Հարբորդ: Արդարև, եթե Մուստաֆա Քեմալի ուժը մեծ լիներ, նա հանգիստ չէր լինի մինչև այժմ: Բայց և այնպես 15.000-ը նույնպես ուժ է:

«Դուք հարցնում եք, թե ի՞նչպես կարելի է հեռացնել այդ ուժը: Արդարև այն կլիներ, որ ասեի թե՝ Դաշնակիցները պարտական են օգնել մեզ իրենց զորքով՝ դուրս քշելու համար թյուրքերը մեր հայրենիքից, քանի որ հայերը ձեզ համար չորս տարի անձնվիրաբար կռվեցին: Բայց ես գիտեմ, որ ո՛չ դուք ձեր սկզբունքացի-

[61] Վատ խաղ մը գոհ երևիլ:

[62] Ռեժիմ, վարչաձև:

[63] *Բլեֆ, բլաֆ – հակառակ կողմին ուժեղ երևալու սնապարծ հնարանք անիրական ուժի հորինվածք:*

[64] *Առաքելություն:*

ներին[65] կուղարկեք Հայաստան, ո՛չ Ֆրանսիան իր բրոտոններին[66] և ո՛չ էլ Իտալիան իր լոմբարդացիներին[67]: Հետևաբար ես Ձեզ կասեմ. Եթե դուք զսպեք մեր թիկունքում Աղրբեյջանը և մեզ նյութապես հնարավորություն տաք վերակազմելու մեր բանակը, կարող եմ Ձեզ վստահեցնել, որ մենք կարող ենք Մուստաֆա Քեմալը դուրս հանել մեր սահմաններից:

Հարց. – Դուք ո՞րքան զորք կարող եք ոտքի հանել:

Պատասխան. – Ոչ ավելի քան 40.000: Սա այս քառասուն հազարի համար է, որ եկած եմ խնդրելու Անգլիայի աջակցությունը:

– Խոսեցեք Չըրչիլին,– ասաց Ֆիլիպ Քը,– Ես էլ իմ կողմից կխոսեմ Լլոյդ Ջորջին: Երեք օրից Լլոյդ Ջորջ, Քըրզըն, ես և ուրիշներ գնում ենք Փարիզ՝ բրքական և ձեր գործով զբաղվելու: Եկեք և Դուք, անպատճառ: Առայժմ տվեք ինձ Փարիզի Ձեր հասցեն:

ՆԱԽԱՃԱԾ
FITZ-MAURICE–Ի ԵՎ ԳՆԴԱՊԵՏ MALLO-Ի ՀԵՏ

Լոնդոն
Հունվար 6, 1920

Պարլամենտի անդամ Ֆից-Մորիսը՝ Բրիտանիո Պոլսի դեսպանատան նախկին թարգման, լավ գիտե Արևելքը, հայերին և Հայկական Հարցը: Ճանաչել է մասնավորապես Վարդգեսին, Փաստրմաճյանին և Զոհրապին: Իրլանդացի[68] է. սրամիտ, իրոնիկ[69], ըմբոստ՝ կառավարության դեմ:

Չի հավատում, որ անգլիական կառավարությունից որևէ բարիք կգա: Իր զրույցը չափազանց հետաքրքրական է, բայց առանց գործնական արժեքի, այլ որպես հաճելի ժամանց:

Գնդապետ Մալլո հետաքրքրված է բոլշևիկներով: Ինքը բոլշևիկ չէ, բայց նրանց հաջողությունները ծափահարող է: Նրա կարծիքով, Դենիկինի պարտությունից հետո՝ պետությունները ստիպված պիտի լինեն երեք ամսից հարաբերության մեջ մտնել

65 *Շոտլանդացիներ:*
66 *Բրետոններ:*
67 *Լոմբարդացիներ:*
68 *Իռլանդացի:*
69 *Հեգնող:*

սովետների հետ և հավանականաբար հաշտություն կնքել: Միաժամանակ, ասում է նա, կճանաչվեն Ռուսաստանից անջատված մանր պետությունները:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ԳՆԴԱՊԵՏ GRIBEN-Ի ՀԵՏ

Լոնդոն
Հունվար 7, 1920

Գնդապետ Գրիբեն Արտաքին Գործոց նախարարության զինվորական կարևոր խորհրդականն է: Նրան են ենթարկվում Արևելքի քաղաքական կազմակերպությունների գործերը: Սա իմ երկրորդ տեսակցությունն է նրա հետ:

Երկու օր առաջ տեղի ունեցած առաջին զրույցի նյութն էր մեր զորքի վերակազմությունը, որ նա էլ գտնում է անհետաձգելի և անհրաժեշտ՝ խոստանալով իր լիակատար աջակցությունը:

Այս երկրորդ տեսակցությունը առաջինի շարունակությունն էր: Գնդապետի կարծիքով Մուստաֆա Քեմալ 15.000-ից շատ ավելի պակաս զորք ունի: Գլխավորը մեր բանակի վերակազմությունն է, որի մասին նա պատրաստում է զեկույց Արտաքին և Զինվորական նախարարությունների համար: Այս առթիվ կուզեր ունենալ լրիվ տեղեկություններ:

Հարց. – Այս պայմանների մեջ Մուստաֆա Քեմալ կարո՞ղ է անցնել Հայաստան:

Պատասխան. – Հավանորեն ո՛չ: Մեր լեռները, մեր դժվարին ճամփաները ձմռան զինվորական շարժումները դարձնում են համարյա անհնարին:

Գնդ. Գրիբեն. – Այդ լավ է. հետևապես մենք մեր առջև ունինք 3 ամիս՝ հայկական զորքի վերակազմության համար: Կարո՞ղ եք ասել, թե որքան զորք կարելի է ոտի հանել:

Ես. – Եթե լայն օգնություն լինի, կարծում եմ 40.000:

Գրիբեն. – Կարո՞ղ եք կերակրել այդ զորքերը, որովհետև մենք կուզենք զբաղվել զինվորական և հագուստների հարցերով:

Ես. – Եթե Ամերիկան այսպես շարունակի իր օժանդակությունը, հույս ունեմ, որ կկարողանանք:

Գրիբեն. – Կարո՞ղ եք ասել, թե ո՞րքան ժամանակ կարող եք ձեր զորքը զենքի տակ պահել: Ես ստուգապես գիտեմ, որ հույն զինվորները խստորեն տրտնջում են այս հարատևող կռիվներից:

Ես. – Հույների և մեր քաղաքական կացության միջև մեծ տարբերություն կա: Նրանք ճգնում են ձեռք բերել, մեծացնել արդեն գոյություն ունեցող իրենց պետությունը, մինչդեռ մեր ժողովուրդը աշխատում է ազատվել թրքական լուծից և պահպանել իր գոյությունը: Հոգեբանական այս դրությունը ընդունակ է մեր զորքերին մղել թյուրքերի դեմ պայքարի, մինչև իսպառ ազատվենք թրքական վտանգից...

Գրիբեն. – Իրավ է. այդ հասկանում եմ: Ո՞չտի մեքենա և վագոններ ունիք:

Ես. – Մեր ունեցածները քիչ են: Երկաթուղային գծերը մեծ մասով մնացին Վրաստանին և Ադրբեջանին: Դուք կարող եք նրանցից առնել մեր բաժինը:

Գրիբենը տվեց մի քանի այսպիսի գործնական այլ հարցեր, որոնց ես պատասխանեցի և նրան տվի զինվորական դրության մասին մի աշխատություն, որ պատրաստել էր գեներալ Ղորղանյանը:

Որովհետև նույն օրը Արտաքին Գործերի նախարարը քաղաքում չէր, ես տեսնվեցի Sir John Tilley-ի հետ: Քըրզընին տալու համար Ղարաբաղի մասին նրան հանձնեցի մի նոթ[70], որով, պաշտպանելով մեր իրավունքը պատմական և այլ տեսակետներից, ցուցահանում էի այն մեծ վտանգը, որ սպառնում է Հայաստանին, եթե Ղարաբաղի Լեռնաստանը գրավվի թաթարներից:

Ներկայացրի նաև մի ուրիշ նոթ, որ հերքումն էր Քըրզընի վերջին ճառի այն մասի, ուր նա ասում է, որ Հայաստանի Հանրապետության մեջ տեղացի հայերի թիվն է 500.000, իսկ թրքահայ գաղթականներինը՝ 150.000: Իմ թղթով ես տվի հայերի ճշգրիտ թիվը՝ հաստատված ռուսների և մեր կողմից:

Նախարարին տվի նաև Հայաստանի ազգագրական մի հանդես:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՉԸՐՉԻԼԻ ՀԵՏ

Լոնդոն, հունվար 8, 1920

Տեսակցությանս նպատակն էր նրանից խնդրել մեր բանակի համար զենք և ռազմամթերք:

[70] *Նշում. գրառում, տեղեկագիր:*

Ես նրան ասացի.

«– Պր. նախարար, այս պատերազմի ընթացքում հայերը երկու անհերքելի ապացույցներ տվին.

1. անվերապահ կերպով անձնատուր եղան Դաշնակիցներին,

2. գիտեն արիաբար կռվել, երբ նրանց տրվեն անհրաժեշտ միջոցները:

Տարաբախտաբար զինադադարի շրջանում Դաշնակիցները պետք չտեսան հայ ժողովրդի այդ երկու տվյալները ի սպաս դնել Արևելքի խաղաղության գործին և Հայաստանի ազատության: Մեր բոլոր դիմումները՝ մեր զորքին օգնություն հասցնելու մասին, մնացին անհետևանք: Այժմ, երբ բոլշևիկների առաջխաղացումով Արևելքը կանգնած է ընդհանուր շփոթի նախօրյակին, որից պիտի տուժեն ոչ միայն հայկական, այլև Դաշնակիցների և մասնավորապես Անգլիայի շահերը, կարծում եմ, որ բանակի վերակազմությունը պետք է նկատվի անհետաձգելի:

Խնդրեմ այս առթիվ նկատի առնել, որ Մուսթաֆա Քեմալ իր հրոսախումբերով հարավից սպառնում է թե՛ Հայաստանի և թե՛ Դաշնակիցների շահերին: Արևելքում Ադրբեյջանը՝ թյուրքերի բնական դաշնակիցը, օգտվելով Հայաստանի ծանր դրությունից և Դաշնակիցների անտարբերությունից, գրավեց Ղարաբաղի բարձրավանդակը, որտեղից նա սպառնում է Հայաստանին:

Մյուս կողմից հառաջանում են բոլշևիկները, որոնց առաջ բերած շփոթը կարող է ազդանշան դառնալ թյուրքերի և թաթարների՝ Հայաստանի վրա հարձակման պանթուրանիզմի և պանիսլամիզմի գաղափարը իրականացնելու համար:

Նկատելով այս բոլոր պայմանները, ես շատ եմ խնդրում, որ վերջապես հնար տրվի մեզ վերակազմելու մեր բանակը, հասցնելով այն մինչև քառասուն հազարի: Նման մի ուժ միայն կարող է ազատել հայ ժողովուրդը անխուսափելի կատաստրոֆից[71]: Խնդրում եմ Ձեր աջակցությունը»:

Չըրչիլ պատասխանեց.

«– Ես ըմբռնում եմ դրության լրջությունը: Ցավում եմ, որ ես մենակ իրավասու չեմ Ձեզ գոհացում տալու: Եթե ես այդչափ իրավազոր լինեի, Դենիկինը այդպես չէր պարտվի: Տարաբախտաբար, պետությունները չուզեցին հասկանալ, որ Դենիկինի գոյությունը ամենքին հարկավոր է: Նա մի հովանոց էր, որ շատերին էր ծածկում: Մենք պետք եղած օգնությունը չհասցրինք նրան: 20 մետր անդունդի վրա 10 մետր տախտակ չեն ձգի:

[71] *Այնտ:*

Արդյունքը մեր աչքի առաջն է: Հուսամ՝ պետությունները շուտով զգաստանան: Բարեբախտաբար Դենիկինի զորությունը իսպառ փչացած չէ: Նա նահանջել է բավական կանոնավոր կերպով:

«- Գալով ձեր խնդրին, հավատացեք, որ ծանոթ եմ ձեր զոհաբերություններին և սրտանց համակիր եմ ձեզ: Իսկույն ներկայացրեք ինձ մի նոթ՝ ձեր պետքերի մասին: Ես երկու օրում կուսումնասիրեմ ձեր պահանջները և իսկույն կներկայացնեմ մեր կառավարության: Խոստանում եմ լինել ձեզ համար լավ կանալ[72]»:

Ես պատասխանեցի.

– Պր.Նախարար, ես կխնդրեի որ լինեիք ոչ միայն կանալ, այլև փաստաբան մեր պետքերի և մեր վիճակի:

Չըրչիլ.

– Իսկույն ներկայացրեք Ձեր նոթը: Ես խոստանում եմ անել այն, ինչ որ ինձանից է կախված: Եվ խնդրեմ, հավատացեք իմ խոր համակրանքին դեպի հայ ժողովուրդը:

Չըրչիլ երիտասարդ և եռանդուն մարդ է և խիստ համարձակ իր որոշումների մեջ:

Մեկնելուց առաջ ես նրան թողեցի մի Note Verbal[73] մեր զրույցի մասին և հաջորդ առավոտն իսկ ես նրան ուղարկեցի մեր զինվորական պետքերի համար զորավար Ղորղանյանի պատրաստած մի փաստաթուղթը՝ քառասուն հազարնոց մի բանակի պահանջների վերաբերյալ:

Նույն օրը վերադարձա Փարիզ, ուր եկան նաև Անգլիայի կարևոր նախարարներ՝ Լլոյդ Ջորջի հետ միասին:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԲԵՐԹԸԼՈ-Ի ՀԵՏ
(Ենթաքարտուղար Արտաքին Գործերի)

Հունվար 25, 1920
Փարիզ

Այս տեսակցությունը տեղի ունեցավ Արտաքին Գործոց նախարարության մեջ: Պողոս Փաշան և ես հարցրինք նախ թե՝ որո՞նք են Ֆրանսիայի ծրագրերը Կիլիկիայի վերաբերմամբ: Ավելացրինք, որ մենք ուրախ կլինենք տեսնել Ֆրանսիան Կիլիկիայում, քանի որ մենք ամերիկյան մանդատ չունինք. միայն կխնդրեինք՝

1. Ֆրանսական տիրապետությունը սահմանակից լինի Հայաստանին, որպեսզի մենք Թյուրքիայով չբաժնվենք և հնար ունենանք ի հարկին հենվել Ֆրանսիայի վրա և մյուս կողմից զատել Թյուրքիան ասիական մնացած մահմեդականներից;
2. Խուսափելու համար թրքական բոլոր ինտրիգներից, Կիլիկիան **իսպառ** ազատել թյուրք վարչությունից և նկատել որպես ոչ-թյուրքական հող և ըստ այնմ կառավարել, հենվելով ավելի շատ հայ տարրի վրա, որի անկեղծությունն ու հավատարմությունը դեպի Ֆրանսիան կասկածից դուրս է;
3. Հայաստանին տնտեսական ելք տալ դեպի Միջերկրական՝ Կիլիկիայի միջոցով;
4. Աջակցել մեզ իրագործելու Հայաստանի միությունը հյուսիսում և, որ գլխավորն է, ստանալ սեփական ելք դեպի Սև ծով:

Բերթլոն պատասխանեց.–

1. Մենք Կիլիկիայում կմնանք և անպայման սահմանակից կլինենք Հայաստանին. կարող եք ապահով լինել;
2. Կիլիկիայում թյուրքական վարչություն պահելու չենք;
3. Տնտեսական ելք Կիլիկիայի միջով դեպի Միջերկրական՝ հնարավոր է;
4. Դուք կունենաք Միացյալ Հայաստան կովկասյան հատվածի հետ: Չեմ կարող ասել, թե Թյուրքիայի ո՛ր մասը ձեզ կանցնի. դա դեռ որոշված չէ,– Conférence-ից կախում ունի,– բայց դուք կստանաք Էրզրումը, սակայն ելք դեպի Սև ծովը՝ տակավին խնդիր է, և ես այդ մասին ոչինչ ասել չեմ կարող:

Բերթլոն այդ օրը թվում էր շատ սիրալիր և մենք ստացանք այն տպավորությունը թե Ֆրանսիան օգնելու է մեզ:

---

[72] Ջրանցք, միջնորդ, *միջոց, ուղի:*

[73] Հուշագիր, *բառացի զրառում:*

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԲԵՐԹԼՈ-Ի ՀԵՏ
(Ենթաքարտուղար Ֆրանսիայի Արտաքին Գործերի)

Փետրվար 20, 1920, Լոնդոն

Այս երկրորդ տեսակցությունը տեղի ունեցավ Լոնդոնում, «Հայդ Փարք» հյուրանոցում: Պողոս Փաշան ու ես հարցրինք, թե քանի որ այժմ Կոնֆերանսը գումարված է Լոնդոնում, կխնդրեինք իմանալ, արդյո՞ք պր. Բերթլո-ի նախկին հայտարարությունները իրականանալու են թե ոչ, և ինչ վիճակում է դեպի Սև ծով ելքի խնդիրը:

Բերթլոն չափազանց կոշտ էր ու սակավախոս:

– Դուք ստիպում եք ինձ հայտարարություններ անել,– ասաց նա անհանգիստ տոնով,– որ ես չեմ ուզում անել:

– Ներեցեք, պարոն Բերթլո,– պատասխանեցի.– մեր գալու նպատակն այդ չէ: Մենք գիտենք, որ այս օրերս վերապահումներ անելու ստիպված եք, բայց կխնդրեինք լսել մեր բացատրությունները մի քանի խնդիրների մասին, որոնք մեր կարծիքով կենսական նշանակություն ունեն մեր պետության և մեր ժողովրդի համար, ինչպես օրինակ՝ մեր ելքը դեպի Սև ծով:

– Շվեյցարիան ապրում է առանց ծովի,– պատասխանեց Բերթլոն չոր տոնով:

– Շվեցարիան գտնվում է Եվրոպայի սրտում, շրջապատված քաղաքակիրթ պետություններով. անալոգիան համոզիչ չէ: Վերջապես, մենք պատերազմից առաջ օգտվել ենք և՛ Թյուրքիայի ծովային ճամփաներից, և՛ Ռուսիայի: Այժմ մեզ այս երկու պետությունների լծից ազատելով քաղաքականապես, անարդար և հակասական կլինի դնել տնտեսական լծի տակ՝ մեր բոլոր թշնամի հարևանների:

– Չգիտեմ. Կոնֆերանսը կտեսնե: Մյուս խնդիրները նույնպես. ես ոչինչ ասել կարող եմ: Դեռ ոչինչ որոշված չէ: Մենք մենակ չենք: Ֆրանսիան միայն անդամ է Կոնֆերանսի,– եղավ Բերթլո-ի պատասխանը:

Մենք տեսանք որ անօգուտ է պնդել: Դուրս եկանք ամենածանր տպավորությամբ: Եվ Պողոս Փաշան, երբ արդեն դուրս էինք եկել դռնից, դարձավ ինձ և հակառակ իր սովորության՝ հայերեն ասաց.

– Գեշ, գեշ, գեշ:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ԼՈՐԴ ՐՈԲԵՐԹ ՍԵՍԻԼԻ ՀԵՏ
(Անդամ Պարլամենտի)

Փետրվար. 22, 1920
Լոնդոն

Լորդ Ռոբերթ Սեսիլ Սոլյուսբիրիի երկրորդ որդին և Համայնքների Ժողովի ամենաազդեցիկ անդամն է, Լլոյդ Ջորջի հակառակորդը և ասում են հավանական հաջորդը: Համայնքների Ժողովում թե դրսում, նա մեր ամենաեռանդուն պաշտպանն է եղած. մասնավորապես մեծ ծառայություն մատույց իր ժամանակին հերքելով Բաքվի կռիվների ժամանակ մեր կամավորների ու զինվորների մասին չարամտորեն տարածված **արտուրը**[74]: Դեռ անցյալ անգամ Լոնդոն եղածս պահուն խնդրել էի տեսակցություն: Լորդ Սեսիլ իսկույն պատասխանեց՝ ժամ և օր նշանակելով, որից ես անկարող եղա օգտվել, որովհետև ստիպված էի շտապով դառնալ Փարիզ, ուր սկսվեցին Կոնֆերանսի նիստերը: Հաղորդեցի այդ մասին Լորդ Սեսիլին և մեկնեցի: Այս անգամ Լոնդոն հասնելով, հիշեցրի իր առաջին խոստումը և խնդրեցի տեսակցություն այս անգամ իմ և Փաշայի համար միասին: Լորդ Ռոբերթ Սեսիլ սիրալիր կերպով իսկույն պատասխանեց, թե պատրաստ է մեզ ընդունել:

Մենք հայտնեցինք մեր մտահոգությունը՝ ֆրանսիական մամուլի մի քանի խոշոր օրգանների ընթացքի մասին,– թյուրքասիրական հովը շատ ուժեղ է ֆրանսիական պաշտոնական շրջաններում,– և երկյուղ հայտնեցինք, որ Լլոյդ Ջորջը կարող է մեզ զոհ բերել անգլո-ֆրանսիական բարեկամության: Միաժամանակ ներկայացրինք մեր պահանջները՝ քարտեզը փռած:

Փաշան, հակառակ իմ տեսակետի, դարձյալ ընդարձակորեն խոսեց Կիլիկիայի մասին՝ ցույց տալու համար, թե Ֆրանսիան պարտական է Կիլիկիան նկատել որպես հայ երկիր՝ իր մանդատի տակ. թե նա իրեն՝ Փաշային խոստացել է հայերի ինքնավարություն Կիլիկիայում:

Լորդ Սեսիլ ընդհատեց՝ հարցնելով.

– Գրավոր խոստում ունի՞ք:

– Ոչ,– պատասխանեց Փաշան:

Լորդ Սեսիլ ժպտաց բարեմտորեն:

---

[74] *Անհեթեթություն:*

Ես խնդիրը դարձրի մյուս պահանջներին, մասնավորապես այն կարևոր կետին, որ մեր և ֆրանսիական տիրապետության միջև թուրքական որևէ զոնա[75] չլինի:

– Կարծու՞մ եք, որ դա վնաս կլինի ձեզ:

– Անշուշտ,– պատասխանեցի,– քանի որ այդպիսով Թյուրքիան հարաբերության մեջ կմտնի մնացած իսլամ երկրների,– Սյուրիայի, Միջագետքի, Արաբիայի հետ, ինչ որ շատ վտանգավոր է, և մենք կտրված կլինենք մի քաղաքակիրթ երկրից, որպիսին է Ֆրանսիան:

– Այո,– ասաց Լորդը,– բայց եթե դուք փոքրիկ կորրիդոր[76] չձգեք թյուրքերին՝ միանալու համար իրենց կրոնակիցներին, նրանք պիտի ձգտեն բանալ այդ կորրիդորը: Եվ հետո այս շրջանում (նա ցույց տվեց Կիլիկիայի և Մեծ Հայաստանի միջև ընկած զոնան), որչափ գիտեմ, պատերազմից առաջ ևս շատ հայ չկար:

Մեր առարկությունները նրան չհամոզեցին այս խնդրում: Մնացած բոլոր հարցերում,– Միացյալ Հայաստան, ելք դեպի ծով, ստրատեժիկ[77] սահման արևմուտքում, Էրզրումի և Երզնկայի տիրապետություն,– նա ընդունեց մեր տեսակետը և խոստացավ իր լիակատար աջակցությունը:

Երկու օր հետո՝ թերթերում լույս տեսավ պարլամենտական Արտաքին Գործոց Հանձնաժողովի որոշումը Հայաստանի մասին, և այնտեղ ընդունված էին կետ առ կետ մեր պաշտպանած բոլոր պայմանները:

Ահա այդ որոշումի թարգմանությունը:

Լոնդոն
Փետրվար 24, 1920

«Պարլամենտի Արտաքին Գործերի Հանձնաժողովը, բաղկացած տարբեր հոսանքների պատկանող անդամներից և փետրվար 23-ին հավաքված Համայնքների Տան մեջ, ընդունեց հետևյալ բանաձևը.–

«1. Հայաստանի մանուկ Հանրապետությունը Սև ծովի վրա պետք է ունենա իր ելքը:

«2. Նորին Վեհափառության կառավարությունը որոշած է քաջալերել Կիլիկիայում անջատ ու ոչ-թրքական մի պետության կազմությունը՝ Տավրոսի ու Ամանոսի միջև, և եթե հնարավոր է, ֆրանսիական մանդատի տակ:

[75] Գոտի, *տարածաշերտ:*

[76] Միջանցք:

[77] Ռազմագիտական, *ստրատեգիկ, ռազմավարական:*

(Խմբագրելով վերի բանաձևը, Հանձնաժողովը ցանկանում է արձանագրել իր այն համոզումը, թե նոր պետությունների միջև անհրաժեշտ է ապահովել առևտրական ամենաազատ հարաբերություններ:)

«3. Թյուրքերի հետ կնքվելիք դաշնադրությունը պետք է պարունակե այնպիսի պայմաններ, որոնք հնարավոր կդարձնեն Թյուրքիայից հեռանալ ցանկացող հայերի գաղթը՝ կատարյալ ապահովությամբ և առանց արգելքների»:

Այս որոշումը, ինչպես իմացանք, անցել է Լորդ Ռոբերթ Սեսիլի պնդումով, և դա արտահայտում է Անգլիական Արտաքին Գործոց նախարարության տեսակետը մեր հարցի մասին:

* * *

Զրույցի վերջում Լորդ Սեսիլ խնդրեց իրեն տեղեկություններ տալ մեր հին ու նոր գրականության մասին:

– Ես գիտեմ,– ասաց նա,– որ դուք հարուստ գրականություն ունիք, բայց տակավին կան անգլիացիներ, որոնք հերքում են այդ:

Պողոս Փաշան ցույց տվեց ինձ, հայտնելով, որ ես կարող եմ լիակատար տեղեկություն տալ այդ մասին:

Ես խոստացա գրավոր ներկայացնել, ինչ որ արի:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԻՏԱԼԱԿԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ ՇԱՅՈԼԱՅԻ ՀԵՏ

Լոնդոն
Փետրվար 23, 1920

Հայտնեցի, որ Հռոմ եղա և տարաբախտաբար անկարող եղա իր հետ տեսակցել՝ իր բացակայության պատճառով: Տեսա կոմս Սֆորցան, որ ցանկություն հայտնեց տեսնել Հռոմում մեր ներկայացուցիչը: Ես խոստացա և այս օրերս մեր ներկայացուցիչը գնաց Հռոմ: Խնդրեցի պր. նախարարի սիրալիր ուշադրությունը և այն թե՝ կա՞ արդյոք որևէ ձևականություն, որ պիտի կատարվի:

Պր. Շայոլա շատ գոհ մնաց Վարանդյանի անվանումից և

արտահայտեց իր ուրախությունը, որ մենք ունինք մեր ներկայացուցիչը Հռոմում:

Ապա անցանք մեր պահանջներին: Իր աջակցությունը խնդրեցի: Նա խոստացավ և ավելացրեց, որ մենք ծով կունենանք: Խոսքի մեջ հասկացրեց, որ ֆրանսիացիք են մեզ հակառակ:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՎԵՆԻԶԵԼՈՍԻ ՀԵՏ

Փետրվար 24, 1920
Լոնդոն

Պողոս Փաշան երեկ ինձ հայտնեց, թե հունական դեսպան (Փարիզի) Ռոմանոս իր մոտ եկավ և հայտնեց, որ իրենք՝ հույները դեմ չեն, որ մենք պահանջենք Տրապիզոնը որպես ելք և թե իրենք մեզ աջակցելու են: Մենք որոշեցինք՝ Փաշան ու ես, Վենիզելոսին տեսնել և խնդրել, որ այդ աջակցությունը լինի իր կողմից դիմումի կերպարանքով Conférence-ին, ինչպես որ մի անգամ նա արդեն արել է Խաղաղության Conférence-ի նիստերից մեկում, ինքնաբերաբար հայտարարելով. «Il faut donner Trebisonde aux Arméniens, ils l'ont bien merité»[78]:

Վենիզելոս, ինչպես միշտ, շատ սիրալիր կերպով ընդունեց Փաշային և ինձ: Մենք արինք մեր առաջարկը, ավելացնելով՝ որ մենք չէինք կամենա մեր որևէ պահանջով տհաճություն պատճառել հույներին և իրեն՝ Առաջին նախարարին: Վենիզելոս հայտնեց, թե իր զգացումներն ու գաղափարները երբեք չեն փոխվի մեր հանդեպ. բայց հակառակ իր արած առաջին հայտարարության, ինք այժմ անկարող է այդ հարցում գործուն դեր կատարել, որովհետև Pont-ի[79] հույները սաստկորեն բողոքում են: Ինքը շարունակում է մնալ այն կարծիքի, որ Տրապիզոնը պետք է տալ հայերին, և թե մենք լիակատար իրավունք ունինք այն պահանջել, որ նա բնավ չի նկատի մեր այս կամ այն պահանջը այս ծովի ափերին, որպես հակառակ իրենց շահերին, բայց խնդրում է ներողամիտ լինել, որ ինքը՝ Վենիզելոսը, այդ հարցում որևէ մասնակցություն ունենալ չի կարող:

[78] Հայերը արժանի են Տրապիզոնը ունենալու:

[79] Պոնտոսի:

Անօգուտ և անհարմար էր պնդել: Մենք դուրս եկանք Փաշայի հետ այն համոզումով, որ Ռոմանոսի այցից մինչև այսօրվա մեր այցը Վենիզելոսին, մի նոր բան է պատահել: Եվ նույն օրը երեկոյան հանգույցը լուծվեց: Վերադարձել է Թիֆլիսից Pont-ի հույների պատվիրակությունը, որ մեր նախարար Խատիսյանի հետ Տրապիզոնի մետրոպոլիտ և գնդապետ Cotheniotis համաձայնության են եկել, կազմելու համար ֆեդերատիվ պետություն և հետևապես նրանք այլևս լսել չեն ուզում Տրապիզոնը միայն մեզ զիջելու մասին: Նույն օրը երեկոյան եկավ ինձ մոտ գնդապետ Cotheniotis, բերելով իր հետ Խատիսյանի հետ ստորագրած պայմանագիրը ֆեդերացիայի մասին, որից ես ոչ մի տեղեկություն չունեի: Ես հայտնեցի, թե իմ կառավարությունը ինձ տակավին ոչինչ չէ հայտնել, և շատ ցավում եմ, որ անկարող եմ մեր պահանջները փոխել: Ավելացրի, որ մենք Տրապիզոնը հաստատապես չենք պահանջել, այլ որոշ տարածության վրա սա[80] ծովի ափին ելք ենք խնդրել Conférence-ից, թողնելով նավահանգստի և ափերի տարածությունը որոշել իրեն՝ Conférence-ին: Գնդապետ պնդեց, թե համաձայն իր ունեցած զրույցի, մենք պարտավոր ենք ինքներս պահանջել Pont-ի անկախությունը Conférence-ից: Ես պատասխանեցի, թե շատ ցավում եմ, բայց այդպիսի պահանջով մենք մեզ ծիծաղելի կանենք: Թող Pont-ի պատվիրակությունը ինքն անի այդ, իսկ մենք ոչ միայն ուրախ կլինենք, որ նրանք ստանան այդ անկախությունը, այլև կաջակցենք – բայց մենք իբրև պահանջ մեր կողմից անել անկարող ենք, առանց այն էլ մեր պահանջները նկատվում են տարաբախտաբար չափազանց: Գնդապետը դուրս գնաց դժգոհ: Մի օր հետո Cotheniotis հոդված հրատարակեց իմ դեմ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՈՐՈՇՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՌԱՋ

Փետրվար 21, 1920
Լոնդոն

Commission Internationale pour les Frontières de l'Arménie[81]: Հայաստանի սահմանները որոշելու համար Գերագույն Խորհուրդը նշանակել է մի Միջազգային Հանձնաժողով՝ երկուական ան-

[80] Սև (հավանաբար վրիպակ է):

[81] Միջազգային Հանձնաժողով՝ Հայաստանի Սահմանների Որոշման:

դամներով՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի –

Անգլիայի կողմից՝ Robert Vansittart և գնդ. Griben,

Ֆրանսիայի կողմից՝ Kamerer և գնդ. Chardigny,

Իտալիայի կողմից՝ Galli և գնդ., Castoldi:

Ճապոնիայի կողմից՝ Isaburo Goshida, առաջին քարտուղար ճապոնական դեսպանատան և Lieutenant Commander[82] Kiyushi Anno:

Ահա այս հանձնաժողովն է, որ հրավիրեց մեզ ներկայանալ անձամբ մեր պահանջները պարզելու համար: Գնացինք Պողոս Փաշան, գեներալ Կորգանյան և ես:

Նախընթաց երեկոյից պատրաստած ունեինք մեր սահմանների վերաբերյալ գրավոր պահանջագիրը՝ գեներալ Կորգանյանի խնամքով: Պողոս Փաշան կարդաց ֆրանսերեն: Ներկա էին բոլոր անդամները, բացի գնդապետ Chardigny-ից և Galli-ից:

Նախագահում էր Kamerer: Ժողովի ընթացքին մենք նկատեցինք Vansittart-ի և Kamerer-ի մեջ ծածուկ հակամարտություն: Ճապոնացիք լուռ էին մինչև վերջը: Իտալացին հետևում էր վերապահումով: Վիճաբանությունը լինում էր մեզ համար Vansittart-ի և Kamerer-ի կողմից. երբեմն նրանք առանց իրար նայելու, խոսքեր կամ ակնարկներ էին նետում: Ընթերցումը վերջացնելուց հետո կարտը[83] փոեցին սեղանի վրա, հրավիրելով գծել մեր պահանջած սահմանները: Գեներալը կապույտ մատիտն առավ, Տրապիզոնից արևմուտք՝ Տրիպոլիից քաշեց գիծը, հասնելով Տերսիմին[84] և Խարբերդին, ինձ կամացուկ հարցրեց, պե՞տք է ընդգրկել այդ երկու կետերը թե՞ ոչ (այս մասին ես ու Փաշան վեճ ունեինք և եզրակացության չէինք եկել, ես դեմ էի, Փաշան պնդում էր), ես դարձա Փաշային և կամացուկ հայերեն հարցրի, նա թե՝ պայմանական կերպով պահանջենք, այս ձևով ես համաձայնեցի: Փաշան մոտեցավ կարտին և հայտարարեց թե, եթե Ֆրանսիան պիտի պահի Տերսիմ և Խարբերդ, մենք ոչինչ չունինք, իսկ եթե որևէ պատճառով նա մտադիր է հրաժարվել, ապա մենք կխնդրեինք այդ շրջանները կցել Հայաստանին:

Kamerer. – Ֆրանսիայի տիրապետության մասին առայժմ թողնենք, դուք հայտնեցեք ձեր պահանջները:

Փաշան. – Մենք պահանջում ենք այդ երկու շրջանը իմ հայտնած վերապահումով:

82 *Լեյտենանտ հրամանատար:*

83 *Քարտեզը:*

84 *Դերսիմ:*

Vansittart. – Ես կարծում եմ, մենք կարող ենք լսել և արձանագրել այս հայտարարությունը:

Այս հարցը փակվեց, մեր սահմանագիծը գեներալի մատիտով անցավ Խարբերդից և Դերսիմից արևմուտք: Ապա Փաշան մի փոքր ետ քաշվեց, և սկսվեցին առանձին հարցերն ուղղված մեզ, որոնց պատասխանեցի ես մինչև վերջը: Գլխավոր հարցն էր, թե մենք կպահանջե՞ինք արդյոք և Լազիստանը, եթե ստանանք Տրապիզոնը: Հարցնողը Vansittart-ն էր: Ես վճռապես պատասխանեցի թե՝ «այո». և զգացի, որ իմ վճռական պատասխանը նրան դուր չեկավ:

Բանն այն է, որ դեռ Փարիզում մեր տեսակցությունների ժամանակ Vansittart-ն աշխատում էր մեզ համոզել վազ գալ Լազիստանից և բավականանալ Տրապիզոնով, որի համար մնալ intransigeant[85]. և նա չէր ծածկում, որ Անգլիա նպատակ ունի այդ շրջանը կցել Բաթումի չեզոք պետությանը: Մենք շատ դեմ չէինք Տրապիզոնով միայն բավականանալու առաջարկին, բայց Տրապիզոնի շուրջը հույների բարձրացրած աղմուկը, և ֆրանսիացիների չկամությունը մեզ վախեցնում էր, թե միգուցե, Լազիստանից (Ռիզե-Աթինե) մենք հրաժարվելով, միաժամանակ էլ Տրապիզոնը մեզ չտան և մենք մնանք առանց ելքի: Ահա թե ինչու Vansittart-ի հարցին՝ Լազիստանի համար, վճռական «այո» ասացի, գիտենալով՝ որ դա նրան կարող է անհաճո լինել: Պահանջելով և՛ Տրապիզոն, և՛ Ռիզե ու Աթինե, մենք հույս ունեինք ստանալ մեկն ու մեկը:

– Բայց լազերը վրացական ծագում ունին,– ասաց Vansittart-ը,– և վրացիք սաստկորեն պահանջում են այն:

– Չգիտեմ, թե երբ է գիտությունն այդ հաստատել,– պատասխանեցի,– բայց մենք չենք պնդում, թե լազերը հայ ծագումն ունին: Սակայն, եթե նրանք վրացի ծագումն իսկ ունենային, խնդիրը դրանից մազաչափ իսկ չէր փոխվի, և վրացիք, անգամ այդ դեպքում, մեզնից ավելի նվազ իրավունք կունենային այդ հողամասի վրա, որովհետև մենք պահանջում ենք այն որպես ելք դեպի ծովը. վրացիք դրան պետք չունին: Մյուս կողմից մենք թողել ենք վրացիներին 300 հազար ոչ թե միայն ծագումով, այլև լեզվով, և կրոնով, և զգացումով հայ մարդիկ, մինչդեռ լազերը, վստահաբար կասեմ, բնավ վրացի ծագումն ունենալու հեռավոր գիտակցություն իսկ չունին և որքան գիտեմ, խոսում են թուրքերեն, կրոնը մահմեդական: Այս պարագայում, եթե վրացիք կարող են

85 Անզիջող:

տիրապետել մեր 300 հազար հայերի վրա, կարծում եմ, մենք ավելի իրավունք ունինք պահանջել 50-60 հազար լազերին, որոնց վրացական ծագումն իսկ կասկածելի է և որ ստիպված ենք պահանջել մեր ելքի համար դեպի ծովը և ոչ որպես տերիտորիա:

Kamerer. – Շվեյցարիան ապրում է սակայն առանց ծովի: Դուք երբեք ծով չեք ունեցել:

– Պ. Kamerer, համեմատությունը անհաջող է: Նախ, Շվեյցարիա Ասիայում հնարավոր չէ, շրջապատված այնպիսի տարրերով, որ մենք ունենք որպես հարևան: Երկրորդ՝ անգամ Շվեյցարիան, շրջապատված այնքան բարեհաջող պայմաններով, այսօր, այնուամենայնիվ, ձգտում է տնտեսական ելք ունենալ դեպի ծովը: Երրորդ՝ սխալ է ասել, թե մենք ծով չենք ունեցել: Ամենահին օրերում իսկ հայերը միշտ օգտվել են մոտավոր ծովերից, իսկ այն ժամանակից, ինչ նրանք ընկել են թուրքական ու ռուսական տիրապետության տակ, ունեցել են այն բոլոր առևտրական ծովային հարմարությունները, որ մի մեծ պետություն կարող էր տալ: Բաքում, Բաքու, Տրապիզոն, Պոլիս, Ալեքսանդրիա, Բեյրութ ծառայել են և Հայաստանին: Այժմ մենք տխուր հակասության մեջ կընկնինք, եթե օտարի լծի տակ, բայց տնտեսապես ազատ ժողովուրդը, ազատելով օտարի լծից քաղաքականապես, դնենք նրան տնտեսական վատթար լծի տակ, այն էլ իր հակառակորդ կամ մանավանդ թշնամի տարրերից կախված: Հայաստանը ծով ունեցել է, և այժմ նրան փակել իր լեռներում, միևնույն է թե՝ դատապարտել արագ մահվան: Մենք պետք է ստանանք ելք դեպի Սև ծովը Տրապիզոնի – Ռիզայի շրջաններում, բայց որովհետև առայժմ այնտեղ երկաթուղի չկա և դժվար թե կարելի լինի անմիջապես այն ունենալ բնական դժվարությունների պատճառով, մենք ստիպված ենք խնդրել, որ Բաքումից մեզ տնտեսական ելք ապահովվի, այլապես երկար ժամանակ անհնարին կլինի մեր՝ ավերակի վերածված երկիրը ոտքի հանել:

Kamerer. – Դուք պահանջում եք մինչև Խարբերդ, Երզնկա: Արդյոք հնար կունենա՞ք տիրապետել:

– Եթե Դաշնակիցները նույնքան բարյացակամ լինին դեպի Հայաստանը, որքան դեպի Լեհաստանը եղան, այո՛, կարող ենք:

Kamerer. – Ա՜հ, Լեհաստանը, այդ ուրիշ խնդիր է... Մեզ մոտ էր, երկաթուղիներ կային, հեշտ էր օգնելը, բայց Հայաստանը... և հետո նկատի առեք, որ ամենքը հոգնած են, ավերված, օգնելու կարելիություն չկա, նկատի առեք այդ, խնդրեմ, որ ձեզ օգնող չի լինի:

– Ես այդ պատասխանին սպասում էի,– ասացի,– ուստի ձեր առաջին հարցին իմ վճռական պատասխանն «այո՛» է: Եթե Դաշնակիցները մեր 40-50 հազարանոց բանակը կազմակերպեն, ռազմամթերք ու զենք տան, և իրենց դրոշակների հովանին մեզ չզլանան, մենք կարող ենք գրավել մեր հողերը: Խնդրում ենք հնար տալ մեր բանակը կազմակերպել:

Vansittart արձանագրեց հայերի այս վճռական հայտարարությունը, թե «իրենք իրենց բանակով կարող են գրավել իրենց հատկացված հողերը, եթե մենք օգնենք իրենց»:

(Հիշատակեմ այս առթիվ, որ թե՛ Լոնդոնում և թե՛ Փարիզում բարեկամ քաղաքագետներ մեզ շարունակ խորհուրդ էին տվել այս հայտարարությունը վճռապես անել:)

Այնուհետև հարցեր առաջարկվեցին հայ ազգաբնակության հավանական թվի մասին մեզ հասանելիք գավառներում: Մեր թիվը Էրզրումում, Երզնկայում, Խարբերդում: Քանի մը հակիրճ պատասխաններ տալուց հետո՝ մենք խոստացանք գրավոր մանրամասն տեղեկություն տալ, խնդրելով դրա համար երկու օր ժամանակ:

Մենք դուրս եկանք անորոշ և անհաստատ տպավորություններով:

ԵՐԿՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՈՐՈՇՈՂ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ» ՀԵՏ

Մարտ[86] 1920
Լոնդոն

Ներկա էին Vansittart, գնդապետ Chardigny, գնդապետ Castoldi և մի ճապոնացի: Մեր կողմից Պատրիարքը, Փաշան, ես: Մտավ և Մալգոմը: Գեներալ Կորգանյանը,– մի թյուրիմացությամբ ասեմ, թե վատ ինտրիգով,– վշտացած ետ գնաց. հանցանքը Մալգոմին էր:

Հանձնաժողովի նախագահ Vansittart ժողովը բանալով՝ դիմեց Պատրիարք Զավենին հարցով, թե ո՞րչափ հայ կա այժմ Թյուրքիայում: Պատրիարքը, որ վատ էր խոսում ֆրանսերեն, պատասխանեց, թե Կիլիկիայից, Կ. Պոլսից և Զմյուռնիայից դուրս կունե-

[86] *Ներկա հրատարակությունում մենք պահպանել ենք բոստոնյան հրատարակության նախորդ, այս և հաջորդ զրառումների ժամանակագրական ոչ բնական հերթականությունը:*

նանք մոտ 100 հազար հայ Տիգրանակերտում, Սեբաստիայում, Խարբերդում, Գոնիայում և այլն: Ասելու եղանակն ինձ դուր չեկավ, համոզիչ չէր: Կամացուկ ասացի Պատրիարքին՝ «Հայերեն պատասխանեցեք, ես կթարգմանեմ»: Հաջորդ հարցերին նա պատասխանում էր հայերեն: Հարցերը վերաբերում էին հայ ազգաբնակության հավանական թվին Հայաստանում առաջին ու երկրորդ տարին: Բարեբախտաբար երկու օր առաջ գեն. Կորգանյանը պատրաստել է այս հարցի պատասխանը վիճակագրական մոտավոր ճշտությամբ: Ես ընդհատեցի Պատրիարքին, տեսնելով հարցին պատասխանելու իր դժվարությունը և ասացի նախագահին.

– Եթե թույլ կտաք, ի պատասխան Ձեր հարցին՝ ես կկարդամ ահա այս թուղթը, որ ճիշտ Ձեր հարցին պատասխանն է, և որը մենք կազմել ենք օգտվելով Նորին Սրբազնության տված տեղեկություններեն:

– Խնդրում ենք,– պատասխանեց նախագահը:

Ես կարդացի թուղթը, որով մենք ապացուցանում էինք, թե Կովկասում գտնված թյուրքահայ գաղթականների հետ միասին Պարսկաստանից, Ազրբեջանից, Վրաստանից, Հյուսիսային Կովկասից, Ռուսիայից, Մև ծովի ափերից առաջին 1-2 տարին Հայաստան կարող են մտնել և հաստատվել մոտ 800 հազար հայ: Թյուրքահայ գաղթականների թիվը տվինք՝ 220 հազար – Կովկասում և 60 հազար – Հյուսիսային Կովկասում: Յուրաքանչյուր կետը կարդալիս նաև բերանացի տալիս էի ընդարձակ արգումենտացիա: Հաճախ դիտմամբ դիմում էի գնդապետ Chardigny-ի վկայությանը՝ իմ թվերն ապացուցանելու, ինչ որ նրան դնում էր շատ նեղ կացության մեջ, որովհետև նրա մշտական թեզն էր՝ ապացուցանել, թե հայ պետություն կազմելու համար հայ չկա:

Մասնավորապես Կովկասում գտնվող հայ գաղթականների թվի մասին նրան ստիպեցի ասել, թե մեր տված հաշիվը ճիշտ է: Այս թուղթը թողեց համոզիչ տպավորություն, քանի որ գնդ. Կորգանյան աշխատել էր խույս տալ բոլոր չափազանցություններից:

Երկրորդ հարցն էր այն հարաբերությունը, որ մենք կարող ենք ունենալ 1) լազերի, 2) թյուրքերի, 3) թաթարների և թյուրքերի հետ, որոնց վիճակված կլինի ապրել մեր երկրում, որպես փոքրամասնություն: Այս հարցի պատասխանը նույնպես վիճակվեց ինձ: Ես ասացի մոտավորապես հետևյալը.–

«– **Լազեր:** – Մենք ուրախ եղանք լազերի խնդրին, քանի որ դա ապացուցանում էր, թե մենք ունենալու ենք Մև ծովի ափերը – Ռիզե և Աթինե»:

Նախագահը հարցրեց թե՝ ի՞նչ տրամադրություն ունին լազերը դեպի հայերն ու վրացիները, ասում են թե՝ լազերը վրացական ծագում ունին:

Ես պատասխանեցի.

«– Լազերի ծագման մասին քննություն անելու չեմ, որչափ գիտեմ, դա տակավին լավ չուսումնասիրված գիտական պրոբլեմ է: Ճշմարիտն այն է, որ իրենք լազերն իսկ իրենց ծագման և առհասարակ ազգային որևէ գիտակցություն չունեցող մի ամբոխ են:

50-60 հազարի չափ, ո՛չ առանձին հակումն ունին դեպի հայերը, ո՛չ դեպի վրացիները: Խաշնարած մարդիկ են, կարծեմ քաջասիրտ են, բայց ոչ ժրաջան, և կուզեին իրենց լեռներում մնալ իրենք իրենց, ինչպես դարերից ի վեր: Այս է ճշմարտությունը, և մենք Լազիստանը պահանջելով՝ բնավ լազերի համակրության վրա չէ, որ հույս ենք դնում, այլ մեր աչալրջության ու զգուշավոր քաղաքականության վրա՝ հանդեպ նրանց ցեղական, կրոնական և աշխարհագրական ուրույն պայմանների: Նրանց հողին չէ, որ աչք ենք տնկել, այլ այն հրամայական անհրաժեշտության ենք հետամուտ, որ մեր երկիրը ծով ունենա, քանի որ առանց ծովի կորած ենք: Եվ հույս ունենք պիտի կարողանանք լազերի հետ խաղաղ կեցության ընդհանուր հիմունքներ գտնել:

– Ի՞նչ կասեք քյուրդերի մասին,– հարց դրեց նախագահը:

Ես. – Շնորհակալ եմ այդ հարցի համար, քանի որ ինքս պիտի խնդրեի խոսել քյուրդերի մասին:

«Գուցե ձեզանից քչերը գիտեն, որ քյուրդերը բաժանվում են երկու հատվածի, եզիդիներ և մուսուլման քրդեր. սա կարևոր կետ է:

Եզիդիները – Թեև ծագումով նույն քյուրդերն են, նույն լեզուն ունեն, բայց կրոնը խառնուրդ է հեթանոսության, հատկապես Արևապաշտության, Քրիստոնեության և Հուդաիզմի: Հարգում են սատանային, պաշտում են արևը, պատկառանք ունեն Աբրահամի և Հիսուսի համար. գիր և գրականություն չունեն: Ազգային զգացումից թափուր, և բարքերով շատ ավելի մեղմ, քան իրենց ցեղակից մուսուլման քրդերը: Հնուց ի վեր ինքզինքին նկատած են հայերին մերձավոր, բարեկամ, խոսում են մեծավ մասամբ հայերեն այն շրջաններում, ուր մեզ հետ շփման մեջ են, և առհասարակ հայերի բախտը բաժանած են միշտ, նաև այս պատերազմի ընթացքում, երբ մեզ հետ միասին իրենց հրամանատար Ջհանգիր աղայի առաջնորդությամբ արիաբար կռվեցին թյուրքերի դեմ կովկասյան սահմաններում: Եվ նրանց ցեղապետ Յուսուֆ բեգը, որ իմ աշակերտն է եղած և ուսած է

հայոց ճեմարանում, այսօր մեր պարլամենտի անդամ է: Ես կարող եմ ասել, որ եզիդիների հետ ոչ միայն մենք որևէ դժվարություն չենք ունենա, այլ նրանք **են** և **կմնան** Հայաստանի պարկեշտ քաղաքացիներ: Կարծեմ պրն.Chardigny-ն կհաստատի ասածիս ճշմարտությունը:

Մուսուլման քյուրդերը – Ճշմարիտ է, սրանք հաճախ անգիտակից գործիք եղան թյուրքերի ձեռքին մեր դեմ, բայց և այնպես մեր ժողովուրդը և նրանց դեմ առանձին արմատացած ատելություն չունի, մանավանդ՝ որ քյուրդերն ևս իրենց կողմից, հակառակ իրենց ձգված անկաշկանդ ազատության, թյուրքերի պես արյունարբու չեղան: Գուցե այս դեպքում դեր է կատարում ցեղային ծագման հեռավոր նմանությունը, հինավուրց հարեվանությունը, որովհետև պետք է գիտնալ, որ հայը և քյուրդը հավասարապես հին արիական ցեղեր են: Հայտնի է, որ երբ քյուրդը վճռում է քրիստոնյա դառնալ, նա օրինակ, Կովկասում, փոխանակ տիրող Ռուսական Եկեղեցուն դիմելու, միշտ դիմում է Հայոց Եկեղեցուն: Մանկությանս օրերից հիշում եմ իմ հայրենի գյուղի եկեղեցու բակում մկրտվող երկու քյուրդերը, որոնց ավազան ծառայեցին երկու ահագին կաթսաներ (Ունկնդիրներս խնդում են): Շատ ավելի ուշ, ես տեսել եմ առանց վանքի վանահոր պաշտոնում Գրիգոր վարդապետ անունով մեկը, որ նույնպես քյուրդ էր և հաճախ իր մոտ, հայկական սրբավայրում ընդունում էր իր մուսուլման մնացած ազգականներին: Դուք լսած եք ամենքդ Դերսիմի քրդերի մասին: Նրանք նաև ղզլբաշ են կոչվում: Տարին մի օր ունին թյուրքերին նզովելու համար, խմորի վրա խաչ են քաշում, ուխտի են գնում մեր սրբավայրերին, բարեկամ են հայերին, և այս պատերազմի ժամանակ շատ հայեր նրանց մոտ ապաստան գտան: Բիթլիսից հարավ Սիպտկնոց լեռներում նույնպես քյուրդ ցեղեր են ապրում, որոնք շատ հայի ապաստան տվին: 1917 թվին ես նրանցից գիր ստացա որպես Հայոց Ազգային Խորհրդի նախագահ, որով հայտնում էին, թե իրենց մոտ 4-5 հարյուր հայ ընտանիքներ կան և, նպաստ էին խնդրում: Վստահ եմ, թե այդ հայերը այսօր էլ ողջ-առողջ ապրում են այնտեղ: Շատ քիչ են մեր դեմ անհաշտ, ըմբոստ մնացած քյուրդ աշիրեթներ[87], մանավանդ, որ նրանց թիվն էլ զգալապես նվազեց այս պատերազմի երեսից: Հեռավոր կասկած իսկ չունենք, որ այն օրը, երբ քյուրդերը ազատ կմնան թյուրքական ապականող ազդեցությունից, նրանք ևս մեզ հետ խաղաղ

[87] *Անվանում քրդական ցեղերի, որոնցից ամեն մեկը ունենում է մի ցեղապետ:*

ապրելու ճամփան կնախընտրեն: Անհաշտ փոքրամասնությունն էլ երևի՛ կա՛մ կերթա դեպի Թյուրքիա, կա՛մ՝ Քյուրդիստան:

Թյուրքերի պրոբլեմը շատ ավելի դժվարին է, քանի որ նրանց հետ մենք դարավոր թշնամություն ունենք, որ գիտեք: Բայց այստեղ էլ հուսադրիչ պարագաներ կան.

1. Նրանց թիվը առհասարակ Հայաստանում միշտ էլ սակավ է եղել, և պատերազմը, որ հենց բուն Հայաստանում հեղհեղվեց, նրանց թիվն էլ զգալապես փոքրացրեց;
2. Թյուրքերը մի բարի սովորություն ունեն (ժպիտ) հեռանալ այն երկրներից, ուր արդար իրավակարգ է հաստատվում. ապացույց՝ Բալկանները: Նրանց այս սովորությունը, հուսանք դեր կկատարի և մեզ մոտ, ու շատերը կհեռանան Թյուրքիա.
3. Կա նաև փոխանակության շատ գործնական միջոցը, որ թյուրքերը կիրառեցին բուլղարների հետ. ոչ մի արգելք չկա, որ և մեզ հետ նույնը կատարեն: Հայաստան ու Թյուրքիա կհամաձայնին փոխանակել իրենց ժողովուրդների մնացորդները.
4. Պետք չէ հայ-թյուրք հարաբերությունները դատել այսօրվա կրիտիկ[88] սուր արտահայտություններով, որ երկուստեք քենն է առաջնորդում: Հետո, թյուրքերը տակավին ճգնում են խափանել Հայ Պետության կազմությունը: Վաղը, երբ այդ պետությունը իրական դառնա, հավատացեք ինձ, մեր պետության սահմաններում փոքրաթիվ թյուրքերը նույնպես պիտի համակերպվին: Ես գրեթե բառ առ բառ նույնը կասեի և թաթարների մասին, բայց դա կարծեմ ավելորդ է»:

Chardigny և մյուսները .

– Այս բոլորը ճիշտ է:

Մենք դուրս եկանք ամենքս սրտապնդված, և մեր գրեթե հաստատուն համոզումն եղավ որ՝

1. Մենք կունենանք Սև ծովի ափը.
2. Քյուրդերի, թյուրքերի պատճառած մտահոգությունը ցրված է:

Փաշան և Պատրիարքը շնորհավորեցին ինձ:

---

[88] *Քննադատական, ծայրահեղ:*

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՊՈԼ ԿԱՄԲՈՆԻ ՀԵՏ

Փետրվար 22,1920
Լոնդոն

Մեր Սահմանները Որոշող Հանձնաժողովի առաջին նիստին իմ և Կամերերի հետ եղած վիճաբանությունից հետո, գնացի Այլերդ Թոմային զանգատ, որ այդ պահում Լոնդոն էր գտնվում, որպես Ազգերի Լիգային կից Միջազգային Աշխատանքի Կոմիտեի նախագահ:

Ես ասացի, որ մեզ համար ծանր է ու կսկծալի Ֆրանսիայի ներկայացուցիչի վարմունքը և քնավ չի համապատասխանում տարիների մեր զուրգուրած հույսերին և մեր խորունկ համակրանքին դեպի Ֆրանսիան:

– Ո՞վ է մեր ներկայացուցիչը Հանձնաժողովում:

– Կամերեր ,– պատասխանեցի:

– Oh, il est peu francais, que son nom![89]

Ուզեց ասել, թե Կամերեր հրեա է, ինչ որ ճիշտ է:

– Թող այդպես լինի,– ասացի,– բայց նա խոսում է Ֆրանսիայի անունից: Շատ եմ խնդրում Ձեզ, որ մեր բարեկամ միջնորդը լինեք մեր և ձերոնց մեջ: Բերբլոն էլ բավական վատ է տրամադրված:

Ես խնդրեցի՝ Փաշային և ինձ տանել Միլլրանի մոտ: Խոստացավ:

Այս տեսակցությունն էր նշանակված այսօր: Մեզ հետ լինելու էր և Պատրիարքը: Եվ երբ հասանք ֆրանսիական դեսպանատան, փոխանակ Միլերանի, մեզ ընդունեց Paul Cambon՝ դեսպանը:

Փաշան, ըստ սովորության խոսեց Կիլիկիայի մասին: Ես զգուշությամբ խոսքը դարձրի **ամբողջ** Հայաստանին վերաբերյալ խնդիրների մասին:

P. Cambon-ի տված պատասխաններից պարզվեց.–

1) Որ Ֆրանսիան տրամադիր չէ Կիլիկիայից հեռանալ, և գուցե ստիպված լինի պահել այնտեղ թուրքական Suzeraineté[90]: Իհարկե, կա Suzeraineté և Suzeraineté անվանական է լինելու, առանց վալիների[91], մյութեսերիֆների[92];

[89] Նա նույնքան քիչ ֆրանսիացի է, որքան իր անունը:

[90] *Տիրապետություն, իշխանություն:*

[91] *Նահանգապետ:*

[92] *Գավառակապետ, սանջակի կառավարիչ:*

2) Որ Կիլիկիայում հայերը նկատվում են որպես մի գաղութ, որ իր պաշտպանությունը կունենա;

3) Որ մենք անպատճառ ծով կունենանք («Որովհետև,– ավելացրեց,– Լեհաստանն անցյալում ծովի պակասից մեռավ: Նույնի կլինի և ձեզ հետ, եթե մնաք առանց ծովերի ելքի»):

ԵՐԲՈՐԴ ԶՐՈՒՅՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՈՐՈՇՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ»-Ի ՀԵՏ

Մարտ 16, 1920
Լոնդոն

Այսօր երրորդ անգամ լինելով՝ ներկայացանք Հանձնաժողովին Փաշան, ես, գեներալ Կորգանյան և Պատրիարքը:

Ներկա էին՝ Vansittart, Kamerer և զնդապետ Castoldi: Նախագահը հայտարարեց հետևյալը.

«Conseil Suprème»-ը[93], միաձայն որոշած լինելով կազմել ազատ անկախ հայ պետություն, և քանի որ մինչև այժմ կարելի չեղավ որևէ պետության հանձնել Հայաստանի մանդատ, ուստի առաջարկվեց Ազգերի Լիգային իր հովանու տակ առնել նորակազմ Հայ պետությունը: Հանձնաժողովը հրահանգ ունի հարցնել հայ պատվիրակներին, թե «ինչպիսի՞ կարիքներ կան, որ մանդատերը պիտի լրացնի, զինվորական, ֆինանսական, վարչական ի՞նչ կարիքներ կան, և ո՞րն է այդ կարիքների չափը»:

Մենք ժամանակ խնդրեցինք պատասխանելու այդ հարցերին: Մեզ տրվեց 4-5 օր ժամանակ:

Ես հարց դրի, թե որո՞նք են սահմանները Հայաստանի: Դա անհրաժեշտ է գիտենալ դրված հարցերին պատասխանելու համար:

Vansittart ասաց ինձ, թե՝

– Իրավացի եք, բայց թե մենք գաղտնիք ենք պահում այդ առժամանակ: Դա՝ պարզապես ձեր շահերի տեսակետից: Լավ չէ, որ թուրքերն այժմեն իմանան, թե ի՞նչ է խլվում նրանցից: Այլապես նրանք կարող են պատրաստություններ տեսնել: Սակայն, կարող եմ ձեզ ասել, որ դուք կունենաք երկու խոշոր հատվածները Հայաստանի՝ կովկասյան ու թուրքական, Վան, Բիթլիս, Մուշ, նաև

[93] *Գերագույն Խորհուրդ:*

Էրզրում, և շատ ավելի անդին քան Էրզրում, բայց առանց հասնելու Երզնկային, իհարկե մեջ առնելով Մամախաթուն: Մնացածը հույս ունեմ դուք գիտեք:

Անախորժ տպավորություն գործեց սկզբում, երբ նախագահը հայտնեց, թե մեր մանդատն առաջարկված է Ազգերի Լիգային, Փաշան ի պատասխան հայտնեց թե՝ մենք այդ գիտենք Matin-ից և շտապով գրպանից հանելով հիշյալ թերթի մի կտրոնը, սկսեց բարձրաձայն կարդալ այդ լուրը:

Այս ժողովից հետո՝ Աջեմյանի և Օհաննես Խան Մասեհյանի մասնակցությամբ պատրաստեցինք խորհրդականների վերաբերյալ փաստաթղթերը, ինչպես և մեր զինվորական պետքերի չափը: Այս առթիվ եղած ժողովում Փաշան ներկայացրեց մի ծրագիր, որով մեր անկախությունը շատ էր սղմվում և շատ լայն իրավունքներ էր տրվում մանդատների ներկայացուցիչ բարձր կոմիսարին և մասնավորապես ինչ-որ վարչական մարմնի, որը կոչվում է Conseil Mixte[94] – բաղկացած կիսով չափ հայերից և պետությունների ներկայացուցիչներից, բարձր կոմիսարի նախագահության տակ:

Իմ և Փաշայի մեջ այս առթիվ բուռն վեճ եղավ: Փաշան և Պատրիարքը պնդում էին թե՝ մենք անկարող պիտի լինենք մեզ կառավարել, հետևապես օտար ներկայացուցիչների իրավասությունը պետք է շատ լայն լինի, մասնավորապես Conseil Mixte-ի: Ես դիմադրում էի և դեմ էի մասնավորապես Conseil Mixte-ի գոյությանը:

Ի վերջո, փոխադարձ զիջողությամբ համաձայնության եկանք: Ես ընդունեցի, որ մանդատ լինի փոխանակ տասնի՝ քսան տարով: Փաշան և յուրայինները համաձայնվեցին հրաժարվել Conseil Mixte-ից և խորհրդականներին տրվելիք մի շարք իրավունքներից:

Ինձ հաջողվեց վերջնական տնօրեն պահել մեր պարլամենտը:

---

[94] *Խառն Խորհուրդ:*

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ԼՈՆԴՈՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴԵՍՊԱՆԻ ՀԵՏ

Մարտ, 17, 1920
Լոնդոն

Այսօր Օհաննես Խան Մասեհյանի հետ գնացինք տեսնվելու ամերիկյան դեսպանի հետ:

Հայտնեցինք, որ Դաշնակիցները մեր խնդիրը կարգադրում են ըստ իրենց քմաց: Այս պարագաներում որքա՞ն հույս կարող ենք դնել ամերիկյան ազդեցության վրա հօգուտ մեզ:

Դեսպանը հայտարարեց, որ Ամերիկան պաշտոնապես չի մասնակցում, բայց բոլորովին անմասն չէ: Այսօր այլևս անօգուտ է հուսալ Ամերիկյան մանդատի վրա. մեր երկրի ներքին շփոթն **առայժմ** այդ անհնարին է դարձնում: **Դա կարող է լինել, բայց բավական ուշ:**

Այս վերջին հայտարարությունը մեզ համար անակնկալ էր:

Մարտ 18

Մեր կառավարության հրահանգի համաձայն՝ այսօր գնացի շնորհակալություն հայտնելու ճապոնական դեսպանին՝ մեր պետությունը ճանաչելու առթիվ:

Փաշան ինձ հետ էր:

ԶՐՈՒՅՑ
ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՅԻ
11-ՐԴ[95] ՔԱՐՏՈՒՂԱՐ ՆԻԿԼԼՍԸՆԻ ՀԵՏ

Մարտ 22, 1920
Լոնդոն

Այսօր Ալեքսանդր Buxton-ից ճաշի հրավեր ստացա, ուր հատուկ նպատակով լինելու էր և Նիկլլսը:

Ճաշի ընթացքում Նիկլլսը խնդրեց ինձ մի քանի տեղեկություն պանթուրանիզմի մասին և շատ զարմացավ լսելով ինձնից, որ պանթուրանիզմի իսկական հայրենիքը Թուրքիան չէ, այլ Ադրբեյջանը, և առհասարակ թաթար աշխարհը: Բուն պարսիկ ժողովուրդը անմասն է և այդպես էլ կմնա:

---

[95] *Հավանաբար տպագրական վրիպակ է և պետք է լինի՝ 2-րդ (II):*

Ապա նա ինձ հայտնեց հետևյալը.–

Ազգերի Լիգան, ստանալով Conseil Suprême-ի առաջարկը Հայաստանի մանդատի մասին, խիստ մտահոգվել է: Առաջին մտածումն է եղել՝ մերժել: Հետո, խորհել են, թե գուցե լավ առիթ է այս ցույց տալու թե՝ Լիգան մի իրական, կենդանի օրգանիզմ է. ուստի որոշել են պայմաններ դնել Conseil Suprême-ին.

1) Քանի որ Ազգերի Լիգան ոչ միջոցներ ունի և ոչ իսկ ցանկություն պատերազմ հայտնելու Թուրքիային մաքրելու հայ հողերը, ուստի Դաշնակիցները պետք է միջոցներ ձեռք առնեն հեռացնելու Մուստաֆա Քեմալի և առհասարակ Միլլի ուժերը Հայաստանից;

2) Պետք է հանձն առնեն ապահովել 5.000.000 ֆունտ սթերլինգ փոխառություն Հայաստանի համար: Այս փոխառությունն, ասաց, կա՛մ պետք է բաժանել Ազգերի Լիգայի անդամ բոլոր պետությունների վրա, կա՛մ Թուրքիայի հետ դաշնագիրն ստորագրող պետությունների;

3) Conseil Suprême-ը պետք է ապահովի նաև ռազմական օգնություն;

4) Պետք է տա բոլոր պետք եղած քաղաքացիական և զինվորական խորհրդականները;

5) Պետք է ապահովել Բաթումից մեր ելքը:

Ավելացրեց, որ կան պետություններ, որոնք տրամադիր չեն ընդունել նյութական զոհաբերություններ: Լավ կլինի խոսել Վենիզելոսին, որը անկեղծորեն հայասեր է: Եռանդուն պաշտպան է նաև Բելգիայի ներկայացուցիչ-դեսպանը: Խորհուրդ տվեց՝ առհասարակ պատրաստել մտքերը:

Իմ հարցին թե՝ ովքե՞ր են լինելու խորհրդականները, պատասխանեց.

– Հավանաբար անգլիացիներ և ամերիկացիներ. առաջինները՝ քաղաքացիական, երկրորդները՝ զինվորական:

Իմ մյուս հարցին թե՝ ինչու՞ Անգլիան չընդունեց Հայաստանի մանդատը, պատասխանեց, թե՝

– Ֆրանսիան կդժկամի:

Հայտնեց, որ մեզ մեծ պաշտպան է Ազգերի Լիգայի գլխավոր քարտուղար Eric Drummond:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԹՈՓՉԻԲԱՇԵՎԻ ՀԵՏ

Մարտ 23, 1920
Լոնդոն

Ինքն էր խնդրել տեսնել Պողոս Փաշային: Վերջինս ցանկացել էր, որ դա իմ ներկայությամբ լինի: Եկավ և Օհաննես Խան Մասեհյան:

Թոփչիբաշևը նախ երկար նստեց լուռ: Իր հետ էր Մեխտիևը: Ստիպված եղանք մենք զրույց բաց անել մեր սահմանների մասին և հարց դրինք, թե քանի որ մեր երկիրները, մեր կառավարությունները ցարդ համաձայնության չեկան, գուցե լավագույնն է այդ խնդիրը փոխադրել այստեղ, Խաղաղության Համագումարին մոտիկ, լուծելու համար:

Թոփչիբաշևը խուսափողական պատասխաններ տվեց. առարկեց, որ տեղում այդ հարցն ավելի լավ կլուծվի. ապա վեր կացավ գնալու ու ասաց, որ ինքը պատրաստ չէ այս զրույցին և եկել էր պարզապես քաղաքավարական այցի:

Երբ նա դուրս գնաց, Փաշան հիասթափված ու ճանձրացած՝ բացականչեց.

– Tout à fait comme le Turc![96]

– Ես ուրախ եմ, որ դուք ճանաչեցիք սրանց և այլևս չեք մեղադրի մեզ, թե մենք անհաշտ ենք մեր հարևանների հետ:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՉԽԵԻԶԵԻ ԵՎ ԱՎԱԼՈՎԻ ՀԵՏ

Մարտ 28, 1920
Լոնդոն

Մեր սահմանները որոշող Հանձնաժողովում մեզ հայտնեցին, թե առայժմ որոշվելու են մեր սահմանները թուրքերի հետ, մինչդեռ Կովկասում երեք հանրապետություններն իրենք պիտի համաձայնության գալու աշխատին: Երբ այդ չլինի, Խաղաղության Համագումարը կմիջամտի: Եվ մեզ խորհուրդ տվին զրուցել մեր հարևանների հետ:

Այս պատճառով նախ ես մենակ տեսնվեցի Չխեիձեի և Ավալովի հետ, հայտնեցի, որ մենք կկամենայինք մեր սահմանների մասին խոսել իրենց հետ և հրավիրեցի հանդիպել իմ երկու

---

[96] Միանգամայն թուրքի նման:

Խնդրում ենք լուծել այդ հանգույցը, թերևս arbitrage-ով (իրավարարությամբ):

– Իրավունք ունիք,– պատասխանեց Լորդը,– մենք այդ գիտակցել ենք: Arbitrage-ը անօգուտ է: Այս մտքով լինելիք դիմումը չի կարող հետևանք ունենալ: Մենք վճռել ենք՝ երբ Թյուրքիայի հետ դաշնագիրն ստորագրվի, Անդրկովկաս ուղարկել մի քանի հանձնաժողովներ՝ երեք պետությունների սահմանները որոշելու: Ստիպված եմ, սակայն, նկատել, որ ձերոնք,– հատկապես Դաշնակցական կուսակցությունը, որին Դուք ևս, կարծեմ, պատկանում եք, պ. Ահարոնյան,– իրե՛նք են, որ խաղաղությունը հաճախակի խանգարելու առիթներ են տալիս: Ձեր երեք շեֆերը՝ Դրո, Համազասպ և Գյուլխանդանյան պարագլուխ և առաջնորդ են այն խմբերի, որոնք թաթար գյուղեր են ավերել և կոտորած արել Զանգեզուրում, Սուրմալուում, Էջմիածնում, Զանգիբասարում: Սա անհանդուրժելի է: Նայեցե՛ք,– նա ձեռք առավ սեղանի վրայից մի ծալ պաշտոնական թղթեր – նայեցե՛ք, ահա դեկտեմբերի մեջ, վերջին ամիսները օրավուր ինձ հաղորդում է իմ ներկայացուցիչ Վարդրոպը ավերված թաթար գյուղերի ցանկը: Թաթարական պաշտոնական զեկույցը խոսում է 300 թաթար գյուղերի ավերումի մասին: Սա ձեր Դատին կարող է մեծապես վնասել:

Լորդն այս բոլորն ասում էր ջերմությամբ և գրեթե վրդովմունքով:

– Պ. նախարար,– ասացի,– Ձեր մեղադրանքը չափազանց ծանր է և չափազանց վճռական: Ներեցեք, որ պետք եղած բացատրությունը տամ: Իրավունք չեմ համարում ինձ վեճի ենթարկել Ձեր արած հայտարարության պատճառ եղող փաստերը, քանի որ դրանք պր. Վարդրոպի զեկույցներն են: Բայց կասեմ, որ անշուշտ ինքը պ. Վարդրոպ ցավալի թյուրիմացության զոհ է: Հիրավի, կան Ձեր հիշատակած վայրերում բնակիչներից թափուր, թաթար գյուղեր, բայց դա բնավ չի նշանակում, թե հայերն են ավերել այդ գյուղերը: Զանգեզուրի պատմությունը Ձեզ հայտնի է անշուշտ: Թաթարներն աշխատում են գրավել հայկական այդ բնագավառը, մերոնք դիմադրում են: Կռիվ է անընդհատ: Եվ ի՛նչ զարմանք, որ այդտեղ ավերվում են թաթար գյուղեր՝ բնակիչների փախուստով: Եվ ավերում են հավասարապես, գուցե և՝ ավելի հայ գյուղեր, որոնց բնակիչները հաճախ են սրի քաշվում: Ղարաբաղի անցքերը գիտեք, հայ գյուղերի ավերածը Սուլթանովի ձեռքով: Սուրմալուն իմ ծննդավայրն է և Էջմիածինը՝ նրան կպած, երկուսն էլ ճանաչում եմ մոտիկից: Ճշմարիտ է, այնտեղ կան թաթար

գյուղեր բնակիչներից թափուր, բայց դա էլ իր ցավոտ պատմությունն ունի, որ համենայն դեպս ի վնաս հայերի բարի համբավի չէ: Երբ 1918-ին, հայերի համառ ու հուսահատ դիմադրությունից հետո՝ թյուրքերը կարողացան գրավել այդ գավառները, տեղական թաթարները ամեն տեղ հայերի ջարդ կազմակերպեցին թյուրքերի հետ: Հայերի մնացորդները խույս տվին Երևան: Դաշնակիցների հաղթությամբ ու Կովկաս մտնելով թյուրքերը տեղի տվին, քաշվեցին մեր գավառներից և հայերի մնացորդները նորից դիմեցին դեպի Սուրմալու, ուր թաթարները քյուրդերի հետ նոր դիմադրություն ցույց տվին հայերի դարձին և, ի վերջո խույս տվին դեպի Ադրբեյջանի հողը: Այսպես են դատարկվել Սուրմալուի թաթար գյուղերը: Նույնը կատարվել է և Էջմիածնի գավառում: Մյուս կողմից՝ մեր հողի վրա գտնվող թաթար համայնքները շարունակ հուզումի ու դավադրության մասնակից եղան Ադրբեյջանի կառավարության գրգռությամբ: Եվ ամեն անգամ Զանգեզուրի վրա քալող Ադրբեյջանի զորքերին աշխատեցին մեր երկրի ներսից օժանդակել: Այս ընդհանուր շփոթի մեջ բնական է, որ վնասվող գյուղեր եղան երկու կողմից: Կրկնում եմ այս տնաքանդ հարաբերության, այս ավեր ու արյունի հիմնական պատճառը սահմանների և յուրաքանչյուր պետության ապագայի անորոշությունն է, որ Conférence-ը ցարդ, տարաբախտաբար, չկամեցավ կարգադրել: Հանուն իմ կառավարության և մեր ժողովրդի ես վճռապես հայտարարում եմ, որ գիտակցաբար կամ անմիտ վրեժխնդրությամբ թաթարների ջարդեր տեղի չեն ունեցել. վնասվել են այս անվերջ կռիվների մեջ թաթար գյուղեր, բայց նույնքան և ավելի հայ գյուղեր, որոնք ո՛չ միայն ավերվել են, այլ և՛ս բնակիչները կոտորվել թաթար բանդաներից: Հուսամ՝ ձեր ներկայացուցիչ պ. Վարդրոպ ձեզ հաղորդել է այն սարսափելի կոտորածը, որին ենթակա եղան Արեշի, Նուխու, Նախիջևանի, Ագուլիսի, ավելի վաղ՝ Բաքվի և Շամախու հայերը: Նուխում և Արեշում մենք ունեինք 60 հազար հայ, այսօր գրեթե մարդ չի մնացել: Բաքվի աղետը գիտեք, ուր մենք 28 հազար մարդ կորցրինք:

– Այդ փաստերն ինձ հայտնի են,– պատասխանեց Լորդը՝ վերցնելով առջևի փաստաթղթերը,– նայեցեք, ահա այստեղ շարքով նշանակված են հարձակումները՝ և՛ թաթարների, և՛ հայերի: Ահա դեկտեմբեր ամիսը՝ հայերի անվերջ հարձակումներ,– Լորդը կարդաց շարանը,– և ահա վերջում թաթարական պաշտոնական զեկույց՝ թե 300 թաթար գյուղեր են ավերված:

– Անշուշտ, Բարձր Լորդը կհամաձայնի, որ թաթարական

պաշտոնական զեկույցը ենթակա է ծանր չափազանցության,– ասաց Պողոս Փաշան:

– Այո, իհարկե, բայց մնացածը մեզ գրում է Վարդրոպը: Կրկնում եմ, մինչև դեկտեմբեր թաթարներն են նախահարձակ եղել, բայց այնուհետև՝ վերջին ամիսները միշտ հայերը: Ահա այս ցանկը:

– Բարձր Լորդը, հուսամ, ստացել է Ագուլիսի հայ ազգաբնակության սարսափելի կոտորածի լուրը, որ տեղի է ունեցել հունվարից հետո,– ասացի ես:

– Ճշմարիտ է, այդ մեկ փաստից դուրս, վերջերս միշտ հայերն են նախահարձակ: Ես այս ասում եմ ձեր շահերի տեսակետից: Ես կկամենայի , որ այս պահուն, երբ ձեր հարցը մտել է շատ սուր շրջան, և երբ այնքան դժվարություններ կան մանդատի համար, դուք նորերը չստեղծեք: Դուք գիտեք, որ ո՛չ Անգլիան, ո՛չ Ֆրանսիան, ո՛չ Իտալիան և ո՛չ իսկ Ամերիկան կամեցան ձեր մանդատն ընդունել: Հույսերս Ազգերի Լիգան է: Լավ չէ, որ ձեր հարուցած այս նոր դժվարությունները պատճառ դառնան, որ Ազգերի Լիգան էլ մերժի: Այսպես չի կարելի, դուք մշտական կռիվների մեջ եք:

– Բարձր Լորդը գիտե անշուշտ,– պատասխանեցի ես, – որ կռվախնձորը մեր հողն է: Զանգեզուրը հայ է, Ղարաբաղը հայ է, Նախիջևանը մեր երկրի անկապտելի մասն է հազար տարուց ի վեր: Բնական է, երբ թշնամիներն աշխատում են գրավել մեր երկիրը, մենք ստիպված ենք պաշտպանվել՝ ինչ և լինի:

– Ձեր շահը պահանջում է խաղաղ լինել, այլապես մենք չենք կարող ձեզ օգնել, չենք կարող ձեզ զենք ու ռազմամթերք հայթայթել, որովհետև դուք այն գործ կածեք թաթարների դեմ:

Այս ասելով՝ Լորդ Քըրզընն վեր կացավ՝ ներողություն խնդրելով, թե զբաղմունք ունի: Եվ արդեն ոտքի էինք, երբ ես ասացի.

– Բարձր Լորդի ուշադրությունն եմ հրավիրում այն հանգամանքի վրա, որ ամեն անգամ, երբ մենք զենք ու ռազմամթերք ենք խնդրել, միաժամանակ խնդրել ենք և Դաշնակիցների կամ Անգլիայի զինվորական միսիոն ղրկել՝ տեղում հետևելու մեր գործողություններին, որպեսզի մենք անարդար, անիրավ գնահատումների առարկա չդառնանք: Ես շատ կխնդրեի, որ Բարձր Լորդը զենքի ու ռազմամթերքի խնդիրը չկապեր հայ-թաթարական հարաբերություններին:

Պողոս Փաշան, որ մինչ այդ կա՛մ լուռ էր, կա՛մ թարգմանում էր, երբ Լորդը խոսում էր անգլիերեն, ասաց.

– Բարձր Լորդը կկամենար անշուշտ, որ այս զրույցի մասին

հեռագրեինք կառավարության:

– Այո, անշուշտ: Կրկնում եմ, մինչև թաթարների ջարդը դադարի, և այդ երեք շեֆերը չհեռանան ղեկավարությունից, դժվար թե հնարավոր համարեմ զենք ու ռազմամթերք հասցնել ձեզ: Խնդրում եմ այս նկատի առեք:

Եվ հետո, փոխելով իր խիստ տոնը, ավելացրեց ժպտալով.

– Ես շատ եմ ցավում, որ ստիպված եղա այս խիստ տոնով խոսել: Խնդրում եմ հավատալ, որ ես շատ բարեկամ եմ ձեզ և թե այսպես խոսեցի, պարզապես ձեզ ճշմարտությունն ասելու համար էր: Կարծում եմ, բարեկամը պետք չէ ճշմարտությունը թաքցնի:

Մենք դուրս եկանք:

Տեսակցությունը տևեց մոտ 45 րոպե, որի ընթացքում նախարարի և իմ մեջ ամենածանր վեճը տեղի ունեցավ:

Տուն դառնալով՝ Փաշան առաջարկեց իսկույն հեռագրել Երևան: Նա խիստ կոտրված էր և շատ հուսահատ:

Ես փորձեցի սրտապնդել ասելով, որ Լորդ Քըրզընի հայտարարության տակ թաքնված է անշուշտ ոչ պարզ բարեկամություն, այլև քաղաքական նպատակ: Ավելցրի, որքան և այս բոլորը ցավալի լինի, դարձյալ ավելի վատ չէ, քան այն լուրերը, որոնք հասնում են մեր կոտորածների մասին:

Փաշան, միշտ շատ կոտրված, պատասխանեց, թե իմ սառնասրտությունը նրան զարմացնում է՝ «et vous avez l'épiderme assez solide»[102]:

Ահա այն հեռագիրը, որ Փաշան թելադրեց, որպեսզի մեր երկսի ստորագրությամբ Երևան ղրկենք.

Խատիսյան
Վարչապետ
Երևան

Տեսանք Լորդ Քըրզընը: Խորապես հուզված ենք իմանալով, որ, ըստ իր տեղեկություններուն, հայ խումբեր, Դրոյի, Համազասպի և Գյուլխանդանյանի կողմե ղեկավարված, վերջին ամիսներու ընթացքին, հարձակված և ավերած են բազմաթիվ թաթարական

[102] «Բավական ամուր ջղեր ունիք»:

գյուղեր: Զարդերու պաշտոնական ամբաստանություն կա: Մեզ կանխազգուշացուցած են, որ եթե իրերու այս վիճակին վերջ չդրվի և եթե հրամանատարությունը չառնվի վերև հիշված այդ երեք անձնավորություններու ձեռքեն, մեզ պիտի մերժեն զենքերու հայթայթումը, և մենք պիտի կորսնցնենք ամեն օժանդակություն և պաշտպանություն: Ձեզ հաղորդելով այս ազդարարությունը, որուն ծանրակշռությունը չի կրնար չափազանցվել վայրկյանի մը, երբ մեր հայրենիքի բախտը պիտի վճռվի:

Հարկադրաբար կխնդրենք ձեռք առնել ամենավճռական միջոցներ՝ վերջ տալու համար կացության մը, որ կրնա աղետալի դառնալ և անկարելի դարձնել մեր պաշտոնի կատարումը:

Այս հեռագիրն ինքը Փաշան ստորագրեց ու մեկնեց Փարիզ նույն օրը:

Սինակ մնալով՝ ես գտա, որ այսպիսի հեռագիրը կարող է չափազանցրացրած տպավորություն գործել: Այս պատճառով խմբագրեցի նոր հեռագիր, ուր, պահելով Լորդ Քըրզընի հայտարարության մասը, զգալապես թուլացրի մեր խորհրդի խստությունը: Եվ որովհետև Փաշան բացակա էր, ստորագրեցի ինքս միայնակ:

Ահա այդ հեռագրի պատճենը, որ անձամբ տարա Foreign Office[103] և ներկայացրի Vansittart-ին:

8 Ապրիլ, 1920
Լոնդոն

Վարչապետ Խատիսյան
Երևան

Տեսանք Լորդ Քըրզընը Պողոս Փաշայի հետ միասին: Խորապես հուզված ենք իմանալով, որ, համաձայն իր տեղեկությունների, Դրօ-ի, Համազասպի և Գյուլխանդանյանի կողմե ղեկավարված հայկական խումբերն են, որ վերջին ամիսներու ընթացքին հարձակեր և կործաներ են Սուրմալուի, Էջմիածնի, Զանգեզուրի, Զանգիբասարի բազմաթիվ թաթարական գյուղեր: Կան ջարդերու պաշտոնական մեղադրանքներ: Մեզ նախազգուշացրին, որ եթե այս կացությունը չփոխվի, մեզ պիտի մերժվի բոլորովին զենքերու մատակարարությունը և մենք պիտի կորսնցնենք ամեն օգնություն ու հովանավորություն:

Հաղորդելով Ձեզ այս ծանր լուրը՝ կխնդրեմ Ձեզ անմիջապես հեռագրել կառավարության կողմե ձեռք առնված միջոցներու մասին:

ԱՀԱՐՈՆՅԱՆ

Ահարոնյան
Ռոյեալ Փալաս Հոթել
Քենսինգտոն, Լոնդոն

Ապա ավելացրի հետևյալը.

– Դուք գիտեք, որ երեկ մենք տեսնվեցինք Լորդ Քըրզընի հետ, որը մեղադրեց մեզ թաթարների ջարդերի մեջ: Իմ պարտքն է այս ծանր հայտարարությունը հաղորդել իմ կառավարության: Բայց պետք եմ համարում կանխապես հայտնել, որ այս հեռագիրը կարող է իր ծանր տպավորությունը թողնել Երևանում և նրանց մտածել կտա, որ Անգլիա, որ համարվում էր ներկա պայմաններում մեր միակ հույսը, ձեռնթափ է լինում մեզնից: Ես վախենում եմ, որ այս տպավորության տակ, նրանք հուսահատ քայլեր առնեն, որոնցից կարելի էր խուսափել: Մասնավորապես զենքի և ռազմամթերքի մերժումը ամենածանր տպավորություն կթողնի: Ես խնդրում եմ այդ հայտնել Լորդ Քըրզընին:

– Ես գտնում եմ, որ ավելի լավ է այս հեռագիրը դրկեք,– ասաց Vansittart,– վնաս չունի, թե ձերոնք մի փոքր վախ զգան: Ճշմարիտ է, որ այս մեղադրանքների մեջ շատ չափազանցություն կա, բայց և ճշմարիտ է, որ ձերոնք բաներ թույլ տվել են իրենց:

– Ես նորից պնդում եմ,– ասացի,– որ Վարդրոպ զոհ է ծանր մոլորության, ուր դեր են կատարել մեր հարևանները: Այո, ես կդրկեմ հեռագիրը, բայց պետք էր, որ ես ձեզ ասեի, թե նա ինչ տպավորություն կթողնի:

Այնուհետև Vansittart երկար խոսում ու համոզում էր ինձ ընդունել Դաշնակցություն (Fédération[104]) երկու հարևանների հետ՝ բոլշևիկներին դիմադրելու համար:

– Սա միակ միջոցն է պահպանելու այդ երեք պետությունները: Հակառակ դեպքում, վստահեցնում եմ ձեզ, որ մեր բոլոր աշխատանքները ջուրը կընկնեն՝ Հայաստան կազմելու համար: Բոլշևիկները շատ մոտ են Բաքումին ցամաքով, երբ Բաքում առին, դուք՝ երեք ժողովուրդներդ էլ նրանց ոտքի տակ եք:

[103] *Արտաքին Գործոց Նախարարություն (Բրիտանիա):*

[104] Fédération - *Դաշնություն:*

– Բայց մի՞թե դուք լրջորեն հավատում եք,– հարցրի ես,– թե Կովկասյան ազգերը պիտի կարողանան դիմադրել բոլշևիկներին: Ես չեմ հավատում: Ռուսական զենքի վարկը շատ բարձր է այդ կողմերում: Ի՞նչ զորք կա: Թաթարակա՞ն: Դա զորք չէ, այլ բանդա: Վրացիք միշտ վատ կռվողներ են եղել: Մենք էլ խնդրեցինք վաղուց հետե միջոցներ՝ բանակը կազմակերպելու համար: Չկամեցաք: Ո՞վ պիտի կռվի բոլշևիկների դեմ:

– Բոլշևիկների հաղթությունների մեջ մեծ բլֆ[105] կա,– ասաց Vansittart և վերջում առաջարկեց իր ծառայությունը մեր երեք պատվիրակությունները հավաքելու և խոսելու:

Ես խուսափողական պատասխան տվի:

ԵՐԿՈՒ ՀԵՌԱԳՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Փարիզ

12 ապրիլ, 1920

Լոնդոնից Փարիզ վերադարձիս, եկեղեցում զատկական տոնի առթիվ, Փաշային հանդիպեցի: Եվ նրա առաջին հարցն եղավ, թե ղրկե՞լ եմ հեռագիրը Երևան Լորդ Քըրզընի հետ ունեցած զրույցի առթիվ: Ես երկու խոսքով ասացի.

– Այո, միայն հետո խորհելով ինչ-որ անպատեհություններ գտա, որ շտապ կազմելիս նկատած չէինք, մի փոքր փոփոխեցի և, քանի որ Դուք բացակա էիք, մենակ ստորագրեցի:

Նա սաստիկ դժկամեց և կողքիցս քաշվեց խռոված երեխայի պես՝ ասելով.

– O, c'est très fort[106]:

Նույն օրը բժիշկ Նէվրուզը եկավ ինձ ասելու, թե Փաշան սաստիկ զայրացած է հեռագրի պատմությունից և ուզում է բողոքել Լորդ Քըրզընին: Ես ժպտացի ու ավելացրի՝ թե երբ հանդիպեմ վաղը ժողովին, ես նրան շատ հեշտությամբ կհամոզեմ, որ վշտանալու տեղիք չկա, որ ուրիշ կերպ անհնարին էր վարվել, քան ես վարվել եմ: Նէվրուզն ավելացրեց, թե կասկածում է իմ հաջողությանը և թե Փաշան մտադիր է այս խնդիրը Միացյալ Պատվիրակության ժողովին բերել: Ես պատասխանեցի, թե՝

– Այդ ավելի լավ ինձ համար, և Դուք կտեսնեք, որ Փաշային ես հենց ժողովում կհամոզեմ:

---

[105] *Փքուն սուտ:*

[106] Այս արդեն չափազանց է:

Արդարև, հաջորդ օրը Միացյալ Պատվիրակության նիստին, ուր ներկա էին Պատրիարքը, Փաշան, Չոպանյան[107], Նէվրուզ, Թեքեյան[108], ես պատմեցի Լոնդոնում մեր զրույցի արդյունքը թաթարների և վրացիների հետ: Փաշան, հանկարծ նյութը փոխելով, դարձավ երկու հեռագրի պատմությանը: Նորից երկարորեն պատմեց մեր տեսակցությունը Լորդ Քըրզընի հետ, հեռագրի կազմելը, ապա եկեղեցու միջադեպը և խնդրեց, որ ժողովն իր կարծիքն ասի:

– Շատ եմ ցավում, որ այս խնդիրը Փաշային այդքան ծանր զրաղում է դարձել և խնդրում եմ հավատալ, որ եթե այս բոլորի մեջ ինձ համար անախորժ մի բան կա, դա այն է, որ ես առանց բնավ այդ ցանկանալու՝ զայրույթ եմ պատճառել Պողոս Փաշային: Կրկնում եմ՝ ես այդ չեմ հետամտել: Ես սիրով կլսեմ, եթե նա ցույց տա, որ ես սխալ եմ գործել: Բայց կխնդրեի փոխադարձ վիրավորանքի և անվստահության մտածումները մեկդի դնել: Վստահ եմ, սակայն, որ իմ կազմած հեռագիրը հավատարիմ մնալով հանդերձ Լորդ Քըրզընի հայտարարության, միայն մեղմացրել է վերջին մասը: Եվ այդ անհրաժեշտ էր. այլապես, դուրս էր գալիս, որ 1) ես ու Փաշան բաժանում ենք Լորդ Քըրզընի կարծիքը ջարդերի մեղադրանքի մասին; 2) մենք էլ նրա հետ միացած պահանջում ենք հեռացնել ասպարեզից մեր երեք կարևոր գործիչներին; 3) առանց սպասելու և խնդրելու մեր կառավարությունից պետք եղած բացատրությունը, մենք մեր կողմից **պահանջում** ենք համակերպվել, ի վերջո 4) սպառնում ենք նույնիսկ հրաժարվել: Ինչ վերաբերում է իմ միանակ ստորագրելուն, դուք երևի չգիտեք, որ ես ինքս խնդրեցի Փաշային ինձ հետ ստորագրել առաջին հեռագիրը. հետևապես պատճառ չունեի նրան զրկել այդ հաճույքից, եթե նա Լոնդոն լիներ: Այժմ կխնդրեի կարդալ երկու հեռագիրը և համեմատել՝ տեսնելու համար իմ ասածի ճշմարտությունը:

Փաշան կարդաց երկու հեռագրերը: Ժողովականները լուռ էին: Ես շարունակեցի.

– Դուք տեսնում եք, որ տարբերություն գրեթե չկա: Նույնիսկ Vansittart, որին ես հաջորդ առավոտ Լոնդոնում ցույց տվի իմ հեռագիրը, այն գտավ շատ խիստ, բայց ավելացրեց թե՝ «պարտական եք ղրկել, դա անհրաժեշտ է»: Եթե Vansittart-ը այն գտավ լիապես գոհացուցիչ, նույնիսկ խիստ, կարծում եմ, որ մենք ավելի պահանջող լինելու չենք մեզնից:

Փաշան պատասխանեց.

---

[107] *Գրող Արշակ Չոպանյան:*

[108] *Բանաստեղծ Վահան Թեքեյան:*

— Այո՛, բայց նույն Vansittart-ը այսօր, երբ տարա նրան ցույց տվի առաջին հեռագրի տեքստը, և ասացի, թե Ահարոնյան այս չէ ղրկել, շատ զարմացավ, որ Դուք նրան ուրիշ հեռագիր եք տվել և շատ վշտացավ:

— Ի՞նչպես, Դուք ցու՞յց եք տվել մի օտար պետության ներկայացուցչին այն հեռագիրը, որ երկրորդի մեկնելեն հետո՝ պիտի համարվի պետական գաղտնիք, ազգային գաղտնիք: Դուք, որ գիտեիք, թե ես երկրորդ հեռագիրն արդեն ղրկել եմ: Սա մի վատ, շատ ստոր արարք է, հավասար դավաճանության, և եթե Դուք սկզբից ինձ հայտնեիք Ձեր այդ անարժան արարքի մասին, ես Ձեզ այնքան քաղաքավարությամբ բացատրություն չէի տա: Ես Ձեզ շատ վատ մարդ եմ կարծել, բայց այս աստիճան ստոր երբեք չէի կարծի:

Ես դուրս գնացի ժողովից:

Այսօր՝ ապրիլ 12-ին Խորեն Սրբազան Մուրադբեգյան, գրում է ինձ Լոնդոնից, թե Փաշայի ներկայացուցիչ՝ տխրահռչակ Մալքոմը, անշուշտ Փաշայի հրահանգով, առաջին հեռագրի պատճենը Լոնդոնում տարել է Foreign Office, ցույց է տվել, հայտնել է, թե Ահարոնյանը չի ղրկել այս և հաջողացրել է այն ևս հեռագրել Երևան՝ Փաշայի և իմ ստորագրությամբ:

Այս բոլորը կատարվում է իսկապես Դաշնակցությունն ու մեր արդի կառավարությունը հարվածելու համար, և մանավանդ Դրոյին, որի դեմ պ. Մ. Պապաջանյան բոլոր շրջաններում, ուր կարող է, մղում է անպատիվ պրոպագանդա:

Զավեն Պատրիարքը, որ Փաշայի հետ ունեցածս ընդհարման երեկոյին եկավ ինձ խնդրելու, որ մոռանամ միջադեպը և շարունակեմ գործակցությունը Փաշայի հետ, չկարողացավ թաքցնել, որ Փաշան այդ «հիմարությունն ըրած է պարզապես քիչ մը Դաշնակցությունը նեղը ձգելու համար»:

Եվ ես ստիպված եմ նորից գործակցել Փաշայի հետ, նորից տեսնվել, նորից ժողովներ անել, դիմումներ կատարել միասին: Ի՞նչ տանջանք:

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՎՐԱՑԻՆԵՐԻ ԵՎ ԹԱԹԱՐՆԵՐԻ ՀԵՏ

Ապրիլ 13, 1920
Փարիզ

Լորդ Քըրզընի քարտուղար Vansittart-ի հրավերով – որ հատուկ եկել էր Լոնդոնից այդ նպատակով, տեղի ունեցան մի քանի խորհրդակցություններ Կովկասյան երեք պատվիրակությունների մեջ սահմանային խնդիրների առթիվ: Vansittart, հրավիրելով մեզ իր մոտ ապրիլի 12-ին, հայտարարեց, որ թե՛ ինքը և թե՛ մանավանդ Լորդ Քըրզընն անկեղծորեն բարյացակամ են երեք հանրապետություններին, և ահա թե ինչու ինքը Լորդ Քըրզընի հրահանգով խորհուրդ է տալիս մեզ շտապով համաձայնության գալ:

– Հակառակ դեպքում,– ավելացրեց նա,– ես շատ վհատված պիտի լինիմ ձեր ապագայի մասին:

Հաջորդ օրը՝ ապրիլի 13-ին, տեղի ունեցավ մեր առաջին նիստը:

Ներկա էինք ես ու Փաշան, գեն. Կորգանով և Փիրալյան, հետո և Նորատունկյան, վրաց կողմից՝ Չխեիձե, Գրէվաչաձե, Ավալով, թաթարների կողմից՝ Թոփչիբաշև, Մեխտիև, Շեյխ յուլ Իսլամով:

Ժողովի նյութն էր՝ 1) համաձայնության եզր գտնել սահմանավեճերի առթիվ. 2) Բաքվի շրջանի և քաղաքի ապագայի մասին:

Ժողովը տեղի ունեցավ Վրաց պատվիրակության շենքի մեջ, նախագահությամբ Չխեիձեի:

Որովհետև վրացիք ու թաթարները դեմ եղան սահմանային խնդիրները ամբողջապես այստեղ՝ Խաղաղության Համաժողովին մոտիկ լուծել, մնում էր համաձայնության մի այլ ելք գտնել: Հիմք ընդունվեց Կովկասում երեք կառավարությունների ստորագրած համաձայնությունը միջնորդ դատարանի մասին, եթե համաձայնության չգան: Եվ քանի որ այդ համաձայնությամբ նախատեսված չէ ո՛չ բանակցությունների և ո՛չ արբիտրաժի համար որոշ ժամանակ, վճռվեց սահմանել որոշ ժամանակամիջոց և՛ մեկի, և՛ մյուսի համար:

Մենք առաջարկեցինք բանակցությունների համար ամենաշատը մի ամիս: Վիրո-թաթար բլոկը պնդեց 2 ամսի վրա: Նկատելի է, որ նրանք կցանկանային որչափ կարելի է ներկա դրությունը ձգձգել: Կանգ առանք վեց շաբաթվա վրա, որից հետո, եթե բա-

նակցությունները չեն հաջողվում, կողմերը, համաձայն իրենց նախկին որոշման, դիմում են արբիտրաժի:

Երկրորդ խնդիրը արբիտրաժի ձևն էր, որ նույնպես նախորոշված չէ կառավարությունների մեջ:

Վիրո-բաթարական բլոկը, բացառությամբ Շեյխ-յուլ-Իսլամովի, առաջարկեց հետևյալը.

« Յուրաքանչյուր կողմ իրենից ընտրում է մի անձ, հետո, այդ երկուսը միասին համաձայնությամբ ընտրում են երրորդին՝ օտարականի, որը և լինում է նախագահ»:

Մենք առարկեցինք, որ այդպիսի արբիտրաժը էապես դառնում է մի անհատի՝ նախագահի, որովհետև երկու կողմերի ներկայացուցիչները իրար կչեզոքացնեն: Այդ դեպքում այդ երկրի ներկայությունը (օրինակ՝ մի հայի և մի վրացու) սոսկ կծառայի ծանր վեճերի և հաճախ անախորժությունների: Ուստի առաջարկեցինք, որ յուրաքանչյուր կողմ ընտրի իր ներկայացուցիչը, բայց ոչ իր ցեղից, այլ օտար, չեզոք պետությունից (օրինակ՝ Շվեդիա, Հոլանդիա, Շվեյցարիա) և հետո՝ դարձյալ երկու կողմերը համաձայնությամբ ընտրեն նախագահին, նույն երկրներից մեկի քաղաքացի: Եթե, սակայն, նախագահի ընտրության վրա, չհամաձայնին, պետք է դիմեն կա՛մ Գերագույն Խորհրդի, կա՛մ Ազգերի Լիգային և կա՛մ որևէ պետության, որ նշանակի մեկին նախագահ:

Անցավ մեր առաջարկը: Որոշվեց այս ընդհանուր հիմունքներով թուղթը խմբագրել և հեռագրով հաղորդել երեք կառավարություններին:

Չխեիձեն հայտնեց, թե ինքը Բաթումի խնդիրը և այս մյուս սահմանակետերը նկատում է միացած: Եվ նույնիսկ նա նախ Բաթումի խնդիրն առաջ ձգեց օրակարգով, բայց որովհետև նրա մասին համաձայնություն չգոյացավ, մենք խոստացանք գրավոր ներկայացնել 1-2 օրից, այս պատճառով նախ սահմանային արբիտրաժի քննության առանք:

Բաթումի մասին Vansittart խնդիրն այդպես էր դրել: Թե նախ ծրագիր կար Բաթում և իր շրջակա շրջանը հայտարարել մի չեզոք պետություն, բայց հետագայում այդ ծրագիրն ընկավ. և այժմ, եթե երեք Կովկասյան կառավարությունները համաձայնության գան Բաթումի մասին, Գերագույն Խորհուրդը շատ գոհ կմնա: Նա ավելացրեց, թե դեմ չէին լինի, որ Բաթում ու շրջանը վրացական գերիշխանության ենթարկվի, բայց 1) ապահովելով մյուս երկու հանանեներին՝ Հայաստանին ու Ադրբեյջանին ելք Բաթումից Սև

ծով, և 2) անպայման Բաթումը ազատ պորտո-ֆրանկո[109] դարձնելով:

Վերջին երկու պայմանները նկատի ունենալով, վրացիք առաջարկեցին համաձայնության գալ հետևյալ ֆորմուլայի վրա:

«Հայաստանն ու Ադրբեյջանը ընդունում են Վրաստանի գերիշխանությունը (կամ ավելի ճիշտ միացած իրավունքը) Բաթումի ու շրջանի վրա, իսկ վրացիք իրենց կողմից ապահովում են երկու հիշյալ հարևաններին տնտեսական ելք՝ Սև ծովը՝ Բաթումի վրայով»:

Թաթարները համաձայնեցին իսկույն: Ես առարկեցի հետևյալը.

– Երբ դուք ասում եք՝ հարևանները ընդունում են ձեր «սուվերենիտետը»[110], դա բոլորովին հասկանալի է: Բայց երբ ասում եք, թե մենք կտանք բոլոր անհրաժեշտ երաշխիքները ձեր տնտեսական ելքի, դա անորոշ է և կարող է պատճառ դառնալ շատ թյուրիմացությունների: Նախ՝ պետք է որոշել ձեր տալիք երաշխիքների բնույթը և տեսնել, թե մինչև որ աստիճան նրանք կարող են ապահովել մեր տնտեսական ելքը:

Չխեիձեն պատասխանեց, թե իրենք ազնիվ խոսք են տալիս: Ես ասացի թե՝

– Ձեր ազնիվ խոսքը անհատապես ինձ համար շատ հարգելի է, բայց պետական քաղաքական խնդիրների կարգադրության ժամանակ դա առանձին արժեք չունի: Գարանտիան[111] պիտի լինի որոշ, հստակ և հաստատուն:

Չխեիձեն առաջարկեց մեզ ներկայացնել գրավոր, թե մենք ի՞նչպես ենք հասկանում գարանտիաները՝ ապահովելու համար մեր տնտեսական ելքը:

Մի օր հետո մեր առանձին խորհրդակցությանը, ուր ներկա էին Փաշան, ես, Նորատունկյան, գեներալ Կորգանյան, Փիրալյան, Վարանդյան, Սիմ. Հակոբյան, եկանք այն եզրակացության, որ մենք պահանջելու ենք Ճորոխի ձախ ափը en tout propriété[112], մանավանդ, որ Vansittart հայտնեց մեզ **առանձին**, որ մենք այդ պահանջելու իրավունք ունինք և Գերագույն Խորհուրդը կտա մեզ

109 *Ազատ նավահանգիստ:Նավահանգիստ կամ ծովափնյա շրջան, որ առանց մաքսի օգտվում է ապրանքների ներմուծման և արտահանման իրավունքից:*

110 *Ինքնիշխանությունը:*

111 Երաշխիք:

112 *Սմբողջ սեփականությամբ:*

այդ: Նաև պահանջեցինք մեր հատուկ քարափը Բաքումում և նրա շուրջը բավարար չափով հող, ուր կարելի լինի շինել պետք եղած ամբարները և այլ անհրաժեշտ ծածկերը: Ճորոխի գետաբերանից մինչև Բաքում 7-8 վերստ[113] տարածություն հողաբաժնի վրա, որ վրացական է լինելու, մենք պետք է իրավունք ունենանք մեր երկաթուղիին գիծը անցկացնելու, որ գալու է Արդահանի և Կարսի շրջանից:

Այս որոշումն էր, որ մենք հաջորդ օրը հայտարարեցինք ժողովում: Վրացիք բացեիբաց մերժեցին: Բաքումի մասին համաձայնություն չգոյացավ:

Մենք առաջարկեցինք ստորագրել առայժմ զեթ արբիտրաժի մասին մեր կայացրած համաձայնությունը: Վրացիք հայտնեցին, թե քանի որ Բաքումի մասին համաձայնություն չկա, նրանք հնարավոր չեն գտնում առաջինն ստորագրել:

Vansittart սպասում էր պատասխանի: Երեք պատվիրակությունները ապրիլի 17-ին ներկայացանք և հայտնեցինք կատարվածը: Նա շատ վշտացավ, նորից պնդեց, թե պետք է համերաշխել և առաջարկեց այս ձախողանքը չնկատել վիժումն և վերսկսել Սան-Ռեմոում, ուր լինելու է և ինքը, և ուր ապրիլի 19-ին, ասաց, սկսվելու են Խաղաղության Համաժողովի նիստերը:

Ես մեկնեցի Սան-Ռեմո ապրիլի 18-ին գեն. Կորգանյանի, Ս. Հակոբյանի, Միրէի հետ. Հռոմից էլ կանչեցի Վարանդյանին: Եկան և Փաշան ու Նորատունկյանը: Վերջինիս ես հրավիրեցի:

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՎՐԱՑԻՆԵՐԻ ԵՎ ԹԱԹԱՐՆԵՐԻ ՀԵՏ ՍԱՆ-ՌԵՄՈ-ՈՒՄ

1920թ. ապրիլ 21

Սան-Ռեմո-ում Vansittart մեզ առանձին հայտնեց, թե մեր կացությունը խախտված է, թե Թուրքիայի կողմից մեր սահմանները սղմելու տրամադրություն կա (խոսքը Էրզրումի մասին էր) Հայաստանը շրջապատող բազմաթիվ թշնամիների պատճառով և թե լավագույնն է զիջումով համաձայնության գալ վրացիների և թաթարների հետ և խորհուրդ տվեց Ճորոխի ձախ ափի սեփականության պայման չդնել և պահանջել իրավունք՝ երկաթուղային

[113] *Երկարության ռուսական հին չափ՝ հավասար 1,06 կմ.-ի, որ կիրառվում էր մինչև մետրական սիստեմին անցնելը:*

գիծ անցկացնելու վրացական հողով, բայց մեզ պատկանող իրոք Հայաստանի անձեռնմխելի սեփականությունը մինչև Բաքում, որը մնալու է Port Libre et Franc[114]:

Ստիպված էինք համակերպվել, քանի որ իրոք Էրզրումի մասին շշուկները քանի գնացին ավելի ճշմարտապատում պատկեր առան: Եվ առաջին ժողովում իսկ, երկար վեճերից հետո, աշխատելով քանկ ծախել, մենք հայտնեցինք, որ հրաժարվում ենք հողային պահանջից և կբավականանանք լուրջ գարանտիաներով մեր երկաթուղային գծի համար, որը անցնելով Ճորոխի հովտով՝ վրացական հողով կերթա դեպի աջ՝ Բաքում և դեպի ձախ՝ դեպի Աթինե և Ռիզա, որոնք մեզ խոստացված են որպես սեփական նավահանգիստներ:

Վրացիք, ընդունելով մեր երկաթուղային գիծը, ավելացրին, սակայն, որ իրենք պետք է որոշ կոնտրոլի[115] իրավունք ունենան երկաթուղու կառուցման և շահագործման մեջ: Նրանց հակառաջարկն այս մասին պարզապես մեր միջոցներով շինված երկաթուղին դարձնում էր վրացական գիծ. իսկ դեպի Աթինե և Ռիզա ճյուղ տանելուն հակառակեցին:

Առարկությունը հետևյալն էր, որ Չխեիձե, Գորեչիա և Գվարճալաձե արտահայտեցին երկար ճառերով: Նրանք ասում էին, թե մեր պահանջը Լազիստանի վրա հակադեմոկրատիկ է և ազգերի ինքնորոշման դեմ՝. ի՞նչպես կարելի է լազերի երկիրը պահանջել, առանց նրանց կամքն առնելու. «այո՝, մենք, վրացիներս, արդեն իսկ Բաքումի շրջանին ինքնավարություն ենք տալի»:

Ինչ վերաբերում է երկաթուղային գծին դեպի Բաքում, նրանք դեմ չեն, ասաց Չխեիձեն, բայց հարկավոր է այս մասին առաջարկել մեր երկու կառավարություններին համաձայնության գալ, որովհետև իրենց պատվիրակությունը իրավասու չէ այդպիսի զիջումն անել:

Նախընթաց օրը նրանք տեսնվելու էին իտալացիների հետ: Ես ասացի.

– Շատ ուրախ եմ, որ դուք ազգերի ինքնորոշումը և ժողովուրդների իրավունքը մեջ բերիք: Բայց ինչու՞ այդ հիշեցիք այժմ լազերի առթիվ և այնպես մոռացել եք Ախալքալակը պահանջելիս, ուր 80 հազար հայի դեմ հազիվ 4-5 հազար վրացի կա, և Լոռին ու Բորչալուն պահանջելիս, ուր 60 հազար հայության մոտ հազիվ 4-5 հարյուր վրացի կա: Պ. Չխեիձե, կա՛մ շարունակ լինինք իսկապես դեմոկրատ, պաշտպան ժողովուրդների իրա-

[114] *Ազատ և առանց մաքսի նավահանգիստ:*

[115] *Հսկողության:*

վունքի, կա՛մ երբեք չլինինք: Հարցրե՞լ եք արդյոք լոռեցիներին, թե նրանք կամենու՞մ են վրացի դառնալ: Հարցրե՞լ եք ախալքալաքցիներին... Ինչ վերաբերում է ձեր իրավասությունն չունենալուն, մեզ զարմացնում է, որ Դուք միայն այժմ այդ հիշեցիք, այժմ, մի ամբողջ ամիս այս մասին ժողովներ անելուց հետո:

Ժողովը ցրվեց՝ վճռելով Vansittart-ին հաղորդել կատարվածը հարազատությամբ:

Vansittart-ը, լսելով խնդիրը, ասաց հետևյալը.

– Պարոններ, Լորդ Քըրզընի **մեսսաժ**-ն[116] է, որ ես ձեզ հայտարարում եմ: Համերաշխության փորձի այս տխուր վիժումը մեծապես վշտացնում է Լորդ Քըրզընին, որ իրեն իրավունք է համարում ձեր հովանավորը կարծել, քանի որ նա էր, որ խանդով պաշտպանեց և ձեր պետությունները ճանաչել տվեց: Նա խորապես դառնացավ իմանալով այս բոլորը: Ես գտնում եմ, որ հայերը հասել են կարելի զիջումի եզրին, նրանից դենը գնալու չեն: Հայտնում եմ ձեզ, որ Conférence-ը վճռել է Հայաստանին ծովային ելք տալ ինչ գնով և լինի, որ Բաթումը պիտի մնա Port Libre et Franc, և հայերը պետք է գիծ ունենան և՛ դեպի Բաթում, և՛ դեպի Աթինե:

Չխեիձե. – Երբ դեպի Բաթում կա, ինչու՞ այս երկրորդ գիծը:

Vansittart. – Տարօրինակ է. բայց դա ձեզ ի՞նչ վնաս: Ես ձեզ ասում եմ, պ.պ. վրացիներ, իզուր մի հակառակեք հայերի համեստ պահանջներին, այլապես դուք ավելի կկորցնեք Բաթումի շրջանում: Ես առաջարկում եմ ձեզ նորից հավաքվել, և սկզբունքը այս է համաձայնության.

1) Հայերը չեն հակառակի ձեր իրավունքին Բաթումի և շրջանի մեջ;
2) Բաթումը՝ Port Libre et Franc;
3) Հայաստանը պիտի իր երկաթուղին ունենա Ճորոխի հովտով en tout propriété, որի մի ճյուղը կերթա Բաթում servitude-ի[117] իրավունքով և մյուսը Աթինե և Ռիզե՝ հայկական նավահանգիստները: Հայերը և թաթարները կունենան Բաթումում իրենց քարափը (quai[118]) և Zone Franche-ը[119] շենքեր կառուցանելու»:

[116] *Հաղորդած:*

[117] *Որոշակի սահմաններում՝ ուրիշի սեփականությունից օգտվելու իրավունք:*

[118] *Կառամատույց:*

[119] *Առանց մաքսի գոնա:*

Հաջորդ օրը՝ 23-ին ապրիլի, նորից ժողովվեցինք: Նորից վրացիք երկար ճառեր ասացին. դարձյալ համաձայնություն չկայացավ, քանի որ Ավալով ու Չխեիձե երկաթուղագծի մասին այսպիսի ֆորմուլ առաջարկեցին թե՝ «Վրաստանի սուվերենիտետ (վեհապետական) իրավունքը տարածվում է և՛ հողի վրա, և՛ երկաթուղային գծի վրա»: Իսկ դեպի Ռիզե գնացող գիծը մերժեցին:

Վերջին անգամ հավաքվեցինք Vansittart-ի մոտ հայտնելու, թե համաձայնություն դարձյալ չկայացավ:

Vansittart շատ հուզված, շատ դառնացած ձայնով ասաց.

– Պ.պ. վրացիներ, դուք չկամեցաք ընդունել հայերի համեստ պահանջները: Թույլ տվեք այժմ ձեզ ասել, որ դուք ձեր հայրենիքի շահերի դեմ ընթացաք: Դուք չուզեցիք Հայաստանի իրավունք տալ հարևանորեն ձեր հողով երկաթուղի տանել: Վստահ եղեք, որ հայերը կունենան նույն երկաթուղին, **բայց իրենց սեփական հողով**, և դուք կկորցնեք Բաթումի շրջանի $^{2}/_{3}$-ը: Գիտցեք, որ Թուրքական Հարցի կարգավորվելով, այստեղ կլուծվի Հայաստանի Հարցը, և նրա սահմանները կորոշվին: Բայց դուք և Ադրբեյջանը դեռ կսպասեք: Դուք չկամեցաք համաձայնիլ և հնար չտվիք, որ Conférence-ը և՛ ձեզնով զբաղվի: Ես վերջացրի, և խոստանում եմ ձեզ այլևս անհանգիստ չանել:

Ասաց և վեր կացավ դուրս գնալու:

Ավալով. – Պ. Vansittart, կխնդրեմ, սպասեք, մինչև որ ձեր ասածները ես ռուսերեն թարգմանեմ պ. Չխեիձեին:

Vansittart. – Ես հավատում եմ, որ Դուք ճիշտ կթարգմանեք: Ես չպիտի մնամ:

Vansittart դուրս գնաց:

Այդ օրը հավաքված էինք Փաշայի մոտ: Երբ վրացիք ու թաթարները հեռացան, Vansittart ուշ գիշերով՝ ժամը 12-ին, նորից եկավ, և ցույց տալով մեզ մի թուղթ, ասաց.

– Ահա ձեզ մի փաստաթուղթ վրացիների և թաթարների վատ մտայնության և բացերեսության: Ես ծանոթ եմ բոլոր այս բանակցություններին: Գիտեմ, թե ինչ արին վրացիք, որպեսզի այս համաձայնությունը վիժի: Եվ այնուամենայնիվ այս մարդիկ երես են ունեցել զեկույց տալ Conférence-ին մեղադրելով՝ թե դուք՝ հայերդ եք պատճառ համաձայնության ձախողանքին: Նրանց համարձակությունն ասեմ, թե հիմարությունը այնքան մեծ է, որ նույն զեկույցը ղրկել են և ինձ, որ ամեն ինչ գիտեմ: Ահա այդ փաստաթուղթը, որ լիքն է աներես ստերով: Պատասխանեցեք

կետ առ կետ, և կարող եք իմ վկայությունն առաջ բերել:

Մենք հաջորդ օրը պատասխանեցինք վիրո-թաթարական այս ստահոդ գրությանը՝ միաժամանակ ներկայացնելով Conférence-ին մեր իսկական պահանջները: Եվ այս առթիվ վերստին կանգնեցինք Փարիզում արած մեր առաջարկի վրա, այսինքն՝ պահանջեցինք Ճորոխից ձախ ափը միացնել Հայաստանին՝ մեզ երկաթուղային գիծ ապահովելու համար, քանի որ, ինչպես բանակցությունները ցույց տվին, եթե մեր երկաթուղին մեր սեփական հողով չանցնի, ոչ մի ապահովություն չունենք, թե վրացիք իրենց հազար ու մի միջամտություններով չեն խանգարելու մեր ելքը դեպի Սև ծով:

Այսպես վերջացան մեր բանակցությունները վրացիների և թաթարների հետ:

Պողոս Փաշայի տպավորությունը այնքան ծանր եղավ վրացիներից, որ նրանց մեկնելուց հետո բացականչեց.

– Ah, les menteurs, fripouilles, canailles, je n'ai jamais vu de gens pareils[120]:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՌԱՋ

Ապրիլ 23, 1920
Սան-Ռեմո

Գերագույն Խորհուրդը Սան-Ռեմո հավաքված օրից գրեթե մենակ Թյուրքական և Հայկական Հարցերով է զբաղված:

Երկու օրից ի վեր լուրեր են շրջում, թե Էրզրումը մեզնից ուզում են խլել՝ հակառակ Լոնդոնում կայացած որոշման, որովհետև մենք՝ հայերս հարկավոր ուժը չենք ունենա այն գրավելու թյուրքերի ձեռքից և մանավանդ պահելու: Պետությունները մեզ զինվորական օգնություն տալու չեն:

Երեկ երեկո կանչեցին Պողոս Փաշային, որ եկավ հայտնեց, թե ճշմարիտ է, դրված է Էրզրումի խնդիրը և թե դրա մասին իրեն հարցեր տվին: Ավելացրեց, թե ինքը հայտնել է, որ հայերը մենակ իրենց ուժերով կարող են գրավել Էրզրումը և պահել:

Նույն երեկոյան Hotel Royal-ում պատահեցի Galli-ին, Իտալական Պատվիրակության գլխավոր քարտուղարին: Նա զարմանք հայտնեց, որ ես չեմ եղել Գերագույն Խորհրդում այսօր, և ավելացրեց, թե Նիտտիի հրամանով ինքն է կարգադրել, որ ինձ ու Փաշային միասին հրավիրեն և թե եկել են իրեն հայտնել, թե ինձ իրր թե չեն գտել հյուրանոցում:

– Բայց եթե Դուք այնուամենայնիվ կամենում եք լսվել Գերագույն Խորհրդում, Դուք անպատճառ կհրավիրվեք:

Ես պատասխանեցի դրական մտքով, և հաջորդ առավոտ ժամը 10-ին հրավերն ստացա մի ժամ հետո՝ ժամը 11-ին ներկայանալու համար:

Շտապեցի Փաշայի մոտ, նրան հաղորդեցի լուրը և խնդրեցի ընկերանալ ինձ այս կարևոր խնդրում՝ լիակատար համերաշխության ապացույց տալու համար: Նա առարկեց, թե գուցե անպատեհ է երկրորդ անգամ գալ, քանի որ եղեր է երեկ: Ես պնդեցի: Նա համաձայնեց՝ ներս մտնելու կամ չմտնելու համար ըստ հանգամանաց:

Մենք արդեն Villa Devachan-ի սրահումն էինք, երբ հետզհետե հասան Միլլրան, Նիտտի, Լլոյդ Ջորջ, Լորդ Քըրզընը, Բերթլոն: Վերջինս մոտեցավ ինձ ու Փաշային ու ասաց, թե Էրզրումի շուրջը շատ մեծ վեճ կա, թե ինքը, Լորդ Քըրզընն մեզ կողմնակից են, մինչդեռ Լլոյդ Ջորջ, Նիտտի հակառակ են: Ավելացրեց, որ Պողոս Փաշայի երեկվա բացատրությունը լավ տպավորություն է թողել, բայց հարցը դեռ լուծված չէ: Նա հեռացավ:

Մոտեցավ մեզ Վենիզելոս: Նա ասաց.

– Զգուշացեք, Դաշնակիցներից օգնություն չխնդրեք ի զուր: Տալու չեն, և դրանով միայն կզրկվեք Էրզրումից: Ինչ և լինի, ասացեք, եթե ձեր ուժերով կարող եք գրավել Էրզրումը, պե՞տք է նախ իրավունքը ձեռք բերեք, գրավումը կարող է ուշանալ:

Ես պատասխանեցի, որ մենք էլ նույն կարծիքի ենք և տարբեր բան անելու չենք, թեև Փաշային ու ինձ զատ կանչելով, Նիտտին գուցե նպատակ ունի մեզնից տարբեր կարծիքներ լսել:

Ինձ հրավիրեցին: Փաշան մնաց Վենիզելոսի հետ խոսակցելով:

Ես ներս մտա: Պայտաձև սեղանի ճակատին նստած էր Նիտտին՝ նախագահ. նրանից դեպի ձախ Լլոյդ Ջորջ, Լորդ Քըրզընն՝ իրենց թիկունքին ունենալով իրենց խորհրդականներին: Նիտտիից դեպի աջ՝ նստած էր Շայոլա, ապա Միլլրան, Բերթլոն, դարձյալ իրենց քարտուղարներով թիկունքում: Ավելի վար, դեպի դուռը նստած էին Զինվորական Հանձնաժողովի անդամները՝ Մարեշալ Ֆոշի նախագահությամբ:

Ես Նիտտիի հրավերով տեղ բռնեցի իր դեմ ու դեմ:

---

120 «Ա՜հ, խաբեբաներ, դատարկապորտներ, սրիկաներ, ես կյանքիս մեջ այդպիսի մարդկանց չեմ տեսել»(Ֆրանս.).

Նիտտին, որ առաջին անգամ էի տեսնում, հաստ, բանձրամարմին մարդ էր կարճ պարանոցով, մեծ գլխով, ապակու փայլով անախորժ, բայց խելացի աչքերով: Ամբողջ արտաքինը խորամանկ մարդու տպավորություն էր գործում, կարծես և չոր, անսիրտ մարդու:

Նա դարձավ ինձ մոտավորապես հետևյալ բառերով.

– Պ. Ահարոնյան,– ասաց նա,– Խաղաղության Համաժողովը շատ մտահոգ է Հայաստանի խնդրով, և շատ կցանկանար հանգել մի որոշման, որ հօգուտ այդ երկրի լիներ: Եվ քանի որ Դուք լավ ճանաչում եք ձեր երկիրը, ինչպես և գիտեք Էրզրումի կարևորությունը, և նույնպես գիտեք, որ այնտեղ Մուստաֆա Քեմալը 14 հազար զորք է կենտրոնացրել, որ Դաշնակից պետությունները անկարող են օգնական զորք ղրկել Հայաստանին: Հանուն Խաղաղության Համաժողովի ինք այժմ կցանկանար իմանալ, ընդունելով, որ Դաշնակից պետությունները տրամադիր լինին տալ զենք, ռազմամթերք և սպաներ, հայ զորքը ընդունակ կլինե՞ր գրավել և պահել Էրզրումը, ինչպես և առհասարակ գրավել ձեր նոր սահմանները: Մի ուրիշ հարց, որ ես կուզեի ուղղել Ձեզ, հետևյալն է՝ որո՞նք կլինեին Հայաստանի շահերին համապատասխան սահմանները:

Ես պատասխանեցի.

«– Ձեր հարցին պատասխանելուց առաջ, թույլ տվեք շնորհակալությունս հայտնել Ձեզ, պ. Նախագահ և ամբողջ Գերագույն Խորհրդին, որ հաճեց ինձ ունկնդրել իմ երկրի համար այսքան կենսական մի հարցի մասին: Ապա կխնդրեի նկատողության առնել

1) թյուրքերի վիճակը և նրանց ուժերի արժեքը,

2) հայերի վիճակը և նրանց բանակի արժեքը:

«Առաջինի մասին պետք է ասել, որ Մուստաֆա Քեմալի բանակի և՛ քանակը, և՛ արժեքը շատ չափազանցված է թուրք գործակալների և նրանց համակիր օտարականների միջոցով: Մուստաֆա Քեմալ 14 հազար զորք չունի, այլ շատ պակաս, և այն էլ մեծ մասամբ անկանոն զորք, գյուղացիներ, շատերը բռնի զենքի տակ պահված, ամենքը վատ հագված, վատ զինված, անվարժ: Կան և քյուրդ ձիավորներ 1200 հոգի, որոնք միայն թալանի համար են գնում: Մեր բանակի գլխավոր շտաբի տեղեկությունները, որոնք ճշգրիտ են, կասկած չեն թողնում այս մասին:

«Հետո, մի փաստաթուղթ, որ մեր ձեռքի տակ կա, ապացուցանում է, որ երբ Մուստաֆա Քեմալի զորքերը լսեցին, թե Էրզրում և իր շրջակայքը միացվելու են անկախ Հայաստանին, ահագին

թափով դասալքություն սկսվեց զորքի մեջ: Մուստաֆա Քեմալ, այս մասին հաղորդելով կենտրոնական կառավարության, պահանջում է թույլ չտալ Պոլսի մամուլին խոսել այդ գավառները Հայաստանին կցվելու մասին: Խնդրում եմ նկատի առնել այս հոգեբանական կացությունը:

«Գալով հայ հանրապետական բանակին, պետք է ասեմ, որ նրա թիվը երերուն է՝ 20-25 հազարի մեջ, նայելով թե զենք ու ռազմամթերք որչափ կա: Դուք գիտեք, որ այդ զորքը պատերազմի սկզբից մինչև այսօր կռվում է Entente-ի[121] թշնամիների դեմ՝ առանց ստանալու մեր Դաշնակիցներից ոչ մի փամփուշտ, ոչ մի հրացան և առհասարակ որևէ օգնություն: Սակայն, կռիվների մեջ վարժված այդ բանակը, ենթակա հազար ու մի զրկանքների, այդ փոքրաթիվ բանակը կարողանում է պաշտպանել մեր երկիրը բազմաթիվ թշնամիների դեմ: Եվ ես վստահաբար կարող եմ հայտարարել, որ մենք հեշտությամբ, ինչպես այդ հաստատում են մեր լավագույն զինվորական մասնագետները, 1-2 ամսում կարող ենք հասցնել մեր բանակը մինչև 40-50 հազարի, եթե մեզ տրվի համապատասխան քանակով զենք ու ռազմամթերք:

«Այդ վերակազմված ու մեծացրած բանակով, վստահաբար կարող եմ ասել, որ մենք պիտի կարողանանք մեր սեփական ուժերով գրավել և պահել և՛ Էրզրումը, և՛ մեր մյուս գավառները Թյուրքիայում: Դրա համար մեզ հարկավոր է, ինչպես ասացի, զենք ու ռազմամթերք, ավելացնեմ նաև՝ Դաշնակից պետությունների սպաներ և Գերագույն Խորհրդի վարկն ու դրոշակը:

«Քանի որ խոսքը Էրզրումին է վերաբերում, թույլ տվեք ինձ, պ. Նախագահ, քանի մը խոսք ասել նաև այդ բերդաքաղաքի կարևորության մասին մեր պետության ապահովության տեսակետից: Էրզրումը իր դիրքով ռազմապես իշխում է ամբողջ Հայաստանին: Բոլոր ճամփաները դեպի մեր երկրի սիրտը՝ այնտեղից են անցնում: Նա առաջացած մի մշտական սպառնալիք պիտի մնա մեր պետության սրտին ուղղված, եթե Հայաստանին չմիացվի: Անհնարին է երևակայել Հայաստան առանց Էրզրումի: Վերջապես այդ քաղաքը մեր իսկական մայրաքաղաքն է: Երևանը ժամանակավոր է, մինչև որ Էրզրումը գրավենք»:

Լլոյդ Ջորջ. – Ո՞րչափ հայ կա Էրզրումում:

Ես. – Անշուշտ, պ. նախագահը ամբողջ վիլայե՞թն ունի աչքի առաջ և պատերազմից առաջ եղած թվե՞րը:

Լլոյդ Ջորջ. – Այո, իհարկե:

---

121 *Անտանտ:*

Ես. – Պատերազմից առաջ ամբողջ Էրզրումի վիլայեթում կար 240 հազար թուրք և 227 հազար հայ, մեջը լինելով և փոքրաթիվ այլ քրիստոնյաներ: Սակայն, խնդրեմ նկատի առնել, որ որ 240 հազար թյուրքերի հետ է և IV (4-րդ) բանակը, որ միշտ Երզնկա էր, թվով՝ 40 հազար, Էրզրումի գարնիզոնը[122], վիլայեթի քաղաքացիական և զինվորական պաշտոնյաները: Այնպես որ, շատ չենք սխալվի, եթե 240 հազար թուրքերից պակսեցնենք 50 հազար: Այսպիսով հայերի թիվը պատերազմից առաջ դարձյալ թուրքերից բարձր էր: Ճշմարիտ է, հայերը մեծապես տուժեցին թուրքերի հալածանքներից և զգալապես նոսրացան ջարդերով և տարագրությամբ, բայց պետք է նկատել տամ, որ թուրքերն էլ մեծապես վնասվեցին ու նվազեցին պատերազմի արհավիրքների երեսից, քանի որ Կովկասյան ճակատի բոլոր հեղհեղումները կատարվեցին Էրզրումի շրջանում:

Լլոյդ Ջորջ.– Թուրքական վիճակագրությունը ցույց է տալիս Էրզրումի վիլայեթում 800 հազար ազգաբնակություն, որ ձեր տվածից շատ տարբեր է:

Ես.– Ձեզ հայտնի է, անշուշտ, պ. Նախագահ, որ թուրքական վիճակագրությունը ծայրահեղ չափազանցությունների վրա է հաստատված և շատ հեռու է ճշմարտությունից: Իմ բերած տեղեկությունները հաստատված են մեր Պատրիարքարանի և եվրոպացի ճամփորդների տված թվերի վրա:

Լլոյդ Ջորջ.– Ո՞րչափ հայ կա Հայաստանի Հանրապետության մեջ:

Ես. – Հայաստանի Հանրապետության հողի վրա կա մեկ միլիոն 292 հազար հայ, չհաշված 1) թյուրքահայ մոտ 220-250 հազար գաղթականները և 2) այն հայերը, որ փախած են Ադրբեյջանի բռնության երեսից:

Լլոյդ Ջորջ – Ո՞րքան թաթար կա Հայաստանի Հանրապետության մեջ:

Ես. – 300 հազարից քիչ ավելի:

Այս պատասխանիս վրա, ես նկատեցի, որ իտալացի խորհրդականներից մեկը փսփսաց Նիտտիի ականջին և սա դարձավ ինձ ու հարցրեց–

Նիտտի. – Պ. Ահարոնյան, Դուք ասացիք, թե միայն ձեր ուժերով պիտի կարողանաք գրավել Էրզրում և Թուրքաց Հայաստանը: Արդ՝ քանի որ դուք այժմ Ադրբեյջանի հետ կռվի մեջ եք, կարո՞ղ եք ասել, թե ո՞րքան զորք պիտի թողնեք Ադրբեյջանի

[122] *Քաղաքում, ամրոցում կամ այլ ամրացված շրջանում գետեղված զորք:*

դեմ, մնացածով թուրքերի վրա գնալու համար:

Ես զգացի, որ այս հարցը մի թակարդ էր՝ ինձ դժվար կացության մեջ դնելու համար, ուստի պատասխանեցի.

– Պ. Նախագահ, մենք Ադրբեյջանի հետ պատերազմի մեջ չենք և չենք եղել: Մեր և նրանց մեջ պարզ սահմանային ընդհարումներ կան, որոնք իսկույն պիտի դադարին, հենց որ Գերագույն Խորհուրդը հաճի մեր սահմանների կնճիռները լուծել: Այդպիսի սահմանավեճեր այս պատերազմից հետո ամեն տեղ կան Եվրոպայում: Եվ արդեն մե՛նք բանակցության մեջ ենք թաթարների հետ, գուցե և՛ համաձայնության գանք:

Նիտտի.– Այլևս հարց չունինք:

Ես դուրս եկա: Դրսի դահլիճում Վենիզելոս հանդիպեց, հարցրեց: Ես պատմեցի: Նա շատ գոհ մնաց իմ պատասխանից:

Էրզրումի մասին իմ ու Պողոս Փաշայի տված բացատրությունը Գերագույն Խորհրդին թվացել էր շատ համոզիչ, ինչպես այդ իմացանք հետո:

Տարաբախտաբար, երբ մեզնից հետո հարցրել են Զինվորական Հանձնաժողովի և իր նախագահ Ֆոշի կարծիքը, սրանք գրեթե միաբերան մերինին հակառակ կարծիք են հայտնել:

Գերագույն Խորհուրդը դրված մե՛ր և Զինվորական Հանձնաժողովի հակադիր կարծիքների մեջ, մնացել է վարանոտ և լուծումն տալու անկարող լինելով, միջին ելք է գտել՝ առաջարկել նախագահ Վիլսոնին՝

1) որպես Arbitre[123] որոշել Հայաստանի սահմանները Բիթլիսի, Վանի, Էրզրումի, Տրապիզոնի վիլայեթներում և
2) ընդունել Հայաստանի մանդատը:

---

[123] *Միջնորդ դատավոր: Իրավարար:*

ԻՆՉՊԵՍ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԹՅՈՒՐՔԵՐԻՆ

Մայիս 11, 1920
Փարիզ

Երկու օր առաջ մեր քարտուղարությունը Գերագույն Խորհրդի քարտուղարությունից պաշտոնական նամակ ստացավ հաղորդելու՝

1) Ո՞վքեր են մեր կառավարության ներկայացուցիչները (կամ ներկայացուցիչը)՝ ներկա լինելու համար հաշտության պայմանագիրը թյուրքերին տալու ցերեմոնիային[124] և ապա ստորագրելու, երբ պետք լինի:

2) Ի՞նչ Lettre de Créance[125] ունին:

Մեր քարտուղարը պատասխանեց, թե ներկայացուցիչը Պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանն է և թե Lettre de Créance կներկայացվի:

Մյուս օրը քարտուղարը տարավ իմ Lettre de Créance-ը և միաժամանակ ստացավ հրավիրագիր ինձ համար՝ carte pour le Délégué plenipotentiaire de la République de l'Arménie[126], վեց կարտ-հրավեր[127] մեր քարտուղարների և 3 կարտ-հրավեր մեր ժուրնալիստների համար:

Նույն օրը, երեկոյան, Գերագույն Խորհրդի քարտուղարությունը մեր ստացած վեց քարտուղարական կարտերից մեկը ետ խնդրեց Փաշային տալու համար, որովհետև ասել էր յուրաքանչյուր պետություն մի աթոռ ունի պատվիրակի, հետևապես Փաշան կարող է ներկա լինել միայն քարտուղարի և ոչ պատվիրակի կարտով:

Փաշան ինձ պատահելով ասաց, թե ինքը Quai d'Orsay է գնացել, խոսել է քարտուղարի հետ և ստացել է կարտ-հրավեր: Այդ կարտը ես չտեսա:

Միայն այսօր 11-ին ճաշից հետո, ժամը 4-ին երբ պետք է Quai d'Orsay գնալ, մի դժբախտ պատահար արգելք եղավ, որ ես ժամանակին հասնեմ, և ես իմացա, որ գնացել է մենակ Փաշան:

Միլլերանը հինգ րոպեի խոսքով՝ Տեֆֆիկ փաշային և իր ընկերներին (4 հոգի) հանձնել էր խաղաղության պայմանագիրը,

124 *Արարողություն:*

125 *Հավատարմագիր:*

126 *Տոմս Հայաստանի Հանրապետության Լիազոր Ներկայացուցչի համար:*

127 *Հրավիրատոմս:*

որ Տեֆֆիկ փաշան դողդոջուն ձեռքով ընդունել էր, հայտնելով, թե պատրաստ են այն քննել և պատասխան տալ մի ամսում:

ՊՈՂՈՍ ՓԱՇԱՅԻ LETTRE DE CREANCE-Ը

Մայիս 10, 1920
Փարիզ

Այսօր Միացյալ Պատվիրակության նիստին, ուր ներկա էր և Աջեմյանը, ես հայտնեցի, որ Գերագույն Խորհրդի քարտուղարությունը ինձ հրավիրել է ներկա լինել մայիս 11-ին թյուրքերին խաղաղության պայմանագիրը տալու ցերեմոնիային և թե պահանջում է իմ Lettre de Créance-ը: Արդյոք Փաշան ստացե՞լ է նույնը, հարցրի:

Նա պատասխանեց, թե չի ստացել, բայց ինքը անձամբ գնացել է, երկարորեն խոսել Ժյուլ Կամբոնին և ներկայացրել իր երկու Lettre de Créance-ները, մեկը Կաթողիկոսից և մյուսը՝ Պոլսի Ազգային Խառն Խորհրդից և թե ինք չգիտե արդյունքը:

Աջեմյան ասաց թե՝

– Կարող է պատահել որ Ձեզ, Փաշա, թույլ տան ներկա լինել վաղվա ցերեմոնիին, բայց ստորագրելու համար Ձեր հավատարմագիրը Կաթողիկոսից և Ազգային Մարմնից՝ Պոլսի, բավական չէ, Թյուրք պատվիրակությունն իսկ կարող է խնդիր հանել:

Թեքեյանը նույնը հաստատեց և ավելացրեց թե՝

– Ստորագրելու իրավունք ունին միայն կառավարությանց ներկայացուցիչները:

Այս հայտարարությունը շատ ազդեց Փաշայի վրա: Նա կոտրվեց, կծկվեց, վարի ծնոտն ուժգնորեն դողդողաց ու հարցրեց Աջեմյանին:

– Ի՞նչ պետք է անել:

Աջեմյան. – Ես կարծում եմ, որ միակ միջոցը դուրս գալու այս դրությունից այն է, որ պ. Ահարոնյանը գրի մեր կառավարության և խնդրի, որ Դուք էլ ստորագրության իրավունք ստանաք որպես կառավարության պատվիրակ:

Փաշան շատ խեղճացած եղանակով դարձավ ինձ.

– Դուք ի՞նչ եք կարծում, պ. Ահարոնյան:

Ես. – Ես համաձայն եմ գրել, որովհետև բազմաթիվ պատճառներով, որ ավելորդ է առաջ բերել, ես կկամենայի, որ Դուք էլ ստորագրեք:

Փաշա. – Ժամանակ կլինի՞ մեր կառավարության պատասխանը ստանալու:

Աջեմյան. – Պետք է հեռագրել, թե չէ՝ ուշ կլինի:

Ես. – Հեռագիրն անհարմար է: Ավելի լավ է մենք գրենք, թո՛ղ կառավարությունը հեռագրի:

Փաշային երբեք այս աստիճան խեղճացած, ընկճված տեսած չէի: Թյուրքերին տված պայմանագիրը չստորագրելու վախը այնպիսի հարված էր իր փառասիրության, որ հակառակ իր ամբողջ դժկամության դեպի ինձ և մեր կառավարությունը, հանձն առավ խնդրել, որ ես այս դիմումն անեմ:

Ցավով ու կարեկցությամբ իմացա, որ դժբախտ ու փառասեր ծերունին մինչև այդ արդեն շատ անհանգիստ, դիմել է մի կեղծիքի. Պատրիարք Զավենի հետ շտապով մի հավատարմագիր են կազմել. Պոլսի Խառն Ազգային Մարմնի անունից, որը իբր պատմեն շտապել է ներկայացնել Գերագույն Խորհրդին, մինչև որ իսկականը ստանա Կ.Պոլսից: Լավ, որ Գերագույն Խորհրդի քարտուղարությունը չի պահանջել իսկականը:

Երբ ես այսօր հայտարարեցի, թե պատրաստ եմ խնդրել մեր կառավարությունից, որ Փաշան նշանակվի պատվիրակ, Նորատունկյան բացականչեց.

– «Je rends hommage à la loyauté de Mr.Aharonian[128]»:

Ես վճռել էի խոստումս կատարել, երբ վրա հասան կովկասյան ցավալի անցքերը, բոլշևիզմի վախը մեր երկրում և առհասարակ անորոշությունը:

Միաժամանակ Փարիզում գումարվեց Թյուրքահայ համագումարի երկրորդ նստաշրջանը, և Փաշան նորից թափ առավ, որովհետև այժմ կարծում է, որ եթե մեր կառավարությունը **ստիպված լինի ինքզինքը հայտարարել բոլշևիկ**, ինքը Փաշան կհոչակի այստեղ Թյուրքահայ կառավարություն:

Երևի, այս է պատճառը, որ այլևս բնավ չի խոսում մեր կառավարությունից մանդատ ստանալու մասին:

Անցյալ օրը, մի զրույցի ժամին, ուր ներկա էինք Փաշան, Աջեմյանը, Նորատունկյանն և ես, Փաշան հարցը դրեց վճռական եղանակով.

– Ես,– ասաց նա,– հենց որ Երևանը հայտարարի ինքզինքը

[128] *Հարգանքներիս հավաստիքը Ձեր խոստումնապահությանը, պ. Ահարոնյան (ֆրանս.):*

բոլշևիկ, պիտի հրաժարվեմ այդ կառավարությունից: Դուք ի՞նչ կանեք, պ. Ահարոնյան:

– Վաղաժամ է,– ասացի,– այսպիսի հայտարարություններ անել: Ես կվարվեմ ըստ հանգամանաց՝ միշտ նկատի առնելով մեր պետության գերագույն շահերը:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՊԱԼԵՈԼՈԳԻ ՀԵՏ

Հունիս 17, 1920
Փարիզ

Ես առաջին անգամ էի տեսնում Պալեոլոգին՝ Արտաքին Գործոց նախարարտուղարին:

Շնորհակալություն հայտնեցի հանուն մեր կառավարության Ֆրանսիայի ներկայացուցիչ Երևանում Poidebard-ի գործունեության համար և խնդրեցի նորից թողնել նրան իր պաշտոնում Երևան: Դիմումս և խոսքս նրան հաճո թվաց և նշանակեց block-note[129]-ում:

Բաթումը դատարկելու իմ հարցին պատասխանեց դրականապես.

– Que voulez, il est si difficille detravailler avec les Anglais dans la politique. Ils nous ont poussé pour y envoyer des troupes et maintenant il faut le quitter[130]:

Կիլիկիայի կացության մասին երկարորեն խոսեցի:

Պալեոլոգ հայտնեց.

– Մենք,– ասաց,– Կիլիկիան ձգելու չենք, մինչև որ կարողանանք տանելի ռեժիմ[131] ստեղծել հայերի համար: Մենք առայժմ մեր ճակատը նեղացնելու համար դեպի ծովափը քաշվեցինք: Այս է բոլորը: Պիտի աշխատենք այնպիսի վարչություն հաստատել այնտեղ, որ հայերը կարևոր դեր ունենան և ինքզինքները ապահով զգան:

Շատ թերահավատեցա այս հայտարարությունը լսելով, և շատ ջղայնությամբ զգալ տվի, որ երաշխիքը դժվար է ձեռք բերել առանց մեծ պետության դրոշակի: Պալեոլոգ անպատասխան չթողեց, բայց անորոշ խոսքեր ասաց:

[129] *Թղթակոտ, ծոցատետր, նշումների տետր:*

[130] «Ի՞նչ կուզեք որ, շատ դժվար է անգլիացիներում հետ բաղաքականության մեջ միասին աշխատիլ: Մեզի մղեցին, որ զինվոր դրկենք հոն, այժմ ալ պիտի լքենք»:

[131] *Ռեժիմ:*

Շնորհակալություն հայտնեցի քանի մի օր առաջ իր գրած նամակի մասին, որով Ֆրանսիական կառավարությունը խոստանում էր մեզ զենք և ռազմամթերք:

– Չե՞ք գտնում, որ այժմ շատ դժվար կլինի այդ ռազմամթերքը Հայաստան հասցնել, քանի որ Բաթումը ձգելու ենք,– ասաց Պալեոլոգ:

Պատասխանեցի, որ այդ դեպում կհուսամ անհնարին չլինի, քանի որ մեր հարաբերությունները վրացոց հետ այժմ լավ են:

– Անգլիացիների ղրկած զենքի տեղ հասնելուն պես, կպարզվի,– ասացի,– մեր անելիքը:

Պ. Գ. ՆՈՐԱՏՈՒՆԿՅԱՆԻ ԱՅՑԸ
(Մեծ Վեզիրի հետ տեսակցելու առթիվ)

Հունիս 19, 1920
Փարիզ

Այսօր առավոտյան Նորատունկյան եկավ ինձ հաղորդելու հետևյալը.

– Պոլսից իմ մի բարեկամը գրում է թե՝ «Ես տեսնվեցի Զավեն Պատրիարքի հետ, որ հայտնեց թե, հայերը բոլորովին գոհ պիտի մնան, երբ կարողանան ստանալ իրենց պահանջած զավառները Թյուրքիայից, և թե Վիլսոնի իրավարարությունը կլուծի այդ խնդիրն ապահովաբար, որից հետո փոքրամասնությանց վերաբերյալ օրենքն էլ կապահովի մնացած հայությունը Թյուրքիայում»: «Այս բոլորը երբ իրականան,– ասել է Պատրիարքը,– հայերը Թյուր-քիայից պահանջ չունեն և կարող են հաշտ հարևան լինել»:

Այս հայտարարությունը թվացել է այնքան հաշտարար, որ Նորատունկյանի բարեկամը իսկույն հաղորդել է Մեծ Վեզիր Դամադ Ֆերիտ փաշային: Վերջինս, որ իբր թե միշտ էլ հայերին բարյացակամ է եղել, ցանկություն է հայտնել, որ Փարիզում իրեն հետ տեսնվի Նորատունկյանը: Այս նպատակով նամակ է գրվել Նորատունկյանին, որ բերել է ինքը՝ Դամադ Ֆերիտ:

Նորատունկյան կարդաց այդ նամակը, որով իր բարեկամը խնդրում և խորհուրդ էր տալիս գնալ տեսնվել Մեծ Վեզիրի հետ:

Նորատունկյան եկել էր իմանալու իմ կարծիքը՝

1) Պե՞տք է տեսնվել Մեծ Վեզիրի հետ, թե՞ ոչ:
2) Եթե այո՛, ի՞նչ պետք է խոսել. կարելի՞ է արդյոք մեկդի թողնել Վիլսոնի իրավարարությունը և անմիջական համաձայնության գալ թյուրքերի հետ:

Առաջին հարցին տվի իմ լիակատար համաձայնությունը: Երկրորդ հարցին ասացի.

– Վիլսոնի միջնորդությունից մենք հրաժարվելու չենք, որովհետև այդպիսով կխախտենք Դաշնագրի հոդվածը: Նորատունկյանը կարող է նրանց հասկացնել, որ թե ուզում են մեր վստահությունը շահել, ապա պետք է չթողոքեն Վիլսոնի միջնորդության դեմ, որ լավագույն ու արդար ձևն է լուծելու հողային վեճերը: Երբ մենք ընդունում ենք այդ իրավարարությունը, թյուրքերի կողմից մերժելը մենք կհամարենք իրավախոհության ոգու պակաս:

Նորատունկյան ինձ հետ համաձայնեց:

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ԲՈՒԼՈՆՈՒՄ Ծ/Վ.

22 հունիս

Այսօր Բուլոն գնացի տեսնվելու Վենիզելոսի հետ, քանի որ Գերագույն Խորհրդում հարց էր դրված Հունաստանին մանդատ տալ՝ զսպելու թյուրք ազգայնական բանդաների շահագործումները և բռնադատելու ստորագրել Դաշնագիրը:

Հունիս 23-ի առավոտյան ժամի 10-ին տեսնվեցի Վենիզելոսի հետ: Իմ հարցին՝ թե անդա՞րձ է Գերագույն Խորհրդի վճիռը Հունաստանին տրվելիք մանդատի մասին, Վենիզելոսը պատասխանեց.

– Այո, վերջնական է, և մեր զորքերը հրաման ստացան առաջ շարժվել:

Իմ ակնարկը, թե գուցե նպատակահարմար կնկատեր ոտքի հանել Պոնտոսի հույները և դեսանդ[132] անել այնտեղ, Վենիզելոսին շատ չժպտաց.

– Վախենում եմ ինձ մեղադրեն չափազանց ախորժակի համար, ստիպված եմ խույս տալ շատ տեղ շարժվելուց:

– Գուցե կարելի էր Կիլիկիայի մեր կռվողներին օգնության հասնել,– ասացի,– սա կլիներ փոխադարձ օգնություն երկու ազգերի:

– Ճշմարիտ է,– պատասխանեց Վենիզելոսը,– բայց բանակ ղրկել չեմ կարող, այնքան ուժ չունինք, իսկ զենք ու ռազմամթերք, վախենում եմ, նույնիսկ մեր պահեստներին իսկ չքավի: Չգիտեք,

---

132 *Descente (ֆրանսերեն) – Ջրային կամ օդային ճանապարհով հակառակորդի տարածքում զորքի էջքը կամ տեղադրումը: Նաև՝ այդ կերպով հայտնված զինված ուժերը:*

թե որքա՜ն բքամիտ եղան մեր մեծ Դաշնակիցները, կատարյալ ապուշներ են:– Եվ Վենիզելոս գլուխը բռնեց երկու ձեռքով.– Ապուշներ, ապուշնե՛ր... Ունենալով մեր 90 հազարնոց բանակը Ջմյուռնիայում, որ վերջապես Դաշնակից բանակ է, բողին, որ Մուստաֆա Քեմալ կազմակերպվի ու զարկի, որ կողմն ուզում է, մինչդեռ ինձ արգիլեցին առաջ շարժվել: Որչափ ճիգ եմ թափել համոզելու համար, թե Հունական բանակը կարող է և պետք է շարժվի վերջ դնելու Քեմալյան սկանդալին[133]: Հավատացնում եմ Ձեզ, որ ապուշներ են:

– Իրավունք ունիք,– պատասխանեցի,– մի՞թե նույնը չարին մեզ հետ: Ամբողջ $1^1/_2$ տարի է՝ զենք ու ռազմամթերք խնդրեցինք մեր բանակի համար, մեզ մերժեցին, բայց թյուրքերի դաշնակից Աղրբեջանի թաթարներին լավ կազմակերպեցին: Մի քանի օր է միայն, ինչ անգլիացիք վերջապես մեզ զենք ու ռազմամթերք տվին: Շատ պիտի խնդրեմ Ձեզ՝ 1) քանի որ գնում եք Լոնդոն, միջնորդեք, որ Բրիտանական կառավարությունը հարատևի իր այս նոր ընթացքի մեջ մեր վերաբերմամբ և աջակցի նյութապես կազմակերպելու մեր բանակը, որ լուրջ սպառնալիք կդառնա թյուրքերին Էրզրումի կողմից, և 2) եթե հնար է Բաթումի պարպումը հետաձգեն անորոշ ժամանակով, մինչև որ այս կրիզիսը[134] անցնի:

Վենիզելոսը խոստացավ Փարիզ վերադարձին ինձ պատասխան տալ:

Այնուհետև ճաշից հետո, նույն օրը ժամը 2.30-ին, Hotel Imperial գնացի տեսակցելու Իտալական պատվիրակության քարտուղար Galli-ի հետ:

Galli-ն շատ սիրալիր կերպով ինձ ներկայացրեց իրենց Արտաքին Գործոց նոր նախարար կոմս Սֆորցային, որին ճանաչում էի Կ.Պոլսից ու Հռոմից: Սֆորցան ձեռքս սեղմելով և ժպտալով ասաց.

– Կարող եմ Ձեզ լավ լուր տալ. Հայաստանի կառավարության մոտ ամենահայասեր իտալացի նշանակեցի, պ. Կորինին:

Ես շնորհակալ եղա ու հայտնեցի, թե ճանաչում եմ. նա ավելի քան հայասեր է, գրեթե հայ:

Ապա զրույցն անցավ մեր և թյուրքերի հարաբերության: Սֆորցայի կարծիքով՝ թյուրքերը մեզ զիջումներ անելու տրամադիր են, և նրանց հետ անմիջական զրույցը շահավետ կլիներ:

[133] *Աղմկալի, խայտառակ, անօրեն միջադեպ:*

[134] *Ճգնաժամ:*

Ես պատասխանեցի, թե Թյուրքիան ու թյուրքերը [illegible] ո՛չ կարող ենք և ո՛չ հետապնդում ենք, հակառակ այն [illegible] չարիքին, որ մեզ հասցրին: Եվ գիտենք, որ պիտի ապրինք նրանց հետ և հետագայում. բայց անհրաժեշտ է, որ նրանք ընդունին մեր մինիմալ[135] պահանջները, որ ներկայացրել ենք Խաղաղության Համաժողովին:

– Այդ պահանջները նրանք կընդունին, և դուք կռիվ անելու պետք չունիք ուրիշների պես (ակնարկը հույների մասին էր): Արժե, որ նրանց հետ խոսվի:

Galli-ն ավելացրեց, որ թյուրքերը միայն Էրզրումի մասին են առարկություն անում: Այդ խնդիրը նրանք շինել են ազգային արժանապատվության հարց:

Սֆորցան հեռացավ, և իմ խոսակցությունը շարունակվեց Galli-ի հետ:

– Էրզրումը թյուրքերը պահանջում են էտնոգրաֆիկական[136] (ազգագրական) տեսակետով:

– Դա բացարձակ սխալ է,– պատասխանեցի,– պատերազմից առաջ մենք մեծամասնություն էինք:

– Թեև մյուս կողմից,– ավելացրեց Galli-ն,– ես որչափ մտածել եմ, անկարող եմ եղել գտնել Հայաստանի սահմանին մի այնպիսի գիծ, որ Էրզրումը դուրս մնար:

Մոտեցավ Բելգիական Արտաքին Գործոց նախարար Հիմանս, մի քանի բոպե զրուցեց: Այդ պահուն դուրս եկան Լլոյդ Ջորջ, Քըրզըն իրենց հետևորդներով՝ մեկնելու համար, և բազմությունը գնաց ողջերթ ասելու:

ՊՈՂՈՍ ՓԱՇԱՅԻ ԱՆԱԿՆԿԱԼ ԱՅՑԸ

30 հունիս, 1920, Փարիզ

Այսօր առավոտ Պողոս Փաշան անակնկալ կերպով այցի եկավ ու ասաց մոտավորապես հետևյալը:

– Դուք գիտեք, որ ես հրաժարական տվի, քանի որ շատ հոգնած եմ ու հիվանդ: Բժիշկները խորհուրդ են տալիս ինձ անպայ-

[135] *Նվազագույն:*

[136] *Ազգագրական, ազգաբաշխական (նկատի ունի նաև դեմոգրաֆիական):*

ման հանգիստ առնել: Բայց գիտեք, որ ինձ մեր համագումարը նեղել է, որ ետ ընդունեմ հրաժարականս: Փորձեցի գեթ պ. Նորատունկյանին պատվիրակության մեջ առնել, որ ինքս ավելի թեթևանամ, բայց նա մերժեց, ասելով թե դրսից ավելի օգտակար կլինեն: Սակայն, մեկ-երկու հոգի նորերը պիտի խնդրեմ, որ ընտրեն, ինչպես Սինապյան, Մկրտչյան, ինքս էլ պետք է 4-5 շաբթով բացակայեմ, հանգստանամ հանքային ջրերում: Արդ՝ եկած եմ Ձեզնից իմանալու թե այսուհետև մեր աշխատակցությունը ի՞նչպես պիտի լինի:

Ես պատասխանեցի, որ այս հարցի ծագումն ինձ համար անհասկանալի է: Մենք ցարդ աշխատակցել ենք, երևի այսուհետև էլ պիտի կարողանանք միասին աշխատել՝ հակառակ ծագող դժվարություններին, որ պիտի հարթենք:

– Ոչ,– ասաց Փաշան,– ես կուզեի ավելի պարզաբանել մեր հարաբերությունները:

– Այդ դեպքում, թույլ տվեք ինձ խորհել և Ձեզ պատասխանել ճաշից հետո:

Ճաշից հետո, ժամը 3.30-ին, գնացի իր մոտ:

– Ես նորից կրկնում եմ,– ասացի,– որ Ձեր հարցը չեմ հասկանում: Եթե համագումարը չհավաքվեր, Դուք երևի հրաժարական չպիտի տայիք, և այս հարցն էլ տեղի չէր ունենա: Ի՞նչ է պատահել: Նորից ասեմ, որ մենք կգործենք, ինչպես անցյալում: Իհարկե, թղթեր կլինին, որ մենք միասին կստորագրենք: Կլինի նաև, որ ես մենակ կստորագրեմ, երբ այդ պահանջի մեր պետության և ազգի շահը:

– Ես կարծում էի, թե մենք ամեն թուղթ միասին պիտի ստորագրենք: Այլապես Ձեր ասածը պիտի նկատեմ պառակտում,– ասաց Փաշան:

– Ես շատ եմ զարմանում,– պատասխանեցի,– որ Դուք այսքան պարզ խնդրում պառակտում եք փնտրում: Ամբողջ $1^1/_2$ տարի ծանր պայմաններում աշխատակցելուց հետո, տարօրինակ է այսօր և անհասկանալի պառակտումի խոսքը, երբ 1-2 ամիս է մնացել վերջին: Ես կրկնում եմ, որ մենք համերաշխ գործունեության պատվանդան կգտնենք:

Իմ խոսքը նրան չգոհացրեց, և մենք բաժնվեցինք զրույցը շարունակելու համար:

Հաջորդ առավոտ ինձ մոտ եկան Պ.Պ. Սինապյան և դոկտոր Նէվրուզ՝ խոսելու նույն նյութի մասին:

Նէվրուզի առջև ինչ-որ թղթի կտոր կար, որի վրա նա մատիտով գրոտում էր:

– Ի՞նչ է, գրավո՞ր զրույց պիտի անենք Փաշայի հետ:

– Ո՛չ,– ասաց,– սա սոսկ հիշողության համար է:

Եվ կարդաց թղթի վրա նշանակած քանի մը կետեր, որոնք կարող էին հիմք լինել իմ ու Փաշայի աշխատակցության:

– Գիտե՞ք ինչ,– ասացի, լսելով այդ ընթերցումը,– գիտեք՝ որևէ թղթով հնարավոր չէ առաջն առնել բոլոր կարելի միջադեպերի: Հաշտարար ոգին և հայրենիքի սերը միայն կարող է հարթել դժվարությունները: Այդ ես չեմ տեսած մինչև այժմ և այսուհետև էլ հույս չունեմ տեսնելու: Անախորժ միջադեպերն անախորժ են, գիտեմ, բայց պետք է աշխատենք հարթել:

– Իրավունք ունիք,– ասաց Սինապյան,– միջադեպերը այդ թղթով դժվար է կանխել:

– Փաշայի համար,– ասացի,– գործից ավելի միշտ իր անձի խնդիրն է մեջտեղ:

– Իրավունք ունիք,– կրկին ասաց Սինապյան,– այս դեպքում գործի շահը չէ, այլ պարզապես Փաշայի անձի խնդիրը:

– Տարաբախտաբար,– շարունակեցի ես,– քանի որ համագումարը քաջալերում է Փաշայի հիվանդոտ անձնասիրությունը, ես, աղմուկներից խուսափելու և դրսի աշխարհի առջև մեր պառակտումն ու անհամաձայնությունները չցուցադրելու համար, ստիպված եմ հաշվի առնել և՛ այդ «անձը»,– ասացի:– Կարող եք հայտարարել Փաշային, որ պիտի աշխատեմ համերաշխ գործակցել, ինչպես անցյալում:

Նրանք հեռացան:

Նույն օրը երեկոյան եկան ինձ ասելու, որ Փաշան համագումարի նիստին մի թուղթ կարդաց, որպես գրավոր համաձայնություն իմ և իր մեջ:

Հեռախոսով հարցրի համագումարի նախագահ Նորատունկյանին, նա հաստատեց լուրը: Ես խնդրեցի հայտնել ժողովին պաշտոնապես, որ բերանացի համաձայնություն տալով գործակցել Փաշային՝ ես որևէ գրավոր համաձայնություն կնքած չեմ:

Հետագայում պարզվեց, որ դոկտոր Նէվրուզ և Սինապյան ինձանից հետո, տարել և Փաշային են ներկայացրել իրենց ձեռքի aide mémoir[137] – գիրը և նա էլ, համարելով այդ իմ գրավոր համաձայնագիր, տարել և կարդացել է համագումարում և նույնիսկ քննության դրել յուրաքանչյուր կետ:

Կանչեցի ինձ մոտ դր.Նէվրուզին և Սինապյանին ու դժկամությունս հայտնեցի, և նրանք էլ խոստովանեցան, թե այդ թյուրի-

[137] *Հիշողության՝ հիշեցման օգնության (նշումներ), հիշագիր:*

մացության արդյունք է, և թե պիտի կարողանան հարթել:

Այսօր ինձ մոտ եկավ Չայանը նույն խնդրի մասին խոսելու: Կրկնեցի, որ ես գրավոր ոչինչ ունեմ Փաշայի հետ և որ, եթե գրավոր լիներ, շատ բան ունեմ ասելիք, ճշտելիք ու ավելացնելիք:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՊՈՂՈՍ ՓԱՇԱՅԻ ՀԵՏ

Հուլիս 2, 1920

Նկատելով, որ նախընթաց օրվա համաձայնության խնդիրը վայրիվերո զրույցներով բարդանում է, այսօր ես զնացի անմիջապես Պողոս Փաշային՝ պարզելու իմ վերջնական հայեցակետը և խնդրեցի պ.պ. Չայանին, Սինապյանին և բժ.Նէվրուզին նույնպես ներկա լինել, որպեսզի հետագայում իմ խոսքերին ծուռ բացատրություններ չտրվին:

Եվ այսպես, այսօր ճաշից հետո, ժամը 4-ին, հիշյալ երեք անձանց ներկայությամբ, Փաշային ասացի

– Նախ՝ ես տակավին չհասկացա, Փաշա՛, թե ի՞նչ պատճառ ունեիք սա նոր համաձայնության խնդիրը մեջտեղ նետելու: $1^1/_2$ տարվա գործակցությունից հետո, կարծում եմ առաջիկա 1 ամիսն էլ որևէ կերպով կգործակցեինք:

Պողոս Փաշան պատասխանեց.

– $1^1/_2$ տարվա ընթացքում մենք հաճախ անախորժ վեճեր ենք ունեցել: Բայց այժմ իմ առողջական կացությունն այնպես է, որ ես կարողություն չունեմ նոր ծանր վեճեր ու դժվարություններ տանել: Ուստի, Պատվիրակության մեջ մտնելուց առաջ, ես ուզեցի իմանալ, թե կարո՞ղ ենք խաղաղ աշխատակցության հիմունք գտնել, թե՞ նորից պիտի դժվարություններ ունենանք: Ահա միակ պատճառը իմ այս հարուցած համաձայնության խնդրի:

– Ընդունում եմ Ձեր պատասխանը բավարար: Ապա՝ թույլ տվեք նախ պարզել անցյալ օրվա թյուրիմացությունը: Ինձ մոտ եկան ներկա պարոններից Սինապյան ու Նէվրուզ և ինձ մի թուղթ կարդացին՝ կես մատիտով, կես թանաքով գրված: Իմ հարցին թե՝ գրավո՞ր համաձայնություն է այդ, պատասխանեցին՝ ոչ, գրավոր ոչինչ լինելու չէ, սա պարզ aide mémoir է մեզ համար: Ես ընթերցումը լսեցի անտարբեր, առանց քննադատության, առանց իմ կողմից պայմաններ ավելացնելու կամ կրճատելու, որովհետև ընդհանուր պատասխան ունեի: Ասացի, թե այսպիսի համաձայնությունները չեն, որ միջադեպերի առաջը կառնեն, այլ

իմաստությունն ու գործի սերը: Հետևապես, ասացեք Փաշային, որ մենք կգործակցենք, comme par le passé[138], միայն թե հաշվի պիտի առնենք նոր հանգամանքը՝ մեր պետության ճանաչումը: Հետևապես, մնացածն ինչ-որ պատահել է, ձեր ընթերցումը այդ թղթի, համագումարի քննադատությունն ու քվեարկումը պարզապես թյուրիմացություն է միայն, և, իբրև այդպիսին, պետք է մեկ նոր հայտարարությամբ չեղյալ նկատվի: Իհարկե, Դուք անմիջապես կհարցնեք՝ «ապա այնուհետև ի՞նչ պիտի լինին մեր հարաբերությունները»:

– Այո՛,– ասաց Փաշան,– Դուք կռահեցիք:

«– Մեր հարաբերությունները. ահա այն ֆորմուլան, որ հիմք պիտի ծառայի մեր գործակցության – Nous allons collaborer comme par le passé en tenant compte de la nouvelle circonstance, qui résulte du fait de reconnaissance de notre état[139]:

Այս ես ասել եմ առաջ, ասում եմ այսօր և նաև հետագայում: Կհարցնեք անշուշտ նորից, թե ինչ եմ հասկանում ասելով collaboration en tenant compte de la reconnaissance de notre état[140]:

Պատասխանս պարզ է՝ «chaque fois que la délégation serait appelée à presenter la figure de l'état, je signerai seul les documents»[141]:

Ես այլևս ոչինչ ավելացնելու չունիմ»:

– Բայց Դուք կարող եք այս ֆորմուլան շատ լայն բացատրել,– ասաց Փաշան:

– Փաշա,– ասացի,– ո՛չ մի ֆորմուլ չի կարող բոլոր հնարավոր վեճերի և միջադեպերի առաջն առնել: Ես հույսս դրել եմ ո՛չ այս ֆորմուլայի և ո՛չ մեր բոլոր զրույցի վրա, այլ մեր իմաստության և մեր հաշտարար ոգու, ու մեր պարտքի գիտակցության վրա: Դուք պետք է ընդունեք, որ մենք երկսով էլ պիտի աշխատենք մեր կառավարության դիրքն ամրապնդելու:

– Ես էլ նույնն եմ հետապնդում, բայց պետք չէ Թյուրքաց Հայաստանը լքել: Ա՛յ, փաստաբան Lapradelle ասում էր՝ թե ռուսները Կովկասյան Հայաստանը ձգեցին նախքան Վիլսոնի արբիտրաժը, ձեր պետությունը կարող է կործանվել: Ես պետք է ներկայացնեմ Թյուրքաց Հայաստանը:

---

138 *Ինչպես անցյալում:*

139 «Մենք պիտի գործակցինք անցյալին նման, նկատի առնելով նոր պարագան, որ առաջ եկած է մեր պետության ճանաչումի իրողությունեն»:

140 «Գործակցություն՝ նկատի առնելով մեր պետության ճանաչումը»:

141 «Ամեն անգամ, որ պատվիրակությունը պիտի կանչվի ներկայացնելու պետությունը, ես միայն պիտի ստորագրեմ փաստաթուղթերը»:

– Փաշա, Lapradelle-ը կարող է հմուտ օրենսգետ լինել, բայց վատ քաղաքագետ է և անծանոթ՝ իրերի ընթացքին մեր երկրին վերաբերյալ: Միջազգային հարաբերությունների մեջ ամեն ինչ օրենսդրական կարգով ու մտածումով չի լուծվում: Հետո, Դուք շարունակելով Ձեզ հայտարարել Թյուրքաց Հայաստանի ներկայացուցիչ, թուլացնում եք մեր կառավարությունը, որ թյուրքական դաշնագիրն իսկ նկատում է որպես Միացյալ Հայաստանի միակ կառավարությունը: Եվ հետո Դուք շարունակ հակասության մեջ եք: Դուք այդ կառավարությունը չեք համարում **համայն** Հայաստանի, բայց և Խաղաղության Համաժողովում նույն կառավարության բանակին եք հենվում, երբ պետք է Թյուրքաց Հայաստանի հողը գրավել: Հետո, ես լսել եմ, որ Դուք փորձում եք անգլիական ու ֆրանսիական կառավարությունների միջոցով Ձեր դիրքը, իբրև Թյուրքաց Հայաստանի ներկայացուցիչ ամրապնդել: Սա լավ ճամփա չէ, որ Դուք ընտրել եք, ո՛չ Ձեզ համար և ո՛չ հայ հայրենիքի: Օտարների միջամտությունից շահ չունինք: Լավ գիտցեք, որ Ձեր ամբողջ դիվանագիտությունը ձախողած է և իմը Ձերի հետ: Ինչ որ կա, ինչ որ վաստակված է, այդ՝ մեր կառավարությունը, մեր բանակը, մեր պետությունն է, և նրան միայն պիտի հենվինք:

Ես վերջացրի: Դուրս եկա:

Երեկոյան Նէվրուզն եկավ ինձ ասելու, թե Փաշան շատ մտախոհ է և ընդունել է իմ առաջարկը՝ ասելով il se sent fort![142]:

ՍՊԱՅԻ[143] ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

Հուլիս 7, 1920

Առաջին այցը Սպայում ես ու Փաշան արինք Բելգիական Արտաքին Գործոց նախարար Հիմանսին:

Սա լոկ քաղաքավարական այց էր, թեև զրույցի ընթացքում պարզվեց, որ թյուրքերին տրվելիք պատասխանը խիստ է լինելու և սրանց հակառաջարկները մերժվելու են:

Հաջորդ օրը տեսանք Բերթըլօին: Նա առանձին սիրալիրությամբ ընդունեց մեզ. հաստատեց Հիմանսի ասածները և կարդաց մեզ թուրքերին տրվելիք պատասխանի բնագիրը, որ, ըստ երևույթին, իր խմբագրածն էր:

[142] Ինքզինքը ամուր կզգա:

[143] *Սպա (Spa) – Առողջարանային քաղաք Բարձր Բելգիայում, Արդեններում, Վոե գետի ափին, Լյեժ գավառում:*

Պարզվեց, որ

1) Թյուրքական պայմանագիրը մնում է անփոփոխ հողային տեսակետով;
2) փոքրիկ փոփոխություն հօգուտ թյուրքերի – Նեղուցները կառավարող Հանձնաժողովում թյուրք ներկայացուցիչ ունենալու մասին;
3) նրանց տրվելու է տասն օրվա պայմանաժամ՝ ստորագրելու կամ մերժելու Դաշնագիրը;
4) նորից առանձնապես պնդում են Հայաստանի անկախության վրա այնպես, ինչպես Դաշնագիրն է նախատեսել Վիլսոնի arbitrage-ով, և
5) պատասխանը տրվելու է թուրքերին հուլիսի 17-ին, հետևապես նրանք իրենց խոսքն ասելու են հուլիս 27-ին:

Սրանից վերջը Փաշան փորձեց խոսք բանալ Կիլիկիայի մասին՝ ներկայացնելով, թե Ամանոսի[144] Հայ Հանրապետությունը Ֆրանսայի աջակցության պտուղ է և թե լավ կլիներ իսկույն այնտեղ դրկել Անդրանիկին՝ սկսված գործը գլուխ բերելու համար:

Բերթըլոն խուսափողական պատասխան տալով այս բոլորին՝ կարճ կապեց տհաճությամբ:

Մենք եկած էինք Սպա այն մտածումով, թե գուցե Թյուրքական դաշնագիրը վերաքննվի և, հետևապես, մենք էլ մեր խոսքը կասենք: Բարեբախտաբար, Բերթըլօի հայտարարություն մեր բոլոր կասկածները ցրեց: Մնում էր սպասել, որ այս պատասխանը հաստատի Գերագույն Խորհուրդը:

Փաշան, չսպասելով այլևս, մեկնեց Բրյուսել: Ես մնացի իմ աշխատակիցների հետ – Կորգանյան, Նէվրուզ և քարտուղար Հանըմյան:

Մի քանի օր հետո, հուլիս 11-ին, տեղի ունեցավ թյուրքերի տալիք պատասխանի վերջնական վճիռը: Բերթըլօի մեզ կարդացած բնագիրը հաստատվեց անփոփոխ: Միայն Վենիզելոսի պահանջով վերջում ավելացրեց. «Եթե թյուրքական կառավարությունը հրաժարվի ստորագրելուց կամ ստորագրելով հանդերձ՝ անկարող հանդիսանա կարգ հաստատել Անատոլիայում, ապա Դաշնակիցները վճռել են վերջնական ձևով վռնդել թյուրքերին Եվրոպայից, այսինքն՝ Կ.Պոլսից, ուր թյուրք մեծամասնությունը շատ կասկածելի է, ընդհակառակը՝ քրիստոնյա ազգաբնակչությունն է թվում ավելի մեծ»:

[144] *Հնագույն հայաբնակ շրջան, լեռնաշղթա Կիլիկիայում, Կիլիկիայի հարավ-արևելքում, Հայոց ծոցից հյուսիս-արևելք մինչև Մարաշ:*

Հուլիսի 11-ի երեկոյին տեսնվեցի Վենիզելոսի հետ: Ինձ ընկերացավ և զոր. Կորգանյան, քանի որ նյութը զրույցի նաև զինվորական էր:

Իմ հարցին, թե ի՞նչ է մտածում նա (Վենիզելոսը) մեր բանակի առաջխաղացման մասին դեպի թյուրքահայ գավառները, նա պատասխանեց, թե ինքը միամգամայն դեմ է այդ մտքին, որովհետև երկյուղ ունի, որ մեր ուժերը բավարար չլինին, իսկ որևէ ձախողանք կարող է մեզ համար ճակատագրական լինել, քանի որ ո՛չ հույները, ո՛չ Անգլիան և ո՛չ Ֆրանսիան կգան օգնության:

Գեներալ (զորավար) Կորգանյան պատմեց մեր զորքի քանակը և կարողությունը: Ասաց, որ մենք կարող ենք, եթե ռազմամթերք ունենանք, մեր բանակի թիվը հասցնել 40 հազարի: Անգլիացիք ոչնչել են ռազմամթերք: Հուսանք, թե ուրիշ տեղից էլ կուղարկվի: Ասաց նաև, որ հույն կառավարությունն ևս մեզ տասն հազար հրացան է տվել: Շնորհակալ եղանք սրա համար:

Վենիզելոսը գտավ այս տեղեկությունները մեր բանակի մասին շատ խրախուսական:

Այնուամենայնիվ մեր զրույցից պարզվեց, որ

1) մենք այժմ չպիտի առաջ շարժվինք,
2) պիտի սպասենք մինչև Դաշնագիրը ստորագրվի,
3) մինչև Վիլսոն իր խոսքն արտասանե սահմանների մասին,
4) եթե այդ պահուն մեր բանակը պատրաստ լինի 40 հազարով, եթե մեր թիկունքը ապահով լինի բոլշևիկներից կամ թաթարներից, այդ ժամանակ առաջ շարժվել:

Իմ հարցին, թե մտադիր չէ՞ դեսանտ հանել Տրապիզոն, Վենիզելոս պատասխանեց, թե դա հնարավոր է, եթե թյուրքերը մերժեն ստորագրել հաշտության պայմանագիրը:

– Այս դեսանտի պահուն,– ասաց նա – ձեր առաջխաղացումը կդառնա ավելի անհրաժեշտ և հաջողության հաստատ գրավականով:

Սակայն, Վենիզելոս կարծում է, որ թյուրքերը կստորագրեն:

– Պիտի խնդրեի, որ պահեք ձեր նոր գրավումներն,– ասացի,– մինչև թյուրքերը իրագործեն Դաշնագիրն ամբողջությամբ և դուրս քաշվեն և՛ Հայաստանից: Արդյոք պետությունները նույն մտածումը չունի՞ն:

– Անշուշտ դա միակ ճամփան է,– ասաց նա,– թյուրքերին ստիպել իրագործելու Դաշնագիրը և ես մտադիր չեմ թողնել մեր բռնած հողերը: Չգիտեմ՝ ի՞նչ կանեն Դաշնակիցները: Դուք գիտեք, թե մեր մեծ Դաշնակիցները հաճախ ինչ հիմարություններ են անում: Առայժմ գոհ լինինք, որ մենք կարողացանք Քեմալի

ուժերի լեգենդան[145] ցրել: Նայինք մնացածին: Համենայն դեպս, դուք դեռ սպասելու եք:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ Պ. Գ. ՆՈՐԱՏՈՒՆԿՅԱՆԻ ՀԵՏ

Հուլիս 16, 1920

Այսօր պ. Նորատունկյան եկավ ինձ և հաղորդեց հետևյալը. – «Ազգային Համագումար»-ի վերջին նիստին նորից խնդիր եղավ, թե Փաշան ի՞նչպես պիտի ստորագրի Դաշնագիրը և թե Սահարոնյանը խոստացած է իր կառավարությունից խնդրել դրա համար պետք եղած արտոնությունը, եթե Փաշան այդ կամենա: «Բայց Փաշան հայտարարեց՝ «Քանի որ Երևանում coalition[146] կառավարություն չկա, ինքը այնտեղից որևէ արտոնագիր և իրավունք խնդրելու ցանկություն չունի»:

«Այսպիսով,– ավելացրեց պ. Նորատունկյան,– Դուք այլևս պատասխանատու չեք, եթե Փաշան հնարավորություն չունենա ստորագրել»:

ԹՅՈՒՐՔԱԿԱՆ ԴԱՇՆԱԳՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Օգոստոս 10, 1920, Փարիզ

Կյանքիս ամենաերջանիկ **օրն է այս**: Երեսուն տարվա պայքարս, բողոքս, տառապանքս ու հույսերս պսակվեցին փառավոր հաջողությամբ: Թյուրքական դաշնագիրն ստորագրվեց և բոլոր Դաշնակից պետությունների Համաժողովն այսպիսով հռչակեց Միացյալ, Անկախ, Ազատ Հայաստանը Սևրի սրահում:

Այսօր ճաշից հետո, ժամը 4-ին, երկու օթոմոբիլներով[147] մեկնեցինք Փարիզից: Ինձ ուղեկցում էին կինս, խորհրդականներ պ.պ. Էնֆիաճյան և դոկտ. Նէվրուզ և երկու քարտուղարներ:

Սևրի պալատի առջև ձգվող ծառուղին երկու կողմից բռնված էր զինված պատվո պահակների երկու շարքով, որի միջով մեր կառքերն անցան մինչև հանդիսավոր մուտքը:

---

145 *Առասպել:*

146 *Կոալիցիոն (համագործակցային) կառավարություն՝ կազմված տարբեր, սակայն փոխադարձ համաձայնության եկած կուսակցությունների ներկայացուցիչներից:*

147 *Ավտոմոբիլներ, ինքնաշարժ:*

Առաջին հարկի ընդարձակ դահլիճը, ուր բարձրացանք, արդեն շարված էին պատվիրակների սեղաններն ու աթոռները, և նրանց ետևներում՝ տեղեր պատրաստված յուրաքանչյուր պատվիրակության քարտուղարների համար: Իմ աթոռը գտնվում էր չեխո-սլավակների և ռումենների ներկայացուցիչների կողքին: Սեղանի վրա առջևս մի քարտ կար: «Plénipotentiare de l'Arménie» – «Լիազոր Հայաստանի»:

Իմ դեմ առ դեմ, հակառակ պատի տակ, տեղ ուներ Հունական պատվիրակությունը՝ գլուխ ունենալով Վենիզելոսը: Նրանցից վար թյուրքերի տեղն էր: Ճակատի պատի տակ տեղ էին բռնել մեծ Դաշնակիցները:

Հետզհետե դահլիճը լցվեց պատվիրակներով: Ժամը ուղիղ 4-ին հասավ Միլլերան՝ նախագահը Conférence-ի: Եվ գրեթե անմիջապես հետո ներս հրավիրեցին թյուրքերին վարի հարկից, ուր նրանք սպասում էին:

Կարգադրիչը, ներս առաջնորդելով թյուրք երեք պատվիրակներին, բարձրաձայն ասաց.

– Messieurs les plénipotentiaires de l'Empire Ottomane[148].

Ամենքը ոտքի կանգնեցին: Թյուրքերը ողջունեցին գլխի շարժումով և բռնեցին իրենց տեղերը:

Տիրեց ընդհանուր լռություն: Բոլոր այս ցերեմոնին[149] մահվան պատժի ի կատար ածումի պատկեր ուներ: Պատժվողը Թյուրքիան էր:

Ընդհանուր լռության մեջ, ոտքի կանգնեց Միլլերան և ասաց հետևյալը.

– Messieurs, Je declare que le traité que nous allons signer est en tout exactement conformé à l'original[150].

Ապա հրավիրեց թյուրքերին ստորագրել առաջինը:

Տեղից բարձրացավ Հագի փաշան՝ նախագահը, և հաստատ, վճռական քայլերով առաջացավ դեպի կենտրոնի սեղանը, ուր դրված էր Դաշնագիրը, առավ իրեն մեկնված գրիչը և ջլուտ շարժումով, արագությամբ ստորագրեց ցույց տված տեղը: Նրան հետևեցին իր երկու ընկերակիցները՝ Ռիզե Թեֆվիկ բեյ և Ռէչիտ բեյ: Վերջինի դեմքը ջղաձգաբար շարժվում էր, թեև նա աշխատում էր առհարկի անհույզ երևալ, իսկ Ռիզե Թեֆվիկը ծնոտն

[148] «Պարոնայք լիազորներ Օսմանյան Կայսրության»:

[149] *Արարողություն:*

[150] «Պարոններ, կհայտարարեմ, որ Դաշնագիրը, զոր պիտի ստորագրենք հիմա, իր ամբողջության մեջ ճիշտ կերպով համաձայն է բնագրին»:

էր ջղայնորեն շարժում:

Ստորագրեցին թյուրքերը և շտապով գրավեցին իրենց տեղերը:

Այնուհետև հերթով եկան ստորագրելու Անգլիայի, Ֆրանսայի, Իտալիայի, Ճապոնիայի ներկայացուցիչները:

Երբ հերթը հասավ փոքր Դաշնակիցներին, այբբենական կարգով Հայաստանի լինելով առաջինը, ինձ հրավիրեցին ստորագրել: Ես ստորագրեցի երեք փաստաթուղթ՝ 1) բուն Թյուրքական դաշնագիրը, 2) փոքրամասնությունների ստատուտը Հայաստանի և մեծ պետությունների մեջ կայացած և 3) արձանագրություն այն մասին, թե Յուգո-սլավները[151] և Հէջջազ[152] բացակա են և [անլ]կարող են ստորագրել:

Երբ վերջացավ ստորագրությունը և բազմությունը վեր կացավ, Վենիզելոսն առաջինը վազեց դեպի ինձ, ձեռքս բռնեց երկու ձեռքով և գրեթե բացականչեց հուզված.

– Mes félicitations, mon cher président, après vous, c'est moi qui est le plus heureux pour l'Arménie[153].

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՎԵՆԻԶԵԼՈՍԻ ՀԵՏ

Օգոստոս 11,1920
Փարիզ

Այսօր առավոտ, ժամը 10-ին, տեսնվեցի պ. Վենիզելոսի հետ: Նյութն էր՝

1) Տրապիզոնի խնդիրը:

Պատվիրակության վերջին խառն ժողովի և Վիլսոնին մեր ներկայացրած վերջին գրի վրա հիմնված հայտնեցի, թե խույս տալու համար Պոնտոսի հույների հակամարտությունից և, նկատի առնելով նրանց վճռական բողոքը՝ մենք որոշեցինք հրաժարվել Տրապիզոնից և բավականանալ Դաշնագրի՝ հօգուտ մեզ եղած տրամադրությամբ՝ այդ նավահանգստի մասին:

Վենիզելոս բարձրացավ տեղից՝ երկու ձեռքով իմ ձեռքը բռնվեց ու ասաց:

[151] *Հարավսլավցիներ:*

[152] *Այժմ՝ Հիջազ՝ նահանգ Սաուդյան Արաբիայի հարավ-արևմուտքում:*

[153] «Շնորհավորություններս, իմ սիրելի նախագահ. Ձեզնից հետո, ես եմ Հայաստանի համար ամենաերջանիկ անձը»:

– Շնորհակալ եմ: Դուք ձեր այդ որոշումով ինձ մեծ հոգսից ազատեցիք:

2) Հարցրի, թե Հունաստանի ո՞րպիսի օգնության վրա կարող ենք հուսալ մեր թյուրքահայ գավառները գրավելու պահուն:

Նա պատասխանեց բառացի այսպես.

– Այնքան ժամանակ, որ թյուրքերը չեն դատարկի Հայաստանը և չեն քաշվի Վիլսոնի՝ ձեզ հատկացնելիք հողերից, հունական բանակը գրված պիտի պահի բոլոր այն հողամասերը, որ Դաշնագրի տրամադրությունից դուրս մենք բռնած ենք: Այս հայտարարությունս,– ասաց,– պաշտոնական է, և դուք ամեն առթիվ, ուր պատշաճ և օգտակար կնկատեք, կարող եք ձեզ ծառայեցնել Դաշնակից կառավարությունների հետ զրուցելիս: Խնդրում եմ, երբեք չմոռանաք ամեն տեղ ձերոնց հիշեցնելու, որ մենք – հույն և հայ – բնական դաշնակիցներ ենք և Թյուրքիայի բնական ժառանգները, Արևմուտքի քաղաքակրթության հառաջապահներն ենք ու ապագան Արևելքում մերն է:

3) Խնդիրը մեր ներկայացուցչության հարցն էր Աթենքում: Ես մի քանի թեկնածուների անուն տվի: Վենիզելոս պատասխանեց.

– Ում որ նշանակեք, ինձ ընդունելի է, միայն թե աշխատի հայ և հույն բարեկամությունը ամրապնդել:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴԵՍՊԱՆ HUGH CAMPBELL WALLACE-Ի ՀԵՏ

Սեպտեմբեր 1

Ամերիկյան դեսպանի հատուկ հրավերով այսօր իրեն տեսակցության գնացի առավոտյան ժամը 12-ին:

Նա ինձ հայտնեց հետևյալը, թե օգոստոսի 26 թվով հեռագիր ունի Վաշինգտոնեն, որով իր կառավարությունը հայտնում է, թե մեր սահմանների գործը շատ լավ հիմերի վրա է, նախագահ Վիլսոնը շատ լուրջ զբաղված է այս խնդրով, և թե կարող ենք վստահ լինել, որ մեր իղձերի և հույսերին համապատասխան սահմաններ կունենանք: Ցավ հայտնեց, որ պատվիրակության ներկայացրած փաստաթղթերն ու կարտերը նա միայն օգոստոս 20-ին է ճամփու ձգել աշխատեղից, հետևապես հեռագիր ղրկված պահուն (օգոստոս 26-ին) հիշյալ փաստաթղթերը տակավին ստացված չէին:

Ես պատասխանեցի, թե մեր Դատն այնքան արդարամիտ և

հայասեր անձի ձեռքերումն է, որ մենք շատ անհանգիստ չենք մեր փաստաթղթերի հապաղումից: Ես խնդրեցի միաժամանակ ասել արդյոք Նախագահը պիտի սպասի՞ վավերացումին Թյուրքական դաշնագրի, թե՞ առանց այդ իր որոշումը կտա: Սա մեզ համար կենսական նշանակություն ունի, որովհետև մեր գաղթականները 5-6 տարուց ի վեր սպասում են վերադարձի ժամին:

Դեսպանը պատասխանեց.

– Կարող եք վստահ լինել, որ Նախագահը լիովին իրազեկ է Հայաստանի և հայերի կացության և նա ամեն ինչ պիտի անի փութացնելու հարցի լուծումը: Ինչ վերաբերում է Ձեր վերջին հարցին, հաշիվ թե ես կարողանամ,– ասաց,– Ձեզ պաշտոնական կարծիք հայտնել: Կասեմ միայն իմ անձնական մտածումը: Ես հավատացած եմ, որ Նախագահը բնավ պետք չունի սպասելու որևէ նոր պայմանի Դաշնագիրն ստորագրելուց հետո, և նա չի սպասի: Վստահ եղեք, որ ձեզ համար ձեր երկրի համար ամեն բան լավ կընթանա:

Շնորհակալ եղա և դուրս եկա:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴԵՍՊԱՆԻ ՀԵՏ

Սեպտեմբեր 8

Փարիզ

Այսօր առավոտ, ժամը 11.30-ին, ամերիկյան դեսպան Հյու-Վալլաս ինձ հրավիրեց իր մոտ մեր սահմանների մասին խոսելու:

Զրույցը մեր սահմանների հարցից անցավ լոկ Տրապիզոնին: Դեսպանը ցանկություն հայտնեց այս մասին մեր բացատրություններն ունենալ իր երկու խորհրդականների միջոցով:

Ճաշից հետո ժամը 3-ին, գեներալներ (զորավարներ) Բագրատունի և Կորգանյանի հետ ընդունեցինք ամերիկյան դեսպանատան քարտուղար պ. George Anderson Gordon-ին, որ դրեց մեզ հետևյալ հարցերը.

1) – Ո՞րն է այն հողամասը, որից դուք հրաժարվում եք Վանի վիլայեթում:

Մենք ցույց տվինք քարտեզի վրան Հեքքարին ու Սղերդը և բացատրեցինք այն պատճառները, որոնք թելադրումեն մեզ մեր շահերի տեսակետից հրաժարվել այդ հողերից:

Բացատրությունը նրան գոհացրեց:

2) – Ինչու՞ եք հրաժարվում Տրապիզոնից, և ո՞րն է լինելու ձեր նավահանգիստը:

Վերջին հարցին պատասխանեց զոր. Կորգանյան, թե մենք ստիպված եղանք գոհանալ Ռիզեով, հակառակ բազմաթիվ իր անհարմարություններին և կառուցանելու դժվարություններին համեմատելով Տրապիզոնի հետ:

Այս բացատրությունն էլ ավելի հետաքրքրեց պ. Gordon-ին իմանալու Տրապիզոնից հրաժարվելու բուն պատճառը, մասնավորապես, թե ինչու՞ մենք սկզբում պահանջեցինք Տրապիզոնը և միայն վերջերս նախագահ Վիլսոնին ուղղած հուշագրով՝ հրաժարվում ենք նրանից:

Ես պատասխանեցի հետևյալը.

– Մենք պահանջել ենք Տրապիզոնն անցյալ տարի մեր հուշագրով Conseil Supréme-ին[154], դրդված այն անհրաժեշտությունից, որ հանրածանոթ է և մանավանդ քաջալերված Վենիզելոսի արած հայտարարությունով Գերագույն Խորհրդի առաջ թե՝ «Donnez Trébizonde aux Arméniens, ils l'ont bien merité»[155].

Բայց հետագայում Պոնտոսի հույների բողոքի առջև Վենիզելոս տեղի տվեց և ձեռքերը լվաց այդ հարցից:

– Ե՞րբ պատահեց այդ,– հարցրեց Gordon:

– Մարտ ամսին Լոնդոնում,– պատասխանեցի:– Եվ հետո դրանից շատ առաջ և այդ օրերում իսկ Պոնտոսի հույն պատվիրակությունը ներկայացավ մեզ հայտարարելու վճռապես, որ եթե մենք շարունակենք պահանջել և եթե մանավանդ հաջողեցանք այն ստանալ, իրենք՝ հույները պիտի միանան թյուրքերին մեր դեմ, «որովհետև, ասում էին նրանք, Տրապիզոնը Պոնտոսի գլուխն է, և մենք թույլ չենք տա գլուխը բաժնել մարմնից»: Հունական այս հակառակությունը քանի գնաց՝ սաստկացավ: Վերջում ավելացավ թեմալիստների շարժումների ընդհանուր վտանգը, սրա հետևանքով Թյուրք դաշնակցի վերաքննության հավանականությունը և Հունական բանակի առաջխաղացությունը, որ այնպես զուգադիպում էր մեր շահերին: Այս փափուկ պարագաները, երբ թյուրքական վտանգի դեմ **միմիայն** Հունական բանակի վրա կրթնելու հնար ունեինք, բնականապես հունական բարեկամությունը դարձավ մեզ համար բացարձակ անհրաժեշտություն: Մենք գիտեինք, որ Դաշնակիցները երբեք մեզ օգնելու չեն, մինչդեռ Վենիզելոս

[154] *Գերագույն Խորհուրդ:*

[155] «Տվեք Տրապիզոնը հայերուն: Անոնք իրապես արժանի են անոր»:

օգոստոսի 4-ին ինձ հայտարարեց, թե նա չպիտի դատարկի Հույն բանակի գրաված թյուրքական հողերը, մինչև որ թյուրքերը հեռանան հայկական բոլոր հողամասերից: Եվ այսպես մեր բազմաթիվ դժվարությունների վրա չավելացնելու համար հունական թշնամությունը և պահելու համար հույն կառավարության բարյացակամությունը, մենք **վճռեցինք չպահանջել Տրապիզոնը** և ոչ թե հրաժարվել նրանից:

– Բայց դուք ուրիշ նավահանգիստ չունիք,– ասաց պ. Gordon:

– Ճշմարիտ է, սա շատ ծանր վիճակ է մեզ համար, բայց Տրապիզոնի պատճառով հույների հետ թշնամանալն էլ ավելի աղետավոր կլիներ մեզ համար մեր ներկա պայմաններում:

– Վենիզելոս կամ իր կառավարությունը ուղղակի ճնշումն չի՞ գործ դրել ձեզ վրա:

– Ես Ձեզ ներկայացրի այս հարցի պատմությունը ճշգրիտ կեր-պով. եզրակացությունը կարող է լինել զանազան:

– Պոնտոսի հույները որևէ քաղաքական կազմակերպված մարմին չունին անշուշտ,– ասաց Gordon,– որի հետ դուք բանակցեիք:

– Ոչ,– ասացի,– նրանց ունեցածը մի պարզ անվանական պատվիրակություն էր, որպիսին ունեին Փարիզում բազմաթիվ մանր ժողովուրդներ ու կրոնական համայնքներ:

– Վերջին անգամ դուք ե՞րբ դադարեցիք պահանջել Տրապիզոնը:

– Մոտերս, օգոստոսի սկզբներին:

Եզրակացություն –

Պ. Gordon-ի հարցուփորձը մեզ վրա այն տպավորությունը թողեց, թե նախագահ Վիլսոնի համար Տրապիզոնի հարցը տակավին գոցված չէ, և թե նա կասկածում է, որ մենք հրաժարվում ենք Տրապիզոնից հույն կառավարության և մասնավորապես Վենիզելոսի ճնշման տակ:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՌՈՒՄԻՆԱԿԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ ՏԱԿՈ-ԻՈՆԵՍԿՈՒԻ ՀԵՏ

Հոկտեմբեր 4
Փարիզ

Տակո-Իոնեսկուն 58-60 տարեկան մարդ է, շեշտված հայկական դիմագծերով (ասում են հայ ծագումից է), որ ինձ ընդունեց grave[156] ձևով և շատ տրտում տոնով հարցրեց.

– Ինչպե՞ս է ձեզ մոտ, լավ չէ, կարծեմ:

Ես պատասխանեցի թե՝ մեր դրությունը ծանր է և ուզեցի իմանալ ի՞նչ կարող ենք հուսալ Ռումինիայից:

– Չեմ ուզում ձեզ ավելորդ հույս տալ: Մենք անզոր, միանգամայն անզոր ենք ձեզ օգնելու: Թերթերում գրած էին, իբր թե Ռումինիան զորք է դրկում Տրապիզոն: Ցնորամտություն: Մանդատի հեռավոր միտք իսկ ունեցած չենք:

Այնուհետև մենք երկար խոսեցինք քեմալիստների ուժի և շարժումների մասին, բոլշևիկների մասին:

Իմ հարցին, թե կարո՞ղ ենք հուսալ գեթ նավթ ստանալու Ռումինիայից, նա պատասխանեց բացասաբար:

– Կարող եմ ձեզ խոստանալ,– ասաց նա,– միմիայն հրացաններ, ռուսական հրացաններ 4-5 հազար և ոչ վճարելով, այլ որպես ընծա Հայաստանին:

Ես սրա համար էլ շնորհակալ եղա և դուրս գնացի:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴԵՍՊԱՆ ՀՅՈՒ-ՎԱԼԼԱՍԻ ՀԵՏ

Հոկտեմբեր 11, 1920

Կիլիկիայից ու Հայաստանից սրտաբեկիչ հեռագրեր ստանալով, տեսակցություն խնդրեցի պ. Հյու-Վալլասից: Տվի նրան կարդալու հեռագիրը: Բացատրեցի դրությունը և՛ Կիլիկիայում, և՛ Հայաստանի սահմաններում:

Նա, շատ ուշադրությամբ ինձ լսելուց հետո, հարցրեց, թե տեսնվե՞լ եմ արդյոք ֆրանսիական իշխանությունների հետ:

Պատասխանեցի, որ տեսնվելու եմ Առաջին նախարարի[157] հետ ամսույս 13-ին:

– Չե՞ք կարծում,– ասաց նա,– որ լավ կլինի այդ տեսակցությունից հետո վերհիշել մեր զրույցը:

Ես գտա նրա մտածումը գործնական և շնորհակալ լինելով դուրս եկա:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՎԱՐՉԱՊԵՏ G. LEYGUE-Ի ՀԵՏ

Հոկտեմբեր 13, 1920
Փարիզ

Այսօր, ճաշից հետո ժամը 4-ին, տեսակցություն ունեցա Ֆրանսիայի վարչապետ Ժորժ Լեյգի հետ: Զրույցի նյութն էր՝ Քեմալիստների արշավանքը դեպի Հայաստան և Կիլիկիայի անցքերը:

ՀԱՅԱՍՏԱՆ: – Կարդացի նրան ստացածս վերջին հեռագրերը Թյուրքիայի արշավանքի մասին: Բացատրեցի մեր զորքի վիճակը, պարզեցի կատարած արիությունը և այն, որ այդ զորքը այսօր վարում է Դաշնակիցների պատերազմը նրանց թշնամու դեմ, որ շատ հայ զինվորներ արդեն կռվում են վեց տարուց ի վեր, զենքի տակ են շատերը գրեթե ութ տարուց ի վեր: Մասնավորապես կանգ առա այն վտանգի վրա իրենց իսկ շատերի տեսակետից, թե քեմալիստներ ու բոլշևիկներ հաջողել են միանալ Հայաստանի վրա: Եվ խնդրեցի ասել, թե ի՞նչ միջոցներ են խորհում օգնելու Հայաստանի[ն]:

Պ. Լեյգը շատ սիրալիր, շատ քաջալերիչ կերպով ինձ լսեց ու ասաց թե՝

– Ձեր միտքը՝ գրավել Տրապիզոն–Էրզրում գիծը, արժանի է խորին ուշադրության, և ես դրանով լուրջ զբաղված եմ: Իրավունք ունիք, Հայաստանի վտանգը մերն է: Հավատացեք, որ մենք չենք լքի նրան: Դուք գիտեք, թե ես անձնապես որքան համակիր եմ Ձեզ: Մենք տեսնվել ենք 1915 թվին պարլամենտական հանձնաժողովում, երբ իմ նախագահությամբ Ձեր զեկույցը լսեցինք: Այն ժամանակից իմ զգացումները փոխված չեն:

ԿԻԼԻԿԻԱ: – Պատմեցի իմ ստացած հեռագրերի բովանդակությունը, և այն՝ թե հայերի կացությունը դժվարացել է – գաղթում են, կամ գուցե գաղթեցնում են: Մեր կամավորները զինաթափ են եղած, թյուրք վարչություն հաստատելու վրա են: Բողոքեցի այդ փութկոտության դեմ, քանի որ թյուրքերը խախտում են Սևրի

[156] *Մեայլ, խստադեմ:*

[157] *Վարչապետ, նախարարապետ – Պրեմիեր մինիստր:*

դաշնագիրը, անիրավություն կլինի Կիլիկիայում հօգուտ թյուրքերի իրագործել նույն Դաշնագիրը:

Նա պատասխանեց.

– Տարաբախտաբար, ձեր տեղեկությունները ես չունիմ տակավին, բայց կարող եմ հայտարարել՝ 1) երեք օրից ի վեր դրությունը հիմնավորապես փոխվել է դեպի լավ, 2) մենք Կիլիկիան դատարկելու մտադրություն չունինք, 3) հայերի պաշտպանությունը կշարունակենք comme par le passé[158]: Դուռս Ձեր առաջ միշտ բաց է, և միշտ բարյացակամ եմ Ձեզ:

Նախարարապետը այնուհետև լսեց իմ երրորդ խնդիրը, որ վերաբերում էր դիվանագիտական ներկայացուցչության: Ես ասացի, որ Ֆրանսիան մինչև այժմ նշանակում է մի Haut Commissaire pour trois Républiques Trans-Caucasiennes[159]: Եթե, ասացի, մինչև օգոստոսի 10-ը այս բացատրել կարելի էր, Սևրի դաշնագրի ստորագրությունից հետո, դառնում է մեզ համար չափազանց անպատեհ: Մենք այլևս Կովկասյան Հանրապետություն չենք, այլ անկախ մի պետություն՝ ծագած մանավանդ Թյուրքիայի անկումից ու հողերից: Ուստի մենք պետք է ունենանանք մեր ներկայացուցիչը Երևանում, անկախ Թիֆլիսից:

Նախարարապետը պատասխանեց, թե նա լիովին բաժանում է իմ հայեցակետը և անպայման ընթացք կտա իմ խնդրին իմ առաջարկած ձևով:

Պ. Լեյգը սկզբից մինչև վերջը շատ սիրալիր եղավ, շատ ուշադիր: Տեսակցության ընթացքին մի անգամ, երբ պատրաստվում էի վեր կենալ, խնդրեց նստել ու շարունակել զրույցը, որ այսպիսով տևեց մոտ 50 րոպե:

---

158 *Ինչպես անցյալում:*

159 Բարձր Կոմիսար Անդրկովկասյան երեք հանրապետությանց:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱՐԱՐԱՊԵՏ ԵՎ ՊԱՐԼԱՄԵՆՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ (ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ) ՆԱԽԱԳԱՀ Պ. ԲԱՐԹՈՒԻ ՀԵՏ

Հոկտեմբերի 16, 1920
ժամը 10

Շվեյցարացի մեր բարեկամը Demorsié-ի հետ այսօր առավոտյան այցելեցինք Բարթուին, որ նոր վերադարձած ճամփորդությունից, ցանկացել էր լսել իրերի կացությունը Հայաստանում և Կիլիկիայում: Կես ժամի չափ պատմեցի նրան, ինչ պատմել էի Նախարարապետ Ժ. Լեյգին, խնդրեց, իրեն հատուկ raport[160] ներկայացնել այս բոլորի մասին:

Նախընթաց օրը երկար տեսակցություն ունեցա Սենատոր Դումերի հետ, որի աջակցությունը խնդրեցի կառավարության առաջ Հայաստանի համար, որի հին բարեկամն է ինքը:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Պ. ԲԵՐԹԵԼՕ-Ի ՀԵՏ

Հոկտեմբեր 17, 1920
Փարիզ

Պ. Բերթելօ երկու տարվա ծանոթ էր: Շնորհավորել էի իր անվանումը և ստացել էի սիրալիր պատասխան, ասացի, որ մի քանի անգամ իրեն տեսած եմ, վերջին անգամ 21 օգոստոս և ամեն անգամ դուրս եմ գնացել սրտապնդված և հույս ունեմ այս անգամ ևս հուսալից դուրս գնալ:

Նա պատասխանեց.

– Այս անգամ հույսից ավելին կարող եմ Ձեզ ասել, Խնդիրն ավելի լուրջ գործնական շրջան է մտած:

Ես կարդացի նրան իմ ստացած երեք հեռագրերը թյուրքերի շարժումների մասին. նա նոր առավ և Կաղզվան, Նովո Մելիմ, Սարիղամիշ տեղերը ուզեցի բացատրել, ասաց՝ շատ լավ գիտեմ: Եվ առհասարակ զրույցի ընթացքին նկատեցի, որ լավատեղյակ էր նյութին: Ինձնից նոթեր առնելուց հետո՝ ասաց.

---

160 *Զեկուցագիր:*

– Անհանգիստ լինելու տեղիք չունիք. վստահացնում եմ Ձեզ, որ լուրջ քննության առարկա է Հայաստանին օգնության գալու հարցը:

Հարցրի, թե իմ ներշնչումը՝ գրավել Տրապիզոն–Էրզրում գիծը, հավանության երաշխիքներ չունի՞ արդյոք:

– Դա դժվար կլիներ,– ասաց,– բայց հավանաբար Դաշնակից նավատորմիղի շնորհիվ կարելի կլինի գրավել Տրապիզոն–Սամսոն, առհասարակ Սև ծովի ափերը՝ փակելու համար քեմալիստների հաղորդակցությունը:

– Հույները դադար առան,– ասացի,– արդյոք չե՞ն կարող շարժվել առաջ, չե՞ն կամենում, թե՞ թույլ չեն տալիս:

– Պատասխանս կարճն է,– ասաց Բերթելոն,– այդ երեք պատճառներն էլ կան:

Եվ նա երկարորեն բացատրեց Վենիզելոսի ներքին դժվարությունները, 150 հազարանոց բանակը պահպանելու ծանրությունը և նրա վախը՝ շատ առաջ գնալու երկրի խորքերը այդ ահագին ճակատով:

– Այնպես որ կարծում եք, թե հույները մեզ օգնել չեն կարող նոր առաջխաղացումով:

– Չեմ կարծում:

Ես անցա Կիլիկիայի Խնդրին և շտապով հաղորդեցի ստացած տեղեկությունները: Բերթելոն պատասխանեց հետևյալը.

– Կիլիկիայի դրությունը հետևյալն է,– ասաց Բերթելոն,– թրքերն, ինչպես երևում է, գերմանական մեթոդով աշխատում են մաս-մաս հարվածել հակառակորդին և դառնալ մյուսին: Նրանք հանգիստ են թողել հույներին և ուշադրությունը դարձրել դեպի ձեզ և դեպի Կիլիկիան, կամ ավելի ճիշտ՝ միայն դեպի հայերը: Մյուս կողմից պետք է ասել, որ ձերոնք ևս Կիլիկիայում մի շարք անզգուշություններ թույլ տվին իրենց. **տարաբախտաբար, գնդապետ Բրեմոնը քաջալերեց այդ և ստեղծեց դժվարություններ և՛ ձեզ համար, և՛ մեզ համար**: Գնդապետ Բրեմոնի շնորհիվ ստեղծվել էր մի կացություն, որ կարելի էր բնորոշել **«հայկական բռնություն մուսուլմանների վրա որոշ շրջաններում»**: Համաձայնեցեք, որ այս դրությունը դժվար էր հարատևել: Այժմ գնդ. Բրեմոնը հեռացած է, և **դժվարությունները հարթվում են**:

– Դժվարությունները հարթվում են՝ ասում եք,– պատասխանեցի ես,– բայց ըստ երևույթին ո՛չ հայերի համար, քանի որ, ինչպես իմանում եմ, մեր ազգայինները գաղթում են բռնադատված և այլ ծանր միջոցներ են գործադրում մերոնց դեմ: Ես

համաձայն եմ, որ մերոնք քանի մի չափազանցություններ արին, բայց սրբագրել հեշտ էր: Սակայն, ըստ իմ տեղեկությանց, ֆրանսիական իշխանությունները պարզապես ճգնում են իրագործել Թրքական դաշնագիրը Կիլիկիայում այն ժամանակ, երբ թյուրքական նացիոնալիստ զորքերը ամեն օր խախտում են նույն Դաշնագիրը և, ինչպես գիտեք, շարժվում են դեպի մեր Հանրապետության սահմանները:

– Ոչ,– ասաց Բերթելոն,– Կիլիկիայում Թյուրքական դաշնագրի խոսք լինել չի կարող առայժմ, կարող եմ Ձեզ վստահեցնել 1) մենք Կիլիկիան չենք թողնի, 2) հայերին կպաշտպանենք, 3) Ձեր ստացած տեղեկությունների դրությունը այս պահուն հիմնավորապես փոխված է: Ճշմարիտ է, քանի մի աքսորներ եղած են, բայց դա պարզապես խաղաղությունը, հավասարակշռությունը վերահաստատելու համար է:

Այնուհետև խոսեցի Ֆրանսիո ներկայացուցչության մասին Հայաստանում և խնդրեցի Lepissier նշանակել անկախ Haut Commissaire[161], ապա խնդրեցի թույլտվություն՝ մեր փոխադրության և կարգադրություն՝ Մարսելի 24000 հակ/փութ բամբակի համար: Նա նոթեր առավ:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՀՈՒՆԱԿԱՆ CHARGE D'AFFAIRE[162]
Պ. LEON V. MELAS-Ի ՀԵՏ

Հոկտեմբերի 18, 1920
Փարիզ

Պ. Լեօն Մելաս նախ հայտնեց ինձ, թե իր կառավարությունից հրահանգ ունի խնդրել Հայաստանի կառավարության հաճությունը նշանակել Երևանում որպես Ministre Résident[163] պ. Jean Papas: Ես շնորհակալություն հայտնեցի հելլենական կառավարության այս ձեռներեցության համար և ավելացրի.

– Ես այս առթիվ պիտի կրկնեմ պ. Վենիզելոսի խոսքերը, որ նա ասաց, երբ ես agrément[164] էի խնդրում պ. Չայանի համար.

---

161 *Բարձր Կոմիսար՝ հանձնակատար:*

162 *Գործերի հավատարմատար:*

163 *Նախարար-ռեզիդենտ՝ դիվանագիտական ներկայացուցիչ նվազ աստիճանի, քան դեսպանորդը:*

164 *Համաձայնություն:*

«Մեզ համար բոլորովին մեկ է, թե ում կուղարկեք, բավական է, որ նա աշխատի ավելի ևս սերտացնել մեր երկու ազգերի բարեկամական հարաբերությունները», - և ավելացրի, - անմիջապես կդիմեմ իմ կառավարության պետք եղած հավանությունն ստանալու, որ կասկած չունեմ իմ կառավարությունը կտա հաճույքով:

Ապա պ. Մելասը հաղորդեց ինձ Վենիզելոսի պատասխանը իմ այն հեռագրին, որով ես խնդրել էի Հունական բանակի աջակցությունը մի նոր առաջխաղացությամբ թյուրքերի շարժումը մեր ճակատում թուլացնելու համար: Վենիզելոսը հայտնում է, թե տարաբախտաբար չպիտի կարողանա իմ խնդիրն իրագործել, որովհետև Հունական բանակի առաջ թշնամի չկա, հետևապես առաջացումը կլինի թյուրքական հողերի նոր գրավումն, ինչ որ կարելի չէ անել առանց Դաշնակից պետությունների հաճության:

– Կարո՞ղ եմ արդյոք դիմել Դաշնակից պետություններին, հաղորդել Վենիզելոսի պատասխանը և խնդրել նրանց արտոնությունը:

Պ. Լ. Մելասը, մի փոքր շփոթված իմ հարցից, պատասխանեց թե՝

– Մեր հաջորդ նպատակը կլիներ գրավել Աֆիոն-Գարահիսար – ինչպես գիտեք, ձմռանը այդ գրավումը շատ դժվար է, մեր բանակը ձմռան պատրաստություններ չունի. ա՛յս է մտածում Վենիզելոս:

Պարզ էր – Վենիզելոս մերժում էր:

Հոկտեմբերի 22, 1920

Բրյուսել

Այսօր Բելգիական Արտաքին Գործոց նախարար և Ազգերի Լիգայի Խորհրդի ժամանակավոր նախագահ Հիմանսի տանը երեկոյան 9-ին հրավիրված էի բոլոր մյուս պատվիրակությունների հետ, ինձ հետ ունենալով պ. Տիգրան Չայանին: Այստեղ Ժան Գուն ինձ ներկայացրեց Իտալիայի դելեգադ[165] Տիտտոնիին, որի հետ առանձնացած՝ ես հնար ունեցա երկարատև պարզել Հայաստանի արդի կացությունը և խնդրել իտալական կառավարության ազդեցությունը ետ կասեցնելու թյուրքերի արշավանքը դեպի Հայաստան: Ես ասացի, որ Իտալիան անմիջապես շահագրգռված չլինելով Հայաստանում՝

[165] *Պատվիրակ, դելեգատ:*

նրա միջամտությունը և ձեռներեցությունը կասկածից դուրս կնկատվի: Նկատի ունենալով, ավելացրի, թյուրքերի մասնավոր վստահությունը դեպի Իտալիան, elle pourrait, jouer un beau role[166]. Տիտտոնին խոստացավ ինձ Հռոմ վերադարձին զրուցել Սֆոնցային:

Հիմանսի հետ զրույցից պարզվեց, որ Քեմալիստների շարժման մասին դեպի Հայաստան՝ Ազգերի Լիգային տված իմ երեք հուշագրերը արժանացել են նրա Խորհրդի ամենալուրջ ուշադրության, և նույն օրը Խորհուրդը որոշել է դիմել Դաշնակից պետություններին, առաջարկելով Լիգայի հետ միախորհուրդ միջոցներ հայթայթել Հայաստանի[ն] շտապ օգնություն հասցնելու:

Հունական դեսպան Կակլամանոսը, որին լավ ծանոթ էի դեռ Լոնդոնից, երկար զրույցի մեջ պարզեց ինձ, որ

1) Ազգերի Լիգան Ժընևում նոյեմբեր 15-ին համաժողովում պետք է լրջորեն զբաղվի մեր պետության աջակցելու խնդրով,
2) գրեթե հաստատ է, որ պիտի առաջարկվի Լիգայի բոլոր անդամ պետություններին մեծ փոխառություն տալ Հայաստանին՝ բաժնելով իրենց վրա հայթայթելիք գումարը,
3) որ Քեմալիստների շարժումը անխուսափելի կերպով նրանց դեմ պիտի միացնի Դաշնակիցներին, մանավանդ, ասում էր նա, Ֆրանսիան և Իտալիան են անհանգիստ, վախենալով, թե մի գուցե Անգլիա երկրորդ անգամ Հունական բանակը շարժե դեպի Թյուրքիայի խորքերը: Այս է պատճառը, որ Ֆրանսիան և Իտալիան պիտի միանան Անգլիային բռնադատիչ միջոցների գործադրության պահուն,
4) ասում էր նա, որ առհասարակ նոյեմբերի 15-ին բացվող համաժողովին պետք է մեր վիճակը ուժգնորեն և հարազատությամբ ներկայացվի, ուստի նա խորհուրդ էր տալիս ինձ ներկայանալ այդ ժողովին և զեկույց անել, որի համար և, անշուշտ, կհրավիրվեմ պաշտոնապես,
5) նրա կարծիքով, Ժընևի համաժողովը, Լիգայի առանց որևէ առարկության, պիտի ընդունի Հայաստանը իբրև անդամ, քանի որ նա հռչակված է Դաշնակից:

Երկար զրույց ունեցա նաև Ազգերի Լիգայի ընդհանուր քարտուղար Սըր Էրիկ Դրումմոնդի հետ և երկրորդ քարտուղար Մանքուի հետ, որոնք երկուսն էլ իրենց գոհունակությունը հայտնեցին

[166] Նա կարող է լավ դեր խաղալ:

իմ ներկայացրած զեկույցներից՝ մեր ընդունելության մասին Ազգերի Լիգայում:

ԲԱՆԿԵՏ ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ

Հոկտեմբերի 24, 1920

Այսօր հազիվ. Բրյուսելում տեղական հայ գաղութը և Անվերսից եկած հայեր մեր հյուպատոս Չանքերթենի և պ. Դավիթ Մարլյանի ձեռներեցությամբ պատվո սեղան էին կազմել, ուր հրավիրեցին ինձ, պ. Չայանին և քարտուղար Ղազարյանին:

Բանկետի վերջում շատ ջերմ ճառեր արտասանվեցին, ապա ես խոսեցի երկար պարզելով Հայաստանի կարիքները և իրենց պարտքը հայրենիքի հանդեպ և առաջարկեցի փոխառության համար կազմել մի հանձնաժողով: Կազմվեց հանձնաժողով՝ 4 հոգուց բաղկացած, նախագահությամբ Սվաճյանի: Անմիջապես ձեռնարկեցին ստորագրությունների, որի արդյունքը եղավ մոտ 300.000 ֆրանկ: Խնդիր հարուցին, որպեսզի կառավարությունը գործնական տեսակետից դոլլարի սիստեմը փոխի գոնե իրենց վերաբերմամբ ֆրանկի:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԳԱԼԼԻԻ ՀԵՏ

27 հոկտեմբերի
Փարիզ

Այսօր Գալլիից իմացա.

1) որ Անգլիական կառավարության պահանջով Դեսպանական Խորհուրդը չպիտի զբաղվի Թյուրքական դաշնագրի գործադրության հետ կապված խնդիրներով, և որ այս կարգի հարցերը Դեսպանների Խորհուրդը ստիպված է ուղարկել Դաշնակից պետություններին, և

2) այդ պատճառով մեր դիմումը՝ Պոլսում զինվորական ներկայացուցիչ ունենալու մասին, հիշյալ Խորհուրդը նույնպես ներկայացրել է Դաշնակից կառավարություններին, որոնք այդ առթիվ գրագրության մեջ են իրար հետ, և նա չգիտե, թե երբ պիտի լինի լուծումը:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՓԱՐԻԶԻ ԼԵՀԱԿԱՆ ԴԵՍՊԱՆ ԿՈՄՍ ԶԱՄՈՅՍԿՈՒ ՀԵՏ

Նոյեմբեր 5
Փարիզ

Մեր կառավարությունը հեռագրել էր՝ աշխատել, եթե հնար է, Լեհ-Բոլշևիկյան դաշնագրի մեջ մեկ հոդվածը մտցնել, որով Հայաստանի անկախությունը ապահովվի: Այս նպատակով տեսնվեցի կոմս Զամոյսկու հետ: Իմ առաջարկը լսելով՝ կոմսը սկզբում ասաց, որ իրենց դաշնագիրը բոլշևիկների հետ գրեթե մշակված, վերջացած է, և ինքը հնար չի տեսնում, թե ինչպես կարելի է Հայաստանի մասին այդ դաշնագրի մեջ խոսք ասել: Ես պատասխանեցի, որ եթե դաշնագիրը կնքված է, բնական է՝ այդ դժվար է, հակառակ դեպքում, ինչքան և այդ տարօրինակ թվա, Հայաստանի ու Լեհաստանի շահերի մեջ ներդաշնակություն կա: Անշուշտ, կոմս, ասացի, չի կարծում, թե իրենց այս խաղաղությունը բոլշևիկների հետ տևական է. զարնանը նոր պատերազմը անհնար է, և այդ դեպքում բոլշևիկները պիտի աշխատեն ամեն կողմից և մասնավորապես Անդրկովկասից զինվորական և այլ ուժեր տանել դեպի լեհական ճակատը, ինչպես այդ արեցին անմիջապես, երբ մտան Աղրբեջան: Այդ [դեպքում] ինքն իր բախտին լքված Հայաստանը կարող է ընկճվել, և այս ժամանակ ամբողջ Անդրկովկասը և ամբողջ Թյուրքիան նրանց տրամադրության տակ կլինի, որովհետև միայն Հայաս-տանն է անկարելի դարձնում թյուրքերի և բոլշևիկների փաստական միացումը և գործակցությունը: Կոմսը ինձ հետ համաձայնեց:

Ինչ վերաբերում է,– ասացի,– առաջարկածս հոդվածին ձեր Դաշնագրի մեջ, բնական է, որ դուք չեք կարող հատուկ Հայաստանի համար խոսք անել, բայց կարծում եմ, որ այսպիսի մի ֆորմյուլ[167] անգործնական չէր լինի. «Քանի որ Լեհաստանի ազատությունը ծագել է այս մեծ պատերազմից և Դաշնակիցների հաղթությունից առաջ եկած խաղաղության դաշնագրերով, Սովետական Ռուսաստանը հանձն է առնում չխափանել հիշյալ դաշնագրերի գործադրությունը»:

Կոմսն ասաց.

– C'est une formule tout à fait heureuse[168]: Այս ձևով, ես

---

[167] *Բանաձև, ֆորմուլ:*

[168] Ասիկա բոլորովին բախտավոր (ընդունելի) բանաձև մըն է:

կարծում եմ,– շարունակեց նա,– հնարավոր է Դաշնագրի մեջ մտցնել, ուստի այսօր ևեթ ես կհեռագրեմ իմ կառավարությանը և պատասխանը անմիջապես կհաղորդեմ Ձեզ:

Ես ավելացրի, որ՝

– Ձեր պատասխանի դրական դեպքում իմ աշխատակիցներից մեկ-երկուսին պատրաստ եմ ուղարկել մինչև Վարշավա:

Այնուհետև զրույցը շարունակվեց Ռուսաստանի ապագայի մասին, և Կոմսը ժպտալով՝ վերջացրեց, թե իր կարծիքով Ռուսաստանի նախկին հողերի վրա կազմված պետություններից միայն Հայաստանը ու Լեհաստանն են ճանաչված և պիտի կարողանան ապրել, մնացածները՝ Լատվիա, Լիտվա, Էսթոնիա և Կովկասի պետությունները հազիվ թե գոյություն ունենան, երբ Ռուսաստանը նորից կազմակերպվի և ի վիճակի լինի իր հողերը պահանջել:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՊԵՐԵՏՏԻԻ ՀԵՏ (DIRECTEUR DES AFFAIRES POLITIQUES DU MINISTERE DES AFFAIRES ETRANGERES)[169]

Այս տեսակցության մեջ ես խնդրեցի կարգադրել հետևյալ խնդիրները.

1) Ֆրանսիան, ժամանակ է որ, իր դիվանագետ-ներկայացուցիչը նշանակի Հայաստան և նույնը մեզ արտոնել Փարիզում, դադարեցնելով Haut Commissaire-ի իրավասությունը մեզ վրա, քանի որ Հայաստանը ճանաչված է անկախ դաշնակից պետություն;

2) Կարգադրել Բաքումում կոմս դը Մարտելի կարգադրությամբ գրավված մեր՝ 24.000 բամբակի գործը, բացատրեցի այդ գործի դրությունը և մեր իրավունքը;

3) Արտաքին Գործոց նախարարությունը մեզ մերժած լինելով փոխառության արտոնություն՝ ես բացատրեցի, որ այդտեղ թյուրիմացություն կա, մեր փոխառությունը նման չէ սովորական փոխառություններին. մերին պիտի մասնակցեն միայն հայերը, հազիվ մի քանի միլիոն ֆրանկով. բորսային դիմում լինելու չէ, և հավաքված գումարն էլ ըստ մեծ մասին

[169] *Արտաքին Գործոց Նախարարության Քաղաքական Գործերի տնօրեն:*

պիտի ծախսվի Ֆրանսիայում ապրանքներ գնելով Հայաստանի համար:

3) Պերետտին ընդունեց, որ այս ձևով հայ փոխառությունը Ֆրանսիայում միանգամայն հնարավոր է, և առաջարկեց նոր թղթով դիմել, խոստանալով միանգամայն աջակցել:

Առաջին երկու խնդիրների մասին ևս գտավ, որ ես իրավունք ունեմ և խոստացավ նրանց լուծումը փութացնել:

4) Այնուհետև խոսք արի Կիլիկիայի մասին:

Եվ Պերետտին ինձ հավաստիացրեց թե,

ա) իրավ է, որ Կիլիկիայում մի կարճ ժամանակում շփոթ է եղել, որ ֆրանսիական ջոկատներ ձախողանքի են ենթարկվել, բայց դրությունը այժմ վերահաստատվել է,

բ) ֆրանսիական զորքերը Աղանան չեն թողել և նույնիսկ շարունակում են առաջանալ, ու

գ) որ Ֆրանսիան բնավ մտադիր չէ Կիլիկիան թողնել, ուր նա և հնուց ու Սևրի դաշնագրով իրավունքներ ունի մնալու և պաշտպանելու փոքրամասնությանց իրավունքը և իր էկոնոմիք[170] շահերը՝ համաձայն Zones d'influence économique-ի[171] պայմանագրի տրամադրություններին: Ավելացրեց, որ իրենց Zone-ը տարածվում է դեպի հյուսիս մինչև Տիգրիսի ակունքը, Դիարբեքիր[172] և Մամուրեթ ուլ Ազիզ (Խարբերդ):

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՊԵՐԵՏՏԻԻ ՀԵՏ

Նոյեմբեր 9, 1920

Այսօր Կարսի առումը հաստատվելով՝ գնացի Quai d'Orsay և Բերթելոյի ցանկությամբ նորից տեսնվեցի Պերետտիի հետ իմանալու համար, թե ի՞նչ են մտածում Ֆրանսիան և Դաշնակիցները մեր այս ծանր ճգնաժամին՝ օգնելու համար իրենց դաշնակից Հայաստանին: Նորից և նորից պարզեցի թյուրք-բոլշևիկյան կոալիցիոնից ծագող բոլոր ծանրակշիռ հետևանքները, հիշեցրի մեզ արված հանդիսավոր խոստումները, Սևրի դաշնագրի արժեքը, մեր հանդեպ կատարված անիրավությունները՝ Դաշնակիցների կողմից զինադադարով կնքումեն մինչև այսօր և ավելացրի, որ եթե արագ ու վճռական միջոցներով Դաշնակիցները Հայաստանին

[170] *Տնտեսական:*

[171] *Տնտեսական ազդեցության գոտիներ՝ զոնաներ:*

[172] *Տիգրանակերտ:*

օգնության չհասնեն, ես երկյոտ ունեմ, որ բոլշևիկները թյուրքերի հետ կստիպեն Հայաստանին ընդունել սովետական իշխանություն: Պերետտին ասաց, թե հրահանգ ունի Mr. Berthelot-ից՝ ինձանից իմանալ, թե ինչ ձևով կարելի է օգնել Հայաստանին: Ես նորից հիշեցրի.

1) Տրապիզոնի գրավումը,

2) Հունական բանակի առաջխաղացումը և

3) ճնշում Պոլիսի վրա:

– Տարաբախտաբար,– ասաց Պերետտին,– Տրապիզոնի գրավումը անկարելի է, քանի որ ո՛չ Անգլիա, ո՛չ էլ մենք կարող ենք բանակ դրկել:

– Այդ դեպքում,– ասացի,– Դաշնակիցներին է մնում ուրիշ բան մտածել:

Նա շվարած նայեց երեսիս և կոտրված շշնջաց.

– Մենք հնար չենք գտնում, մեր հոգսը Կիլիկիայում արդեն շատ է. 80.000 մարդ ունինք Սյուրիայում և Կիլիկիայում: Նոր ուժեր տրամադրել չենք կարող, իսկ Անգլիան մարդ չունի:

Ես պատասխանեցի.

– Սա անհնարին անիրավություն է՝ Սյուրիան, Մեսոպոտամիան[173], Պաղեստինը, Նեղուցները գրավելու համար մարդ ճարվեց, և երբ հերթը Հայաստանին հասավ, Դաշնակիցները դարձան անզոր,– և ավելացրի:– Նորից կրկնում եմ, որ դուք այսպիսով Հայաստանը նետում եք բոլշևիկների գիրկը:

– Այո՛,– պատասխանեց նա,– պետք է փրկել Հայաստանը: Ձեզ խորհուրդ եմ տալիս նորից մի պաթետիկ կոչով դիմել Դեսպանների Խորհրդի նախագահին, որ ինքը Լեյդն է, և այդ հիման վրա մենք անմիջապես հեռագրական բանակցություններ կսկսենք Դաշնակից պետությունների հետ:

Ես դուրս եկա:

---

[173] *Միջագետք:*

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍԸՐ-ՋՈՆ-ՏԻԼԼԻԻ ՀԵՏ (FOREIGN OFFICE[174]-ՈՒՄ)

12 նոյեմբեր, 1920
Լոնդոն

Երևանից ստանալով մեր ձախորդության ու Կարսի անկման լուրը, զոր. Բագրատունու միջոցով պատասխան ստացա, որ Սըր-Ջոն-Տիլլին (Sous-Secrétaire d'état)[175] ինձ կընդունի 12 նոյեմբերին:

Ես մեկնեցի Լոնդոն Փարիզից 11-ին նոյեմբերի: Սըր-Ջոն-Տիլլիին գնացինք զոր. Բագրատունու հետ: Ես ասացի թե՝

– Դուք ծանոթ եք կացությանը, հետևապես ինձ մնում է միայն խնդրել Մեծն Բրիտանիայի անմիջական միջամտությունը:

Ավելացրի, որ ես արդեն տեսնվել եմ ֆրանսիական կառավարության ներկայացուցիչների՝ Լեյգի[176] և նույնիսկ Միլլրանի հետ և, տարաբախտաբար, նրանց հայտարարությունից տեսնում եմ, որ Ֆրանսիան մեզ օգնելու անկարող է:

Սըր-Ջոն-Տիլլի միջամտեց՝ ասելով.

– Մենք էլ անկարող ենք: Մեր կացությունը, գիտեք, շատ դժվար է. զորք դրկել չենք կարող: Բայց ի՞նչ եք կարծում, ի՞նչպես կարելի էր օգնել Հայաստանին:

Ես. – Տրապիզոն–Էրզրում գծի անմիջական գրավումով: Սա կստիպի քեմալիստներին անմիջապես ետ քաշվել: Եվ դրա համար մեծ զորք հարկավոր չէ:

Սըր-Ջոն-Տիլլին ինձ հետ համաձայն չէր: Նրա կարծիքով ձմռանը անհնարին է Տրապիզոն–Էրզրում գիծը գրավել և առհասարակ Դաշնակիցներն այդ չեն կարող անել: Զորք չկա, դրամ չկա:

Ես. – Այս իմ առաջարկի իրագործման համար հայերը պատրաստ են իրենց մեծագույն ճիգը թափել: Ես հավատացած եմ, որ եթե Անգլիան այսօր հանձն առնի մի արշավանք կազմակերպել, հավատացած եմ, որ 10-15 հազար հայ կամավորներ կարելի է ունենալ արտասահմանի հայ գաղութներից, մասնավորապես Ամերիկայից: Հավատում եմ, որ դեռ կան սրտի տեր օտարականներ ևս, որոնք կերթային այդ բանակը: Եվ որպեսզի առիթ չտրվի Եվրոպայի ծայրահեղ դասերին "իմպերիալիզմ" ճչալ, կարելի էր, օրինակ, այս բանակը անվանել «խաղաղության բանակ», որ կմտնի Անատոլիա՝ պարզապես կռվող ցեղերին ու կողմերին

---

[174] *Արտաքին Գործոց նախարարություն:*

[175] *Պետության ենթաքարտուղար:*

[176] *Հավանաբար վերոնշյալ Լեյդը և Լեյգը նույն անձն է:*

խաղաղեցնելու համար՝ տալով յուրաքանչյուրին իր տեղը: Ես կավելցնեմ, որ նույնիսկ նյութական օժանդակություններ [մեկ բառ՝ *անընթեռնելի*] հայերը կանեն: Գուցե այդ բանակը կարող լինի գործել հանուն Ազգերի Լիգայի, եթե Անգլիան չկամենա միջամտել:

Սըր-Ջոն-Տիլլի – Այդ գաղափարը ուշադրության արժանի է (նա նոթագրեց): Ես կխոսեմ Լորդ Քըրզընին:

Ես. – Խնդրում եմ չմոռանալ, որ թուրքերի և բոլշևիկների նպատակն է՝ Հայաստանի վրայով իրար ձեռք մեկնել և, եթե այդ նրանց հաջողվի, այն ժամանակ Մոսկվայից մինչև Միջերկրական միապաղաղ կիշխեն թուրք-բոլշևիկները: Մի՞թե սա համապատասխան է Դաշնակիցների և մասնավորապես Անգլիայի շահերին: Չէ՞ որ Անատոլիայում շուտով Դաշնակիցները կարող են գործ ունենալ արդեն ոչ միայն քեմալիստների, այլև բոլշևիկների հետ: Եթե նույնիսկ բնավ Հայաստանի հարցը չլիներ, միշտ կմնար Մերձավոր Արևելքի հարցը, Թյուրքիայի խաղաղեցման հարցը Դաշնակիցների համար, Սևրի դաշնագրի իրագործումը:

Սըր-Ջոն-Տիլլի. – Մուստաֆա Քեմալը չի կարող մեզ արգիլել իրագործել Սևրի դաշնագիրը ո՛չ Միջագետքում, ո՛չ Զմյուռնիայի շրջանում, ո՛չ Թրակիայում և ո՛չ Նեղուցների գոնայում: Հայաստանի վրա քալելը նրանց չի կարող ազատել Սևրի դաշնագրից: Մենք արդեն իսկ Կ.Պոլսում ձեռնարկել ենք թյուրք նոր բանակի կազմակերպության, որ մեզ կաջակցի իրագործելու Դաշնագիրը: Հավատացեք ինձ, որ Քեմալն անզոր կլինի մեզ արգիլելու:

Ես. – Որքան տեսնում եմ, դուք նպատակ ունիք ամեն տեղ իրագործել Դաշնագիրը, բացի Հայաստանից: Այսպիսով երկու անգամ զրկվում է Հայաստանը. մեկ՝ զինադադարի կնքմանը, երբ Հայաստանի գրավումը մոռացվեց, մեկ էլ՝ այժմ:

Սըր-Ջոն-Տիլլի. – Հայաստանը նույնպես կօգտվի, երբ հաջող լինինք Դաշնագիրն իրագործել հիշածս վայրերում: Ձեզ մնում է քաշ տալ թյուրքերի հետ, մինչև մի որոշ ժամանակ: Մենք պատրաստ ենք ձեզ տալ նորից պետք եղած քանակով ռազմամթերք և վառելիք երկաթուղիների համար: Հուսահատվելու չեք:

Վերջում խոսք բաց արի այն թղթի մասին, որով Foreign Office-ը մեզ առաջարկում էր ֆինանսական խորհրդական, համաձայն Խատիսյանի հայտնած ցանկության:

Ես ասացի, որ մեր կառավարությունը հակառակ հրահանգ չի

տվել, միայն ներկա ծանր պարագաներում, երևի, դժվար կլինի մեր կառավարության համար այդ խնդրով զբաղվել: Համենայն դեպս, ասացի, ես Բրիտանական կառավարության այդ սիրալիր առաջարկը անմիջապես հայտնեցի մեր կառավարության և սպասում եմ պատասխանի: Ես անմիջապես ավելացրի, թե քանի որ Բրիտանական կառավարությունը այդքան բարյացակամորեն մեզ խորհրդական է առաջարկում, արդյոք չէ՞ր վերցնի Հայաստանի մանդատ:

Սըր-Ջոն-Տիլլին վճռապես բացասական պատասխան տվեց:

Հաջորդ օրը, նոյեմբեր 13-ին, ես տեսնվեցի Արևելյան Գործերի դիրեկտոր Օսբորնի հետ:

Նյութը նույնն էր գրեթե, և պատասխանը՝ նույնը: Միայն թե՝ երբ ես ակնարկեցի բրիտանական շահերին Հայաստանում, Օսբորն պատասխանեց.

– Հայաստանում մենք միայն մարդասիրական տեսակետից կարող ենք գործել, այլ շահ չունենք: Եվ եթե իշխանությունը իմը լիներ, ես կհեռացնեի մերոնց և՛ Միջագետքից, և՛ Պարսկաստանից:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԼՈՐԴ ՐՈԲԵՐԹ ՍԵՍԻԼԻ ՀԵՏ

Նոյեմբեր 18, 1920
Ժընև

Լոնդոնից նոյեմբերի 16-ին շտապով Փարիզ և այնտեղից էլ նոյեմբերի 17-ին Ժընև մեկնեցի Ազգերի Լիգայի Համաժողովի համար: Եվ հաջորդ օրն իսկ տեսակցություն խնդրեցի մեր հայտնի բարեկամ Լորդ Ռոբերթ Սեսիլից: Իր քարտուղար Պ. Տյուրմեր իսկույն ինձ լուր տվեց, որ Լորդը ինձ կսպասի նույն օրը ժամի $3^1/_2$ ժողովից հետո:

Երկրորդ անգամն էի տեսնում Լորդին, ու նա դարձյալ շատ սիրալիր ու չափազանց ուշադիր էր դեպի մեր վիճակը: Հրավիրել էր նաև իր մի քանի խորհրդականները: Հարցրեց Հայաստանի դրության մասին:

Ես համառոտակի տեղեկություններ տվի: Պատմեցի մեր զորքի կրած ձախողանքի պատճառը ու արդի կացությունը, և ավելացրի, որ մեր հույսը իր վրա է և որ միայն արագ զինվորական միջամտությամբ կարելի էր մեզ օգնել դուրս գալու այս ծանր կացությունից:

Նա հարցրեց, թե ո՞ր տեղից կարելի է միջամտել և ո՞րքան զորքով:

Ես. – Միջամտելու երկու կերպ կա՝ կամ Բաթումի վրայով, երկաթուղով Հայաստան, կամ Տրապիզոն–Էրզրում գիծը գրավելով, ինչ որ պիտի ստիպեր թուրքերին ետ քաշվել:

Սկսեցինք այդ կետերը նայել քարտեզի վրա:

Լորդ Սեսիլ. – Որքա՞ն զորք հարկավոր կլինի:

Ես. – Ոչ ավել քան 25-30 հազար, որի կազմության մեջ հայերը կարող են բավական խոշոր մասնակցություն ունենալ 10-15 հազար մարդով:

Լորդ Սեսիլ. – Ես հավատում եմ, բայց դրամ չկա: Դժվարին հարցը սա է:

Ես. – Գուցե Ամերիկան տար: Հայերն էլ կօգնեին մասնավոր հանգանակությամբ: Գուցե փոխառություն աներ որևէ պետություն:

Լորդը թերահավատում էր նյութականի համար:

Լորդ Սեսիլ (խոսքը փոխելով). – Ես Ձեզ մի թուղթ կկարդամ, ասացեք Ձեր կարծիքը:

Եվ նա կարդաց մի ծրագիր, որ ասաց, թե կուզեր առաջարկել Ազգերի Լիգային: Համաձայն դրան՝ 1) Ազգերի Լիգան ուլտիմատում[177] է տալիս հայերին ու թյուրքերին դադարեցնել կռիվը և 2) ետ քաշվել՝ թողելով չեզոք գոտա: Եթե որևէ կողմը չի հպատակվում, ա) նրա երկիրը ենթարկվում է պաշարման, բ) իսկույն գրավվում է Կ. Պոլիսը: Բայց եթե կռիվը դադարում է, այն ժամանակ Ազգերի Լիգան միջամտում և հարթում է խնդիրը:

Ես պատասխանեցի, որ այս բոլորը առանց բանակի անհնարին է և որ թյուրքերը միայն դրանով կքաշվեն ետ:

Նորից խոսքը դարձավ բանակ կազմելու հնարավորությանց մասին: Լորդ Սեսիլ ասաց, որ ինքն այդ նպատակով կանչել է Լոնդոնից գեներալ (զորավար) Մորիսին:

Այն ժամանակ ես պատասխանեցի, որ գուցե լավ լիներ կանչել և մեր զինվորական խորհրդական զոր. Կորգանյանին:

Միտքս շատ հաճելի եղավ: Լորդն առաջարկեց ինձ իսկույն

177 *Վերջնագիր, վերջնապահանջ:*

հեռագիր պատրաստել, որ ինքը իր միջոցներով կհաղորդի 1-2 ժամում Փարիզ:

Արդարև, հեռագիրը տվի և հետո իմացա, որ հասցրել էին մեր զորավարին նույն երեկո: Ես պատասխան ստացա, որ զորավարը ճամփա է ընկել հաջորդ առավոտ, 19-ին նոյեմբեր, Ժընև լինելու համար:

Բ.[178] ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԼՈՐԴ ՐՈԲԵՐԹ ՍԵՍԻԼԻ ՀԵՏ

19 Նոյեմբեր, 1920
Ժընև

Այսօր, զոր. Կորգանյանի ընկերակցությամբ երկրորդ անգամ գնացի Լորդ Սեսիլին տեսակցության: Խորհրդակցության նյութն էր Տրապիզոն անելիք դեսանտը:

Զորավարը, իբրև քաջածանոթ այդ շրջաններին, երկարորեն բացատրեց և համոզեց Լորդ Ռոբերթ Սեսիլին, որ դեսանտը հնարավոր է նույնիսկ ձմռանը և որ Ռուս բանակը այդ կողմերը ձմռանը գործեց վերջին պատերազմին:

Որոշվեց, որ զոր. Կորգանյան հանդիպի մեզ մոտ անգլիացի զորավար Մորիսին, որ Լորդ Սեսիլի հրավերով եկած էր Լոնդոնից:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԶՈՐ. ՄՈՐԻՍԻ ՀԵՏ

Նոյեմբեր 21

Մեզ մոտ եկավ զոր. Մորիս: Զրույցը տևեց մի ժամ: Նյութը նույնն էր, ինչ որ լսեցի Ռոբերթ Սեսիլի հետ:

---

178 *Այսինքն՝ Երկրորդ:*

1921

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՕՍԲՈՐՆԻ ՀԵՏ

Փետրվար 22, 1921
Լոնդոն

Օսբորնին տեսա այսօր՝ հայտնելու համար, որ իր լսածը՝ Հռոմում իբր կայանալիք Պան-Արմենիեն կոնֆերանսի մասին, թյուրիմացություն է, և որ պր. Խատիսյան գալիս է մեր հրավերով՝ պարզապես, ճշգրիտ տեղեկություններ բերելու համար իրերի արդի կացության մասին Հայաստանում:

Այնուհետև մեր զրույցն անցավ Հայաստանի ապագային: Եվ Օսբորն, ի մեծ զարմանս իմ, հայտարարեց, թե հայերի շահը պահանջում է ձեռք քաշել Թյուրքաց Հայաստանից և պահանջել Կիլիկիան, ուր և՛ հաստատվել՝ պետությունում կազմելու հույսով:

Ես ցավս հայտնեցի այս հայտարարության առթիվ և խնդրեցի պարզել, թե ի՞նչն է դրդապատճառը այսքա՜ն ծանր առաջարկի:

Օսբորն. – Պատճառը պարզ է: Հայաստանում հայ չկա: Ինչո՞վ եք ուզում այնտեղ պետություն կազմել:

Ես. – Սևրի դաշնագրի ստորագրությունից հետո չէ, որ հայերը նվազեցին այնտեղ: Եթե պետությունները հնար գտան այդ Դաշնագիրը կազմել ու ստորագրել, ասել է թե՝ նրանք մեր իրավունքն էին նկատում այդ հողերը: Այդ երկրում հայ չկա, և Դուք գիտեք թե ինչու: Բայց կոտորածից ազատած 300 հազար հայությունը սպասում է Կովկասում և մոտ 500 հազար էլ աշխարհի չորս ծայրերում: Սրանց հուսով է, որ կազմվեց Սևրի դաշնագիրը, և սրանք սպասում են անհամբեր երկիր դառնալու:

Օսբորն. – Ո՞ր մասը կդառնա:

Ես. – Խոշորագույն մասը:

Օսբորն. – Չեմ կարծում: Մանչեստրի, Լոնդոնի, Փարիզի հարուստ հայերը շահ չունին ավեր երկիր դառնալու:

Ես. – Գիտեմ, դարձողները նրանք չեն, այլ աշխատող, գեղջուկ ժողովուրդը:

Օսբորն – Գեղջուկներով պետություն չի շինվի:

Ես. – Գիտեմ, մյուսները կտան իրենց մտքերը: Վերջապես, մեր ժողովուրդը ստեղծագործող է, մեր գեղջուկը մեր երկրի աղն է, հիմնաքարն է: Փորձը ցույց կտա:

Օսբորն. – Ո՞վ պիտի թշի Մուստաֆա Քեմալին՝ հայերին տեղ տալու համար:

Ես. – Դաշնակիցները պարտական են այն զոհերի հանդեպ, որ մենք հանձն առինք:

Օսբորն. – Կովկասա-Հայաստանը բոլշևիկ է այժմ: Թյուրքական հողերը նրան կցելով՝ մենք զորացրած կլինենք ռուսներին:

Ես. – Բայց եթե դուք այդ նահանգները թողնեք թյուրքերին, կարծու՞մ եք, որ ռուսները կխնայեն թյուրքերի սիրուն աչքերի համար: Մի մոռանաք, որ 1916 թվի գաղտնի դաշնագիրը որոշ իրավունքներ է տալիս ապագա Ռուսաստանին, և այդ իրավունքը շատ ավելի քիչ կարժենա, եթե ռուսների առաջ լինի մի բարեկամ հայ պետություն, քան մի հին թշնամի՝ Թյուրքիան:

Օսբորն. – Այո, իրավունք ունիք այս կետում,– ասաց նա մտածկոտ:– Կարծեմ Պոլիսն էլ մեջն էր այդ Դաշնագրով հատկացված Ռուսաստանին:

Ես. – Այո՛, Պոլիսն էլ: Եվ դուք թողնելով մեր հայ վիլայեթները Թյուրքիային, այս ամբողջ հարցը բաց եք անում: Ես չեմ հասկանում, պրն. Օսբորն, այս զրույցի խորհուրդը: Մենք գուցե միամտորեն միշտ կարծել ենք, թե Բրիտանական շահերին հակառակ է ռուսների վերահաստավիլը Կովկասում: Բայց այս բոլորից ես դժվարանում եմ եզրակացություն անել:

Օսբորն. – Իհարկե, մեր շահերին դեմ է ռուսների երևալը Կովկասում: Բայց ի՞նչ արած, երբ դուք, երեք ժողովուրդներդ, չկարողացաք ֆեդերացիա կազմել ու ամրանալ, վրացիք արգելք եղան:

Ես. – Միայն վրացիք չեն պատճառը, նաև Դաշնակիցների անհոգությունը: Սակայն, անհնարին չէ այժմ փորձել: Հայաստանի կազմակերպումը մեծ քայլ կլինի դեպի ֆեդերացիա: Առանց Հայաստանի, ճամփան լայն կբացվի ռուսների համար:

Օսբորն. – Չգիտեմ, գուցե, բայց Հայաստան ստեղծել անհնարին է, և պետք է դուք դիմեք Կիլիկիա:

Ես. – Պ. Օսբորն, մեր ժողովուրդն այդպես հեշտ չի հրաժարի իր մոտ 3000 տարվա հայրենիքից, քաղաքակրթությունից:

Օսբորն. – Որ դուք չկարողացաք պաշտպանել:

Ես. – Պաշտպանեցինք մինչև այս պատերազմը, երբ մեր հույսը դրինք Դաշնակիցների վրա: Եվ թող մեզ օգնեն Դաշնակիցները, կտեսնեք, որ ինչպես կպաշտպանենք և կվերաշինենք երկի-

ը: Լավ չէ, որ գերման Chiffon de papier-ն[179], որի դեմ ծառացան Դաշնակիցները հինգ տարվա պատերազմով, վիճակվի Դաշնակիցների ակտին, Սևրի դաշնագրին:

Օսբորն. – (խոսքը փոխելով) Սակայն, Դուք և Պողոս Փաշան համաձայն չեք երևում: Նա պնդում է Կիլիկիայի վրա, Դուք՝ Մեծ Հայաստանի:

Ես. – Ոչ, մենք բոլորովին համերաշխ ենք: Ինձ համար նույնպես կա Կիլիկիայի Խնդիր, բայց դա մեր հայության ապահովության խնդիր է թյուրք ռեժիմի տակ: Դուք գիտեք, որ փոքրամասնության որևէ դաշնագիր չի կարող ստիպել թյուրքերին խնայել հայ ազգաբնակությունը, եթե չհաստատվի մի հատուկ ռեժիմ, որ ապահովեր մեռնոց կյանքը, պատիվը, վաստակը, մի խոսքով՝ քաղաքակրթությունը: Եվ այս է, որ մենք պահանջում ենք, ես ու Փաշան:

Օսբորն. – Ոչ, վստահեցնում եմ Ձեզ, որ ամերիկացի հայասերներ կան այստեղ, որոնք խոսում են Կիլիկիայի մասին հիշածս մտոք, և Փաշան նրանց հետ է և ոչ Ձեզ հետ:

Ես. – Ամերիկացիք չեն, որ մեր ապագան ու բախտը պիտի վարեն: Ինչ վերաբերում է Պողոս Փաշային, ես պատրաստ եմ նրա հետ նորից գալ այստեղ Ձեզ ապացուցանելու համար, թե մենք միանգամայն համերաշխ ենք մեր պահանջների մեջ, որ է՝ Սևրի դաշնագրի իրագործումը Մեծ Հայաստանի վերաբերմամբ և Կիլիկիայում հատուկ ռեժիմ:

Օսբորն. – Հավատացնում եմ Ձեզ, Պողոս Փաշան Ձեզ հետ համամիտ չէ:

ԶՐՈՒՅՑ ՊՈՂՈՍ ՓԱՇԱՅԻ ՀԵՏ

Փետրվար 22, 1921
Լոնդոն

Այսօր պատմեցի Պողոս Փաշային իմ տեսակցությունը Օսբորնի հետ և մասնավորապես այն, թե նրա կարծիքով մենք համերաշխ չենք, թե ինքը պատրաստ է հրաժարվել Մեծ Հայաստանից՝ Կիլիկիան ունենալու համար:

Պողոս Փաշա. – Օսբորնի ասածը աբսուրդ (անհեթեթ) է: Երբեք որևէ հայ աշխարհում չի համարձակվի հրաժարվել

[179] *Թղթի կտոր:*

հայկական վիլայեթներից, ես ևս՝ առավել: Ես Օսբորնին ասել եմ, խոսել եմ, նա նույն բաներն ինձ ասաց, բայց ես երբեք չեմ ասել, թե պատրաստ եմ հրաժարվել Մեծ Հայաստանի թյուրքական գավառներից:

ՄԻԱԲԱՆՎԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՄ

24 փետրվար, 1921
Լոնդոն

Այսօր առաջին անգամ հավաքվեցինք Պողոս Փաշայի մոտ Délégations Arméniennes Réunies[180] նիստին կարդալու Համաժողովին ներկայացնելիք մեր հուշագիրը:

Երկու թուղթ կար պատրաստված. մեկը՝ մերը և մյուսը՝ Պողոս Փաշայի գրածը:

Կարդացինք նախ՝ երկրորդը: Այստեղ մասնավոր վեճի նյութ եղավ Փաշայի գրածի այն մասը, որ վերաբերում էր Կիլիկիային: Այդ գրությամբ պահանջվում էր թյուրքերին ձգված Կիլիկիայում տեղական վարչական ինքնավարություն Ֆրանսիական հովանու տակ, իսկ Ֆրանսիային ձգված մասում ինքնավարություն հայերի:

Մենք դիտել տվինք Փաշային, որ այս կերպով, առանց որևէ արդյունքի հույսի Կիլիկիայում, մենք կթուլացնենք Մեծ Հայաստանի թեզը, որովհետև միաժամանակ մենք պահանջում ենք և՛ Կովկասյան Հայաստանը, և՛ Թյուրքաց Հայաստանը, և՛ Կիլիկիայի երկու մասերը: Ավելացնենք նաև, որ եթե հեռավոր հիմք կա վարչական ապահովություն խնդրելու թուրքական Կիլիկիայի համար, մենք սակայն շատ պիտի վշտացնենք ֆրանսիական կառավարությունը, եթե այստեղ, Լոնդոնի Համաժողովից պահանջենք ֆրանսիական Կիլիկիայում ինքնավարություն մտցնել: Ավելի լավ է այդ խնդրել առանձին ֆրանսիական կառավարությունից:

Փաշան համառեց: Պետք եղավ երկար համոզել, որ կարողանանք դուրս ձգել ֆրանսիական Կիլիկիային վերաբերյալ մասը: Մնացածն էլ լրացրինք ու սրբագրեցինք մեր թղթի համաձայն և ամբողջը ստորագրեցինք երկսով և ղրկեցինք Conseil Supréme-ին:

---

[180] *Հայ Միացյալ՝ Միաբանված Պատվիրակություններ:*

ԼՈՆԴՈՆԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԱՌԱՋ

Փետրվար 26, 1921

Լոնդոն

Երեկ ժամը 11-ին ես ու Փաշան ներկայացանք Conseil Supréme-ին, Foreign Office-ի մեջ:

Նախագահում էր Լորդ Քըրզընը, ունենալով իր հետ Vansittart-ը: Ֆրանսացվոց կողմից ներկա էին Berthelot և Camerer, Իտալացվոց կողմից՝ Count Sforza և Galleli, Ճապոնի[181] կողմից՝ Conte Hayashi: Մեզ հետ էր զոր. Բագրատունին, որի մասին Vansittart-ը հայտնեց Լորդ Քըրզընին և նա համաձայնվեց. իսկ Մալթում, ըստ իր սովորության, նույնպես ներս սողոսկեց Փաշայի ետևից:

Նիստը բանալով՝ Լորդ Քըրզընը հայտարարեց հետևյալը. –

– Ստեղծված նոր հանգամանքների շնորհիվ, Գերագույն Խորհուրդը, Արևելյան Խնդիրը քննության նյութ դարձնելով, հարկ է տեսնում լսել և Հայ Պատվիրակության կարծիքը Հայաստանի մասին: Կուզեի գիտնալ թե (դիմելով Պողոս Փաշային) Դուք ի՞նչ մարմնի և կամ ի՞նչ կազմակերպության անունից պիտի խոսեք:

Փաշան պատասխանեց մասնավորապես հետևյալը. –

– Մինչև զինադադարը ես միանակ ներկայացնում էի Հայկական Դատը և հետո, երբ Կովկասյան Հայաստանը անկախ հայտարարվեց, պրն. Ահարոնյան եկավ որպես նորակազմ պետության ներկայացուցիչ, և մենք միասին պաշտպանեցինք մեր Դատը: Այժմ էլ մենք մեր երկու պատվիրակությունները ներդաշնակել ենք. **ես ներկայացնում եմ թրքահայերին և պրն. Ահարոնյանը ռուսահայերին և նախագահը ես եմ»:**

Այս հայտարարության փաստական կոպիտ ու դիտավորյալ անճշտությունը ստիպված եղա տանիլ Գերագույն Խորհրդի առջև, անմիաբանության առիթ չտալու համար: Մեր երեք միջնորդ բարեկամները, որոնց կարող էի հաղորդել այս փաստը, կհուսամ, թե այժմ կհասկնան իմ բոլոր երկյուղներն ու կասկածները, որ ես արտահայտել էի այս առթիվ:

Ապա Փաշան գրպանից հանեց մի ծալ թուղթ և սկսեց կարդալ իր Exposé-ն[182] ֆրանսերեն, որի միտքը մոտավորապես հետևյալն էր:

[181] *Ճապոնիա:*

[182] *Էքսպոզե (ֆրանս.) – համառոտ շարադրանք, հաշվետվություն՝ ընթացիկ քաղաքականության (հիմնականում արտաքին) հարցերի:*

Այս առիթը և այս ժողովը խորապես հուզում է նրան: Այդքան զոհողություններից հետո, հայ ժողովուրդը չի կարող հրաժարվել Սևրի դաշնագրով իրեն տրված իրավունքներից: Եթե բոլշևիկները գրավել են Կովկասյան Հայաստանը, սա չի կարող թուլացնել հայ պետություն կազմելու մեր իրավունքները, քանի որ Թրքա-Հայաստանի հողերը կան: Արդ՝ այդ հողերն են, որ կազմում են հիմունքը հայ պետության, նրանց հետ է կապված եղել Հայկական Հարցը իր ծագումով, թրքահայ ժողովրդի կրած մարտիրոսության պատճառով: Եվ եթե Կովկասյան Հայաստանի մասին խոսք եղավ հետագայում, այդ միայն նրա համար, որ Ռուսաստանի քայքայումի շնորհիվ կովկասահայերը իրենց հռչակեցին անկախ և միացան Թրքաց Հայաստանին: Այլապես Դաշնակիցները սկզբում չէին էլ կարող մտածել Կովկասյան Հայաստանի անկախության մասին, քանի որ այն պատկանում էր իրենց դաշնակից մեկ պետության՝ Ռուսաստանին:

Վերջում Պողոս Փաշան ավելացրեց, որ հայերի համար կա նաև Կիլիկիայի Խնդիրը: Հայտնի է, որ Կիլիկիայի մեծագույն մասը Սևրի դաշնագրով թողված է Թուրքիո և որ կազմում է, սակայն, *Ֆրանսիական տնտեսական գոտին:* Սևրի դաշնագրի իրագործումը պահանջելով մեզ համար՝ մենք չենք կարող միաժամանակ բողոքել այդ Դաշնագրի դեմ Կիլիկիայում: Բայց քանի որ թրքական ոչ մի վարչություն չի կարող ապահովել հայ ժողովրդի գոյությունը, մենք պիտի խնդրեինք և երախտագետ կլինեինք, եթե Ֆրանսա հաճեր ստեղծել տեղական մի ինքնավարություն, իր հովանու տակ:

Այն ժամանակ նախագահը դարձավ դեպի ինձ և հրավիրեց, որ իմ խոսքն ասեմ: Ես ասացի հետևյալը. –

«Ես խոսում եմ հանուն անկախ և միացյալ Հայաստանի՝ կազմված ու ճանչված Սևրի դաշնագրով, որը ստորագրել եմ, և հանուն այն Ազգային կառավարության, որ բոլշևիկյան ռեժիմը տապալելով՝ Հայաստանում այսօր վերստին իշխանության գլուխ է անցած: Անծանոթ են ինձ Դաշնակիցների նոր տեսակետները այն նոր հանգամանքների հետևանքով, որոնց մասին այստեղ խոսվում է: Հայաստանի կառավարության համար այս նոր հանգամանքները, եթե կան իսկ, ոչնչով չեն կարող խախտել Սևրի դաշնագրի տրամադրությունները հօգուտ Հայաստանի: Այդ դաշնագիրը կազմել են մեր Դաշնակիցները, հաշվի առնելով հայոց անծայր զոհաբերությունները և ծառայությունները

Դաշնակիցների գործին: Այդ դաշնագրից մենք չենք կարող հրաժարվել: Նա դարձել է հայ ժողովրդի շարքերը[183]: Ասում են – այդպես եմ կարդում լրագիրներում – թե Կովկասյան Հայաստանը դարձել է Սովիեթ, իսկ Թրքաց Հայաստանում արդեն հայ չկա, հետևապես Հայ Պետություն այլևս չի կարող լինել, թե Հայաստան չկա: Այս է մոտավորապես թրքերի թեզը:

«Թույլ տվեք ինձ, խնդրում եմ, ծանրանալ այս երկու կետերի վրա, որոնք մեզ համար կենսական են: Ես կարող եմ այստեղ վճռապես հայտարարել, որ եթե թրքական այդ դավաղիր արշավանքը տեղի չունենար դեպի Հայաստան, բոլշևիզմը ո՛չ Հայաստան կարող էր թափանցել և ո՛չ իսկ այսօր Վրաստանին սպառնալ: Թյուրք արշավանքը՝ դեպի Հայաստան կազմակերպած, դավաղրություն էր հատկապես Սևրի դաշնագրի դեմ, հետևաբար և՝ Դաշնակիցների դեմ: Եվ հասկանալի է, թե ինչու: Դեկտեմբեր 2-ին Ալեքսանդրապոլում, մեր պարտությունից հետո, մեր կառավարության պարտադրված պայմաններից առաջինը Սևրի դաշնագրից հրաժարվելու պահանջն է,– մի պայմանագիր, սակայն, որ իմ կառավարության 1920 նոյեմբերի 2-ի հրահանգով ես հայտարարում եմ չեղյալ, որպես բռնության տակ ստորագրված:

«Սևրի դաշնագրով Հայաստանի ստեղծումը թյուրք ազգայնականների համար անհանդուրժելի էր, քանի որ դա խափանում էր իրանց համաթուրանյան ծրագիրները: Կարսի և Ալեքսանդրապոլի գրավումով է, որ նրանք ճգնում են Հայ Աշխարհի միջով ձեռք մեկնել Թուրանյան աշխարհին, մինչև Ասիա, իրագործելու համար համաթուրանականությունն ու համաիսլամությունը: Եվ նույն այս նպատակով է, որ քեմալականներն այսօր ավերում ու կոտորում են Կարսի ու Ալեքսանդրապոլի շրջանները ճիշտ նույն մեթոդով, ինչով ավերած ու անմարդաբնակ են արած Թրքաց Հայաստանը: Բոլոր արու հայ ազգաբնակչությունը, իբր թե աշխատանքի պատրվակով, քշվում է Թուրքիո խորերը և ջարդվում ճանապարհին, նրանց կանայքն ու աղջիկները առևանգվում են, և այդ շրջաններում այլևս կանգուն ու շեն հայ գյուղ չի մնացել. թալանված է ամեն ինչ, ուտելիքից սկսյալ մինչև տնտեսության պիտանի ամենաչնչին իրը[184]:

«Հավատացած եմ, որ Դաշնակիցները թրքական այս

[183] *Charter (անգլ.) > Chartion (հուն.) – Խարտիա, իրավունք, կանոնադրություն, արտոնություն:*

[184] Իմ այս ասածները ճշտելու համար կխնդրեի մի միջազգային հանձնաժողով ղրկել տեղի վրա քննություն կատարելու: - Ա. Ա. (Ահարոնյանի նշումն է):

ոճրային ծրագիրները չեն սրբագործելու ևս՝ առավել այժմ, երբ հայ ժողովուրդը, հակառակ այն դժոխային պայմաններին, որոնց մեջ գտնվում է, նորեն միանգամ դեն է շպրտել Սովիեթ բեժիմը, որպես խորթ ու անհարազատ իր հոգուն, և վերահաստատել իր ազգային իշխանությունը:

«Կարծում եմ, որ այս փաստը բավական է՝ ապացուցանելու համար, որ բոլշևիզմը Հայ Աշխարհում հող չունի բնավ և ներմուծվել է բացառապես թրքերի հառաջխաղացման և բարբարոսության շնորհիվ: Ես ավելին կասեմ, բոլշևիզմը հող չունի Կովկասյան որևէ ուրիշ երկրի մեջ, և նա երբեք չպիտի կարողանա արմատ ձգել:

«Ես դառնում եմ Թրքա-Հայաստանի գավառներին: «Այնտեղ հայ չկա»,– ասում են թյուրքերը: Իրենք գիտեն սակայն, ուր են այդ հայերը, գիտեն, որ ջարդերով ու տարագրությունով փճացուցած են մեծագույն մասը, բայց բարեբախտաբար ոչ ամբողջ $1^1/_2$[185] միլիոնը, որովհետև նահատակների զավակներից ու եղբայրներից 300.000 հոգի պատերազմից ի վեր սպասում են Կովկասում՝ իրենց հայրենիքը մտնելու համար: Եվ նկատի առեք, որ եթե Թրքա-Հայաստանում այսօր հայ չկա, այնտեղ չկան և՝ մուսուլմաններ: Վերջին վիճակագրությամբ հաստատված է, որ մուսուլմանների թիվը հայկական վիլայեթներում 96.000-ից չէ անցնում, որի մեկ երրորդն իսկ թյուրք չէ, մնացածը՝ թյուրտ և ոչ-թյուրք ցեղեր: Եվ դրա հանդեպ՝ 300.000 թրքահայեր պատրաստ են Կովկասից Հայաստան մտնել, չհաշված դեռ այն հազարավոր հայերը, որոնք աշխարհի բոլոր ծայրերից աչքերը սևեռած՝ սպասում են՝ ե՞րբ կարող են իրենց երկիրը վերադառնալ:

«Սևրի դաշնագրի մեջ մի հոդված կա՝ 218-րդը, որով Դաշնակիցները իբր բացարձակ սեփականություն ձեռք են բերում Թյուրքիո այն հողերը, ուր թաղված են Դաշնակից բանակներից սպանվածներն ու մեռյալները այս պատերազմի ընթացքին, և այդ հողերը հայտարարվում են, որպես ամենեն նվիրական: Արդ, Կովկասի երկու միլիոն հայությունը, ի սփյուռս աշխարհի ցրված մեկ միլիոն հայությունը, նախկին Թյուրքիո գավառները դիտում են որպես 1.500.000 ազգակիցների գերեզմանը: Ինչպես որ Դաշնակիցները չկամեցան լքել իրենց մեռելներին, նույնպես և հայ ցեղը երբեք չպիտի կարողանա լքել իր մեծ ու նվիրական գերեզմանը:

[185] *Եղեռնի զոհերի՝ այստեղ և ներքոբերյալ թվերի փոքրիկ շփոթմունք կա:*

«Մենք հավատացած ենք, որ մեր Դաշնակիցները մեզ կտան մեր քանդված ու ավեր հայրենիքը[186]: Հայ ժողովուրդն սպասում է և, **եթե նորից հուսախաբ դառնա այս կողմից, նա կհետամտե այլ ճամբաներ, այլ հնարներ, այլ օգնություն, բայց երբեք չի հրաժարվի իր նվիրական հողերից:** Համենայն դեպս, ես հայտարարում եմ, որ եթե այս տրամադրություններից տարբեր կարգադրության խոսք լինի, ես պիտի խնդրեմ հնար տալ ինձ հարաբերության մեջ մտնելու իմ կառավարության հետ»:

Դրանից վերջ, Լորդ Քըրզըն, որ խնամքով նոթեր էր առնում, երբ ես փաստեր ու թիվեր էի տալիս, չնայած որ ամեն ինչ գրվում էր Sténographie-ով[187], դարձավ ինձ հետևյալ հարցով.

– Արդյոք դուք տեղեկություն ունի՞ք այն սահմանների մասին, որ թուրքերը պարտադրել են Ալեքսանդրապոլում՝ հայ կառավարության;

Ես պատասխանեցի.

– Այո: Մուտավոր կերպով սահմանն անցնում է մինչև Արփաչայ գետը, այնուհետև մինչև Արաքս կայարանը երկաթուղի, ապա Արաքս գետով անցնում է մինչև Նախիջևան: Սուրմալուն հայտարարվում է plébiscite-ի[188] ենթակա, իսկ Նախիջևանի շրջանը՝ Թուրքիո protectorat-ի[189] տակ:

Դարձյալ Լորդ Քըրզըն հարցուց ինձ.

– Ձեր exposé-ի մեջ հիշատակեցիք Ալեքսանդրապոլի դաշնագիրը, որ ձեր օրինական կառավարությունն է ստորագրել թրքերի հետ: Հայաստանի Պատվիրակությունը ի՞նչ ունի ասելու այդ դաշնագրի իրավական արժեքի մասին:

Այս հարցը, ինչպես և շատ ուրիշ հարցեր, Լորդ Քըրզընը դնում էր խիստ բարյացակամորեն, հոգուտ մեզ պատասխան ստանալու համար:

Ես պատասխանեցի.

– Այդ դաշնագիրը մենք ժխտում ենք ամենավճռական կերպով, որպես չարաչար բռնության տակ ստորագրված: Եվ սա միայն Հայաստանի Պատվիրակության կարծիքը չէ, այլ նաև մեր օրինական կառավարության, որ Կարսի անկումից անմիջապես

186 Եվ այդ իրավունքը ազատության, հայ ազգը ձեռք է բերել հինգ դարերի տառապանքի, 30 տարվա պայքարի և վեց տարվա պատերազմի գնով – Ա. Ա. (Ա. Ահարոնյանի նշումն է):

187 Sténographie *(ֆրանս.) - Սղագրություն:*

188 Plébiscite - *Համաժողովրդական քվեարկություն, ռեֆերենդում:*

189 *Հովանավորչություն (լատ.) – Ըստ միջազգային համաձայնագրի՝ որևէ պետության՝ մի այլ պետության հանդեպ «պաշտպանության» իրավունքի հանձնում՝ միաժամանակ տալով իրավունք՝ ղեկավարելու հովանավորյալ պետության ֆինանսները, տնտեսությունը, արտաքին քաղաքականությունը:*

հետք, նախատեսելով գալիքը, նոյեմբեր 2 թվով ինձ հրաման էր տալիս գրավոր, թե քանի որ մեր աշխարհը չորս կողմից պաշարված է թյուրք և բոլշևիկ թշնամիներով, կառավարությունը կարող է ստիպված լինել ծանր հանձնառումներ ստորագրելու: Արդ՝ Պատվիրակության և մեր Դաշնակիցներին է մնում, ասում էր պաշտոնական թուղթը, չընդունել մեր ստորագրելիք թուղթը, չընդունել մեր ստորագրելիք այդ ծանր պայմանները և վերահաստատել նախկին դրությունը: Ահա թե ինչու՝ ես վերստին հայտարարում եմ, որ Ալեքսանդրապոլի դաշնագիրը գոյություն չունի մեզ համար և հավատացած եմ, որ մեր Դաշնակիցների համար էլ նա չեղյալ մի փաստաթուղթ է, որպես բռնության տակ ստորագրված:

Սրանից հետո, Լորդ Քըրզըն մեզ դարձավ մի վերջին հարցով.

– Հայտնի՞ է Ձեզ, որ Սան Ռեմոյի քոնֆերանսի[190] որոշումով Միացյալ Նահանգների Նախագահին է հանձնված Հայաստանի և Թյուրքիո միջև սահմանը գծելու գործը: Դուք գիտեք անշուշտ, որ այդ սահմանները, շնորհիվ մի շարք հանգամանքների, այսօր անգործադրելի են: Ի՞նչ է կարծում Հայ պատվիրակությունը, որո՞նք կլինեին գործադրելի սահմաններ այս նոր պայմաններում:

Եվ մինչ Լորդ Քըրզընի այդ ասածը, ըստ սովորության անգլերենից թարգմանում էին մեզ համար, ես կռացա և Փաշայի ականջին ասացի.

– Լավ է, որ մենք ժամանակ խնդրենք պատասխանելու այս հարցին: Սա փափուկ խնդիր է:

Փաշան կտրուկ տոնով ինձ առարկեց.

– Անկարելի է այդ: Մենք չենք կարող չպատասխանել այժմ և գրեթե անմիջապես,– և, առանց որ ես հնար ունենամ նորից միջամտելու, նա բարձրաձայն հայտարարեց հետևյալը,– Մենք գիտակցում ենք դժվարությունները և արդեն իսկ այդ պատճառով էր, որ մենք Տրապիզոնը չենք պահանջել և նույնիսկ Նախագահ Ուիլսընին այդ մասին հայտնել ենք: Այժմ ևս մենք պատրաստ ենք զիջել Տրապիզոնը:

Եվ դարձյալ ինչ-որ նախագահության[191] ասաց, որից կարելի էր այն տպավորությունը ստանալ, թե մենք հրաժարվում ենք և՛ Տրապիզոնից, և՛ նույնիսկ Երզնկայից:

Այնուհետև խոսք առավ Բերթըլոն Կիլիկիո մասին և ասաց.

– Մենք Կիլիկիան պիտի թողնենք, բայց կարող եմ հայտա-

190 *Կոնֆերանս:*

191 *Հավանաբար տպագրական վրիպակ է՝ նախադասություն:*

բարել, որ Ֆրանսան, իր զորքը քաշելեն առաջ, անպատճառ ձեռք կբերե հաստատուն երաշխիքներ՝ ապահովելու համար քրիստոնյա և, ի մասնավորի, հայ փոքրամասնությամբ գոյությունն ու իրավունքները: Այնպես, ինչպես թուրք կայսրության բոլոր մյուս տարրերի իրավունքները: Իհարկե, ինքնավստահությունը ֆրանսական կառավարության հայացքներում չի մտնում:

Սա, ըստ երևույթին, ֆրանսիական կառավարության վերջին և պաշտոնական հայտարարությունն էր, որ, տարաբախտաբար, շատ հեռու է մեզ գոհացնելուց, քանի որ Ֆրանսան հրաժարվում է մեզ համար որևէ բացառիկ իրավունք ճանաչելուց Կիլիկիո մեջ:

Փաշան խոսք առավ և ասաց.

– Պրն. Բերթլոն խոսեց Կիլիկիո հայ փոքրամասնության մասին: Սակայն, հայերը միշտ մեծամասնություն եղած են Կիլիկիայում: Ահա իմ առջևը դրված է մի գիրք, որ մոտերս կազմած է Ֆրանսացի մի տպա: Այդ գրքի մեջ ես գտնում եմ թրքական 1912-ի պաշտոնական վիճակագրությունը և գոհ եմ ասելու, որ անգամ թյուրքերը պաշտոնապես ընդունում են, թե մենք Ադանայի շրջանում մեծամասնություն ենք եղած:

Բերթլո, ի պատասխան, ասաց Քամերերին և վերջինս կարդաց այլ թվանշաններ, իրենց ասելով՝ նույնպես թյուրք աղբյուրից, ուր թյուրքերն են համարվում մեծամասնություն:

Այս անախորժ միջադեպով կնքվեց մեր ունկնդրությունը, որ տևեց 1 ժամ 10 րոպե:

Իտալական ներկայացուցչին՝ Կոմս Սֆորցային տեսած և հետը խոսած էի ժողովի սկիզբին, բայց ժողովի ընթացքին նա լուռ մնաց, ինչպես և Ճապոնի ներկայացուցիչ Կոմս Հայաշին:

Տպավորությունս այնպես է, որ Անգլիական կառավարությունը և մասնավորապես Լորդ Քըրզընը շարունակում են ուժգնորեն պաշտպանել Հայաստանը: Կարծում եմ, որ ստիպված կլինենք Ուիլսընի գծած սահմաններից քիչ ներս քաշվիլ: Խորապես հավատացած եմ, որ Ալեքսանդրապոլի այդ ոճրային դաշնագիրը ոչ մի Դաշնակից չպիտի ընդունի:

ՄԻԱԲԱՆՎԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՄ

Մարտ 2, 1921

Ներկա էին Պողոս Փաշա, Սինապյան, Պապաջանյան, Վարանդյան, Բագրատունի, Խատիսյան, Արարատյան և ես:

Նկատել տվի Պողոս Փաշային, թե Խաղաղության Համաժողովի առաջ իր exposé-ի մեջ նա ասաց՝ թե՝ «Պատվիրակությունները միացել են, և **ինքը նախագահ է**»: Մինչդեռ այդ ճիշտ չէ. ինքը միայն նիստերի նախագահն է, և այդպիսի հայտարարությունը կարող է թյուրիմացությունների տեղի տալ:

Փաշան պատասխանեց.

– Կամենում եք, ես մի նամակով ուղղեմ այդ անճշտությունը:

Ես պատասխանեցի.

– Այդ այժմ ավելորդ է, բայց կխնդրեի հետագայում այդ կարգի թյուրիմացություններից խույս տալ:

Երբ պիտի դուրս գայի, Փաշան նորից անհանգիստ կերպով ասաց.

– Հուսամ, Դուք Ձեր կողմից բան չեք գրի Conseil Suprême-ին, այլապես ինքս պատրաստ եմ գրել:

– Ոչ, – ասացի,– ինձ բավական էր այս հայտարարությունը:

Նկատել տվի նաև, որ մի այլ թյուրիմացություն Մալքոմի ներկայությունն էր «որպես պատվիրակ»: Այս անընդունելի է:

Փաշան պատասխանեց, թե Մալքոմը ինքն է մտել, նա չի հրավիրել:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՈՄՍ ՍՖՈՐՑԱՅԻ ՀԵՏ

(Արտաքին Գործոց Նախարար Իտալիայի)

Մարտ 5, 1921
Լոնդոն

Երեկ գնացի Carlton Hotel իմ բարեկամ C. Galli-ին խնդրելու, որ ինձ և Փաշայի համար տեսակցություն խնդրի Կոմս Սֆորցայից:

Փաշայի անունը տալուս պես՝ նա դժկամեց: Ես պնդեցի, որ նա անպատճառ ինձ ընկերանա:

– Դուք կներկայացնեք իրականությունը մը,– ասաց Գալլին,– մինչդեռ Պողոս Փաշան ոչինչ կներկայացնե:

Ես նորից պնդեցի՝ խնդրելով տեսակցություն երկուս համար: Գալլին համաձայնեց և քիչ հետո եկավ ինձ հայտնեց, թե տեսակցությունը կլինի հաջորդ օրը, մարտի 5-ին, առավոտյան ժամը 10.30-ին:

Կոմս Սֆորցան մեզ ընդունեց շատ սիրալիր կերպով: Եվ երբ

Փաշան ներողություն խնդրեց, որ մենք նրա կարճ ժամանակը խլում ենք, Կոմս Սֆորցան շատ վարպետ կերպով պատասխանեց.

– Ես միշտ ժամանակ ունիմ Հայաստանի պատվիրակների համար:

Մենք նորից շնորհակալ եղանք այդ սիրալիր խոսքերի համար:

Փաշան, առաջինը խոսք առնելով, ասաց, թե գիտնալով պ. նախարարի համակրությունը դեպի հայ ազգը, ինք չի կասկածում, որ այս կրիզի[192] օրերում նա մեզ կպաշտպանի:

– Ինձ համարում են թրքասեր,– ասաց Սֆորցան,– բայց խնդրեմ հավատալ, որ ես Հայկական Դատը լքող չեմ: Ե՛վ թյուրքերը, և՛ դուք հողային ընդարձակ հույսեր եք ունեցել, որ պետք է սղմել: Մնացածը հեշտ է:

Փաշան ուշադրություն հրավիրեց, որ մենք արդեն իսկ բավական զիջել ենք մեր նախնական պահանջներից: Բայց եթե հարկավոր է խաղաղության համար, մենք պատրաստ ենք նորից զոհեր հանձն առնել:

– Ես, – ասաց նա, – անցյալ օրը արդեն հայտարարեցի Տրապիզոնի համար, թե հրաժարվում ենք: Կարծեմ, սա ապացույց է, թե մինչև ի՞նչ աստիճան մենք պատրաստ ենք խաղաղության օժանդակել: Այժմ պետք է թյուրքերի վրա ազդել: Եվ այս է, որ խնդրում ենք Ձեզ:

Կոմս Սֆորցա. – Իրավունք ունիք: Ես արդեն իսկ ասել եմ թյուրքերին, որ նրանք պետք է նույնպես զիջող լինին ձեր հանդեպ: Այդ է պահանջում և՛ նրանց շահը: Հիմար մարդիկ չեն: Բեքիր Սամին շատ հասկացող մեկն է: Հուսամ, իմ խորհուրդները ապարդյուն չպիտի անցնին:

Ես խոսք առա.

«– Պ. նախարար, Ձեր ուշադրությունը թույլ տվեք հրավիրել երկու կետի վրա.

«1. Թյուրքերը հեշտ հայտարարություն են անում, բայց իրոք խույս են տալիս բուն հարցից. նրանք իրենց զրույցների մեջ միշտ նկատի ունին Կովկասյան Հայաստանը: Այս Ձեզ հայտնի է, թե մեզ համար տարբերություն չկա Հայաստանի երկու հատվածների մեջ: Բայց մենք գիտենք նաև, որ Հայկական Հարցի ծագումը կապված է Թյուրքաց Հայաստանի հետ, և նրա մասին է, որ խոսում ենք և նրանից է, որ բնավ չենք հրաժարվի: Այս է, որ

192 *Ճգնաժամ, բեկում, անկում:*

թյուրքերը պետք է հասկանան, ինչպես և՛ այն, որ եթե թյուրքերը խանգարեն Միացյալ Հայաստանը, դրանով նրանք կհեշտացնեն ռուսների հետագա առաջխաղացումը և փոքրիկ, թույլ Հայաստանի փոխարեն իրենց սահմանի վրա կունենան մի հզոր ու վտանգավոր դրացի, որի արժեքը թյուրքերը շատ լավ գիտեն վաղուց ի վեր: Թյուրքերը ահռելի ոճիրներ են գործել հայերի դեմ և քավել կարող են միմիայն զիջելով մեզ մեր արյունով ողողված մեր հողերը: Սա խնդրի բարոյական կողմն է: Կա և քաղաքականը: Առանց Թյուրքաց Հայաստանի մենք հետագայում շատ ավելի մեծ դժվարություններ կունենանք կազմակերպված Ռուսիո հետ, քան եթե Թյուրքաց Հայաստանը միացած լինի Կովկասյան Հայաստանին: Վերջին դեպքում մենք խորը հավատ ունինք, որ Հայաստանը կարող է մնալ ազատ: Նա կդառնա միջազգային դաշինքով ու իրավունքով ապահով մի պետություն: Հետևապես, մենք պետք է ունենանք, և պետությունները չպետք է զրկեն մեզ Թյուրքաց Հայաստանից, եթե վճռել են ազատ, անկախ Հայաստան ստեղծել: Միայն Միացյալ Հայաստանը կարող է կենսունակ լինել:

«2. Մենք, ինչպես ասաց Փաշան, պատրաստ ենք չափավոր զիջումներ անել, մեր սահմանները սղմել մի պայմանով, որ մնացածը մենք գրավենք առանց կռվի, որովհետև, ինչպես գիտեք, մենք մի կաթիլ արյուն իսկ չունինք թափելու: Մենք շատ ենք վախենում, որ Մուստաֆա Քեմալը ձևացնի զիջում, իսկ իր փոխարեն մի ուրիշը իր դերը խաղա Էրզրումում, ինչպես Կարա Բեքիր փաշան, կամ թե մեր դեմ հանեն զինված տեղական մուսուլմաններին»:

Կոմս Սֆորցա. – Ես ձեզ մեծ ուշադրությամբ լսեցի: Ձեր արգումենտներից մի քանիսը արդեն թյուրքերին ասել եմ, կհասկացնեմ մնացածը ևս, որոնք շատ հետաքրքիր են: Ես հույս ունեմ, որ թյուրքերը կհասկանան: Այդ իրենց շահն է: Իրավունք ունիք. պետք է այս խաղաղությունը վերջնական լինի և arrangement -ի[193] կառուցվածքի մեջ այլևս fossure[194] չլինի: Խնդրում եմ ինձ հավատալ, որ ես ձեզ հետ եմ, և որ իմ ջանքերը ապարդյուն չեն մնա:

---

193 *Arrangement (ֆրանս.) - Կարգավորում:*

194 *Հավանաբար վրիպակ է. կամ՝ forure (ճեղք, անցք), կամ՝ fouilles (խառնիճաղանջք):*

ՄԱՆՉԵՍՏՐԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մարտ 6, 1921
Լոնդոն

Այսօր Միաբանված պատվիրակությունը ողջունելու համար Մանչեստրի գաղութի կողմից հասան պ.պ. Յ. Գամբէրյան, Գ. Ֆնդկլյան և [անունը չկա] վարդապետ: Ողջունեցին պատվիրակությունը և վերջում իրենց ցավը հայտնեցին, որ Պողոս Փաշան, «առանց հատուցման, շտապել է հրաժարվել Տրապիզոնից»:

Փաշան բացատրեց, բայց նրանք մնացին չհամոզված, և այս պարագան Փաշային խիստ դառնացրեց:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՎԱՆԶԻՏՏԱՐԻ ՀԵՏ

Մարտ 5, 1921
Լոնդոն

Ճաշից հետո, այսօր Փաշայի հետ գնացինք այցի Վանզիտտարին: Նրա ասածներից պարզվեց, որ մեր Խնդիրը դեռ չի կարգադրված, և լուծումը կախված է ամբողջ Արևելյան Խնդրի լուծումից: Նա շատ մեծ արժեք էր տալիս Վրաստանի անցքերին:

– Եթե Վրաստանը ետ մղի բոլշևիկյան հարձակումը, ձեր հարցն այստեղ շատ հեշտ կկարգադրվի, քանի որ բոլշևիզմը ձեզ էլ չի սպառնա: Այլապես շատ դժվար է,– ասաց նա:

– Բայց Թյուրքաց Հայաստանը կա,– ասաց Փաշան,– մի՞թե չէ կարելի այնտեղ կապել մեր պետությունը:

– Թյուրքաց Հայաստանը, առանց Կովկասյան Հայաստանի, կատարյալ խիմերա է[195],– բացականչեց Վանզիտտարը,– առանց ժողովրդի պետություն չի լինի:

---

[195] *Քիմերա – Հունական դիցանուն (Chimaira)՝ հրաժայթք, առյուծի երախով, օձի պոչով, այծի իրանով – անհամատեղելի հատկանիշներով հրեշի: Փոխաբերաբար – անհնարին, անիրագործելի երազ, անիրականանալի ֆանտազիա:*

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՎԱՆԶԻՏՏԱՐԻ ՀԵՏ

Մարտ 11, 1921
Լոնդոն

Մի շաբաթ առաջ Փաշան ու ես խնդրած էինք Վանզիտտարից մեզ տալ Անգլիական կառավարության կարծիքը մեր և թյուրքերի ուղղակի բանակցության համար: Այսօր նա մեզ տեսակցության կանչեց և հայտարարեց հետևյալը.

1) Թյուրքերի հետ մեր անմիջական բանակցությունները համարվում են անօգուտ, անժամանակ: Հանգամանքների դասավորությունն է այդպես:
2) Հայաստանի մասին Գերագույն Խորհրդի որոշումը հետևյալն էր. – «Ազգերի Լիգայի Խորհուրդը նշանակում է մի Հանձնաժողով, որ կերթա տեղնոտեղը Հայաստանի և Թյուրքիայի սահմանները որոշելու: Այս Հանձնաժողովի վճիռները պարտադիր պիտի լինին երկու կողմի համար»: Թյուրք պատվիրակությունը այս առաջարկը, ինչպես և բոլոր մյուս առաջարկները հանձն առավ ներկայացնել Կ.Պոլսի և Անկարայի կառավարություններին, որովհետև ինքը իրավասություն չունի ընդունելու: Թյուրք պատվիրակությանը հասկացրված է, որ բոլոր առաջարկները, բոլոր փոփոխությունները Սևրի դաշնագրի հիման վրա, կազմում են մի ամբողջություն, և պիտի ընդունվեն, կամ մերժվեն միասին: Լլոյդ Ջորջը այս պայմանը հայտարարել է շատ վճռական շեշտով:

– Ուրեմն մենք դարձյալ պիտի սպասենք «Հունական օրացույց»-ին[196],– ասացի:

– Տարաբախտաբար, այո՛,– պատասխանեց Վանզիտտար,– իրապես որևէ լուծում չկա Արևելյան Խնդրի: Ե՛վ Գերագույն Խորհուրդը, և՛ թյուրքերը սպասում են Ռուսաստանում զարգացող անցքերին: Թյուրքերի մի մասը, չափավոր ու խոհեմ պահանջների կողմնակից, պատրաստ է ընդունել՝ վախենալով որ բոլշևիզմի խորտակումը իրենց դիրքը կթուլացնի. իսկ մյուս մասը հույսեր ունի և մնում է անհաշտ: Տեսնենք, թե ի՞նչ կասեն անցքերը:

---

[196] *«Մինչև հունական կալենդը (կաղանդը)» – արտահայտությունը գործածվում է մի որևիցե խոստում անորոշ ժամանակով տալու համար: Քանի որ հույները կալենդ չունեին, ուստի ժամկետն էլ դառնում է անորոշ:*

Փաշան, որ առավոտից շատ ուրախ էր թերթերում (Daily Telegraph) կարդալով այն մասին, թե 1) Թյուրքաց և Կովկասյան Հայաստան իրարից զատվում են և 2) Թյուրքաց Հայաստանում ստեղծվում է հայերի մի Home[197],– հարցրեց՝ թե որքա՞ն ճիշտ է այդ բոլորը և թե արդյոք ենթադրյալ Հանձնաժողովը միայն Թյուրքաց Հայաստանի՞ սահմանները պիտի գծի:

- Ոչ,– պատասխանեց Վանգիտտարը,– այդ Հանձնաժողովը գծելու է **ամբողջ** Հայաստանի սահմանները և՛ Կովկասում, որ նախատեսված էր Սևրի դաշնագրով: Իսկ Home-ը Թյուրքաց Հայաստանում կարող է կազմվել: Դա մի փորձ է դուրս շորթելու հայկական հողը թյուրքերից: Այնուհետև ինչ բովանդակություն ասես՝ կարելի է դնել Home-ի գաղափարի մեջ: Դա նույնպես պետություն է:

Մենք դուրս եկանք այս հայտարարությունից շատ ընկճված:

Այս հայտարարությունը Վանգիտտարը մեզ արեց Լորդ Քըրզընի կողմից պաշտոնապես:

ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹՅՈՒՐՔԵՐԻ ՀԵՏ

I

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ Պ. Գ. ԳՅՈՒԼՊԵՆԿՅԱՆԻ ԵՎ ՃԱՎԻՏ ԲԵՅԻ

Այսօր, մարտի 20-ին, Գյուլպենկյանը տեսնվել է Ճավիտ բեյի հետ: Զրույցի նյութը հայ-թյուրք համաձայնության կարելիությունն էր: Գյուլպենկյանը խոսել է «իր անունից և, ի միջի այլոց», թեև կասկածից դուրս է, որ Ճավիտ բեյը հասկացել է, որ խոսակիցը ներշնչված է:

Ճավիտ բեյը ասել է մոտավորապես հետևյալը: Թյուրքերը համաձայնության դեմ չեն, բայց առայժմ իրենք անկարող կլինեին գործնական քայլեր անել այդ ուղղությամբ. գնում են Անկարա տանելով Լոնդոնի առաջարկները: Ինքը կարծում է, թե Անկարայում որոշ թեթևություններ ձեռք բերել Ալեքսանդրապոլի և Կարսի մասին հնարավոր է, բայց գտնում է, որ վաղաժամ է խոսել Վանի և թյուրքահայ այլ գավառների մասին:

– Մենք էլ տաքգլուխներ ունինք, ինչպես և դուք, որոնք խոսք

197 *Տուն, օջախ:*

հասկանալ չեն ուզում: Եվ հետո՝ մեր Արևելյան բանակը գրեթե ամբողջապես հայկական վիլայեթներից է, դժվար կլինի այժմ նրանց հասկացնել ձգել այդ հողերը, ասելով, թե տրվելու են հայերին:

Ճավիտ բեյ ավելացրել է, թե շատ բան հնարավոր է հօգուտ հայերի, եթե կարելի է դառնալ Կովկասյան Հանրապետությունների Ֆեդերացիա – հայերը պիտի աշխատեն այդ նպատակով մոտենալ Աղրբեյջանին և Վրաստանին:

– Հայկական Հարց ասածն ի՞նչ է,– բացականչել է Ճավիտ բեյ:– Մի անապատ, որ մի կողմի տաքգլուխներ պահանջում են, մյուս կողմի տաքգլուխները մերժում են, ա՛յս է ամբողջը:

Գյուլպենկյանի տպավորությունն այն է եղել, որ թյուրքերը շատ էլ տրամադիր չեն զրուցելու և Լոնդոնի Համաժողովը նրանց դարձրել է պահանջկոտ ու անհաշտ:

Մարտ 20, 1921

Փարիզ

Այս զրույցից մի երկու օր հետո, Թափա Չերմոն ինձ հեռախոս արեց հարցնելու, թե չէի՞նք կամենա արդյոք տեսակցել թյուրք կարևոր անձնավորության հետ: Ենթադրվում է Բեքիր Սամին, որի մասին նա ինձ խոսել է Լոնդոն մեկնելուց առաջ: Որոշեցինք, որ Խատիսյանը, **իբրև ծանոթ**, տեսնվի Բեքիր Սամիի հետ:

II

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ Ա. ԽԱՏԻՍՅԱՆԻ ԵՎ ԲԵՔԻՐ ՍԱՄԻԻ

Մարտ 24, 1921

Փարիզ

Այսօր մարտի 24-ին Ա. Խատիսյանը, որպես վաղածանոթ, առանց պաշտոնական հանգամանքի, պատվիրակության անդամների և եկվոր ընկերների (Գ. Փաստրմաջյան[198], Ս. Արարատյան[199]) համաձայնությամբ տեսնվեց Բեքիր Սամիի հետ:

Անկարայի պատվիրակության շեֆն ասել է.

– Հայ-թյուրք վեճը լուծելու երկու ճամփա կա. կամ պետք է պետությունները զինու զորով մեզ պարտադրեն իրենց պայման-

198 *Արմեն Գարո (ՓաստրմաՋյան Գարեգին Հարությունի) – հասարակական-քաղաքական գործիչ:*

199 *Արարատյան (Արարատով) Քրիստափոր Գերասիմի – ռազմական գործիչ:*

ները հոգուտ ձեզ, կամ մենք պիտի ուղղակի համաձայնության գանք: Ձեր այսօրվա այցից ես տեսնում եմ, որ դուք նախընտրում եք վերջինը:

– Այո,– պատասխանել է Խատիսյան,– մենք դեմ չենք ձեզ հետ համաձայնության գալու: Բայց դրա համար մի քանի նախապայմաններ կան, օրինակ՝ դուք անշուշտ չեք պնդելու Ալեքսանդրապոլի դաշնագրի վրա:

– Ոչ,– պատասխանել է Բեքիր Սամի:

– Բացի այդ,– շարունակել է Խատիսյան,– դուք պիտի ասեք, համաձա՞յն եք արդյոք սկզբունքով մեզ զիջել հողեր 14 թվի սահմանից անդին, թեկուզ մի թիզ:

– Անշուշտ, զիջելու ենք: Բայց հասկանանք իրար: Դուք ձեր պահանջները շատ լայն բռնեցիք: Սակայն կամաց-կամաց տեսաք դրա վնասները: Լոնդոնում կարծեմ պարզ եղավ ձեզ համար, թե դուք անօգնական եք: Համաձայնությունը մեզ համար էլ, ձեզ համար էլ նախընտրելի է: Խնդիրը չափերի մեջն է: Որո՞նք են ձեր պահանջած սահմանները:

Խատիսյան – Ես պաշտոնական հանձնմանք չունիմ սահմանների մասին ձեզ հետ խոսելու, բայց կասեմ, որ 1) մենք պիտի դուրս գանք ծով Բիզեի վրայով և 2) մենք բնականապես պիտի ընտանանք Վան, Մուշ, Բիթլիս: Այդ երկու կետերի մեջ դժվար չէ մեր և ձեր սահմանները գծել, վեճը այստեղ է:

– Էրզրումի վրա, ուզում եք ասել – դա մի վեճ է, որի վերջը հայտնի է, Էրզրումը չի կարող ձեզ տրվել,– ասում է Բեքիր Սամին,– Վեճը կարող է լինել մնացած հողերի վրա:

– Այստեղ էլ վեճի վախճանը հայտնի է, այդ հողերը չեն կարող մերը չլինել, դուք այդ գիտեք:

Բեքիր Սամի խոսքը դարձնում է Ռուսիային.

– Խնդիրը միայն մեր համաձայնության մեջ չէ,– ասում է նա,– այլ Ռուսիայի ընթացքի: Ամեն բան կախված է ռուսներից, Էրզրումը ձեզ տալ, միևնույն է թե տալ ռուսներին. առհասարակ, հայերին զիջած հողերը մենք նկատում ենք Ռուսիային զիջած, որը հավասարապես սպառնում է մեզ: Մեր այսօրվա համաձայնությունը սովետների հետ մի ժամանակավոր տակտիկական երևույթ է, որ ապագա չունի, վաղ թե ուշ Ռուսիան նորից պիտի կիրարկի իր արևելյան քաղաքականությունը. այսինքն՝ առաջխաղացություն դեպի Պոլիս և հարավ: Ա՛յս է վտանգը և այ՛ս է, որ պետք է մեզ զբաղեցնի, ավելի քան հողային այս կամ այն զիջումը: Այս վտանգի առաջ կարելի է առնել միայն կազմելով մի Կովկասյան Ֆեդերացիա: Երբ այդ լինի, մեր փոխհարաբերությունները շատ կհեշտանան: Ինչ վերաբերում է հողային զիջումներին, այո՛, մենք այն պիտի անենք ձեզ – բայց մեր մտածումով, ոչ՝ «Թյուրքաց Հայաստան անունով», այլ որպես սահմանների շտկումն (rectification des frontières): Ամեն պարագայի, ես համաձայն եմ, որ մենք պետք է զրուցենք: Ես գնում եմ Անկարա, կարծում եմ, որ երկու ամսից ետ կգամ. մինչև այդ, լավ կլինի, որ մենք հանդիպենք և ժամ առաջ եզրակացության գանք: Սա իմ անհատական մտածումն է: Եթե Անկարայում համաձայնեցին իմ հայեցակետի հետ, ապա ես ձեզ կհեռագրեմ և մենք կհամաձայնենք հանդիպումի տեղի և ժամանակի մասին:

Խատիսյանը տվել է մեր Պատվիրակության հասցեն:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՐԱՍՍԻՆԻ ՀԵՏ

Լոնդոն, ապրիլ 7, 1921

Այսօր, ապրիլի 7-ին, հետս ունենալով պրոֆեսոր Ադոնցին, տեսակցություն ունեցա Կրասսինի հետ: Զրույցի նյութն էր այն հեռագիրը, որով Վրացյանը բողոքում էր սովետական զորքերի հարձակման դեմ և պահանջում էր կանգնեցնել ռուսական արշավանքը Հայաստանի վրա:

Ես ասացի մոտավորապես հետևյալը.–

«– Հայ ժողովուրդը ունեցել է և այժմ էլ պահպանում է Ռուսիո հանդեպ բարեկամական զգացումներ, բայց ռուս սովետը ամեն ինչ անում է այդ լավ զգացումները փտեցնելու: Սովետական ներկայացուցիչներին ընունելով, հայ ժողովուրդը դեկտեմբերի 2-3-ին կարծում էր, թե հանձին ռուս բոլշևիկների երկրի հոգատարներ են եկել թյուրքերի դեմ և իր կարիքները հոգացողներ: Արդեն այսպիսի լոզունգներով հայտնվեցին Հայ Հեղ-կոմի անդամները: Փորձը ցույց տվեց հակառակը – հայերը շուտով նկատեցին, որ

ա) եկողները թյուրքերի դաշնակիցներն են և

բ) չկարողացան կամ չկամեցան թյուրքերին դուրս քշել նոր գրաված ռուսահայ գավառներից;

գ) երկրում քաղցը ու կարիքը ծայրագույն չափերի հասավ;

դ) եղած չնչին պաշարը կրվեց դեպի հյուսիս;

ե) քաղաքական վատթար տեսակի հալածանքներն սկսվեցին;

զ) բանտերը լցվեցին հայ մտավորականներով, հակառակ

տրված հանդիսավոր խոստումների;

է) և, վերջապես, տխրահռչակ Աթարբեգյանի գլխով սկսվեցին բանտարկյալների կոտորած, սպանների ձերբակալություն (մոտ 1200 հոգի) և աքսոր դեպի Ռուսաստան:

Ժողովրդի համբերությունը հատավ, և առաջ եկավ այս տարվա փետրվար 18-ի տարերային ապստամբությունը: Այժմ Ռուսաստանից նոր զորքեր են հասել և ավերում են մեր երկիրն ու ժողովուրդը: Ու՞ր է ժողովուրդների ինքնորոշումը, որ դուք հռչակել եք: Մեր ժողովուրդը անկարող է սովետական ռեժիմը տանել, քանի որ դրա համար ո՛չ մի պայման չկա և այդպիսի ռեժիմը, ինչպես տեսնում եք, միայն զորով, արյունով, ավերածով պետք է մտցնել: Ի՞նչ շահ դրանից Ռուսաստանին, ի՞նչ շահ ձեր գաղափարին: Եվ մի՞թե այլ ճամփա չկա ավելի բարվոք հարաբերություններ ստեղծելու Ռուսաստանի հետ, որից երկու կողմերն էլ մեծապես կշահվին: Ինչու՞, օրինակ, դուք կարողանում եք համաձայնություններ կնքել Պարսկաստանի, Ավղանիստանի[200], Լիտվայի, Լատվիայի, անգամ Թյուրքիայի հետ առանց նրանց պետական ռեժիմը խախտելու և միայն Հայաստանը տրորում եք, ոտքի տալիս Հայաստանը, որ բազմաթիվ մորալ իրավունքներ ունի միանգամայն տարբեր վերաբերմունք տեսնելու ռուսների կողմից, քանի որ համաշխարհային այս կատակլիզմի[201] օրերին, նա միակը եղավ, որ մինչև վերջը ձեզ հավատարիմ մնաց: Եվ մեր խնդրածը շատ բան չէ: Դադարեցնել արշավանքը, հնար տալ մեր երկիրը կառավարել մեր ժողովուրդի կամքի համաձայն, և դրանով միաժամանակ մեծապես նպաստել մեզ Թյուրքաց Հայաստանի միացումին, քանի որ դուք առաջինը եղաք թյուրքահայերի ազատագրության իրավունքը ճանաչող: Մենք գիտենք ձեր հարաբերությունները թյուրքերի հետ և բնավ նպատակ չունինք ձեզ իրար հետ թշնամացնել. մենք խնդրում ենք միայն ճանաչել մեր իրավունքը Կովկասյան Հայաստանում, և այն ժամանակ մենք կկարողանանք ձեռք բերել Թյուրքաց Հայաստանը: Որքան դուք ճնշում եք Կովկասը, այնքան հեռանում է մեզնից Թյուրքաց Հայաստանը: Դուք տեսաք, որ ձեր արշավանքի հետևանքով դեկտեմբերի 1-3-ին, Միացյալ Հայաստանը դարձավ Home – հակառակ Սևրի դաշնագրին: Մենք շատ ենք վախենում, որ այս նոր արշավանքով դուք իսպառ սպանեք Հայկական Հարցը: Ի՞նչ է ձեր շահը: Միևնույն է, վերջ ի վերջո մեր

200 *Աֆղանստան:*

201 *Կատակլիզմ (հուն. ջրհեղեղ) – Կարուկ ավերիչ շրջադարձ հանրային կյանքում:*

ժողովուրդը կջարդվի, բայց չի ընդունի սովետական ռեժիմ և ամեն հարմար առթիվ պիտի ոտքի ելնի: Լավագույնը չէ՞ մի modus vivendi[202]»:

Կրասսինը պատասխանեց.

– Ես խոսում եմ անհատապես, քանի որ իմ իրավունքից դուրս է քաղաքական բանակցություններ վարել, իսկ կարող եմ Ձեզ վստահեցնել, որ Մոսկվայում շատ են այն վարիչները, որոնք բաժանում են իմ մտածումները Հայաստանի մասին: Ասեմ նախ, որ Դուք սխալ ձևով եք դնում հարցը, երբ խոսում եք «հայ ժողովրդի» անունից «ռուս ժողովրդին»: Դուք կարծես մոռանում եք դասակարգային կռիվը, որի անունով մենք գործում ենք: Ես շատ լավ գիտեմ, որ ձեր բուրժուա ինտելիգենցիան – օրինակ՝ մի Պավել Օսիպիչ Ղուկասով, եռանդով գործում է մեր Միլյուկովների հետ մեր դեմ: Այս՝ մեկ: Եվ հետո՝ մենք բնավ վստահություն չունինք դեպի Դաշնակցականները, որոնք գործիք են Entente-ի ձեռքին մեր դեմ: Եվ, վերջապես, Դուք ասում եք, թե ձեր ժողովուրդը դեմ է սովետին, բայց ես այսօր իսկ հեռագիր ունիմ, որ Երևան մտնող սովետական զորքերին ժողովուրդը ընդունել է գրկաբաց և ծափահարությամբ:

Կրասսինը կարդաց ինձ ապրիլ 5 թվակրով հեռագիր Աթարբեգովի[203] ստորագրությամբ Երևանի գրավման մասին:

Հարվածը ճիշտ տեղին հասավ ինձ և ես, հանկարծակիի եկած, ետ ընկա թիկնաթոռի մեջ մի վայրկյան, թողնելով, որ Ադոնցը[204] խոսի: Ես այն մարդու վիճակն ունեի, որ գնացել է բռնակալի մոտ իր դատապարտված եղբոր ներումը, փրկությունը ձեռք բերելու ու հանկարծ լուսամուտից նրան ցույց են տալիս եղբոր կտրած գլուխը: Զսպեցի հուզմունքս և շարունակեցի զրույցը:

– Մենք չենք մոռացել դասակարգային կռիվը, և հենց այդ տեսակետից է, որ խոսում ենք – իզուր եք ծանրանում մեր բուրժուազիայի վրա – կովող դասակարգը միմիայն մեր աշխատավոր, գյուղացի բանվոր ժողովուրդն է – բուրժուազիան մեր երկրից հեռու է եղել և այժմ իսպառ հեռացած է – ու՞ր են Ձեր հիշած Ղուկասովները –...

202 Modus vivendi *(լատ.) – Կենսակերպ՝ պայմաններ, որոնք հնարավոր են դարձնում թեկուզև ժամանակավոր և կանոնավոր ու խաղաղ հարաբերությունները երկու (թշնամական) կողմերի միջև:*

203 *Աթարբեկյան Գևորգ– հայ բոլշևիկյան պարագլուխ՝ հայտնի իր դաժանությամբ:*

204 *Ադոնց (Տեր-Ավետիքյան) Նիկողայոս Գևորգի – պատմաբան:*

Կրասսին. – Անշուշտ, Փարիզում:

Ես. – Այո, Փարիզում ձեր Միլյուկովների հետ: Դուք արյունոտում և սովամահ եք դարձնում միայն և միայն մեր աշխատավոր ժողովուրդը: Դաշնակցության չեք հավատում – հնար չկա Gage[205] պահանջել – և վերջապես այդ անվստահությունը մի ողբալի թյուրիմացություն է, որին զոհվում է մեր ժողովուրդը – և այս նոր չէ – ցարական կառավարությունն էլ մեր պայքարողներին համարում էր անգլիական ագենտներ, իսկ անգլիական կառավարությունը՝ ռուսական ագենտներ – Սուլթանը գիտեր միայն, թե ում հետ գործ ունի: Գիտեք մնացածը: Մենք նրա աչքում ապստամբներ էինք – և վարվում էր, որպես այդպիսիների հետ: Նույն այդ թյուրիմացությունն է, որ այժմ Դուք եք կրկնում:

Կրասսին. – Ես ուրախ եմ, որ լսում եմ այս բոլորը: Պիտի ասեմ, որ շատ բան մեզ ասում են և հավատացնում հենց հայ բոլշևիկները – նրանք են շարունակ պնդել, թե հայ ժողովուրդը ձգտում է դեպի կոմունիզմ: Եվ պիտի գիտնաք, որ հաճախ կենտրոնը չի իմանում՝ ինչ են անում հեռուները: Չեմ զարմանա, որ այս նոր արշավանքն էլ Հայաստանի դեմ հայ բոլշևիկների գործը լինի, որովհետև Մոսկվայի տրամադրությունը այլ է:

Ես. – Լավ հիշեցիք հայ բոլշևիկները – նրանք մեր կյանքում շատ հանցագործ դեր են կատարում:

Կրասսին. – Ինչու՞, այնուամենայնիվ նրանք հայեր են, հրեշներ չեն:

Ես. – Ընդունեցեք, պ. Կրասսին, որ նրանց մեջ կան, այո՛, և պարզապես հիվանդ մարդիկ, որոնց հոգեկանը հասնում է սադիզմի – այսպես է հենց Աթաբեգովը – որ, անկասկած, հոգեկան հիվանդ է: Ես ճանաչում եմ նրա ազգատոհմը – հորը, պապին – ախտավոր ընտանիք է, և նա սարսափներ է կատարում ամեն կողմ հանուն սովետների, վարկաբեկելով և՛ սովետը, և՛ Ռուսիան: Մյուս հայ բոլշևիկները – մեծ մասամբ նախկին Դաշնակցականներ – և հենց այս պատճառով հազար ու մի պատճառ ունին լինելու Դաշնակցության դեմ – անձնական, կուսակցական, փառասիրական և հետո՝ կենտրոնի առջև երես ունենալու տենչը նրանց դարձնում է ավելի եռանդով և ավելի կասկածելի միաժամանակ: Երբ Դուք դադարեք ձեր տեղեկությանց աղբյուր նկատել այդ կասկածելի պարոններին, և իրերի ճշգրիտ կացությունն իմանաք, ինքներդ կնկատեք, թե զոհ եք թյուրիմացության:

[205] *Գրավ. երաշխիք:*

Կրասսին. – Ես խոստանում եմ այս բոլորը անմիջապես հաղորդել Մոսկվա և ձեզ պատասխան տալ, երբ ստանամ: Առայժմ կարող եմ ձեզ հայտարարել, որ՝

1) Հայաստանը մեզ համար առանձին հետաքրքրություն չի ներկայացնում, ո՛չ տնտեսական, ո՛չ քաղաքական տեսակետից – որպես հարաբերությունների միջնորդ ևս բան չի արժե: Դուք չունիք ո՛չ երկաթուղիների կարևոր գծեր, ո՛չ Բաքու և ո՛չ Բաթում: Եթե ես Ձեզ ասեի, թե օրինակ Բաքուն, Ադրբեյջանը մեզ չի հետաքրքրում, կսխալվեի – մենք երբեք չենք ձգի Բաքուն: Բայց այլ է Հայաստանը: Մենք ցանկություն չունինք այն տիրապետել, հողի պետք չունինք. մեր ունեցածը շատ-շատ է: Դուք տեսաք, թե որքան մենք լայն եղանք մեր հողային զիջումների մեջ Լեհաստանին:
2) Գալով ռեժիմին – Կրկնում եմ, հայ բոլշևիկներն են մեզ համոզել, թե հայ ժողովուրդը ծարավ է կոմունիզմի, եթե այդ այդպես չէ, մենք ձեզ բռնադատելու դեմ կլինենք:
3) Հայաստանի անկախությունը մենք ո՛չ միայն չենք վերացնի, այլ ընդհակառակը, կաջակցենք նրան, որովհետև դա մեզ հարկավոր է Ադրբեյջանը Թյուրքիայից բաժանելու համար: Եվ որքան մեծ լինի անկախ Հայաստանը, այնքան լավ մեզ համար: Մի խարվեք մեր և թյուրքերի ժամանակավոր բարեկամությամբ, դա անցողական է և եթե Թուրքիան սահմանակից դառնա Ադրբեյջանին, նա շարունակ գրգռումներ պիտի առաջ բերի մեր դեմ: Ահա թե ինչու՛ Հայաստանի անկախությունը մեզ հարկավոր է:
4) Ես Ձեզ խորհուրդ եմ տալիս անմիջապես մարդ ղրկել Լիտվինովի մոտ կամ անձամբ գնալ, եթե հնար է այս բոլորը պարզելու: Կրկնում եմ, շատ բան կա բացատրելու, ասելու: Ես տնտեսական խնդիրների համար եմ այստեղ, Լիտվինովը՝ քաղաքական: Ես իմ կողմից բոլոր լսածներս անմիջապես կհաղորդեմ Մոսկվա: Կրկնում եմ, Մոսկվան, գոնե իմ մեկնելու ժամին, ինձ պես էր մտածում Հայաստանի մասին:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՎԱՆԶԻՏՏԱՐԻ ՀԵՏ

21 հունիս, 1921
Փարիզ

Այս առավոտ ժամի 8.30-ին տեսա Քըրզընի դիվանապետ պ. Վանզիտտարին, որ ընկերակցել էր Բրիտանական Արտաքին Գործոց նախարարին իր բանակցությունների ընթացքին ֆրանսիական նախարարապետ Բրիանի հետ:

Իմ հարցին, թե արդյոք Դաշնակից պետությունները այս բանակցությունների ընթացքին շոշափե՞լ են Հայոց Հարցը, թե ոչ, նա պատասխանեց.

– Դաշնակիցները զբաղվեցին միայն Հունա-Թյուրքական conflit[206]-ով, հայոց մասին խոսված չէ:

Իմ մյուս հարցին՝ թե ինչպես կվերաբերվեր Բրիտանական կառավարությունը, եթե մեր պատվիրակությունը գրավոր մի դիմում աներ Դաշնակից երեք պետություններին, որպեսզի առաջիկա բանակցությունների ընթացքին Թյուրքիայի հետ, սրանք պահանջեին, որ Թյուրքահայ գավառները, որոնք պիտի կցվին Հայաստանին, Թյուրքիան առանց դիմադրության հանձնի Դաշնակից պետություններին, որոնք կտնօրինեն նրա բախտը:

– Շատ լավ գաղափար եք ունեցած,– պատասխանեց Vanzittart,– Հայկական Հարցը դնելու սա լավագույն ձևն է: Կարող եմ ձեզ վստահացնել, որ Բրիտանական կառավարությունն այսպիսի մի դիմումն կընդունի շատ սիրով: Ինչ վերաբերում է Ֆրանսիային ու Իտալիային, որքան և նրանց քաղաքականությունը շահեկան լինի թյուրքերին, այսպիսի մի դիմումը անուշադիր թողնել չեն կարող:

Միաժամանակ պ. Վանզիտտար ասաց, թե պետք է տեսնվել նորից Բեքիր-Սամիի հետ՝ աշխատելով համաձայնվել թյուրքերի հետ:

– Բայց ի՞նչ արժեք կունենա այդ համաձայնությունը, երբ, ինչպես փորձը ցույց տվեց, Անկարա կարող է միշտ պատռել այստեղ ստորագրածը:

– Այս անգամ այդ հնարավոր չէ,– ասաց Վանզիտտար,– թյուրքերը, վերջապես պետք է ընտրեն կա՛մ բոլշևիկներին, կա՛մ Արևմուտքը: Բեքիր-Սամիի երկրորդ անգամ գալն ապացույց է, թե նրանք գերադասելու են Արևմուտքը:

---

[206] *Ընդհարում, հակամարտություն:*

ԿՈՎԿԱՍՅԱՆ ՉՈՐՍ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՐԻԱՆԻ ՀԵՏ

Հունիս 22, 1921
Փարիզ

Այսօր առավոտյան ժամը 11-ին ես, Զ.Ավալովը (Վրաստան), Թ. Չերմոև (Լեռնական), Ա.Թոփչիբաշև (Ադրբեյջան) ներկայացանք Բրիանին հանձնելու համար մեր չորս պետությունների համաձայնագիրը՝ կնքված հունիս 14-ին, Փարիզում:

Ես ներկայացրի իմ ուղեկիցներին, Բրիան հրավիրեց մեզ նստել: Ավալով խոսք առնելով ասաց, թե ուրախ է հաղորդել, որ ֆրանսիական կառավարության ներշնչումով մեզ հաջողվել է համաձայնության գալ իրար հետ: Ապա թվելով համաձայնության գլխավոր կետերը՝ հույս հայտնեց, որ Ֆրանսիան պիտի աջակցի ամրապնդելու այս համաձայնությունը, որից մեծապես կշտկվի և խաղաղության գործն Արևելքում, և Դաշնակիցները քաղաքական և տնտեսական մեծ առավելություններ կունենան, քանի որ միջազգային առևտրին մեծ հեշտություններ են տրվում: Ավելացրեց, որ կովկասյան ազգերի միությունը կարող է նաև բոլշևիկ-թյուրքական դաշինքը խախտել:

Բրիան հարցրեց, թե ի՞նչպես է կացությունը Կովկասում: Ես խոսք առա:

Ասացի, որ բոլշևիկները թեև տիրացան Կովկասին բռնի ուժով, բայց Լեռնականները ապստամբ են, Ադրբեյջանում խլրտումներ կան: Ինչ վերաբերում է Հայաստանին, Փետրվար 18-ի ապստամբությունից հետո, 40 օր տևող կռիվներ մղելով բոլշևիների դեմ, մերոնք ստիպված եղան անցնել մեր երկրի լեռնային մասը – Սյունիք, ուր հաստատված է բանակը, կառավարությունը, պարլամենտը՝ քաղաքական վարչական ամբողջ կազմով, և պայքարը շարունակվում է բոլշևիկների դեմ:

– Ի՞նչպես են հաստատված բոլշևիկները Կովկասում,– հարցրեց Բրիան:

Ես պատասխանեցի, թե կան սովետներ յուրաքանչյուր երկրում, կազմված տեղական տարրերից, որոնք իրոք առանձին կարևորություն չունին, քանի որ վարչական ղեկը մնում է միշտ Ռուս բանակի գլխավոր կայանի[207] ձեռքին, որոնք ռուսներ են: Չնայած կանոնորեն պահպանվում է անկախությունն այդ երկրներում, բայց

---

[207] *Շտաբ:*

դա ֆիկցիա[208] է, սակայն մենք հավատ ունինք, որ բոլշևիկները երկար չեն մնա մեր երկրում և նրանք այնտեղ բնավ հող չունին:

– Ես հավատում եմ – և մենք կաջակցենք ձեզ. այս միությունը իմ սրտին մոտիկ է, ես գիտեմ, որ ո՛չ Թյուրքիայում և ո՛չ Կովկասում ժողովուրդները բոլշևիկ չեն:

– Պ. նախագահ,– շարունակեցի ես,– Ձեր աջակցությունը այսօր իսկ կարող է մեզ մեծ բարիք անել: Ես գիտեմ, որ Դաշնակիցները հնար չունին ազդելու բոլշևիկների վրա, բայց քանի որ զրույց է սկսված թյուրքերի հետ, մենք վստահ ենք, թե այս ճամփով հնար է մեզ օգնել: Բանն այն է, որ բոլշևիկների՝ Կովկասում ունեցած հաջողության մեջ մեծ բաժին ունին թյուրքերը – առանց թյուրքերի օժանդակության բոլշևիկները չէին կարող հաստատվել Կովկասում. այն փաստը, որ նրանք գրեթե նույն օրը մտան Հայաստան անցյալ դեկտեմբերին, ապացույց է, թե նրանց հարձակումը նախամտածված ու ներդաշնակված էր: Այսօր, ինչպես գիտեք, թյուրքերը պահում են ո՛չ միայն Թյուրքաց Հայաստանը, այլև՛ Կովկասյան Հայաստանի կեսը: Եթե թյուրքերի շահը պահանջում է, որ կովկասյան ուժեղ միություն հաստատվի, պետք է նրանց հասկացնել, որ նրանք ժամ առաջ կարգադրեն Հայկական Խնդիրը՝ զիջելով հայերին նրանց հասանելիք հողերը: Հայկական հողային պահանջները Թյուրքիայում այնքան արդար են, որ մեր այս երեք հարևաններն էլ, որոնցից երկուսը կրոնակից են թյուրքերին,– այս իսկ համաձայնությամբ,– ինչպես այդ կտեսնեք ներկա փաստաթղթի 7-րդ հոդվածից, ընդունում են և խոստանում աջակցել հայերին ստանալ սահմաններ Թյուրքիո հողերում և այսպիսով լուծել Հայկական Հարցը: Ես՝ երախտագետ դեպի մեր հարևանները այս վերաբերմունքի համար, պիտի նկատեմ միաժամանակ, որ նրանց մտածումն է՝ լուծելով Հայկական Հարցը՝ ամրապնդել Կովկասյան Միությունը: Նրանք գիտակցում են, որ առանց հայերին գոհացնելու, խաղաղություն անհնարին է – և պետք է հայտարարեմ, պ. նախագահ, ո՛չ մի հայ պատվիրակություն մի քանի ժամ իսկ չի կարող մնալ իր տեղում, եթե նա հրաժարվի Թյուրքաց Հայաստանի հողերից:

Բրիան. – Ձեզ հետ համաձայն եմ, որ թյուրք չափավոր տարրերի հետ պետք է եզրակացության գալ – ես Հայկական Հարցի լուծումը հենց այդպես էի դրել Լոնդոնում: Թյուրքերի հետ համաձայնության գալու իմ ջերմ ցանկության շնորհիվ, քիչ մնաց,

[208] *Հորինվածք, խաբուսիկություն, այլափոխում:*

որ ես վշտացնեի մեր բարեկամ անգլիացիներին. այս ճամփան ես չեմ թողել: Բոլշևիկյան և թյուրք դաշինքը մի անոմալիա[209] է, որ հարատևելու չէ: Թյուրքերը կորստաբեր խաղ են խաղում՝ ռուսներին իրենց երկիրը քաշելով, որտեղից նրանք դուրս չեն գնա: Թյուրքերին տրվում է այսօր եզակի առիթ՝ վերաշինելու իրենց պետությունը: Այս ուղղությամբ պիտի աշխատինք: Ես ձեզ խոստանում եմ առաջիկա Գերագույն Խորհրդի նիստին դնել Կովկասյան խնդիրը այնպես, ինչպես Դուք ներկայացրիք:

Ձերմոն քանի մը խոսք ասաց, որոնց միտքն էր, թե մուսուլմանները կրոնի համար ոտքի կելլեն, բայց Թյուրքիո պետական գործի համար՝ ոչ: Ա՛յդ է պատճառը, ավելացրեց նա, որ մուսուլմանները այս պատերազմին չմիացան թյուրքերին:

Բրիան հարցրեց.

– Քանի՞ միլիոն են լեռնականները:

Ձերմոն պատասխանեց՝ թե $3^1/_2$ միլիոն:

ԱՅՑ
ՀՈՒՆԱԿԱՆ CHARGE d'AFFAIRE-ԻՆ[210] Մ. METAXAS-ԻՆ

Այսօր հուլիս 21-ին, այցի գնացի հունական Chargé d'Affaire-ին շնորհավորելու Բյութանիայի հաղթությունը և մեր խնդակցությունը հայտնելու հույն կառավարության այս առթիվ: Պ. Metaxas, շատ զգացված այս այցից, խոստացավ հայտնել այն իր կառավարության:

Խոսք դարձավ այնուհետև հայ-հունական պրոպագանդի[211] մասին Եվրոպայում, որ զրույցի նյութ է դարձած Աթենքի մեր ներկայացուցչի և Հույն Արտաքին Գործոց նախարարի մեջ: Ես, ընդունելով հանդերձ այդ կարգի պրոպագանդի համար մեր պատրաստակամությունը, ավելացրի, որ մեր ներկա նյութական կացությունը մեծ դժվարությունների առաջ է հանում մեզ այդ կարգի որևէ ձեռնարկի առաջ:

– Մորալ[212] գործակցության համար մենք միշտ պատրաստ ենք, – ասացի:

[209] *Տարականոնություն:*

[210] *Գործերի հավատարմատար (ֆրանս.):*

[211] *Տարածում (լատ.) –Գաղափարների կամ ուսմունքների տարածում:*

[212] *Բարոյական (լատ.):*

Հույն ներկայացուցիչը չէր կարծում, թե օրինակ՝ ֆրանսիական մամուլի ընթացքը հնարավոր է փոխել դրամական միջոցներով: Կասկածից դուրս է, որ այսօրվա թյուրքոֆիլ հոսանքի աղբյուրը Quai d'Orsay-ն է: Եվ այնքան ժամանակ, որ այնտեղ կտիրի ներկա քաղաքականությունը, թերթերը կշարունակեն իրենց այսօրվա ընթացքը: Հետևապես, ավելացրեց պ. Մետաքսաս, մենք դիվանագիտական աշխատանք պիտի թափենք:

Այնուհետև զրույցն անցավ Չայանի մի փոքր տարականոն գրությանը, քանի որ accrédité[213] եղած է առանց lettre de créance-ի և այս մասին ակնարկներ եղած են հույն թերթերում: Ես նորից հիշեցրի այն պարագաները, որոնք ստեղծեցին այս դրությունը և հայտնեցի, թե առաջին իսկ առթիվ, այդ lettre de créance-ը մեր կառավարությունը կուղարկի, երբ կանոնավոր հարաբերության հնարավորություն ստեղծվի:

ԱՅՑ ՊԱՐՍԻՑ ԴԵՍՊԱՆ ՍԱՄԱԴ ԽԱՆԻՆ

Հուլիս 21, 1921
Փարիզ

Այսօր, հուլիս 21, կեսօրից հետո ժամը 3-ին, այցի գնացի պարսից դեսպանին: Մենք նրա հետ ծանոթներ էինք 1907 թվի La Hay-ի Խաղաղության Conférence-ից: Այս պարագան մեր հանդիպումը շատ սրտագին դարձրեց, և երկար զրույց ունեցանք Հայ և Պարսիկ բարեկամության մասին: Ես վերջում խոսք դարձրի Թեհրանի մեր ներկայացուցչության մասին. բոլշևիկները պահանջում են պարսից կառավարությունից՝ չճանաչել Արդությանին: Ես խնդրեցի հեռագրով խնդրել պարսից կառավարության, եթե հնար է, տեղի չտալ այդ անիրավ պահանջին: Ավելացրի, որ անգլիական ու ֆրանսիական կառավարությունները նման դիմումն արդեն արել են: Սամադ Խան գրիչ առավ և խնդրեց ինձ՝ շատ սիրալիր կերպով միասին կազմել հեռագիրը, ինչ որ արինք: Նա խոստացավ անմիջապես ղրկել:

---

213 Accrédité- *լիազորագիր, վարկագիր,* lettre de créance- *հավատարմագիր:*

ԱՅՑ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՆՈՐ ԴԵՍՊԱՆ ՀԱՐՐԻԿԻՆ

Այսօր, հուլիս 22, առավոտյան ժամը 11½-ին, այցի գնացի Միացյալ Նահանգների նոր դեսպանին բարի գալուստ մաղթելու հանուն Հայաստանի:

– Ես օգտվում եմ այս առիթից,– ասացի,– նորից արտահայտելու այստեղ հայ ժողովրդի խորունկ երախտագիտությունը հանդեպ ամերիկյան մեծ ազգի ու կառավարության, որ այնքան ազնվորեն օգնության հասավ մեզ մեր ծանր օրերին:

– Դա ամերիկյան ժողովրդի պարտքն էր – և ես կարող եմ Ձեզ վստահացնել՝ հայ ժողովուրդը շատ մեծ համակրություն ունի մեր երկրի ազգաբնակության բոլոր խավերում և նա չի մոռացվի:

– Շնորհապարտ եմ,– ասացի,– Ձեր ազնիվ հայտարարության համար, որ ավելի թանկ է մեզ համար, քանի որ դեռ շարունակվում են մեր ազգի ծանր փորձությունները, և մյուս կողմից մենք դեռ սպասում ենք մեր Դաշնակից և բարեկամ պետությունների բազմաթիվ խոստումների իրագործման: Այս պայմաններում մեծ բախտ է մեզ համար, որ Ամերիկա, իր նոր կառավարությունը նորից հրապարակ է գալիս աշխարհի գործերում իր բարերար ազդեցությամբ:

– Տարաբախտաբար,– ասաց դեսպանը,– մեր երկիրը տակավին լիովին չի ճշտել իր քաղաքականությունը Եվրոպայի հանդեպ: Բնական է, որ Հայաստանի մասին մենք չկարողացանք անել այն, ինչ համապատասխան էր մեր ազգի համակրանքին – բայց մեծ հույս ունեմ, թե Ուշինգթընի[214] առաջիկա Conférence–ը կարող է ձեր փորձություններին վերջ դնել:

Ես վերստին շնորհակալ եղա, և դեսպանը նորից ու նորից կրկնեց ամերիկյան ազգի համակրանքը՝ ինձ մինչև դուռը ուղեկցելով:

---

214 *Վաշինգտոն:*

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀՈՒՆԱԿԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ ԲԱԼԴԱՑՑԻԻ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱՐԱՐ ԳՈՒՆԱՐԻՍԻ ՀԵՏ

Հուլիս 22, 1921
Փարիզ

Հունական Chargé d'Affaire պ. Մետաքսասի հետ համաձայնած էի, որ իրենց նախարարապետի և Արտաքին Գործոց նախարարի՝ Փարիզ հասնելուն պես նրանց հետ տեսնվեմ, նախքան Բրիանի մոտ նրանց ունկնդրությունը:

Եվ այսօր (հոկտեմբեր 20) առավոտյան ժամը 12.30-ին, տեղի ունեցավ այդ տեսակցությունը: Hotel Crillon-ի առանձին սալոնում[215] ինձ ընդունեց պ. Բալդացցի և ինքն սկսեց առաջինը խոսել: Նա ասաց, որ պ. Չայանի հետ նա երկար զրույց է ունեցել, և լավատեղյակ է մեր առաջարկներին ու ցանկության Հույն-Հայկական քաղաքական ու դիվանագիտական գործակցության մասին:

– Գիտեմ,– ասաց,– որ դուք կկամենայիք 1) ապագա դաշնագրի մեջ հոդված լինի, որով թյուրքերն ընդունին Սևրի դաշնագրով, կամ թեթև փոփոխությամբ, կազմված Հայաստանը, 2) որ մենք պահենք գրավված թյուրքական հողերը, մինչև Թյուրքիան լիապես կատարի իր հանձնառությունները Հայաստանի վերաբերմամբ և, վերջապես, 3) հետագայում, Հայաստանը անկախ պետություն նկատվի, որպես Հունաստանի կենսական շահերի համար անհրաժեշտություն, և Թյուրքիայի կողմից որևէ հարձակումն Հայաստանի դեմ Հունաստանը համարի casus belli[216]: Այս երեք կետերի մասին էլ, ինչպես դուք գիտեք անշուշտ, մենք ձեր ներկայացուցիչ պ. Չայանին սկզբունքային համաձայնություն տվել ենք: Ես այժմ էլ կարող եմ նույն վճռական հայտարարությունն անել – Հայաստանի վերաբերմամբ մեր մտածումները նույնն են:

Ես. – Շնորհակալ եմ Ձեր այդ սրտապնդիչ հայտարարության համար: Ճշմարիտ է, պ. Չայան այդ բոլորն ինձ տեղեկագրել է, բայց ինձ համար առանձին հաճույք է նույնը լսել ձեր հեղինակավոր շրթունքից: Մեզ այնպես է թվում, որ Հայաստանի անկախ ու հաստատուն գոյությունը հունական կենսական շահերի

[215] *Սրահ (ֆրանս.):*

[216] Casus belli *(լատ.)* - *Պատերազմի պատրվակ:*

պահանջն է: Խնդրեմ նկատի առեք, որ երկու անգամ վերջին տարիները թյուրքերը, օգտվելով մեր նեղ ու մենակ կացությունից, մեզ պարտադրեցին սահմանագիծ, որ միշտ նրանց միացնում էր Ադրբեյջանին: Սա դիպվածական չէ: Քաղաքական մտածումի իրագործումն է – Հայաստանը ջնջել, միանալ մուսուլման ու թաթար Ադրբեյջանին և այնտեղից ձեռք մեկնել Միջին Ասիայի, Անդրկասպյան երկրների մուսուլմանության: Մենք կարծում ենք, որ, նույնիսկ եթե ձեզ հետ թյուրքերը խաղաղություն իսկ կնքեն, չպիտի դադարին revanche-ի[217] համար պատրաստվել – Զմյուռնիան ու Թրակիան նրանք երբեք չեն մոռանա: Արդ՝ բոլորովին հասկանալի է, որ, Կովկասում ամրանալով, թյուրքերը պետք է compacte[218], մուսուլմանությունը ձեր դեմ շարժեն: Հետևապես, սպասելով ձեզնից վերոհիշյալ երեք կետերի իրագործումը հօգուտ Հայաստանի, մենք կարծում ենք՝ մեր կողմից լավագույն հատուցումը ձեզ կլիներ մեր պետության, մեր անկախության ապահովությունն ու հետագա զարգացումն ու ամրապնդումը:

Բալդացցի. – Լիապես Ձեզ հետ համաձայն եմ. կավելացնեմ, որ մենք ուրախ կլինեինք, թե ձեր և թե մեր շահերի տեսակետից Կովկասյան և մյուս ժողովուրդների ազատագրության՝ քրիստոնյա թե մահմեդական: Օսմանցիները – ես դիտմամբ այս տերմինն եմ գործածում խուսափելով Օտտոման բառից – օսմանցիները Արևելքում, որպես տիրապետողներ, իսպառ մթնացրել են պետական ամենատարրական հասկացողությունը և նրա տեղ դրել կամայականության, վայրագ սանձարձակության, ավերի, ավարի, ամենավատթար բռնության բարքերը: Օսմանցի՝ չի նշանակում պետականություն, այլ պարզ ավազակային, արյունարբու, կազմակերպված ավեր ու թշվառություն՝ տիրապետած ցեղերի վրա. այս վայրագ ըմբռնումները պետք է արմատախիլ անել նախկին Թյուրքիայում, մասնավորապես մահմեդականների մեջ: Այդ տեսակետից թյուրքերը անուշադիր ձգելու չէ: Ճշմարիտ է. նրանք ձեր դեմ մեծամեծ չարիքներ են գործել, բայց և այնպես անհրաժեշտ է աշխատել ուրույն Քյուրդիստան ստեղծել: Գոհ եղա իմանալով, որ Պոլսում դուք նրանց գլխավորների հետ հարաբերության մեջ եք: Մտածելու է մասնավորապես Ադրբեյջանի մասին: Վստահելի չեն, և շատ հակամետ դեպի թյուրքերը.

Ես. – Այո, ես գիտեմ, անվստահելի են, բայց աշխատելու է:

[217] *Ռևանշ, փոխվրեժ:*

[218] *Համախումբ:*

Դուք, երևի, իմացաք, որ Կովկասյան չորս ժողովուրդների ներկայացուցիչների մեջ – հայ-թաթար-վրացի-լեռնական – այստեղ համաձայնություն է կնքված: Այս փաստը անշուշտ իր ապագա զարգացումն է ունենալու, և մենք աշխատելու ենք այդ ուղղությամբ: Էականը ժամ առաջ Արևելյան Հարցի և մասնավորապես ձեր և մեր Խնդրի շուտափույթ կարգադրումն է: Եվ բնական է, որ ցանկանայի իմանալ, թե Ձեր այս ճամփորդության հետ ինչ հույսեր են կապված: Պիտի ասեմ Ձեզ, պ. նախարար, որ ես մասնավոր արժեք եմ տալիս մանավանդ՝ Ձեր տեսակցությանը Բրիանի հետ, քանի որ ձեր և մեր դժվարությունը գլխավորապես ծագում է Ֆրանսիայից:

Բալդացցի. – Ձեր դժվարությունը հասկանում եմ, բայց, ճշմարիտն ասած, ես չեմ կարողանում բացատրել ֆրանսիական հակամարտությունը ձեր դեմ: Տարիներից ի վեր այս երկիրը ձեր հանդեպ միայն համակրություն է ունեցել: Ինչպես եղավ, որ այս ճգնաժամային կացության մեջ Ֆրանսիան ձեր դեմ է:

Ես. – Արդար լինելու համար պիտի ասեմ, որ Ֆրանսիան առանձին չկամություն չունի մեր դեմ. համակրանքը կա, միայն թե անգլո-ֆրանսիական հակամարտությունն է, որ անդրադառնում է ձախողումներն մեր բախտի վրա. մյուս կողմից շատ պատճառներով, որոնցից մի քանիսը անհիմն չեն, Հայկական Հարցի անջատ լուծումը հնարավոր չի նկատվում. սպասում են Արևելյան Հարցի՝ ձեր և թյուրքերի conflit-ի կարգադրությունը՝ մերն էլ լուծելու համար: Ձեմ կարծում, թե Ֆրանսիայում առանձին հակահայ քաղաքականություն կիրառվի, կա ուժեղ թյուրքոֆիլ քաղաքականություն, որին զոհվում են մեր շահերը: Այժմ, երբ Դուք այստեղ եք և պիտի խոսեք Բրիանի հետ, մենք հույսեր ենք տածում, որ Արևելյան Հարցը մտնում է մի նոր դիվանագիտական ֆազի[219] մեջ, և քանի որ թյուրքերը կարող են անհաշտ մնալ ուրույն Հայաստանի գաղափարին, չկամենալով զիջել մեզ այն հողերը, որ մեզ տրամադրել է Սևրի դաշնագիրը, ահա այստեղ է, որ մեզ հարկավոր է Ֆրանսիայի բարյացակամությունը և ձեր աջակցությունը մեր զրույցի սկզբում արտահայտածս ձևով: Ձեր աջակցությունը նրանով է թանկագին, որ, ֆրանսիական և առհասարակ Դաշնակիցների հաճությունն ունենալով հանդերձ, մեր Խնդրի լուծման համար միշտ կհարկավորվի զինված ուժ՝ թյուրքերին հնազանդության բերելու: Ահա թե ինչու՛ մենք այնպես մեծ կարևորություն ենք տալիս Ձեր զրույցին Բրիանի հետ, որը կիմանա Ձեր

[219] *Ժամանակափուլ (հուն.):*

շրթունքով, որ եթե Ֆրանսիան և Դաշնակիցները վճռեն Հայաստանն ազատել թյուրքերից, այդ վճիռն իրագործել տվող մեկը կա՝ Հայաստանի բարեկամ և բնական դաշնակից Հունաստանը:

Բալդացցի. – Դաշնագրի կնքելու պահուն, ինչպես ասացի, մենք ձեր հանդեպ ստանձնած հանձնառությունները կկատարենք. ինչ վերաբերում է Բրիանին, պետք է ասեմ, որ մենք այժմ եկած չենք Ֆրանսիայի կամ որևէ այլ պետության միջնորդությունը հայցելու: Բրիանի հետ մենք պիտի խոսինք Թյուրքիայից մեր գրաված հողերին վերաբերյալ խնդիրների մասին: Եթե այդ զրույցի ընթացքին Բրիան ինքը պետք համարեց շոշափել հունա-թյուրքական հաշտության հարցը, մենք, բնականապես, այլ խնդիրների կարգին և իր տեղին կդնենք և Հայաստանի Խնդիրը ձեր ուզած եղանակով: Բայց կրկնում եմ, Բրիանից է կախված մեր զրույցի հետագա զարգացումը: Չափազանց ցավալի է,– շարունակեց Բալդացցի,– որ Ամերիկայի Միացյալ Նահանգները ձեռնթափ եղան եվրոպական գործերից. Ամերիկան ձեզ խիստ համակրում է և կարող էր շատ բարիք անել և՛ ձեզ, և մե՛զ:

Ես. – Ամերիկյան ձեռնթափությունը մի փոքր պրոբլեմատիկ է. Ամերիկացիք Եվրոպայից տարբեր դիվանագիտական ձևեր ու սովորություններ ունին: Դժվար է իմանալ հաճախ, թե նրանք ե՞րբ են ձեռնթափ և երբ են հետաքրքրվում: Ամեն պարագային, կարող եմ ասել, որ նրանք մեծապես օգնեցին մեզ նորերս Կիլիկիայի հարցում: Ֆրանսիական կառավարությունն անպաշտոն կերպով Ամերիկյան կառավարության պարզ ու որոշ ցանկությունը լսեց՝ չլքել Կիլիկիայի հայերին վերստին թյուրքերու վայրագ քմահաճույքին: Եվ Բրիանի կառավարությունը, որ շատ պատճառներ ունի հարգելու Ամերիկայի այդ միջամտությունը, ստիպված եղավ Անկարայի հետ իր բանակցությունների ընթացքին Թյուրքիայից **իրական** երաշխիքներ պահանջել հօգուտ հայերի, և միայն այդ պայմանով հնարավոր է ֆրանսիական զորքերի՝ Կիլիկիայից դուրս բերվելը: Եվ քանի որ քեմալականները լսել անգամ չեն ուզում որևէ կոնտրոլի մասին թյուրքական համարված որևէ հողամասի վրա, ֆրանկո-թյուրքական բանակցությունները ձգձգվում են և կարծեմ հեռու են վերջնական հաջողությունից:

Բալդացցի. – Ձեր այս հայտնությունը շատ կարևոր է: Ըստ իս՝ վատ չէր լինի, թե Դուք տեսնվեիք ամերիկյան դեսպանի հետ այստեղ՝ ճշտելու համար այսօր ամերիկյան հետաքրքրության չափը

ձեր Խնդրում: Եվ հետո, Ուշինգթընի Conférence-ը կա, ուր մենք հրավիրված չենք: Չե՞ք կարծում, որ այնտեղ Հայկական և առհասարակ Արևելյան Հարցը կարող է շոշափվել: Գուցե լավ լիներ, թե Դուք Ամերիկա մեկնեիք այդ առթիվ:

Ես. – Մեր էլ մտածումը նույնն է, և հավանաբար կամ ես, կամ ընկերակիցս Ամերիկա անցնինք: Մենք էլ հույսեր ունինք, և մեր ներկայացուցիչն Ամերիկայում այդ հույսերը չի ժխտում:

Ներս մտավ մի քարտուղար և մի հեռագիր պարզեց Բալդացցիին: Նա կարդաց ուշադրությամբ, մնաց մտածկոտ, ծալեց, գրպանը դրեց, ապա դարձավ ինձ.

Բալդացցի. – Թյուրքերը ֆրանսիացիներին մի քանի անգամ խաբեցին և նույնիսկ Կիլիկիայում նրանց դեմ զենք բարձրացրին – Ձեզ տարօրինակ չի թվում այս պարագան, երբ Ֆրանսիա թյուրքի միակ պաշտպանն է հանդիսանում: Ես կարծում եմ,– շարունակեց Բալդացցին,– թյուրքերը հենվում են Սովետական Ռուսաստանին, և նրանց անհաշտությունն այլ հիմք ունենալ չի կարող:

Ես. – Անշուշտ, այդպես է. և այն կա, որ թյուրքերն, ինչպես ասացի, Կիլիկիայում որևէ սահմանափակում չեն ընդունում իրենց գերիշխանության. իսկ ֆրանսիացիք առանց այդպիսի սահմանա-փակումի Կիլիկիա լքել չեն կարողանում. և նրանց բանակցությունները տակավին կարող են շարունակվել նորանոր անակնկալներով:

Բալդացցի. – Այս րոպեին ստացածս հեռագիրն այդ մասին է, և ես Ձեզ կկարդամ խիստ confidentiel[220] կերպով, իհարկե: (Նա կարդաց, թե Ֆրանսիայի ու Անկարայի միջև կնքվել է դաշնագիր Կիլիկիայի և Սյուրիայի վերաբերմամբ, բայց այդ համաձայնությունը ուժի մեջ է մտնելու Անկարայի Մեծ Ժողովի վավերացումից հետո:) Ի՞նչ կասեք այս մասին:

Ես. – Պ. նախարար, ֆրանսիացիք սրան ասում են un son de cloche[221], որ նպատակ ունի թուլացնել ձեր համաձայնության շանսերը ֆրանսիական կառավարության հետ: Այդ համաձայնությունը կնքված է Ձեր գալու առթիվ, սակայն, քանի որ Անկարայի Մեծ Ժողովի վավերացումից է կախված նրա արժեքը, հավանաբար նորից ամեն ինչ ջուրը կընկնի, ինչպես մի քանի անգամ եղած է արդեն: Սպասելու ենք հետևանքներին, կարծում եմ՝ վաղաժամ է անհանգիստ լինել:

220 *Փոխվստահություն, փոխգաղտնապահություն:*

221 *Զանգի ձայն:*

Այս պահուն ներս մտավ նախարարապետ Գունարիս: Բալդացցին ինձ ներկայացրեց, ապա փոխադարձ սիրալիր ողջույնից հետո՝ խոսակցությունը շարունակվեց: Բալդացցին զեկուցեց Գունարիսին մեր զրույցի էական մասերը. նախարարապետն իր կողմից լիակատար համաձայնություն հայտնեց:

Ես. – Մեր ներկայացուցիչ պ. Չայան նորերս գրած էր ինձ Հունա-Հայկական գործակցության՝ մասին պրոպագանդի և դիվանագիտական քայլերի համար Արևմուտքում: Ավելորդ է ասել, որ մենք համաձայն ենք, և ես իսկույն հեռագրով հաղորդեցի այդ պ. Չայանին: Դուք գիտեք սակայն, որ մեր ազդեցությունն ու միջոցները շատ փոքր են այդ նպատակի համար. մենք ձեզ վրա ենք հենվելու: Մեր կարծիքով, գլխավորը մեր կարծիքների ներդաշնակությունը պիտի լինի Սևրի դաշնագրի մասին. շնորհակալ կլինեմ, եթե այս մասին ձեր մտածումներն իմանամ: Դուք գիտեք, որ Լոնդոնի վերջին Conférence-ը մեզ Home National-ը[222] առաջարկեց, իսկ մենք շարունակում ենք պաշտպանել Սևրի դաշնագիրը և պաշտպանելու ենք այնքան ժամանակ, քանի դիվանագիտական այդ ակտը ուրիշով փոխանակված չէ:

Բալդացցի. – Մեր համոզումով դա միակ ուղին է հաստատուն գործունեության. Սևրի դաշնագիրը, թեև տակավին չէ վավերացված, մնում է միակ իրավական հիմունքը ձեր և մեր պահանջների. և մեր կարծիքով, թե այն փոփոխվելու է, դա պիտի լինի միմիայն հոգուտ քրիստոնյա ժողովուրդների և ոչ հոգուտ պարտված ու հանցավոր թյուրքերի:

Գունարիս. – Ի դեպ, այս Home National-ը: Սևրի դաշնագրի հետ ինչպե՞ս են հաշտեցնում Դաշնակիցները այս Home-ը:

Ես. – Որչափ կարողացանք հասկանալ, անգամ մեր բարեկամ անգլիացիք Home-ը նկատում են միանգամայն Թյուրքիայից անկախ, ինքնավար մի երկիր, որ հետագային պիտի միանա Հայաստանի Հանրապետության. այս իմաստն ուներ փետրվարին Լոնդոնի Conférence-ի որոշումը և նույն մտքով որոշում ընդունեց Ազգերի Լիգայի Համաժողովը: Home-ը մեջտեղ նետվեց Հայաստանի Հանրապետությունը ռուս բոլշևիկների ձեռքով գրավվելու պատճառով: Հովանավոր պետությունները կարծում են, որ սովետների գոյությունը ժամանակավոր է, և նրանց անկումով Սևրի դաշնագիրը Միացյալ Հայաստանի

222 *Ազգային տուն՝ օջախ:*

վերաբերմամբ կիրականանա գրեթե automatique[223] եղանակով: Ահա թե ինչու՝ Home-ի հեղինակները այն չեն նկատում Սևրի դաշնագրի հակառակ, այլ ժամանակավոր մի դրություն դեպի Միացյալ Հայաստան: Բավական է, որ Home անվանված հայ երկրամասը թյուրքերի ձեռքից դուրս գա և իսպառ անկախ լինի:

Այսքանով վերջացավ մեր զրույցը, որ տևեց մի ժամ մի քանի րոպե: Այնուհետև Գունարիս և Բալդացցի խոստացան ինձ հետ տեսնվել Բրիանի հետ տեսնվելուց հետո: Միաժամանակ նրանք ինձ ասացին, որ Հռոմ և Լոնդոն են գնալու ու ցանկություն հայտնեցին, որ ես էլ Լոնդոն գնամ իրենց այնտեղ եղած ժամանակ:

Այս երկարատև զրույցից իմ տպավորությունն այս է –

1) Հույն կառավարությունը լիապես ընդունում է Հայ-Հունական շահերի համերաշխությունը;
2) Դեպի Կովկաս թուրքական ծավալումի վտանգը նրանք նախատեսում են և Անկախ Միացյալ Հայաստանի գոյությունն ու ամրապնդումը նկատում են Հունաստանի ապագա ապահովության խնդիր;
3) Կնքվելիք դաշնագրի մեջ նրանք կաշխատին Հայաստանի ապահովությունը պահանջել, եթե, իհարկե, պետք եղած աջակցությունը գտնեն Անգլիայից կամ մյուսներից;
4) Իրենց ներկա կացությունը շատ կայուն ու փայլուն չէ, շատ կուզեին Ամերիկայի միջամտությունը տեսնել՝ Արևելյան Խնդրում;
5) Երկու նախարարների նպատակն է՝ բարյացակամ մթնոլորտ ստեղծել Ֆրանսիայում, և դժգոհ չեն լինի, թե Բրիանի հետ զրույցի ընթացքին նրանց médiotion (միջնորդություն) առաջարկվի, որին շատ չեն սպասում, բայց փընտրում են անուղղակի կերպով:

Հ. Գ. – Նույն օրը երեկոյան եղա մեր բարեկամ Վիկտոր Բերարի մոտ. այս տեսակցության մասին խոսեցի, և նա բառ առ բառ ասաց ինձ հետևյալը.

– Si d'ici en huit jours Constantin n'abdique pas la Grèce n'obtiendra rien en France, qui ne veut pas oublier l'assassinat de ses marins. Constantin a promis et il doit se retirer. C'est la dernière chance. Gounaris a fait un immense mal à son pays[224].

Հոկտեմբեր 21, 1921, Փարիզ

---

223 *Մեքենայաբար, ինքնաբերաբար, ավտոմատորեն:*

224 «Եթե ասկե ութը օրվա ընթացքին Կոնստանդինը հրաժարական չտա, Հունաստանը ոչինչ ձեռք չի բերի Ֆրանսիայի մեջ, որը չուզեր մոռանալ նավաստիների սպանությունը: Կոնստանդինը խոստացել է և պարտավոր է քավել: Ասիկա վերջին պատեհությունն է: Գունարիսը ահավոր չարիք գործեց իր երկրին»:

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀՈՒՅՆ ՎԱՐՉԱՊԵՏ ԳՈՒՆԱՐԻՍԻ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ ԲԱԼԴԱՑՑԻԻ ՀԵՏ

Լոնդոն
Նոյեմբեր 1, 1921

Այսօր երեկոյան ժամը $5^{1}/_{2}$-ին տեսնվեցի հույն նախարարներ Գունարիսի և Բալդացցիի հետ: Ներկա էր գեներալ (զորավար) Բագրատունին:

Մեկ ժամ տևած զրույցից այն տպավորությունն ստացա, որ հույները դժվարության մեջ են: Ֆրանկո-քեմալական համաձայնությունը ավելի ևս մեծացրել է նրանց դժվարությունները: Նրանց ասելով՝ Բրիտանական կառավարությունն ու հասարակական կարծիքը ամեն գնով խաղաղության կողմնակից են: Կուզեին, որ մենք հայերս մեր դիվանագիտական և պրոպագանդայի ճիգերով Արևելյան Հարցի լուծումը փութացնենք ու հեշտացնենք:

Բալդացցիի կարծիքով՝ Կիլիկիայի հայության համար ստեղծված ծանր կացությունը ֆրանկո-թյուրք համաձայնության հետևանքով՝ հուզիչ նյութ կարող էր լինել անգլիական հասարակաց կարծիքի համար: Նա կուզեր նույնիսկ, որ Հունաստանի գրաված վայրերի հայությունը (Զմյուռնիա) հեռագրելով Լոնդոն և այլուր՝ իր բողոքը հայտներ թյուրքական տիրապետության որևէ հնարավորության դեմ: Նորից ու նորից խորհուրդ էին տալիս մեզ Ամերիկա պատվիրակություն ղրկել և այնտեղ եռանդով գործել:

Այս բոլորից հեշտ էր եզրակացնել, որ նրանք դժվարություններ ունեն և, հակառակ Բրիտանական կառավարության բոլոր համակրանքին, զգում են, որ իրական օգնություն չեն ստանա և որոշ հույսեր են կապում հայերի գործակցության և աջակցության հետ:

Իմ հարցին, թե իրենց զրույցի ընթացքին խոսք եղե՞լ է Հայաստանի մասին, Բալդացցի պատասխանեց, թե՝ հաճախ, և որ Բրիտանական բարձր շրջանակների տրամադրությունը շարունակում է մնալ համակիր՝ հայերին: Սակայն նա ավելացրեց, որ այս հանգամանքը մեզ պետք չէ լիապես գոհացնի: Եթե Անգլիա ևս, Ֆրանսիայի և Իտալիայի օրինակին հետևելով, ստիպված լինի անջատ համաձայնություն կնքել թյուրքերի հետ, վտանգ կա, որ Հայաստանի Խնդիրը կարող է դուրս մնալ և մենք կարող ենք զոհ գնալ: «Ահա թե ո՛ր վտանգի դեմ դուք պետք է պայքարեք»: Նա ավելացրեց սակայն, որ Բրիանի վերադարձից առաջ Արևելյան Խնդիրը մեջտեղ պիտի հանվի և որ դա մի բարեհաջող

պարագա է, քանի որ հնար կտա մեզ (հայերին և հույներին) աշխատելու: Ասաց նաև, որ Անգլիան ճիգ պիտի թափի Արևելյան Հարցը կարգադրել մյուս երկու Դաշնակիցների հետ համախորհուրդ և միաբան:

Հույն նախարարները այստեղից գնում են Հռոմ:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԴԻՐԵԿՏՈՐ ՕՍԲՈՐՆԻ ՀԵՏ

Լոնդոն
Նոյեմբեր 2

Ես պատմեցի նրան Կարսի վերջին ռուս-թյուրքական համաձայնության մանրամասները և ծանրացա թյուրքերի կողմից Կովկասի գրավման կարելիության և նրանից ծագող վտանգների վրա:

Այս խնդիրների շուրջը բավական երկար մտքերի փոխանակություն եղավ, որի ընթացքում, ես քարտի (քարտեզի) վրա ցույց տվի Սովետական Հայաստանի և Քեմալիստ Թյուրքիայի միջև հաստատված սահմանագիծը և նրա քաղաքական ու ռազմական նշանակությունը:

Զրույցի նյութ եղավ նաև ֆրանկոթյուրք վերջին համաձայնությունը և նրանից առաջ գալիք ահագին վտանգը Կիլիկիայի հայության համար, որ ձգվում է անպաշտպան՝ թյուրքերի քմահաճույքին:

Ես դրեցի վերջում հետևյալ կոնկրետ հարցերը.

ա) Ի՞նչ կլինի Բրիտանական կառավարության դիրքը Թյուրքիայի նոր առաջխաղացության պահուն դեպի Կովկաս, դեպի Բաքու;

բ) Հնարավո՞ր է Մեծն Բրիտանիայի անջատ համաձայնությունը թյուրքերի հետ, նման ֆրանսիականին;

գ) Այդպիսի համաձայնությունը կարո՞ղ է Հայկական Հարցը դուրս թողնելու գնով լինել:

Օսբորնը պատասխանեց.

1) Եթե Թյուրքիան արշավի Անդրկովկաս, Անգլիան հազիվ թե հնար և միջոց ունենա այդ արշավանքը խափանել: Դա շատ ցավալի կլինի, բայց ինքը սիրում է պատրանք չթողնել;

2) Անգլիան բնավ տրամադիր չէ որևէ անջատ խաղաղություն կնքել թյուրքերի հետ, որովհետև նա առանձին նյութական շահեր,

առանձնաշնորհումներ չի հետամտում, այլ՝ քաղաքական շահեր: Անգլիան Արևելյան Հարցը կլուծի Դաշնակիցների հետ համերաշխ;

3) Եվ հետևապես Հայկական Հարցը, որպես Սևրի դաշնագրի ընդունած խնդիրներից մեկը, չի կարող դուրս մնալ և չպետք է դուրս մնա, այլ իր լուծումը կստանա ամբողջի հետ միասին: Եվ, ավելացրեց վերջում՝ «վախենալու պետք չունիք»;

4) Ինչ վերաբերում է Կիլիկիային, Օսբորնը կարծում է, թե դա խաղաղություն չէ Ֆրանսիայի և Թյուրքիայի միջև, դա մի մասնակի համաձայնություն է, որ դուրս է Սևրի դաշնագրից:

Տպավորությունս այն է, որ Օսբորնը ֆրանկ-և-թյուրք համաձայնության մասին իր իսկական զգացումը չարտահայտեց և այդ մասին արած իմ առաջարկություններին խուսափողական պատասխան տվեց:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ԼՈՆԴՈՆՈՒՄ ԱՄՆ ԴԵՍՊԱՆ Պ. ՀԱՐՎԵՅԻ ՀԵՏ

Լոնդոն
8 նոյեմբերի, 1921

Այսօր, նոյեմբերի 8-ին, տեսնվեցի Միացյալ Նահանգների Լոնդոնի դեսպան Պ. Հարվեյի հետ: Զրույցի նյութն էր ֆրանկոթյուրք վերջին համաձայնությունը: Ես պարզեցի մեր հայեցակետը այսպես.–

1) Դաշնակիցները Կիլիկիան գրավել են հայերի զինվորական աջակցությամբ, որի փոխարեն հայերին խոստացած են լուրջ երաշխիքներ Կիլիկիայում;
2) Դաշնակիցները քաջալերել են հայերի վերադարձը Կիլիկիա, և այսօր նրանց թիվը 150 հազար է այնտեղ;
3) Ֆրանսիան Կիլիկիան գրավել է հանուն Դաշնակիցների՝ քրիստոնյաների պաշտպանության համար;
4) Կիլիկիայի Խնդիրն առանձին չի կարելի կարգադրել. նա կապված է Արևելյան Խնդրի և Հայոց Հարցի հետ;
5) Անջատ համաձայնությունները միաժամանակ զորացնում են թյուրքերին և նրանց դաշնակից բոլշևիկներին և ամրապնդում նրանց փոխադարձ դիրքը Կովկասում և Հայաստանում:

Այս բոլոր պատճառներով ես ստիպված եմ հանուն հայ ազգի

բողոքել ֆրանկո-թյուրք համաձայնության դեմ, որ առանց որևէ իրական երաշխիքի 150 հազար հայություն հանձնում է թյուրքերի տիրապետության այն ժամանակ, երբ նույն թյուրքերը ոչ միայն Թյուրքաց Հայաստանն են տիրում, այլև անցյալ տարվանից հրով ու սրով գրավեցին Կովկասյան Հայաստանի մի կարևոր մասը: Գիտեմ, որ Ամերիկան անմիջապես չի մասնակցում եվրոպական գործերին, բայց նրա բարոյական ազդեցությունն ահագին է: Եվ քանի որ պ. դեսպանը Ամերիկան է ներկայացնում Գերագույն Խորհրդում, պիտի խնդրեի իր ազդեցությունը գործ դնել, որպեսզի Դաշնակիցներն առայժմ չպարպեն Կիլիկիան՝ առանց իրական երաշխիքների քրիստոնյաների ապահովության համար և, եթե, վերջ ի վերջո, Կիլիկիան ձգվելու է թյուրքերին, դա պետք է կատարվի այն ժամանակ միայն, երբ թյուրքերը կդատարկեն թե՛ Կովկասյան և թե՛ Թյուրքաց Հայաստանը և կիրագործեն փոքրամասնության երաշխիքները Կիլիկիայում:

Հարվեյ. – Ձեր բոլոր ասածները ես կհաղորդեմ իմ կառավարության: Ես պետք չունիմ Ձեզ ասելու, բայց Դուք հասկանում եք անշուշտ, որ անգլո-ֆրանսիական հարաբերությունները չափազանց լարված են և այսպես շարունակվել չեն կարող: Ի մոտո կգումարվի Գերագույն Խորհուրդը, որին անդամ եմ ես: Կուզեի մոտիկից ծանոթանալ ձեր Հարցի հետ: Շատ ուրախ կլինեի ձեռքիս տակ ունենալ մի հուշագիր ձեր Խնդրի մասին: Ես խոստանում եմ Ձեզ՝ պաշտպանել ձեր շահերը Ձեր ներկայացրած եղանակով Գերագույն Խորհրդում:

Ես շնորհակալ եղա դեսպանից, երախտագիտությունս հայտնեցի Ամերիկայի մեծահոգի և առատաձեռն օգնության համար Հայաստանին:

Մի քանի օր հետո, ներկայացրի պ. Հարվեյին ընդարձակ հուշագիր Հայկական Հարցի մասին՝ ցույց տալով միաժամանակ նրա լուծման պայմանները:

ՈՒՆԿՆԴՐՈՒԹՅՈՒՆ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ ԼՈՐԴ ՔԸՐԶԸՆԻ ՄՈՏ

Լոնդոն
Նոյեմբեր 19, 1921

Այսօր, նոյեմբեր 19-ին, Լորդ Քըրզոն ընդունեց ինձ և Նորատունկյանին: Ինձ ընկերակցում էր մեր ներկայացուցիչ գեն. Բագրատունի, իսկ Նորատունկյանին՝ պ. Մալքոմ:

Քըրզոնի մոտ մեզ առաջնորդեց իր կաբինետի վարիչ պ. Վանզիտտար:

Նորատունկյանի ցանկության անսալով՝ առաջինը խոսք առա ես:

Ահարոնյան. – Միլորդ,– ասացի,– հակառակ մեր խորին համոզումին, որ Բրիտանական կառավարությունը ձեռքից եկածը չի խնայում օգնելու հայ ժողովրդին մեր Դատի այս ցավալի օրերին, այնուամենայնիվ մեզ թվաց, որ պարտք ունինք Ձեր հատուկ ուշադրությունը հրավիրել ֆրանկո-թյուրք համաձայնությունից բխող մի քանի հետևանքների վրա, որոնք հայ ժողովրդի վրա ծանրանալու բնույթն ունին: Այս տեսակետից պարտք եմ համարում նկատել տալ, որ Կիլիկիան այսպես, առանց իրական երաշխիքի, պարպելով և այն թյուրքերին ձգելով, Դաշնակիցներիր ձեռքից թողնում են մի քանկարժեք գրավական, որ մենակ զուցե բավական լիներ թյուրքերին բռնադրելու Արևելյան Հարցը կարգադրող որևէ դաշնագիր: Մինչդեռ Կիլիկիան տիրապետելով՝ թյուրքերն ավելի ըմբոստ և ավելի պահանջկոտ կդառնան: Թյուրքերի ուշադրությունից չի վրիպում անշուշտ այն պարագան, որ Կիլիկիան նրանք ստանում են Դաշնակիցներից ճիշտ մի շաբաթ հետո այն մյուս դաշնագրից,– Կարսի դաշնագիր,– որով Սովետ Ռուսաստանի ճնշման տակ Հայաստանը (սովետականները) թողնում է Թյուրքիային Կովկասյան Հայաստանի մեկ կարևոր բաժինը՝ Կարսի, Արդահանի և Սուրմալուի շրջանները: Այս զուգադիպությունը մեծապես քաջալերիչ է թյուրքերի համար:

«Այս նշանակալից փաստը պիտի բարձրացնի թյուրքերի վարկն Արևելքում ի վնաս ընդհանուր խաղաղության և մասնավորապես ի վնաս մեր Հայ Դատի: Խուսափելու համար այս ցավալի հետևանքներից՝ կարծում ենք, որ Դաշնակիցները չպիտի պարպեն Կիլիկիան՝

1) առանց կանխավ դատարկել տալու հայկական բոլոր հողերը Թյուրքական և Կովկասյան Հայաստանում, և
2) առանց իրական երաշխիքներով ապահովելու Կիլիկիո հայության ազատությունը թյուրքական բռնություններից, ինչ որ խոստացված է նրան բազմիցս:

«Խնդրում ենք նկատի առնել, որ Կիլիկիան իրենց ձեռքին ունենալով և զորանալով, հենված այդ փաստի՝ առաջ բերած իրենց նոր վարկին, թյուրքերն այսօր լրջորեն սպառնում են և՛ Կովկասյան հայության: Այս երկյուղը մտացածին չէ, եթե

խորհինք, որ բոլշևիզմը մի ժամանակավոր, անհաստատ կացություն է, որ կարող է ամեն րոպե քաշվել Կովկասից, ինչպես այդ եղավ 1918 թվին, և այդպիսով կամավ կամ բռնադատված լքել Կովկասը թյուրքական քմահաճույքին:

«Մենք լուրեր ունինք, վստահելի լուրեր, որ Կարսի կոնֆերանսում ռուս Սովետը, այս պատահականությունն ի նկատի առնելով, փորձել է համաձայնության գալ թյուրքերի հետ Կովկասը նրանց թողնելու պայմանների մասին, եթե Ռուսիան կռվի բռնվի Լեհաստանի կամ Ռումանիայի հետ: Ես խնդրում եմ հավատալ, որ ռուսների Կովկաս պարպելը բնավ անհնարին չէ, և ներկա պարագաներում, երբ ո՛չ Արևելյան և ո՛չ Հայկական Հարցն է լուծված, երբ հայ-թյուրք հարաբերությունների սրությունը թյուրքերի վայրագության քաջալերիչ պիտի լինի, այսպիսի մի հեռանկարը՝ ռուսների քաշվելը Կովկասից՝ կլինի հայության համար զարհուրելի կատաստրոֆա[225]: Հայ ժողովուրդը, բոլշևիկներին ատելով հանդերձ, սարսափում է թյուրքի առաջխաղացման հեռանկարից: Մակայն, ինչպես ասացի, ռուսների նահանջը Կովկասից կարող է տեղի ունենալ անսպասելի ժամին, և թյուրքական արշավանքը՝ նույնպես՝ իր բոլոր սոսկալի հետևանքներով հայության համար: Այս ահռելի կատաստրոֆից ազատվելու համար, մեր կարծիքով, անհրաժեշտ է այլևս չձգձգել և հնար եղածին չափ արագացնել Արևելյան և Հայկական Հարցի լուծումը՝ հայ-թյուրք հարաբերությունները նորմալ դարձնելու համար: Այլապես թյուրքերը, պատեհ առիթից օգտվելով, մահացու հարված կարող են հասցնել հայ ժողովրդին և միաժամանակ համայն Արևելքը շփոթի ու խռովքի մեջ կձգեն:

Լորդ Քըրզընն. – Իրավունք ունիք. եթե թյուրքերը վերստին արշավեն դեպի Կովկաս ու Հայաստան, հայությունը իսպառ կփչանա (Լորդ Քըրզընն ձեռքի հուսահատ շարժում արեց դեպի վար): Մենք կաշխատենք փութացնել Արևելյան Խնդրի կարգադրությունը: Ինչ վերաբերում է Կիլիկիային, Դուք գիտեք, որ այդ շրջանը վերաբերում է Ֆրանսիային և Դուք պիտի դիմեք Բրիանին, Բերթըլոյին (Լորդ Քըրզընի ձայնի և շարժումի մեջ ցասկոտ, զսպված հեգնություն կար):

Ահարոնյան. – Մենք նրանց հետ տեսնվել ենք, միլորդ: Մեր բոլոր անհանգստության՝ Կիլիկիո հայության սպառնացող վտանգի մասին, նրանք միայն մի պատասխան ունին՝ թե մենք

225 *Աղետ:*

պետք է վստահինք, հավատ ունենանք դեպի թյուրքերի պարկեշտությունն ու խոստումը: Դուք գիտեք, սակայն, թե ինչ արժեք ունի թյուրքի խոստումը, երբ մանավանդ դա վերաբերում է քրիստոնյաների ապահովության: Մյուս կողմից, քանի որ Կիլիկիան գրավված է ֆրանսիացիներից հանուն Դաշնակիցների, մեզ արդար և իրավացի թվաց, որ դիմենք **բոլոր** Դաշնակիցներին և մասնավորապես Մեծն Բրիտանիայի կառավարության: Հայ ժողովուրդն այսօր պանիկով[226] բռնված՝ մեզ է դիմում միջոցներ տալ իրեն գաղթելու: Գուցե կարելի էր ֆրանսիականի փոխարեն միջ-դաշնակցային զորքերով կարգ պահպանել Կիլիկիայում մինչև Արևելյան Խնդրի կարգադրությունը:

Լորդ Քըրզընն. – Հավատացեք ինձ, որ ձեր Խնդրով ես մեծապես զբաղված եմ: (Սա խուսափողական պատասխան էր իմ կատեգորիկ առաջարկին:)

Նորատունկյան. – Կիլիկիայի հայ ժողովուրդը կռվել է այդ երկրի ազատագրության համար Դաշնակիցների շարքերում և 150 հազար հայություն, Դաշնակիցների խոսքին վստահած, եկած հաստատված է Կիլիկիա: Այս ժողովուրդը նորից թյուրքերին հանձնելը՝ նրանց ջարդել տալ կնշանակի: Ֆրանկո-թյուրք համաձայնությունն ամբողջ Արևելքում պիտի ծառայի Դաշնակիցների վարկի նվազման և թյուրքերի քաջալերության: Եթե Ֆրանսիան ֆինանսական դժվարություններ ունի, կարելի չէ՞ արդյոք խնդրի այդ կողմը կարգադրել՝ փրկելու համար 150 հազար հայությունը: Հավատալ թյուրքերին անհնարին է: Ես նրանց ճանաչում եմ մոտիկից, մասնավորապես քեմալիստ կոչվածներն վատթար ավազակներ են, բոլշևիզմի բարեկամ, պանիսլամիստ, պանթուրանիստ: Ցավալի է, որ Ֆրանսիան թողեց Պոլսի սուլթանական օրինավոր կառավարությունը և կապվեց այս ավազակների հետ: Կիլիկիայի Խնդրի այսօրինակ միակողմանի կարգադրությունը ամեն տեսակետով աղետավոր է հայության համար: **Մենք պնդում ենք Սևրի դաշնագրի վրա և պիտի պնդենք**: Նա պետք չէ թղթի կտոր դառնա: Աշխարհում տեսնված չէ, որ մի դաշնագիր մերժվի ո՛չ թե պարլամենտներից, այլ ստորագրող կառավարություններից: Եթե Սևրի դաշնագիրը պիտի փոփոխվի, նա պիտի կատարվի բոլոր ստորագրող պետությունների մասնակցությամբ (առանց Թյուրքիայի) և ոչ թե այսպիսի միակողմանի ձևով, ինչպես ֆրանկո-թյուրք համաձայ-

226 *Խուճապ:*

նությունն է: Հետո, ես կխնդրեի, որ մի միջ-դաշնակցային հանձնաժողով մեկներ Կիլիկիա՝ տեղի վրա տեսնելու, թե մինչև ո՞ր աստիճան վտանգավոր է թյուրքերին վստահիլ և ըստ այնմ միջոցներ ձեռք առներ:

Լորդ Քըրզըն. – Ձեր բոլոր ասածները կարելի է երեք գլխավոր մասի բաժանել: 1) Ֆրանկո-թուրք համաձայնությամբ Մուստաֆա Քեմալ կուժեղանա ի վնաս Դաշնակիցների: Ես լիապես բաժանում եմ այդ կարծիքը: Դա շատ վտանգավոր պարագա է; 2) Սևրի դաշնագրի որևէ փոփոխություն պետք է Դաշնակից մեծ պետությունները միաբան ու միասին կատարեն: Ես ևս գտնում եմ, որ դա այդպես պետք է լինի և պնդում եմ Սևրի դաշնագրի վրա; 3) Տարաբախտաբար **Հյուսիսային** Հայաստանն առայժմ Սովետ է: Ինչ վերաբերում է **Հարավային** Հայաստանին՝ դուք վստահ կարող եք լինել, որ առաջիկա Համաժողովում ես այն կպաշտպանեմ: Հավատացեք ինձ, որ Հայկական Հարցը, հայերի իրավունքների պաշտպանությունը, եթե հավատում եք ինձ, ես իմ ուժերը չեմ խնայի պաշտպանելու համար: Մենք նոր ստացանք ֆրանսական կառավարության պատասխանը մեր տված նոտային: Հավատացեք ինձ, որ ես ամենաուշադիր և ամենակրկիտ քննության առա հատկապես հայերին վերաբերյալ բաժինը: Ես հայերին չեմ լքել, ինչպես և Հայկական Հարցը:

Նորատունկյան. – Կարո՞ղ եք հեռագրել Կիլիկիա, որ ժողովուրդը չգաղթի, մնա իր տեղում:

Լորդ Քըրզըն (մտածկոտ). – Եթե վախկոտ են, կփախչեն: Բայց գերադասելի կլիներ, որ քաջ լինեին ու մնային իրենց տեղերը: Ձեր կողմից կարող էիք հեռագրել այդ:

Ունկնդրությունը վերջացավ, 45 րոպե տևեց:

Հրաժեշտի վայրկյանին ասացի.

Ահարոնյան. – Միլորդ, անցյալ տարի, մի այսպիսի ունկնդրության պահուն Դուք բարի եղաք ասելու, թե Հայ Պետության ստեղծումը Դուք Ձեր կյանքի լավագույն գործերից մեկն եք համարում: Ձեր ազնիվ խոսքերը գիտե մեր ժողովուրդը, նա սպասում է:

Լորդ Քըրզըն. – Իրավունք ունիք, ես չեմ մոռացել:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՎԱՆԶԻՏՏԱՐԻ ՀԵՏ

Լոնդոն
22 նոյեմբեր, 1921

Մեկնելուցս առաջ վերջին անգամ տեսնվեցի Լորդ Քըրզընի կաբինետի գլխավոր Վանզիտտարի հետ:

Զրույցի նյութն էր՝

1) Կովկասյան հանրապետությունների հակաբոլշևիկյան շարժման ձգտումները:

Ես ասացի, որ մեր ժողովուրդը, համոզված հակառակորդ լինելով բոլշևիզմին, այնուամենայնիվ երկընտրանքի կրիտիկական շրջանում միշտ բոլշևիզմը կգերադասի թուրքից: Առաջինը չի կոտորում, երկրորդը միայն կոտորել գիտե: Մեր ժողովուրդի այս համոզումն այնքան անխախտ է, որ, հակառակ մեր բոլոր վստահության և հավատին դեպի բրիտանական կառավարությունը, անգամ եթե Լոնդոնից այդպիսի խորհուրդ տրվեր, հայությունը բոլշևիկների դեմ չի գնա այնքան ժամանակ, որ կլինի թյուրքական առաջխաղացության արյունոտ հեռանկարը:

Վանզիտտար. – Իրավունք ունիք, թյուրքերին չէ կարելի գերադասել բոլշևիկներից: Ես ուրիշ առթիվ ասել եմ և Չխենկելիին: Այս պահուն բոլշևիկների դեմ որևէ ձեռնարկ ձեր կողմից կվերջանա կատաստրոֆով ձեզ համար:

Ահարոնյան. – Ոմանք կուզեին այս ձեռնարկն անել թյուրքերի աջակցությամբ և նույնիսկ թյուրք հողի վրա պատրաստել կադրեր թյուրք սպաներով: Մենք չենք ուզում քայլել այդ ճամփով և, վճռապես, դեմ կլինինք: Թյուրքերի հետ այդ ուղղությամբ որևէ ձեռնարկ, եթե այն երբևիցե լինելու է, պիտի ստորադասվի Հայկական Խնդրի լուծման և հայ հողերի վերադարձին:

Վանզիտտար. – Դուք ճիշտ դրիք խնդիրը. **նախ՝** Հայկական Հարցի կարգադրություն, հայ հողերի վերադարձ, **ապա՝** զրույց այս մասին:

Ահարոնյան. – Ձեր այս կարծիքը մեզ համար շատ թանկագին է և զուգադիպում է մերինին: Թույլ տվեք, սակայն, մեր մի անհանգստությունն այստեղ պարզել:

2) Ես իմանում եմ, որ այստեղ Լոնդոնում շրջաններ կան, որոնք խորթ աչքով չէին դիտի, եթե տեսնեին թյուրքերի մի նոր առաջխաղացումը դեպի Անդրկովկասի խորքերը, դեպի Բաքու և թյուրքական hegemonie-ի[227] հաստատությունն այդ երկրների

---

227 *Գերիշխանություն (հունարեն) – Որևէ դասակարգի կամ պետության ղեկավար, խշխանական դերը՝ մյուս դասակարգերի կամ պետությունների հանդեպ:*

վրա: Ըստ իս՝ ավելի կարճամիտ ծրագիր դժվար է երևակայել: Եթե այսօր ռուսներն այնքան անզոր լինին, որ թյուրքը կարողանա գրավել Կովկասը, հավատացեք ինձ, որ նա հետագայում կգա ավելի իրավունքով, քան եթե Կովկասը մնար իր բնիկներին, հայերին, վրացիներին ու թաթարներին: Ռուսը կարող է, վերջ ի վերջո, հասկանալ ու հաշտվիլ, որ Կովկասը բնիկների սեփականություն դառնա, բայց նա չի կարող հանդուրժել Կովկասը թյուրքական: Թյուրքը Կովկասում պիտի անվերջ հուզի Ռուսիայի ներսի և շրջապատի մուսուլմաններին, և բնական է, որ Ռուսիան ըմբոստանա այս կարելիության դեմ: Կովկասյան պետությունները միանգամ, առանց թյուրքի շատ ավելի հիմքեր ունին légale[228] ու juriditique[229], իրենց անկախ գոյությունն ընդունել տալու ռուսներին քան թյուրքերի հետ, որոնց մասնակցությունը[230] այս արդար դատը, Կովկասյան ազգերի սեփականությունը կվերածվի մի վատ ավանտյուրայի[231]: Հայ ժողովուրդը այսպես է համոզված և ամեն տեսակետից նա չի կարող թյուրքական որևէ առաջխաղացումն թաքցնել, ևս առավել աջակցել ու գործակցել:

Վանգիտտար. – Ես կատարելապես Ձեզ հասկանում եմ: Ես ուրախ եմ, որ դուք այդ ծրագրով եք գործելու: Ես շատ գոհ եմ, որ Դուք տեսնվեցիք Լորդ Քըրզընի հետ: Ամեն տեսակետից այդ շատ լավ եղավ:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ Օ'ՔՈՆՆՈՐԻ ՀԵՏ

Լոնդոն
Նոյեմբեր 23, 1921

Զրույցի նյութն էր այդ դիմումը, որ մի խումբ բրիտանացի հայասերներ մտադրած էին անել Բրիանին Հայկական Հարցի հա-մար:

Օ'Քոննոր կամեցավ իմ կարծիքն իմանալ այն մասին թե՝

ա) Հարկավո՞ր է այդ դիմումը;

բ) Բրիան կհամաձայնի՞ ընդունել այդպիսի պատվիրակություն;

---

228 *Օրինական, օրենքին պատշաճ:*

229 *Իրավական:*

230 *Գուցե՝ մասնակցությամբ:*

231 *Արկածախնդրություն:*

գ) Հայկական Հարցի ո՞ր կետերի վրա պետք է ծանրանալ:

Առաջին երկու կետին ես տվի դրական պատասխան:

Գալով նյութին՝ ես պարզեցի Օ'Քոննորին այն միտքը, որ միմիայն Կիլիկիայով կամ քրիստոնյաների պաշտպանությամբ չպիտի բավականանալ, այլ դնելու է գլխավորապես հայ պետության, թյուրքահայ հողերի անջատման խնդիրը թյուրքերից:

Նա համաձայնեց ինձ հետ: Դիմումը կատարելու էին Լորդ Բրայսի հետ:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՎԱՐՉԱՊԵՏ Պ. ԲՐԻԱՆԻ ՀԵՏ

Փարիզ
7 դեկտեմբեր, 1921

Այսօր, ցերեկվա ժամը 12-ին, Արտաքին Գործոց նախարարության շենքի մեջ պ. Նորատունկյանին և ինձ ընդունեց վարչապետ Բրիան մեր խնդրի համար:

Զրույցի նյութն էր ֆրանկո-թուրք համաձայնությունը, Կիլիկիայի պարպումը և առհասարակ Հայկական Խնդիրը:

Բրիան մենակ էր: Առաջինը խոսք առավ Նորատունկյան:

Նորատունկյան. – Պ. Նախագահ, մենք եկած ենք Կիլիկիայի չարաբաստիկ Խնդրի մասին Ձեզ հետ խոսելու ու շնորհակալ ենք, որ բարի եղաք շուտափույթ կերպով մեզ ունկնդրություն շնորհել: Դուք հիշում եք անշուշտ, պ. Նախագահ, որ ժամանակին, երբ Դուք տակավին վարչապետ չէիք, մեզ ասացիք, թե Կիլիկիայի Խնդիրը Ձեր սեփական գործն է: Այն ժամանակից հետո, ահա մենք ֆրանկո-թուրք համաձայնության ծանր հետևանքների առջև ենք կանգնած: Տարաբախտաբար, Դուք բացակա էիք, և մենք անկարող եղանք ժամ առաջ Ձեր ուշադրությանը հանձնել քանի մը կետեր, որոնք, ըստ մեզ, կարող էին բարվոքել ստեղծված ծանր դրությունը: Գոհ ենք, որ գեթ այժմ մեր անհանգստությունները Ձեզ կհայտնենք: Ժամանակին մենք երկու հուշագիր ներկայացրինք Հանրապետական Կառավարության, որ ղրկվեց գեն. Գուրոին և նրա հաճությունն իսկ ստացանք: Մենք ցույց էինք տալիս Կիլիկիո Պրոբլեմը լուծելու արդար ու գործնական միջոցներ: Եվ, սակայն, մնաց անուշադիր: Այնուհետև Դուք, պ. Նախագահ, Բեքիր-Սամիի հետ համաձայնություն կնքեցիք, որը նույնպես ավելի տանելի էր: Այս նոր համաձայնության և հինի

միջև ահագին տարբերություն կա՝ ի վնաս մեզ: Եվ մեր ժողովուրդը փախում է սարսափած:

«Պետք է ասել, որ Կիլիկիայի Խնդիրն այնպիսի հուզում է պատճառել մեր ժողովրդին, որ ամեն կողմից նեղում են հուսաբեկիչ հեռագրերով, որոնք այսօր դեզ են կազմում: Ցավալին այն է, որ Ֆրանսիան համաձայնություն է կնքել Անկարայի Ժողովի հետ, որ ոչ այլ ինչ է, եթե ոչ ոճրագործների մի ժողովածու: Ես դրանց մեծ մասին անձամբ ճանաչում եմ: Շատերը քսանհինգ տարվա իմ պաշտոնավարության ընթացքին ձեռքիս տակով են անցել: Եվ կարող եմ վստահաբար ասել, որ սակավ բացառությամբ ամենքը պանիսլամիստ, պանթուրանիստ, մանավանդ օտարատյաց հանցագործներ են, որոնց համար չկա սրբություն: Եվ մեր ժողովուրդը երևակայել չէր կարող, թե նորից այս մարդասպանների իշխանության պիտի ենթարկվի: Սա մի սարսափելի աղետ է, որովհետև դրանք բառոյապես սնանկացած, մի քանի անգամ սնանկ հայտարարված մարդիկ են, որոնց հավատալն այլևս անհնարին է, մանավանդ որ իրենց բոլոր ոճիրների համար ո՛չ միայն որևէ պատիժ չստացան, այլ սիրաշահվեցին, քաջալերվեցին: Անցյալ մարտին Լոնդոնում Բեքիր Սամին եկավ մի պատվիրակությամբ, որի անդամներից երեքը հականե հանվանե հայտնի են որպես իսկական ջարդարարներ: Բեքիր Սամիի ձեռքերը հայի արյան մեջ չեն շաղախված, բայց նա թուրք չէ, այլ չերքեզ: Մնացած երեքը՝ իսկական մարդասպաններ: Ի՞նչպես կարելի եղավ, որ Լլոյդ Ջորջի և այլոց հետ թեյի հրավիրվեին: Այս փաստը հայ ժողովրդի սիրտը խոցեց: Էլ ու՞ր մնաց այն հանդիսավոր հայտարարությունը, որով մեծ պետությունները պատասխանատու էին հռչակում այս չարագործներին հայերի կոտորածի համար: Ու՞ր մնաց պատիժը: Եվ այժմ, այս բոլորից հետո, Ֆրանկլին Բույոն մեզ հրավիրում է վստահիլ, հավատ ընծայել այս չարագործներին: Մենք այդ չենք կարող անել, պ. Նախագահ: Անկարայի խոստումները կեղծիք են, վատ խաբեություն, և հայ ժողովուրդը զարհուրելիորեն կտուժի, եթե հավատ ընծայի նրանց խոստումներին: Եթե անմիջական կոտորած էլ չանեն, հազար միջոց գիտեն փչացնելու հայերը: Նրանք ամենքը դաստիարակված են Աբդյուլ-Համիդի ոգիով, նրա ձեռքի տակ, իսկ հայտնի է, որ այս դաժան տուլբանի դաստիարակությունն ու ոգին ապականություն էր: Այո՛, Անկարայի Ժողովը հայտարարել է քրիստոնյաներին **ազատ** զինվորությունից...

Բրիան. – Տեսնու՞մ եք, ահա՛ իմ հրահանգների արդյունքներից մեկը, դեռ կան ուրիշները ևս:

Նորատունկյան. – Այո՛: Բայց մինչև ե՞րբ: Հետո, կան Réquisition-ները[232] (բռնագրավումները): Կան ծածուկ հալածանքները: Կան անիրավ դատարանները: Կան աշխատանքի պատրվակով տներից, ընտանիքներից խլված երիտասարդները, որ էլ ետ չեն գալիս: Ո՞ր մեկն ասեմ: Նոր փորձերի պետք կա՞ր այս բոլորն իմանալու համար: Մենք պատրաստ ենք աջակցել Ձեզ խաղաղության, հանգստության գործին: Բայց ո՞ւր է երաշխիքը մեր ժողովրդի ապահովության:

Բրիան. – Բայց Դուք ի՞նչ կառաջարկեիք:

Նորատունկյան. – Շատ ուրախ եմ, որ այս հարցը տվիք: Այս րոպեին իմ պաշտոնակից պ. Ահարոնյան ճիշտ այդ հարցի պատասխանը կտա:

Բրիան. – Դուք ևս պետք է նկատի առնեք, պարոններ, որ այս համաձայնությունը կնքել մենք ստիպված ենք եղել: Ֆրանսիայի դժվարություններին ծանոթ եք: Մեր միջոցները չեն ներում Արևելքում այդպիսի մեծածախս բանակ պահել: Ոչ մի պարլամենտ չի կամենա մեր պայմաններում այդ բանակի բյուջեն քվեարկել: Մենք այնուամենայնիվ սպասեցինք մինչև վերջին կարելիությունը: Ավելի սպասել մեզ համար, հավատացեք ինձ, անհնարին է, մեր ուժերից վեր է: Հազարներով զոհ տվինք Կիլիկիային և միլիոններ ծախսեցինք: Սպասեցինք Հունական արշավանքին՝ հուսալով թե նա լուծում կբերի հարցին և մենք կկարողանանք քաշել մեր զորքերը: Բայց տեսանք, որ թուրքերը նրանց ետ մղեցին, և սպասելի է, որ զարնանը նրանց դուրս կքշեն նաև Զմյուռնիայից: Արդ՝ երբ թուրքերը վերջացնեն հույների հետ, բնական է, որ պիտի պատերազմը դարձնեն մեր դեմ: Իսկ մենք բնավ ցանկություն, միջոց, հնար չունինք թյուրքերի հետ պատերազմելու: Մեր երկիրը այսպիսի պատերազմ չի ընդունի, չի հասկանա, չի կամենա: Ի՞նչ էր մնում մեզ անել այս պայմաններում: Ժամ առաջ վերջացնել թյուրքերի հետ հաշտությունը և դուրս քաշել մեր զորքերը Կիլիկիայից, որը, ըստ Սևրի դաշնագրի, վերջ ի վերջո մենք պարտական էինք նրանց վերադարձնել: Գալով հայերի ապահովության, խնդրում եմ հավատալ, որ մենք պետք եղած միջոցները ձեռք ենք առել, մեր պաշտոնյաները այնտեղ են՝ հսկելու համար այդ ապահովության պայմանների իրագործման: Ահա տեսնում եք, արդեն առաջին նշանը՝

232 *Պետության կողմից, վճարի դիմաց՝ սեփականության հարկադրական օտարումը կամ ժամանակավոր խլումը:*

քրիստոնյաները չպիտի զինվորագրվին: Սա լավ փաստ է: Կիլինին և նորերը, հավատացեք ինձ: Եվ, վերջապես, պետք է կարծել, որ թյուրքերն էլ այնքան հիմար չեն, որ ներկա պայմաններում ջարդ կազմակերպեն և իսպառ փչացնեն իրենց գործը՝ ամբողջ Եվրոպան իրենց դեմ հանելով: Ո՛չ, նրանք այդ չեն անի այժմ: Ապագայում՝ դա այլ խնդիր է: Բայց դրա համար ժամանակ կա: Շուտով Գերագույն Խորհուրդը գումարվելու է, և ես ձեզ խոստանում եմ այս հարցը այնտեղ տանել և ապահովել իսպառ քրիստոնյաների կյանքն ու աշխատանքը: Բայց ասացի, որ մենք սպասել չէինք կարող: Ֆրանսիան շատ դժվարություններ ունի:

Ես. – Ֆրանսիայի ծանր դրության մասին խոսեցիք, պ. Նախագահ, և թե այդ դրությունն է պատճառը, որ Կիլիկիան այս ձախող պայմաններում հանձնված է թյուրքերին: Մենք, որ Ֆրանսիան մեր երկրորդ հայրենիքը համարեցինք, սիրեցինք և սիրում ենք, մենք չենք, որ կարող ենք անգիտանալ այդ դժվարությունները: Բայց դրա հետ միաժամանակ, ի՞նչպես ձեր ուշադրությանը չհանձնենք մեր ազգի, հայ ժողովրդի թշվառ, անտանելի գոյությունը, որի վրա այսօր ավելանում է Կիլիկիո աղետը: Կիլիկիո բնակիչ հայերը՝ այսօր ծովերի վրա թափառական, գլուխ դնելու տեղ չունին, ինչպես համայն հայությունը: Պ. Նախագահ, թույլ տվեք Ձեզ ասել, որ մենք այսօր ձեզ բերում ենք համայն հայ ազգի սուգը և ողբը: Թույլ կտա՞ք ինձ անկեղծ լինել:

Բրիան. – Խնդրում եմ:

Ես. – Այդ արցունքը ո՛չ միայն մեր ցեղի ճակատագրի համար է, այլ նաև Ֆրանսիայի վարկի՝ Արևելքում կրած այս ծանր հարվածի, այս մեծ նվաստացումի համար: Ֆրանսիայի վարկի նվաստացումը, որ մենք ողբում ենք, նաև մեր սեփական նվաստացումը, որովհետև մենք դարերով Ֆրանսիայի վարկին փարած մնացինք մեր բախտով: Ներեցեք ինձ, բայց ես չեմ կարող չհիշեցնել այսօր, որ այն մեծ ավանդությունը, որով մենք դաստիարակվեցինք և որով քրիստոնյաները Արևելքում Ֆրանսիայի ազդեցության մեջ էին գտնում իրենց իրական հովանին, այս դարավոր ավանդությունը այսօր իսպառ չքացավ: Ահա դարձյալ մի ուրիշ ցավը մեր ժողովրդի, որ Ֆրանսիային հավատաց ու Ֆրանսիան սիրեց: Սակայն աղետը տեղի ունեցավ, փաստը կատարված է, ֆրանսիական զորքերը դատարկել են արդեն Կիլիկիան, և հայ ժողովուրդը փախչում է այնտեղից ուշակորույս: Դուք մեզ հարցնում եք, թե մենք ի՞նչ միջոց կառաջարկեինք այս աղետը դարմանելու: Նախքան այդ՝ ներեցեք, որ այստեղ վեր հանեմ մի զուգադիպություն, որ Կիլիկիո Խնդրի վրա առանձին լույս է

սփռում: Այս տարի հոկտեմբերի 13-ին Կարսում տեղի ունեցավ Քեմալիստ թուրքերի և Մոսկվայի Սովետի ներկայացուցիչների մեջ մի ժողով, ուր թյուրքերը կարողացան Մոսկվայի օգնությամբ ընդունել տալ հայ թշվառ Սովետին մի դաշնագիր, որով Կովկասյան Հայաստանի մի խոշոր բաժինը՝ Կարսի, Արդահանի, Կաղզվանի, Սուրմալուի շրջանները անցնում են թուրքերին: Այդ շրջանների հայությունը անցյալ տարվա դեկտեմբերից արդեն թյուրքերն իսպառ ցրիվ տվին ու ջարդեցին, 8000 հայ երիտասարդներ քշեցին Թյուրքիա և մոտ օրերս նրանցից ետ եկավ միայն 700-ը, մնացածին ջարդել են: Արդ՝ Կարսի այս դաշնագրից մի շաբաթ հետո, կնքվում է ֆրանկո-թյուրք համաձայնությունը, որով թյուրքերին թողնվում է նաև Կիլիկիան: Չե՞ք գտնում, պ. Նախագահ, որ այս պարագան քաջալերիչ պիտի հանդիսանա թյուրքական պանթուրանիստ ձգտումներին, որի ճամփան բանալու համար է, որ թյուրքերը գրավեցին Կովկասյան Հայաստանի մի խոշոր մասը:

Բրիան. – Բայց, ներեցեք, սա մի խնդիր է, որ պիտի գա Գերագույն Խորհրդի առաջ, և անշուշտ մեծ պետությունները պետք եղած միջոցները ձեռք կառնեն՝ այդ խնդիրը կարգադրելու համար: Կիլիկիո Հարցը մի ուրույն գործ է, որ պետք էր կարգադրել այժմ:

Ես. – Պ. Նախագահ, իրավունք ունիք, ինձ Դուք հայտարարեցիք, որ Կիլիկիան թողիք թյուրքերին, համաձայն Սևրի դաշնագրի: Արդ՝ նույն Դաշնագիրը եթե Կիլիկիան թողել է թյուրքերին, Թյուրքիայի մի խոշոր բաժինն էլ թողել է հայերին: Մեզ թվում է, որ արդար չէ իրագործել Սևրի դաշնագիրը թյուրքերի համար, և զլանալ նույնը հայերին:

«Մեզ թվում է, որ Կիլիկիան թյուրքերին հանձնելուց առաջ կարելի էր նրանց պայմաններ դնել, որ Կիլիկիան կարող են ստանալ միայն այն ժամանակ, երբ կդատարկեն Սևրի դաշնագրով Հայաստանին հատկացված հողերը: Բայց կատարված է ճիշտ դրա հակառակը. թյուրքերը մի շաբաթ առաջ մի նոր դաշինքով իրենց են վերապահում ո՛չ միայն Թյուրքաց Հայաստանը, այլ և՛ Կովկասյան Հայաստանի մի խոշոր բաժինը, և մի շաբաթ հետո, կարծես որպես քաջալերություն այս անիրավության, ստանում են և՛ Կիլիկիան: Վերջապես, փաստը կատարված է: Անօգուտ է մեզնից հավատ սպասել դեպի թյուրքերը: Գեներալ Գուրո կոչ է անում հայերին և, Մուստաֆա Քեմալի Chevaleresque[233] բնա-

[233] *Ասպետական:*

վորության գովքը անելեն վերջը, հրավիրում է հավատալ նրա խոստումներին: Ո՛չ, պ. Նախագահ, Անկարայի խոստումներին մենք չենք կարող վստահիլ: Թո՛ղ Ֆրանսիան ինքը հայտարարի, թե իր պատվով պատասխանատու է հայության ապահովության համար, այն ժամանակ կհավատանք:

Բրիան. – Բայց դա միևնույնն է, եթե Գուրոն է ասում:

Ես. – Դա միևնույնը չէ: Նա մեզ հրավիրում է հավատալ թուրքերին, ոչ թե ֆրանսիացիներին: Կխնդրեինք այժմ գեթ Դյորթ-Յոլու[234] շրջանը, ուր այսօր հավաքված են Կիլիկիայից հալածական հայերը, և որ տակավին ֆրանսիական իշխանությունների ձեռքին է, շարունակի մնալ թյուրքերի իշխանությունից ազատ, որպես հայության ապաստան, մինչև որ Կիլիկիո Հարցը կարգադրվի և հայերը կարողանան դառնալ իրենց օջախները:

Բրիան. – Ես արդեն իսկ հրահանգ եմ տվել, որ մեզ մոտ լայն ընդունելություն անեն բոլոր խուսափող հայերին և դյուրություններ տան ու տեղավորեն: Դուք գիտեք անշուշտ, որ շատ տեղ նրանց չեն ընդունել: Բայց Ֆրանսիան չի կարող անտարբեր մնալ և պիտի հյուրընկալի նրանց:

Ես. – Մենք կխնդրեինք՝ մեկ կամ երկու հայ պաշտոնյա անվանել անդամ Կիլիկիա մեկնած ֆրանսիական Mission-ի և այսպիսով գուցե կարելի լինի մի փոքր վստահություն ներշնչել խուճապած ու սարսափած հայության:

Բրիան. – Այո՛, դա մի գաղափար է, որ կարելի է ուշադրության առնել: Բայց եթե Դուք այս բոլոր կետերը գրավոր տայիք ինձ, դա շատ կհեշտացներ գործը:

Ես. – Մենք գրած ունինք, պ. Նախագահ,– և տվի Բրիանին մեր պատրաստած Aide Mémoire-ը (հուշագիրը):

Նորատունկյան. – Մեզ անհասկանալի մնաց, պ. Նախագահ, որ Կիլիկիո պարպումը կապվեց ֆինանսական դժվարությունների հետ: Մինչդեռ Կիլիկիան լավ ճանաչող պաշտոնյաներ, ինչպես գնդապետ Բրեմոն, հաստատում են, որ Կիլիկիան իր արդյունքով կարող էր լիովին գոհացնել տեղական զորաբաժնի պետքերը: Մեզ թվում է, թե ծախքերը մեծաքանակ ավելի շատ Սյուրիո գրավող բանակի վրա էր, քան Կիլիկիայի:

Բրիան. – Օ, ոչ: Կիլիկիան ահագին ծանրացած է մեր բյուջեի վրա: Իսկ մենք խաղաղության այս պահուն, իրավունք չունինք մի սու իսկ ծախսել: Բայց, վերջապես, ես նորից կրկնում եմ մոտիկ

[234] *Դորթ-Յոլ՝ Ումրանիե – Գավառ, գավառակ, քաղաք, ավան , գյուղ Կիլիկիայում, Աղանայի նահանգում:*

ժամանակում գումարվելու է Գերագույն Խորհուրդը, և ես խոստանում եմ ձեզ՝ պաշտպանել ձեր շահերը: Արդեն Դաշնակիցները համամիտ են ամենքն էլ այս կետում: Եվ վստահ եղեք, մենք միջոցներ ձեռք կառնենք հայ ժողովրդի ապահովությունը հաստատ հիմքերի վրա դնելու համար:

Ես. – (ջերմորեն, ամենքս ոտքի) Ո՛չ, պ. Նախագահ, այլևս խոսքը «մեր ժողովրդի ապահովության» մասին չի կարող լինել Գերագույն Խորհրդի առաջ, այլ հայ պետության, որ մեզ խոստացված է կազմել թյուրքական հողերի վրա՝ հետագայում Միացյալ Հայաստան դառնալու համար Կովկասյան Հայաստանի հետ: Գերագույն Խորհուրդը, պ. Նախագահ, մեզ համար սահմաններ գծեց՝ առանց հարցնելու մեզ, թե համաձա՞յն ենք որոշման: Ապա՝ միջնորդ-իրավարար գտավ հանձին Միացյալ Նահանգների նախագահ Վիլսոնի, դարձյալ առանց մեզ հարցնելու: Վերջապես, մի ամբողջ Դաշնագիր կազմեց, որով ընդունվեր մեր անկախությունն իբր պետություն և մեզ հրավիրեց ստորագրել: Մենք լռելյայն ստորագրեցինք և ընդունեցինք բոլորն, ինչ որ Մեծ պետությունների՝ մեր Դաշնակիցների կամքը մեզ թելադրեց: Արդ՝ այժմ այլևս մեր համոզումով ոչ թե «հայ ժողովրդի ապահովության» մասին է, որ պիտի հոգա Գերագույն Խորհուրդը, այլ Սևրի դաշնագրի տրամադրությամբ, Հայ պետության հաստատության ու ապահովության: Ինչպես որ, ըստ ձեր ասության, Սևրի դաշնագրի հիման վրա խաղաղ ձևով Ֆրանսիան հանձնեց թյուրքերին Կիլիկիան, ճիշտ նույն Դաշնագրի հիման վրա մենք սպասում ենք, որ Ֆրանսիան պիտի աշխատի խաղաղ կերպով թյուրքերից դատարկել մեզ հատկացված հողերը:

Բրիան. – (ընկճված ու նեղված տոնով) Շատ լավ, շատ լավ, իհարկե...

Նորատունկյան. – Պ.Նախագահ, Դուք բարի կլինիք թույլ տալ մեզ Կիլիկիո և առհասարակ Հայկական Խնդրի մասին Ձեզ ներկայացնել մի մանրամասն հուշագիր՝ այդ հարցերի լուծումը հեշտացնելու համար:

Բրիան. – Անպատճառ արեք այդ: Դա շատ անհրաժեշտ է: (հանկարծ) Ինձ թվում է, պարոններ, որ Կիլիկիո հայերի այն խուճապի մեջ կան խորք ներշնչումներ, ինտրիգներ[235]:

Նորատունկյան. – Ո՛չ, պ. Նախագահ, ինտրիգ չկա և չի կարող լինել:

[235] *Մեքենայություններ, նենգաբարոյություններ:*

Բրիան. – Ամերիկայում ես հայ պատգամավորություններ ընդունեցի: Ամերիկայում ինձ որոշ հայտնություններ արին այս մասին: Բայց թողնենք այդ: Երբ պետք համարեք ինձ տեսնել, կարող եք լուր տալ:

Հրաժեշտ առինք: Զրույցը տևեց մոտ մի ժամ:

* * *

7 դեկտեմբերի, 1921
Փարիզ

Նույն օրը (դեկտեմբեր 7) երեկոյան թերթերի մեջ լույս տեսավ կիսապաշտոնական լուր Quai d'Orsay-ի այն մասին, թե ես ու Նորատունկյան գնացած էինք Բրիանին շնորհակալություն հայտնելու ֆրանսիական կառավարության՝ նրա ձեռք առած երաշխիքների համար Կիլիկիայում:

Ստիպված եղանք հերքել այս նենգ, ամոթալի հայտարարությունը:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉ Պ. ՊԵՐԻՏՏԻԻ ՀԵՏ

Լոնդոնից վերադարձիս՝ ինձ ասացին, որ Պերիտտին ընդունելով Ազգային Պատվիրակության մեկ երկու անդամներին (Սինապյան և Չոպանյան)՝ շատ խիստ տոնով էր խոսել նրանց հետ: Մեղադրել էր, թե պրոպագանդ են անում հայերն ամեն կողմ Ֆրանսիայի դեմ. ակնարկել էր իմ և Նորատունկյանի Լոնդոն ճամփորդությունը և բացականչել էր.

– Մի՞թե դուք հույս ունիք տակավին Թյուրքիայում անկախ պետություն կազմել:

Այս միջադեպի տպավորությունը ցրելու համար գնացի Պերիտտիի մոտ: Նա ինձ ընդունեց շատ սիրով և բնավ նախընթաց այցի մասին խոսք չարավ: Ընդհակառակը, ես նրան ասացի բոլորն, ինչ որ ասել էի Բրիանին, և նա շատ քաղաքավարի գրի առավ գլխավոր կետերը: Վերջում նաև խոսք բաց արի մեր հինգ հարյուր հազար ստանալիքի մասին, ու նա զարմացավ, որ մենք դեռ չենք ստացել ու ասաց, որ այդ հարցը կարգադրված է հօգուտ մեզ:

9 դեկտեմբեր, 1921
Փարիզ

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՎԱՐՉԱՊԵՏ Պ. ԲՐԻԱՆԻ ՀԵՏ

Այսօր՝ դեկտեմբերի 16-ին, առավոտյան ժամը 10.30-ին, ես և Նորատունկյան երկրորդ տեսակցություն ունեցանք Բրիանի հետ, իր հատուկ հրավերով:

Մեզ ընդունելով՝ Բրիան ասաց.

Բրիան. – Պարոններ, ես պետք է ձեզ ասեմ, որ մեր վերջին տեսակցությունից հետո, ես քննություն կատարել տվի, և ցավ ունեմ ձեզ հայտնելու, որ, ըստ հավաքված տեղեկությունների, Կիլիկիայի հայ ազգաբնակության գաղթը արդյունք է մեծ մասամբ այն եռանդուն պրոպագանդին, որ կատարել են տեղի վրա զանազան մութ անձինք և կոմիտեներ: Ի՞նչ նպատակով, չգիտեմ: Բայց այս պրոպագանդը Ֆրանսիայի համար կրկնակի դժվարությանց աղբյուր է: Մի կողմից՝ հայությունը փախչում է Կիլիկիայից ու այսպիսով վարկաբեկվում է Ֆրանսիան, որ իբր թե պետք եղած չափով չի պաշտպանում իրեն ապավինած հայությունը, և մյուս կողմից՝ գաղթականները Ֆրանսիայից դուրս ուրիշ հովանավոր չեն գտնում և դարձյալ մենք ենք ստիպված նրանց ընդունել, հոգալ, տեղավորել: Արդ՝ ես ձեզ հարցնում եմ, մինչև ե՞րբ պիտի շարունակվի այս անընդմեջ կացությունը:

Նորատունկյան. – Չեմ թույլ տա ինձ՝ ձեր գործակալների տեղեկությունները կասկածի տակ դնել, բայց անշուշտ այստեղ թյուրիմացություն կա: Չեմ կարծում, որ ժողովուրդը փախչում է պրոպագանդի պատճառով: Ընդհանուր խուճապ կա թյուրքական տիրապետության հանդեպ: Եվ դա շատ հասկանալի է: Խնդրի խորքը պետք է նայել, պ. Նախագահ, և այդպիսով կբացատրվի ամբողջ այդ երևույթը: Ոչ, դա պրոպագանդայի արդյունք չէ բնավ:

Բրիան. – Վստահացնում եմ ձեզ, որ մեր տեղեկությունները այդ են հաստատում: Բանն այնտեղ է հասել, որ դիմում է կատարված անգամ կարդինալ Մերսիեին Բելգիայում և զվիցերիական[236] մի բողոքական պաստոր այդ նպատակով Բելգիա է գնացել: Ո՛չ, պարոններ, համաձայնեցեք, որ սա անհանդուրժելի գրգռում է մեր բարի անվան դեմ:

Նորատունկյան. – Ես չգիտեմ, թե ի՞նչ հայեր, ի՞նչ պրոպագանդա կարող էին անել: Բայց դժվարին գործ չէ միջամտել, որ այդպիսի արարքները դադարին, և դա մենք կանենք... Բայց...

Բրիան. – Այո՛, դա պետք է անել:

---

236 *Շվեյցարական:*

Նորատունկյան. – Բայց խնդիրը դրանով չի լուծվում: Մենք ստացած ենք Կիլիկիո ծերունի կաթողիկոսի մի ընդարձակ զեկույցը այն մասին, թե ի՞նչպես են անցել դարձել անցքերը: Կիլիկիայում: Եվ դա ճշգրիտ տեղեկություն է: Եթե Դուք հաճիք ծանոթանալ, կտեսնեք, թե որքա՜ն հեռու են այդ ցավալի անցքերը պրոպագանդայից, ինտրիգներից: Հիշեցնեմ Ձեզ, պ. Նախագահ, որ այս խեղճ ժողովուրդը իր ապրած բոլոր խռովքի մեջ մի վայրկյան իսկ չմոռացավ Ֆրանսիան և շարունակ Ֆրանսիան փնտրեց, նրան դիմեց: Եվ մենք այստեղ քանի-քանի՜ դիմումներ արինք, թելադրանքներ արինք, միջոցներ ցույց տվինք՝ այդ խեղճ ժողովրդին իր տեղում պահելու համար և միշտ մնացինք անպատասխան: Ինչու՞ զարմանալ, որ դժբախտ ժողովուրդը հուսահատ ու սարսափած՝ փախչում է իր հայրենի երկրից:

Բրիան. – Սակայն, թյուրքերը նրանց որևէ վնաս չտվին, իրենց խոստումը պահեցին: Ի՞նչ պետք էր այդ ամբողջ գաղթը:

Ես. – Պ. Նախագահ, ներեցեք, որ ես երկու խոսք ասեմ,– միջամտեցի ես՝ հրելով Նորատունկյանի թևը, որ խոսքը ինձ թողնի,– Դուք մի կտրուկ հարց եք դրել Կիլիկիայում տեղի ունեցած գրգռումի մասին, և հարցը պահանջում է իր նույն կտրուկ պատասխանը: Արդ՝ որպես պատասխան ես թույլ եմ տալիս ինձ ասել, որ ինձ բնավ չի զարմացնում, թե Կիլիկիայում այս կամ այն գիտակից անհատը, մտավորական առաջնորդը կամ վարիչ կոմիտեն խորհուրդ են տվել հայ ազգաբնակության փախչելու, հեռանալու ձեր զորքերի հետ: Ես դրա մեջ բնավ չեմ տեսնում չարամտություն, որևէ հետին նպատակ, բացի թշվառ ժողովրդին ժամ առաջ թյուրքի դանակից ազատելու հասկանալի, բնական ցանկություն: Նկատի պետք է առնել, պ. Նախագահ, որ թյուրքի տիրապետությունը նշանակում է Անկարայի Մեծ Ժողովի տիրապետություն, ուր բազմած են Բիթլիսի, Մուշի, Էրզրումի, Վանի ամենահայտնի ջարդարարները: Եվ այդ շատ լավ գիտե հայ ժողովուրդը: Եվ ո՞րն է այն գիտակից, սրտացավ հայը, որին երբ դիմի մի ընտանիքի հայր, զավակների մի խեղճ մայր՝ հարցումով՝ մնա՞լ թե ° փախչել, ո՞րն է այն գիտակից հայը, որ խորհուրդ տա, արիություն ունենա խորհուրդ տալու՝ մնալ ու սպասել թյուրքի դանակին: Սա գրգռում չէ, պ. Նախագահ, այլ պարզ մարդկային սրտացավություն: Ինչու՞ միայն նրանց՝ Կիլիկիո հայ գործիչներին մեղադրել այդ բանում, երբ մեզ են դիմել՝ պ. Նորատունկյանին և ինձ...

Նորատունկյան. – Ինձ գալով՝ ես հեռագրել եմ ի պատասան

ինձ եղած դիմումներին՝ calme et tranquillité[237] (պ. Նորատունկյան կարող էր այդ չասել, շահ չունեինք այդ ասելու):

Ես. – (շարունակեցի) – Ես երբեք խորհուրդ չեմ տվել մնալ և երբեք խորհուրդ տալ չեմ կարող: Քանի այս կացությունը չի փոխվի, այո՛, պ. Նախագահ, ես արիություն չեմ ունենա խորհուրդ տալու այդ թշվառ ժողովրդին պարանոցը թյուրքի դանակի տակ դնելու: Ես գիտեմ, դուք ձեր գործակալներն ունիք այնտեղ և այդ եք համարում երաշխիք: Բայց, պ. Նախագահ, ո՛չ թե ձեր գործակալների, նույնիսկ ձեր բանակի՛ աչքի առաջ թյուրքերը, Քեմալի բանդաները[238] կոտորեցին Մարաշը, Հաջինը[239], Զեյթունը, Մարզվանը[240]: Ի՞նչպես եք կամենում, որ հայ ժողովուրդը ապահով զգա ինքզինքը միմիայն ձեր գործակալների ներկայության՝ այսքան փորձերից հետո: Տասնյակ տարիներից ի վեր Հայաստանում սիստեմատիկ սարսափելի ջարդեր են հաջորդում իրար, մի՞թե միշտ էլ մեծ պետությանց գործակալները, հյուպատոսները ներկա չեն եղել: Թյուրքերը ե՞րբ են ճնշվել: Կիլիկիո հայության տագնապը մեղմելու և ցավալի աղետավոր գաղթի առաջն առնելու համար, մի շատ պարզ միջոց կար – մի հեռագիր, պ. Նորատունկյանի և իմ ստորագրությամբ, որով մենք ասեինք վճռապես. «Հայե՛ր, մի շարժվեք, մի՛ գաղթեք, մնացեք հանգիստ ձեր տեղերում»: Եվ հավատացե՛ք՝ մի հատիկ հայ չէր շարժվի տեղից: Սակայն, այդպիսի մի հեռագիր մենք չտվինք և չենք կարող տալ, արիությունը չունինք: Ձեզնից է կախված, որ այդ հեռագիրը մեկնի: Դրա համար մեզ պետք է տրվին հաստատ երաշխիքներ: Նորից խնդրում ենք, մի՛ լքեք Ֆրանսիային ապավինած ժողովրդին և գեթ կարգադրեցեք, որ Ամանոսի[241] շրջանը չդատարկվի, ուր ահագին թվով հայություն է ապաստանել:

Բրիան. – (մտածկոտ, մնաց լուռ ու շվարած. ապա սկզբի տոնի խստությունն ու պահանջների ձևը թողած՝ հանկարծ խոսքը դարձրեց Վերին Հայաստանին) – Ասացեք, խնդրեմ, դուք ի՞նչ մտածումն ունիք Հայկական Խնդրի ընդհանուր կարգադրության մասին. Լոնդոն գնալուց առաջ շատ կուզեի ձեզ[նից] լսել այս մասին:

Ես. – Պ. Նախագահ, ուրախ ենք Ձեր այս հարցի համար: Արդարև, քանի որ Դուք Լոնդոն պիտի գնաք, ուր հավանաբար

---

237 *Հանդարտություն և հանգստություն:*

238 *Հրոսակներ:*

239 *Հաճրն:*

240 *Գավառակ պատմական Փոքր Հայքում:*

241 *Ամանոս – Շրջան Կիլիկիայում, Ադանայի նահանգում:*

Արևելյան Խնդրի մասին խոսիք, շատ պիտի խնդրեինք Հայկական Հարցը Ձեր ազդու միջամտությամբ օրակարգի մեջ դնել և լուծումն տալ այն ժողովրդի դատին, որ իր բախտը ահռելի զոհաբերությունների գնով Ֆրանսիայի և Դաշնակիցների բախտին կապեց: Եվ այդ լուծումը դժվար չէ, պ. Նախագահ – Դաշնակիցներն, ինչպես գիտեք, հանդիսավորապես Միացյալ Անկախ Հայաստան հռչակեցին: Արդ, այդ Միացյալ Հայաստանի մի մասը՝ Կովկասյան, այսօր գրաված են ռուս բոլշևիկները: Դուք, պ. Նախագահ, անցյալները մեր Կովկասյան մյուս հարևանների հետ տված ընդունելության, այն համոզումը հայտնեցիք, որ Կովկասում բոլշևիկների օրերը համրված են – սա և մեր համոզումն է: Թողնենք և սպասենք, որ ժամանակը գործի մեզ համար Կովկասում, բայց այստեղ մնում է Միացյալ Հայաստանի մյուս մասը՝ հարավայինը: Ի՞նչ արգելք կա, որ այս մասը կազմի ծրագրված ու հռչակված հայ պետություն:

Բրիան. – Ի՞նչ սահմաններում եք ենթադրում այդ հայ պետությունը:

Ես. – Նախագահ Վիլսոնի իրավարարությամբ գծված սահմանները կան: Դա մի գիծ է, որ սկսվում է Տրապիզոնից արևմուտք Դրիբոլիից[242], Խուրշիդի[243] հովտի եզերքով, իջնում է հարավ, գրկում է Երզնկան, վար իջնում Բիթլիսից հարավ, անցնում է Հայկական Տավրոսով և գնում միանում է պարսկական սահմանին: Այս սահմանները շատերը համարեցին չափազանց: Մենք պատրաստ ենք սահմանների նոր ճշտում ընդունել՝ Rectification des Frontières[244] հոգուտ թյուրքերի: Մենք պահանջկոտ չենք լինի, միայն մի պայմանով, որ մեզնից չխլվին մեր ծովափյա սահմանները: Առանց ծովի, մենք ապրել չենք կարող:

Բրիան. – Որքա՞ն մեծ է ձեր ցանկացած տարածությունը:

Ես. – Կրճատումներով, երևի, մոտ հարյուր հազար քառակուսի կիլոմետր տարածություն, որի խոշորագույն մասը լեռներ են և հազիվ 20 %-ը՝ մշակելի:

Նորատունկյան. – Մեր երկիրը բարձրավանդակ է: Էրզրումը երկու հազար մետրի վրա է: Վանա ծովը՝ հազար վեց հարյուր: Միանգամայն լեռներով է ծածկված Հայաստանը:

Բրիան. – Որքա՞ն է հայերի թիվը:

Ես. – Կարող եմ Ձեզ մոտավոր ճշտությամբ ասել – Կովկասյան Հայաստանում կա մեկ միլիոն երկուհարյուր 70 հազար հայ:

[242] *Գավառ, քաղաք պատմական Պոնտոսում:*

[243] *Գետ Ճորոխի ավազանում:*

[244] *Սահմանների շտկում:*

Սրա վրա վրա ավելացան թյուրքահայ գաղթականներ՝ թվով 350 հազար և Ադրբեյջանից հալածական հասած մոտ հարյուր հազար հայեր: Այսպիսով հայերի թիվը Կովկասյան Հայաստանում կարելի է հաշվել մոտ մեկ միլիոն 6-7 հարյուր հազար:

Նորատունկյան. – Մոտ չորս հարյուր հազար ևս կա Վրաստանում և մի փոքր ավելի պակաս Ադրբեյջանում:

Բրիան. – Ուրիշ ու՞ր ունիք հոծ հայ բնակչություն:

Ես. – Կիլիկիայում՝ 150 հազար, Պոլսում՝ նույնքան, Զմյուռնիայի շրջանում՝ 40 հազար: Ապա՝ Եգիպտոս, Հունաստան և առհասարակ Բալկանները միասին 60-70 հազար: Նաև Ամերիկա՝ մոտ 150 հազար: Եվ այս բազմությունից խոշոր բաժինը օրեր է համրում հայրենիք դառնալու համար:

Բրիան. – Ի՞նչպես եք կարծում՝ կարելի կլինի՞ կազմել հայկական պետություն:

Ես. – Առաջին պայմանը մեր հողերի դատարկվելն է թյուրքերից: Եվ այժմ, երբ, ըստ երևույթին, Դաշնակիցները վճռել են Սևրի դաշնագիրը զգալի փոփոխության ենթարկել հոգուտ թյուրքերի, մեզ բնավ դժվարին չի թվում: Եվ հավատացած ենք, որ Դաշնակիցները այդ գնով, այդ միջոցով կպահանջեն, որ թյուրքերը դատարկեն հայ հողերը: Ավելացնեմ, որ մենք, իբրև Սևրի դաշինքը ստորագրող և Դաշնակից, նույնպես կհրավիրվինք այդ Դաշնագրի վերաքննության պահուն: Երբ թյուրքերը թողնեն մեր երկիրը, մեր ժողովուրդը կթափվի իր հայրենիքը, որ պետք է բնականապես գրավել gendarmerie-ով[245], որի համար մենք բավական թիվ կամավորներ հավաքելու վրա ենք հայերից հենց այժմեն: Իհարկե, պետք է հուսալ, որ Դաշնակիցները նույնպես գան մեզ զինվորական միսսիոններով[246], կադրերով և ֆինանսական աջակցությամբ: Ավելացնեմ, որ պետություն վարելու փոքրիկ փորձ էլ ունեցանք, երբ առանց մանդատերի՝ մենք մեզի ձգված՝ մեր փոքրիկ Կովկասյան Հայաստանը կառավարեցինք մեր ուժերով երեք տարի:

«Եվ, վերջապես, երբ այս բոլորը տեղի ունենա, գուցե անկարելի չլինի որևէ փոքրիկ պետություն, ինչպես Բելգիա, ունենալ որպես մանդատեր: Բայց գլխավորը մեր երկիրը թյուրքերից ազատելն է: Եվ այս է, որ սպասում ենք Ֆրանսիայից և Դաշնակիցներից, փոխարեն այն ծառայությունների, որ մենք հանձն առանք:

[245] *Ժանդարմերիա, ոստիկանություն, ներքին զորքեր:*

[246] *Առաքելություն, ներկայացուցչություն, հանձնառություն:*

Եվ թույլ տվեք, պ. Նախագահ, դրանցից միայն մեկը հիշատակել՝ Բաքվի մեր պաշտպանությունը, որի համար գերման զոր. Լյուդենդորֆ իր գրքում գրում է թե՝ հայերը եթե չպաշտպանեին Բաքուն և հնար տային գերմանացիներին մի քանի ամիս առաջ նավթ ստանալ, իրենք չէին պարտվի: Ահա մեր ծառայությունը, մեր աջակցությունը Դաշնակիցներին:

Բրիան. – Ուրախ եմ, որ ձեզ տեսա և լսեցի մեկնելուցս առաջ: Այս բոլորը շատ հետաքրքիր է ինձ համար:

Նորատունկյան. – Պ. Նախագահ, հարցրիք մեր թվի մասին: Խնդրեմ, սակայն, ի նկատի առնել, որ թյուրքերի թիվը Հայաստանում շատ ավելի նվազ է: Այս պատերազմի ընթացքին այդ գավառները մի քանի անգամ ձեռքե ձեռք անցան և իսպառ անմարդաբնակ դարձան: Արդեն միշտ էլ Հայաստանում թյուրքերը քիչ են եղել: Հայերից հետո գերակշռող տարրը եղած է քրդությունը: Մի ժամանակ նույնիսկ խոսք կար հայ-քրդական պետության մասին:

Բրիան. – (ջերմությամբ) Օ, ո՛չ, ո՛չ, չքարդացնենք խնդիրը: Այնպես, ինչպես ասաց պ. Ահարոնյանը, շատ լավ է, շատ ավելի պարզ:

Ես. – Իրավունք ունիք: Մենք եթե թյուրքեր ունենանք, նրանց հետ հաշտ ապրել կկարողանանք մեր սահմաններում: Նրանք մոտ են մեզ իրենց ծագումով ու լեզվով: Ես լավ եմ ճանաչում քրդերին:

Բրիան. – Ես գոհ եմ այս տեսակցությունից, շատ բան ինձ համար այժմ պարզ է:

Նորատունկյան. – Բայց Կիլիկիան...

Ես. – Մենք նորից կխնդրեինք կարգադրել նախքան Ձեր մեկնիլը, որ Դորթ Յոլը չդատարկվի ձեր զորքերից:

Նորատունկյան. – Արդեն շատ զորքի պետք չկա: Հազիվ հազար-հազար հինգ հարյուր զինվորի պետք լինի կարգ պահպանելու համար: Մենք շատ ենք խնդրում Ձեզ այս կարգադրությունն անել, որ ահագին սփոփանք կլինի հայության համար:

Բրիան. – Բայց այդ շրջանը մտնում է մեր համաձայնության մեջ թուրքերի հետ:

Ես. – Այո՛, դա մտնում է նաև Սևրի դաշնագրի մեջ:

Բրիան. – Ես այդ մասին կմտածեմ Լոնդոնից վերադարձիս:

Ունկնդրությունը վերջացավ ժամը $11^{1}/_{4}$-ին:

Տ պ ա վ ո ր ո ւ թ յ ո ւ ն ն ե ր – Նորատունկյանը դրսում ինձ ասաց, թե չի հավատում նրա հարց ու փորձի անկեղծությանը և թե այդ բոլորը որ ասաց, մեզ խաբելու համար էր՝ Կիլիկիո ծանր տպավորությունը թուլացնելու համար: Ինձ, ընդհակառակը, թվում է, որ Կիլիկիո սկանդալից հետո, Բրիան ցանկություն ունի մի բանով մեզ գոհացնել Վերին Հայաստանում: Այլապես նա այդ հարցերը չէր տա և կբավականանար ընդհանուր ֆրազներով[247]: Ես կարծում եմ նորից, որ Ֆրանսիան ու Անկարան կապված են **գաղտնի** դաշնագրով:

ԶՐՈՒՅՑ ՆՈՐԱՏՈՒՆԿՅԱՆԻ ՀԵՏ

Փարիզ

Դեկտեմբեր 16, 1921

Դուրս գալով Բրիանի մոտից (դեկտեմբեր 16, ժամը 11.30-ին), ես խնդրեցի Նորատունկյանին լսել իմ մի մտածումը Հայաստանի սահմանների մասին: Մենք ոտքով քայլեցինք-անցանք Port Alexandre-ը և ներս մտանք Dogen-ի ճաշարանը Champs Elysée-ում[248]: Ես այնտեղ՝ պարզեցի իմ ծրագիրը Տրապիզոնի շրջանի մասին, որ հետևյալն է. –

Հույները, ժամանակին մերժելով մեզ Տրապիզոնը, նպատակ ու հույս ունեին Պոնտոսն ամբողջովին ազատել թյուրքերից: Արդ, երբ ներկա պարագաները, հանգամանքները այնքան ձախորդ են դասավորված մի այդպիսի ծրագրի համար, հնար չկա՞ արդյոք, Տրապիզոնի մասին նոր զրույց սկսել հույների հետ: Այդ շրջանի խոշոր բաժինը Վիլսոնը տվել է Հայաստանին: Այժմ, երբ թյուրքերը բացարձակապես սպառնական մի քաղաքականություն են որդեգրել՝ ջնջելու, ցրելու, հեռացնելու քրիստոնյաներին իրենց պետությունից, արդյոք հույները չէի՞ն գերադասի Վիլսոնի գծած սահմանները պաշտպանել և մնալ մեզ հետ ազատվելու թյուրքական անխուսափելի սարսափներից: Եթե այո՛, ապա հույներն իրենք պիտի պահանջեն նորից չդնել իրենց թյուրք արյունալի տիրապետության տակ, այլ միացնել Հայաստանին: Եվ որպեսզի նրանց հեռավոր ծրագրին արգելք չլինենք, մենք ոչինչ չենք կորցնի և շատ կշահինք, եթե այժմ հայտարարենք, որ

---

247 *Դարձվածք:*

248 *Ելիսեյան դաշտեր:*

ա) մենք նրանց կապահովենք ամենալայն տեղական ինքնավարություն և

բ) լիակատար հանձնառություն՝ բաժանվել Հայաստանից, օրինակ՝ 15-20 տարուց հետո, երբ նրանք հնարավոր գտնեն Պոնտոսի մնացած մասերն էլ շորթել թյուրքերից և միանալով ստեղծել իրենց ծրագրած Պոնտական պետությունը:

Ի՞նչ կշահին երկու կողմերը 15-20 տարվա կենակցությամբ: **Հույները** – ապահովություն թյուրքական ջարդերից, տնտեսական ու ֆիզիքական զարգացում և մի կորիզ, որ պիտի դառնա ապագայում Պոնտոսի պետություն. մյուս կողմից՝ նրանք հզորապես կօգնեն Հայաստանի զորացումին ու հաստատությանը, որից մեծ շահ ունի Հունաստանը և հելլենականությունը: **Մենք՝ հայերս** կշահվինք նրանով, որ

ա) ծովի ելք կունենանք Հայաստանից,

բ) քրիստոնյա ազգաբնակություն մեր ճամփին՝ մեզ աջակից ու բարյացակամ,

գ) զորեղ արգումենտ, թե մեզ հատկացված հողերը մեզնից թափուր չեն, այլ բնակված են քրիստոնյա տարրով,

դ) հույների աջակցությամբ կհաստատվինք Լազիստանում,

ե) Հայաստանի ընդհանուր գրավումը կհետաքրքրի և հույն կառավարությունը և դրանից կարող են ծագել մի շարք հեռանկարներ:

Այս բոլորը լսելուց հետո, Նորատունկյանը սկզբունքով համաձայնվում է ինձ հետ, որ դրանից շահ կարող է լինել մեզ, բայց միաժամանակ մտածկոտ էր հաջողության մասին:

– Այլ խնդիր է,– ասաց նա,– եթե մենք խոսք անեինք հույն մի իշխան մեր երկիրը դնելու կամ հունական մանդատի: Բայց այդ դեպքում էլ վարանումն ունիմ, թե ո՞րն է լավ՝ հայ–թյուրքական գործակցությունն ապագայու՞մ, թե՞ հայ–հունական:

Այնուամենայնիվ նա համաձայնեց, որ ես միանակ անցնեմ Լոնդոն այս նյութի մասին sondage[249] անելու Գունարիսի և Բալդացցիի մոտ և, համաձայն արդյունքի, մենք հետագայում որոշումն անենք:

---

249 *Sondage - Խորացում, քննում, հետազոտում:*

ՀԱՅ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԹԵ՞ HOME

Փարիզ

16 դեկտեմբեր, 1921

Վախ ունեմ, որ երկու պատվիրակությունները այս երկու գաղափարների մասին լուրջ տարակարծություն ունենան:

Դեկտեմբեր 15-ի երեկոյան մեր պատվիրակության մեջ ժողովի կամ ավելի ճիշտ՝ մտքերի փոխանակության, հրավիրեցի Ազգային Պատվիրակության անդամներին: Եկան պ.պ. Նորատունկյան, Սինապյան[250], Պապաջանյան[251]: Մեր կողմից՝ ես և Փափազյան[252]:

Քննության խնդիրներն էին. –

1) Արտասահմանում կամավորներ ցուցակագրելու ծրագիրը՝ իմ առաջարկած;

2) Առաջիկա Գերագույն Խորհրդին մեր ասելիքը;

3) Հայաստանի հողերը (Թուրքիայից) գրավելու միջոցները:

Ես պարզեցի իմ առաջին առաջարկը, այն է՝ նշանակել որոշ թվով սպաներ և դրկել գաղութները, ուր նրանք ցուցակագրեն գիտակից, հայրենասեր և մանավանդ զինվորական ծառայություն կատարած հայ երիտասարդներին: Կամավոր գրվողը իր գործն ու աշխատանքը թողնելու չէ. նա պիտի շարունակի իր պարապմունքը: Միայն ազատ ժամանակ, տոն և կիրակի օրերը, կամ երեկոները հավաքվում են ամենքը իրենց սպայի հսկողության տակ, նրա հետ պահպանում են մշտական կապ և, եթե երկրի օրենքները թույլ են տալիս, նաև զինավարժություն են անում, կամ պարզ մարզանք, եթե զինավարժություն չի կարելի:

Այսպիսով մենք որոշակի գիտենք, թե որքան երիտասարդ պատրաստ են պատասխանելու հայրենիքի կոչին, ի հարկին: Եվ երբ այդ պետք լինի, հեշտ է նրանց գաղութներից հավաքել 2-3 շաբաթից: Եվ մեկ կամ $1^1/_2$ ամիս վարժություններ անել տալ՝ մեր երկիրը, որպես ժանդարմերիա, գրավելու գործի համար: Ծախք առայժմ մեզ կնստին սպաները, որոնք բոլորն էլ պիտի մնան յուրաքանչյուրը իր շրջանում, կամավորների մոտ՝ նրանց դաստիարակությանը հսկելով:

Ավելացրի, որ այս ծրագիրը հնարավոր է իրագործել

---

250 *Սինապյան - քաղաքական գործիչ:*

251 *Պապաջանյան Միքայել – Քաղաքական-պետական գործիչ:*

252 *Փափազյան Վահան (Կոմս) – Ազգային-ազատագրական շարժման գործիչ, Ազգային պատվիրակության անդամ:*

միմիայն, եթե երկու պատվիրակությունները անկեղծ համերաշխությամբ գործեն:

Ժողովականները գտան այս ծրագիրը շատ գործնական: Կարդացինք զորավար Կորգանյանի մի զեկույցն այդ մասին, որ միանգամայն համաձայն էր իմ ծրագրին և բաժանում էր իմ հայացքները:

Նորատունկյան և ընկերները խնդրեցին ժամանակ՝ քննելու համար Կորգանյանի ծրագիրն ու իմ առաջարկը:

Երկրորդ խնդիրը՝ առաջիկա Գերագույն Խորհրդին մեր ասելիքը, տարաբախտաբար, լուրջ տարաձայնության պատճառ դարձավ իմ և մասնավորապես Նորատունկյանի միջև:

Նորատունկյանի կարծիքով՝

ա) մենք պետք է խնդրենք մեր սահմանների գծումը թողնել Ազգերի Լիգային;

բ) **պետք է պնդենք Home-ի և ոչ թե Հայ պետության վրա,** և

գ) մենք պետք է Սևրի դաշնագրի՝ Հայաստանին վերաբերյալ հոդվածների մի մասը սրբագրենք՝ համաձայն մարտ ամսին Home-ի մասին եղած որոշման և Կովկասյան Հայաստանի սովետիզացիայից (խորհրդայնացումից) ծագող հանգամանքներին, և այդպես նոր կացությանը adapté արած[253] հոդվածները ներկայացնենք Գերագույն Խորհրդին:

Ես բացե ի բաց դեմ եղա այս առաջարկներին:

ա) կետում, որովհետև, եթե մենք նորից սահմանները թողնենք Ազգերի Լիգային, կարող ենք մոռացվել: Լավ է, որ անմիջապես Գերագույն Խորհուրդը վերջացնի այս հարցը.

բ) Հայ պետությունը մեզ մերժված չէ, այլ այդ պետության հյուսիսային մասն է գրավված: Արգելք չկա նույն պետությունը հաստատել հարավային՝ Թյուրքիո մասում: Մանավանդ, որ Home-ը վտանգավոր է նրանով, որ նա կարող է, վերջ ի վերջո, վերածվել մի անկյունի Թյուրքիայի ծոցում և նրա գերիշխանության տակ, գուցեև կտրված Կովկասյան Հայաստանից;

գ) Սևրի դաշնագրին մենք դիպչելու ո՛չ պետք ունինք և ո՛չ իրավունք: Հոդվածները մեր ձեռքով փոփոխելը համազոր է նրանցից հրաժարվելուն: Մենք խնդիրը կդնենք համաձայն իմ արգումենտացիայի վերի երկրորդ կետի՝ թողնելով պետություններին անել մնացածը:

Մենք իրար չհամոզեցինք, ևս ես վախ ունեմ, որ դժվարավ համաձայնության գանք այս կետում: Ես չեմ հավատացած, թե նրանց առաջարկը բխում է անկեղծ համոզումից:

[253] *Հարմարեցում, համապատասխանեցում:*

1922

ԿԱՆՆ

Հունվար 5, 1922

Այսօր մենակ մեկնեցի Կանն, ուր տեղի է ունենալու Գերագույն Խորհրդի նիստը՝ Համաեվրոպական Տնտեսական Կոնֆերենցիա հրավիրելու մասին:

Կանն հասա հաջորդ օրը հունվարի 6-ին առավոտյան ժամը 10.30-ին և իջա Gonnet հյուրանոցը:

Մարսելից իմ հրավերով եկավ Տիգրան Միրզայանը, որպես քարտուղար:

Կովկասյան մյուս պետություններից եկած էին Գեգեչկորին և Թոփչիբաշևը:

I. Ներկայացրի Գերագույն Խորհրդին մի հուշագիր, որով մեր պատվիրակության անունից խնդրում էի փութացնել Հայկական Խնդրի կարգադրությունը Սևրի դաշնագրի և Վիլսոնյան Arbitrage-ի հիման վրա:

II. Ներկայացրի մի երկրորդ հուշագիր, որով մեր հարևանների հետ մենք բողոքում ենք Կարսի դաշնագրի դեմ և պահանջում ենք այն չեղյալ նկատել: Այս բողոք-հուշագիրը մշակվեց իմ պնդումի վրա և իմ տվյալներով, հակառակ մեր հարևանների, մասնավորապես Թոփչիբաևի դիմադրության, և մասամբ Դերմոնի:

III. Հարևանների հետ միասին ներկայացրինք մի երկրորդ հուշագիր, որով բողոքում էինք այն ծրագրած Concessions-ի[254] դեմ, որ բոլշևիկները Կովկասում պատրաստված են տալ սրանցրան և չեղյալ ենք հայտարարում առհասարակ մեր երկրների մասին առանց մեզ կազմված ակտերը:

IV. Հարևանների հետ ներկայացրինք մի այլ հուշագիր, որով խնդրում էինք նկատի առնել, որ բոլշևիկների տիրապետությունը

[254] *Թույլատրություն, զիջումներ:*

Կովկասում բռնություն է, և խնդրում ենք այս պարագան հաշվի առնել Սովետ Ռուսիան Ջենովայի Conférence-ին հրավիրելիս: Այս հուշագիրը մենք պատրաստեցինք՝ նկատի առնելով Դաշնակիցների այն հայտարարությունը, որով նրանք պայմաններ են դնում Սովետին և, ի միջի այլոց, պահանջում են, որ բոլշևիկները դադարեցնեն իրենց հարձակումները հարևանների դեմ: Մեր թղթի նպատակն է ցույց տալ, որ կան հարևաններ, Qui ont été non seulement attaqué, et meme occupés[255] և պահանջում ենք վերջ տալ այս կացության:

Հունվար 6, 1922

Այսօր հայտնվեց, որ Գերագույն Խորհուրդը Լլոյդ Ջորջի առաջարկության վրա վճռել է հրավիրել Ջենովա մարտի սկզբներին Համաեվրոպական **Տնտեսական Կոնֆերենցիա**, մասնակցությամբ բոլոր եվրոպական պետությունների, և՛ Գերմանիայի, և՛ Սովետ Ռուսիայի: Եվրոպայից դուրս՝ հրավիրվում են Ճապոնիան և Միացյալ Նահանգները:

Կովկասյան նորակազմ պետությունների հրավերի խնդիրը բուռն վեճի տեղիք է տվել: Բրիան, Բոնոմի և բելգիական ներկայացուցիչները պահանջել են հրավիրել կովկասյան ազգային կառավարությունները:

Լորդ Քըրզըն հակառակել է բուռն կերպով: Բոնոմին վերջում առաջարկել է հրավիրել կովկասյան և՛ սովետ կառավարությունները, և՛ ազգային կառավարությունները: Լորդ Քըրզըն հակառակել է և այդ առաջարկին:

Վերջում որոշել են չհրավիրել Կովկասը, որպես ասիական պետություններ:

Այս ֆորմուլային զոհ է գնացել և՛ Պարսկաստանը:

Այս որոշման դեմ շրջաբերական-բողոք խմբագրեցի, որ Փարիզ հասնելուս պես կուղարկեմ պետություններին մեր ներկայացուցիչների միջոցով:

Բողոքի հիմնական կետերն են –

ա) Հայաստանը Դաշնակից է ու belligerant փաստորեն;

բ) Հայաստանը, իբր ամենաավեր Դաշնակից երկիրը պատերազմի երեսից, չի կարող դուրս մնալ տնտեսական Conférence-ից, որի նպատակն է պատերազմի առաջ բերած վնասներն ու ավերումները դարմանել:

[255] Որոնք ոչ միայն հարձակում կրած են, այլև գրավված են:

Նամակ գրեցի իսկույն Վարանդյանին և զոր. Բագրատունուն, որով նրանց խնդրում էի այդ ուղղությամբ քայլեր անել Հռոմ և Լոնդոն, մինչև որ դրկենք մեր հուշագիրը Փարիզից:

Հունվար 9, 1922

Հասան Նորատունկյան և Սըվազլին: Այցի էին եկած ինձ: Պահեցի նախաճաշի:

Սըվազլիին տեսնում էի առաջին անգամ: Գյուղի պառաված տիրացուի տպավորություն թողեց վրաս: Ամենեն ձանձրալի խոսակիցը, որին ես երբևիցե հանդիպել եմ:

Զրույցի նյութն է՝ սուպի, մսի և կանաչեղենի ազդեցությունը մարդու ստամոքսի և առողջության վրա:

Այն մարդկանցից է երևում, որոնց մասին Մ. Գորկին ասել է, թե եթե իրենց հիվանդությունը չլինի, զրույցի այլ նյութ չեն ունենա:

Սըվազլին, երբ փորձում է լուրջ քաղաքականն հարցի մասին խոսել, միշտ հիշեցնում է թյուրքական սրճարաններում նարգիլե քաշող ժողովրդական խիկարները[256]: Մանր, հիվանդոտ աչքեր ունի, որոնք, սակայն, փոքրիկ, խորամանկ մարդն են արտահայտում:

Ինչու՞ էր Նորատունկյանը սրան հետը բերել, չգիտեմ: Զարմանքով իմացա, որ Նորատունկյան սրան հեռագրով կանչել է Զմյուռնիայից:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՖՐԱՆԿԼԻՆ ԲՈՒՅՈՆԻ ՀԵՏ

Հունվար 10, 1922

Carlton հյուրանոցի վարի սրահում նստած էինք Թոփչիբաշև, Գիգեչկորի և ես, երբ մոտեցավ Ֆրանկլին Բույոն:

Գիրուկ, միջահասակ մի մարդ, դերասանի շարժուձևով, որ աշխատում էր վրան ուշադրություն գրավել. կենդանի ու շարժուն. ժպտում էր ամենքի հետ և միշտ խոսակից փնտրողի վիճակում: Ըստ երևույթին, գոհ է իր արածից: Թվում է իրեն, թե ամենքի հայացքն իր վրա է սևեռած և երջանիկ է, երբ մեկին էլ է գտնում ծա-

[256] *Իմաստակ (առասպելական Խիկար իմաստունի անունից):*

նոթ: Տիպիկ Faiseur d'Affaire[257], որ ա՛յնքան հիշեցնում է Թիֆլիսի կինտոն: Դեմքը տգեղ չէ, բայց պարարտ, առանց ազնվականության, և աչքերն առանց իմաստության:

Թոփչիբաշևը թռավ ընդառաջ և, ըստ երևույթին, որպես վաղեմի ծանոթներ (ինչ որ ինձ համար նորություն էր), ողջույն փոխանակեցին խիստ մտերմորեն: Գիգեչկորին նույնպես թռավ ոտքի: Թոփչիբաշև ներկայացրեց Գիգեչկորին:

Ես մնացի նստած դիտմամբ և անուշադիր: Երբ Թոփչիբաշև իմ անունը տվեց, Ֆրանկլին Բույոն, որ միայն մի անգամ էր տեսած ինձ տարիներ առաջ, վրա թռավ՝ երկու ձեռքերը պարզած բացականչելով.

– O, bonjour, mon cher ami![258]

Ես ցուրտ կերպով և լռությամբ ընդունեցի պարզած աջը: Եվ տպավորությունս այն էր, որ իմ առջև կանգնած էր մի հանցագործ, որ արդարանալու պետք էր զգում: Այս հայտնությունն ավելի ևս ուժ տվեց իմ վերապահ դիրքին:

Ձևացյալ զբաղված մարդու շարժուձևով Ֆր. Բույոն խնդրեց մեզ մի վայրկյան սպասել՝ ասելով, թե մեզ բոլորիս հետ խոսելիք ունի և հեռացավ:

Անմիջապես հետո ես ոտքի ելա, ներողություն խնդրեցի ընկերակիցներից՝ ասելով, թե աշխատանք ունիմ տանը, հեռացա:

Մի կես ժամ հետո, նստած էի իմ հյուրանոցի պարտիզում, երբ վազեվազ եկավ Ա. Միրզոյանը և ասաց հետևյալը.

– Ֆր. Բույոն եկել է, շատ վշտացած, որ ես հեռացել եմ: Ասում է, որ նա գիտե, թե իմ արածը ցույց է իր դեմ և շատ խնդրում է գալ բացատրվել: Եվ թե Թոփչիբաշև և Գիգեչկորի նույնպես շատ խնդրում են գալ:

– Գնա ասա՛,– պատասխանեցի,– որ Ֆր. Բույոն պետք է տեսնվեր ինձ հետ Կիլիկիա գնալուց **առաջ** և ոչ թե Կիլիկիան քանդելուց **հետո**:

Միրզոյանը գնաց, ես մնացի:

Ինքս ինձ խորհելով եզրակացրի, որ այս դասն անհրաժեշտ էր Ֆր. Բույոնին իր բոլոր գեշությունների համար՝ հանդեպ հայության: Բայց եթե վերստին նա դիմի ինձ հանդիպելու, նրա հետ բացատրությունից խույս չեմ տա՝ ամբողջ դառնությունս վրան թափելու համար:

Հավատացած էի, որ նորից կդիմի և չսխալվեցի: Հաջորդ օրն

257 *Գործի վարպետ, գործ սարքող, աֆերիստ:*

258 *Բարի օր, սիրելի՛ բարեկամս:*

իսկ, ճաշում էի նույն Carlton հյուրանոցում, երբ Ֆր. Բույոն մոտեցավ, ցավ հայտնեց, որ ինձ չէր կարողացել տեսնել նախընթաց օրը և խնդրեց հանդիպել ճաշից հետո ժամը 4-ին:

– Nous devons bavarder[259] ,– ասաց;

– Très volontiers[260],– պատասխանելով ընդունեցի ես:

Ճաշից հետո, ժամը 4-ին, ես հանդիպեցի նրան Carlton Hotelsondage-ի թեյասեղանի առջև: Նստած էին և՛ Matin-ի խմբագրապետը, թղթակից Զաուիրվայն և քանի մը ուրիշ journalist-ներ, ինչպես Daily Telegraph-ի մեր բարեկամ թղթակից պրոֆեսոր Ժիրոֆլով:

– Ես ուրախ եմ,– ասաց նա, ժպտալով կեղծ մտերմությամբ,– որ մեր հանդիպումը տեղի ունեցավ մեր այս բարեկամների ներկայությամբ:

– Ես ևս գոհ եմ,– ասացի,– և հենց Ձեզնից հարցնում եմ՝ հանգի՞ստ է Ձեր խիղճը 50 հազար հայություն բնավեր դարձնելուց հետո:

– Դուք էլ, ինչպես բոլոր հայերը, ինձ եք դատում,– ասաց նա,– բայց ինձանից լավ բարեկամ չունիք: Հիսուն հազար հայեր գաղթեցին, որովհետև նրանց անպատասխանատու մարդիկ մղեցին դեպի այդ ճամփան: Բարեբախտաբար, գաղթողներն իսկույն նկատեցին իրենց սխալները և արդեն 25 հազար ետ են եկած: Մնացածներն էլ գալու վրա են:

– Ավելի վատ՝ դարձողների համար, որովհետև նրանց կկոտորեն Անկարայի Ձեր բարեկամները:

– Սխալվում եք, Դուք չեք ճանաչում թյուրքերին:

– Հրաշալի եմ ճանաչում,– ասացի,– Դուք և առհասարակ ֆրանսացիներդ եք կուրացել, ինչպես կուրացել էիք 1914 թվին, պատերազմի նախօրյակին, երբ նրանք խաբեցին ձեզ և ձեր դրամը, առած փոխառությամբ, գործ դրին ձեր դեմ պատերազմի: Ils vous ont roulé alors, ils vous roulent à present[261]:

– Ի՞նչ փաստ ունիք Անկարայի մարդոց և հատկապես Քեմալին ջարդարար համարելու:

Պատասխանի փոխարեն ես նախ քրքջացի հեգնորեն:

– Սիրելի՛ պարոն,– ասացի,– Հայաստանը ջարդող դահիճները ողջ Անկարա են ապաստանած, և հայությունը նրանց ճանաչում է հակառակ հանվանե: Ահա թե ինչու՛ են փախել

259 «Պիտի շաղակրատենք»:

260 *«Միանգամայն պատրաստակամ եմ»:*

261 «Ձեզ խաբեցին այն ատեն, ձեզ պիտի խաբեն հիմա ալ»:

Կիլիկիայից և ոչ՝ թե կողմնակի խորհրդատուների խոսքերով:

– Բայց Քեմալը և իր շրջապատը մի քանի անգամ կյանքերնին վտանգի են ենթարկած ազատելու համար հայերը: Քեմալը ինչու՞ է ջարդարար:

– Քեմալի զորավար Քյազիմ Դարա Բեքիր փաշան էր, որ 1920 թվի դեկտեմբերին ջարդեց և ցրիվ տվեց Կարսի ու Արդահանի 200.000 հայությունը: Ողջ Անկարան մարդասպաններ են: Ահա ձեր դաշնակիցները:

– Կարսի ջարդը... Բայց դուք էլ թյուրքերին եք ջարդել,– բացականչեց Ֆր. Բույոն:

– Ձեր աղբյուրը թյուրքերն են, և Ձեր հայտարարությունն այդչափ արժեք ունի:

– Սակայն, Ֆրանսիան չէր կարող մնալ Կիլիկիա: Այնքա՜ն ծախք, զոհեր...

– Ֆրանսիա չպիտի պահանջեր Բրիտանական կառավարությունից դատարկել Կիլիկիան բրիտանական զորքերից, եթե ինքը մնալու չէր այնտեղ: Դուք Կիլիկիան առիք Բրիտանիայից՝ թյուրքերի՞ն տալու համար, թե՞ քրիստոնյաների պաշտպանության համար:

– Չխոսինք այդ մասին: Ֆրանսիան մենակ ի՞նչ աներ: Մեղավորները, ա՛յ, այս անգլիացիք են,– ցույց տալով Daily Telegraph-ի թղթակցին:

– Շատ եմ խնդրում Ձեզ՝ մեզ չդնել Ֆրանսիայի և Անգլիայի պայքարի մեջ: Մենք շատ փոքր ենք այդ դերն ստանձնելու համար: Այսօր խոսքը ձեր և Անկարայի դաշնագրի մասին է, ուրիշ ոչինչ, և այդ դաշնագիրը հանցանք է:

Ֆրանկլին Բույոն տոնը փոխեց:

– Ի՞նչ եք պահանջում այժմ: Որո՞նք են ձեր ըմբռնումով ձեր իրավունքները:

– Դուք, պ. Ֆր. Բույոն,– ասացի,– այդ լավ գիտեք, քանի որ Ֆրանսիայում Դուք համարվել եք հայասեր և պաշտպանում էիք հայերի իրավունքները պատերազմի ընթացքին և սլաքներ էիք նետում թյուրքերին հայկական ջարդերի համար: Ի՞նչ էիք պաշտպանում, ասացե՛ք:

– Այն ժամանակ Ֆրանսիան ուներ իր հետ Դաշնակիցները: Այժմ նա մենակ է:

– Ուրե՞մն...

– Ֆրանսիան չի կարող ձեր հողային պահանջներին զոհացում տալ:

– Ձեզ հայտնի է, որ անցյալ սեպտեմբերին այդ մենակ Ֆրանսիան, իրավ որ մենակ, հրապարակ եկավ Լեոն Բուրժուայով Ժընևի Ազգերի Լիգի ժողովում réserve[262] անելու, երբ հայտարարում էին, թե Թյուրքաց Հայաստանը պետք է անջատվի Թյուրքիայից:

– Լեոն Բուրժուան Ֆրանսիա չէ:

– Հանուն Ֆրանսիայի նա արեց իր հայտարարությունը

– Բայց, վերջապես, ի՞նչ եք պահանջում դուք:

– Վիլսոնի սահմանները, թեկուզ կրճատված:

– Այդ անկարելի է: Չ՞է որ դուք Հայաստան ունիք արդեն Կովկասում:

– Նոր հասկացա Ձեզ, պ. Ֆրանկլին Բույոն: Դուք կուզեիք, որ մեկ միլիոն երկու հարյուր հազար հայ կոտորելուց հետո, Ձեր բարեկամ թյուրքերը տիրանան նրանց հողերին: Կարո՞ղ եք այդպիսի զարհուրելի փաստը պարտկել Ֆրանսիայի փառավոր պատմության մեջ: Մտածո՞ւմ եք դրա մասին:

– Ես ասում եմ, թե թյուրքերը չեն տա:

– Թյուրքերը կտան մեր հողերը մեզ, եթե նրանց գաղտնի քաջալերող չունենան մերժելու համար:

– Այս վեճը դեռ շատ կերկարի: Հավատացեք ինձ, որ թյուրքերը նախկինները չեն: Դուք պիտի փոխեք ձեր քաղաքականությունը նրանց հանդեպ: Պետությունները ձեզ շահագործում են: Կգամ Փարիզ, կգամ Փարիզ, կխոսենք: Դեռ շատ բան ունիմ ասելու Ձեզ:

– Ֆրանսիան պարտական է մեզ,– վերջացրի ես:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԻՏԱԼԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ ՄԱՐՔԻԶ ՏԵԴԼԱ-ՏՈՐՐԻՏԱՅԻ ՀԵՏ

Հունվար,12, 1922

Առավոտյան ժամը 11-ին տեսնվեցի Մարքիզ Տորրիտայի հետ:

Ահարոնյան. – Պ. Նախարար, ես Փարիզում և Լոնդոնում առիթ ունեցա վերջերս տեսնվել պ. Բրիանի և Լորդ Քըրզընի հետ: Պատրաստվում էի Հռոմ անցնել Ձեզ տեսնելու համար, երբ իմացա, որ Կաննի Conférence-ի առթիվ Դուք այստեղ պիտի լինիք: Շնորհակալ եմ ինձ ընդունելու համար՝ հակառակ Ձեր

262 *Վերապահում, պահուստ:*

բազմազբաղ ժամանակին: Ի մոտո Փարիզում կայանալու է երեք նախարարների խորհրդակցությունն՝ Արևելյան Կոնֆիոը կարգադրելու համար Ձեր մասնակցությամբ, և ես կուզեի Ձեզ պարզել այդ առթիվ հայկական հայեցակետերը: Իտալիան, որպես անմասն անգլո-ֆրանսիական սուր հակամարտության, կարծում եմ, մեր Խնդրում պիտի կամենա շատ մարդասեր ու արդար դեր կատարել: Ես կկամենայի քանի մի պայմանների վրա Ձեր ուշադրությունը հրավիրել: Նախ՝ ներեցեք, որ ասեմ, թե Հայկական Հարցը, մարդասիրական լինելուց զատ, նաև գերազանցապես réparation-ի[263] խնդիր է: Դաշնակիցները գերմանացիներից réparation են պահանջում: Կարծում ենք, որ Հայաստանի réparation-ը նույնպես հոգացվելու էր: Ո՛չ մեկ երկիր այնպես ավերվեց, որպես Հայաստանը, և ո՛չ մեկ երկիր այնպես մոռացված է այժմ, որպես Հայաստանը:

Տեղլա-Տորրիտա. – Փարիզի խորհրդակցության այդ հարցով պիտի զբաղվինք, և կարող եք վստահ լինել, որ իմ անձնական և իմ երկրի համակրանքները շատ մեծ են հայերի հանդեպ, և ես հնարավորը կանեմ **տվյալ պայմաններում** հօգուտ Հայաստանի:

Միարոնյան. – Երբեք չենք կասկածել և՛ Ձեր, և՛ ի մասնավորի Իտալիայի համակրության մասին: Մենք սիրել ենք Իտալիան, որին շատ բան ենք պարտական մեր ժամանակակից կուլտուրայով: Բայց ներեցեք ինձ ասել, որ մեր կացությունը ներկայումս այնքա՞ն ծանր է, որ իրական ու արագ դարմանի պետք ունի:

Տեղլա-Տորրիտա. – Որո՞նք են միջոցները, Ձեր կարծիքով: Ես ուրախ կլինեի լսել:

Միարոնյան. – Նախ՝ ասեմ, որ խոսվում է հայերին ապահովություն տալու մասին: Սա անարդարություն է: Խնդիրը հայկական պետության մասին է, որ ճանաչված է Սևրի դաշնագրին նախընթաց մի ակտով, և հիշյալ Դաշնագրի վավերացումն ու ոչ-վավերացումը առանձին առնչություն չունի մեր պետության անկախության հետ: Եթե մեր պետության մի մասը գրաված են բոլշեվիկները, ոչինչ չի կարող արգիլել, որ ազատագրվի թյուրքերի ձեռքերից հարավային մասը, թյուրքաց վիլայեթները: Սևրի դաշնագրի վերաքննությունը լավ առիթ է, թյուրքերին որոշ գոհացումն տալու փոխարեն, պահանջել որպես հատուցումն Թյուրքաց Հայաստանի

[263] *Ռեպարացիա՝ վերականգնում– Պատերազմի պատճառած կորուստների փոխհատուցում, որ հաղթողին վճարում է պարտված երկիրը. սա ռազմական կոնտրիբուցիայի ձև է, որ օրինակ՝ Առաջին համաշխարհային պատերազմում հաղթանակած երկրների կողմից գանձվեց Գերմանիայից:*

հողերի պարպումը: Եվ այս խնդրում մենք հույս ենք կապում Ձեր աջակցության:

Ապա՝ ես մի առ մի թվեցի Հայաստանի ապագա կազմակերպության բոլոր հնարավորությունները – հայերի թիվը, ֆինանսական հարցի կարողության եղանակը, ժանդարմերիի կազմությունը, վարչության ձևը մանդատի տակ:

Տեղլա-Տորրիտա. – Բարի եղեք, խնդրեմ, այս բոլորը հուշագրի ձևով ինձ ներկայացնել և վստահ եղեք Իտալիայի բարյացակամ աջակցությանը:

Տեսակցությունը վերջացավ: Ես դուրս եկա ճնշված տպավորությամբ: Իտալիայի նախարարի արտաքինն իսկ զորացնում էր այդ տպավորությունը: Մարքիզը փոքրիկ, վտիտ մարդ է, նիհար, մումիայի դեմքով, կենդանի բայց անախորժ աչքերով, որոնք վստահություն չեն ներշնչում:

Եվ հետո, բազմաթիվ փորձերից հետո, ես բնազդական վախ ունեմ այն պետական մարդկանցից, որոնք դիվանագիտական զրույցը դարձնում են սոսկ համակրական զգացմունքի արտահայտության միջոց, մանավանդ՝ երբ խոսում են սեփական համակրանքից՝ խույս տալով իրական և որոշ հարցերից:

Տեղլա-Տորրիտայի վրա ես առանձին հույս չունեմ: Aide Mémoire–ը ներկայացրի:

Կաննում տեղեկությունների տեսակետից շատ մեծ ծառայություն ցույց տվին ինձ Բելգիայի ընկերվարական Brucker, թղթակից Wansipe և Կաննից մեկնեցի Ֆրանսա 15-ին:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԻՆԻՍՏՐԻ՝ ՊԵՐԵՏՏԻ ԴԸ-ԼԱ ՐՈԿԿԱՅԻ ՀԵՏ

Այսօր, հունվար 21-ին, տեսնվեցի Պերետտիի հետ: Խնդրեցի ասել, թե արդյոք կառավարությունն առաջ բերե՞լ է քաղաքականության փոփոխություն Արևելքում և մասնավորապես Հայաստանի վերաբերմամբ:

Պերետտի. – Ո՛չ, քաղաքականության մեջ փոփոխություն չկա Հայաստանի վերաբերմամբ: Բայց շատ երկյուղ ունիմ, որ թուրքերը intransigeant[264] լինին Հայաստանի հանդեպ: Անցյալ օրը ինձ մոտ էր մի թուրք, որ ասում էր, թե Հայաստան չկա և թե

[264] *Անզիջում, անդրդվելի, անհաշտ:*

հայերի թիվը ամբողջ Թյուրքիայում 300 հազարից անց չէ: Ես հարցրի, թե պատերազմից առաջ հայերի թիվը այնտեղ ավելի էր մեկ միլիոն ու կեսից: Ապա ու՞ր են մնացածը, այսինքն՝ մեկ միլիոն երկու հարյուր հազարը:– «Մեկնել են երկրից»,– պատասխանեց թուրքը: «Մեկնե՞լ են»,– բացականչեցի ես,– երևի ձեր ձեռքով երկինք»: Պարզ էր կոտորածի խոստովանությունը թուրքի կողմից:

Ահարոնյան. – Մեր վերջին տեսակցության Բրիանի հետ Կիլիկիայի մասին, նա թողեց այդ Խնդիրը և դարձավ Հայաստանին, ասել ուզելով, թե Կիլիկիայի Խնդրում փոփոխության հնար չկա, և թե նա պատրաստ է մեզ աջակցել Հայաստանի Խնդրում, այսինքն՝ ստանալ մեր հողերը թուրքերից: Այս հարցումն է, որ ես կուզեի հավաստիք ունենալ նոր կառավարության առթիվ: Կարո՞ղ ենք հուսալ Ֆրանսիայի աջակցության վրա այս խնդրում:

Պերետտի. – Վստահացնում եմ Ձեզ, որ մեր քաղաքականությունը Հայաստանի հարցում փոխված չէ:

Ահարոնյան. – Ես կկամենայի հասկանալ Ձեր խոսքերը այն իմաստով թե՝ Կիլիկյան Հարցը այնքան ի վնաս մեզ լուծելուց հետո, Ֆրանսիան ինքզինքը մինչև մի որոշ աստիճան պարտական է զգում Հայկական վիլայեթներն ազատել թյուրքերից և հայ ժողովրդին հանձնել: Ես չեմ թաքցրել Ձեզնից, պ. Մինիստր, թե ի՜նչ ցավագին արձագանք ունեցավ Կիլիկիո Հարցը բոլոր հայ սրտերում:

Պերետտի. – Մենք չենք կարող մոռանալ Հայաստանը. La Cause Arménienne est une Cause Française[265]:

Ես շատ զարմանքով լսեցի այս վերջին խոսքերը, որ միանգամայն անսպասելի էին Պերետտիի շրթունքներում: Այդ զարմանքը նկատեց Պերետտին և ժպտալով հարցրեց.

– Qui, est – ce que vous on doutez ?[266]

Ահարոնյան. – Ո՛չ, պ. Մինիստր, ես բնավ չեմ կասկածում, որ Հայ Դատը Ֆրանսիական Դատ է: Միայն թե՝ մեր այս ծանր օրերում այսքան սրտապնդիչ հայտարարությունը ինձ համար ուրախություն է, և այդ ուրախության համար Ձեզ երախտապարտ եմ: Ձեր նշանակալից խոսքերը ես երբեք չեմ մոռանա:

Պերետտի. – Վստահ եղեք ինձ վրա: Դուք այստեղ, այս հարկի տակ, հավատարիմ բարեկամ ունիք: Vous avez, ici un ami fidèle[267]:

---

265 *«Հայկական Դատը Ֆրանսիական Դատ է»:*

266 «Ի՞նչ, կկասկածե՞ք»:

267 *«Դուք այստեղ վստահելի բարեկամ ունեք » (ֆրանս.):*

Ե զ ր ա կ ա ց ու թ յ ու ն – Ըստ իմ ստացած տպավորության, Պերետտին մեր հանդեպ նոր և մեզ համար ո՛չ աննպաստ ներ-շնչումն է ստացել: Սակայն, չեմ կարող ասել, թե ֆրանսիական քաղաքականությունը վերջնապես իր համար պարզե՞լ է մեր Խնդրում բռնելիք ընթացքը: Կարծում եմ, որ Պուանքարեն ավելի նպաստավոր քաղաքականություն, կամ ավելի ճիշտ տրամադրություն ունի մեր հանդեպ, բայց դեռ իր անելիքը շատ որոշ չէ:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
TEMPS ԹԵՐԹԻ ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ
JEAN HERBETTE-Ի ՀԵՏ

Այսօր, հունվարի 23-ին, իմ հրավերով, որ ընդունվեց շատ փութով ու մեծ սիրով, մի փոքրիկ թեյասեղանի շուրջը՝ La Rue ճաշարանում հանդիպեցինք Temps-ի խմբագիր J. Herbette-ի հետ: Ներկա էր և Ա. Խատիսյան:

Զրույցի նյութն էր Ֆրանսիայի քաղաքականությունը Հայկական Հարցում: Մեր ցանկությունն էր իմանալ, թե Ֆրանսիան պիտի աջակցի՞ մեզ արդյոք Թյուրքաց Հայաստանի խնդրում: Ավելացրինք, թե առանց Ֆրանսիայի անկեղծ ու վճռական աջակցության, երկյուղ ունենք. որ Թյուրքաց Հայաստանի հարցը վերածվի սոսկ փոքրամասնության երաշխիքների ձևին, ինչ որ Հայաստան ու Հայկական Հարց իսպառ լքել՝ ասել է:

Jean Herbette. – Թյուրքաց Հայաստանի անկախությունը ներկա պայմաններում ինձ բնավ հնարավոր չի թվում Home-ի ձևով կամ այլապես: Ցավն այն է, որ թյուրքերը կամավ չեն զիջի, իսկ նրանց բռնադատելու որևէ միջոց ես չեմ տեսնում: Ըստ իս՝ հայերը բավականանալու են Կովկասյան Հայաստանով, ուր կարող են ամրապնդվել և սպասել լավագույն օրերի: Ինչ վերաբերում է Թյուրքաց Հայաստանին, իբրև փոքրամասնություն, հայերը կկարողանան համախմբվել քաղաքներում, երկրի առևտուրը ձեռք առնել, բազմանալ և լինել լավագույն հարաբերության մեջ թյուրքերի հետ: Ես այլ հեռանկար չեմ տեսնում այսօրվա պայմաններում: Հասկանում եմ, ձեր կացությունը, որպես վարիչների, շատ ծանր է: Դուք Կովկասում 300 հազար թյուրքահայ գաղթականներ ունիք, որոնք շարունակ պիտի ձգտին դեպի Թյուրքիա: Բայց վարիչների քաղաքական իմաստությունը պետք է գերակշռի:

Ահարոնյան. – Հարցն այսքան հեշտ չէ: Հայաստանի մեկ

միլիոն զոհը այսպիսի արդյունքի համար չէր: Պետությունները և ի մասնավորի՝ Ֆրանսիան ծանր պարտք ունին մեր հանդեպ: Բռնադատելու միջոցները չեն պակասում, եթե պետությունները և ի մասնավորի՝ Ֆրանսիան այդ կամենան: Քանի որ Սևրի դաշնագրի վերաքննությամբ Ֆրանսիան հաջողեցրեց ահագին շահ թյուրքերին, փրկեց Թյուրքիան, նա կարող է թյուրքերից Հայաստանի պարպումը պահանջել:

J. Herbette. – Ֆրանսիան այդ չի կարող անել մենակ: Դրանով նա միայն թյուրքերին պիտի դարձնի իր դեմ՝ առանց շահի ձեզ համար: Ֆրանսիան կարող է Հայաստանի պարպումի խնդիրը դնել միայն այն ժամանակ, եթե կարողանա գոհացնել թյուրքերին՝ նրանց մյուս պահանջների հետ: Արդ՝ դուք գիտեք, որ Անգլիա լսել չի ուզում այդ մասին: Եթե դուք կարող եք համոզել անգլիացիներին ընդունելու թյուրքերի բոլոր պահանջները, այն ժամանակ հնարավոր կլինի և ձեր Հարցի լուծումը ձեր ուզած ձևով:

Ահարոնյան. – Հուսամ, Դուք այդ առաջարկը լրջորեն չեք անում: Մենք չենք, որ կարող ենք անգլո-ֆրանսիական վեճի մեջ մտնել: Ֆրանսիան պարտավոր է մեզ օգնել: Մենք չենք պահանջում Ֆրանսիայից զորք, ֆինանսներ, այլ միմիայն նրա բարի խոսքը, հօգուտ Հայաստանի, որ իր հույսը դրել է նրա վրա: Կիլիկիայի թշվառություններից հետո, Ֆրանսիան այս նոր հիասթափությունը պետք է խնայի հայ ժողովրդին:

J. Herbette. – Ես ասացի, որ մենք մենակ ենք: Եվ մեր այդպիսի պահանջը, կրկնում եմ, առանց ձեզ օգուտ տալու, մեր էլ հարաբերությունները կգեշացնի Թյուրքիայի հետ...

Անօգուտ էր շարունակ այսպիսի զրույցը J. Herbette-ի հետ: Պարզ էր, որ Temps–ի խմբագիրը իր կարծիքը փոխելու չէր:

Բաժանվեցինք շատ ծանր տպավորությամբ:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՖՐԱՆՍԻԱՅԻ ՎԱՐՉԱՊԵՏ Է. ՊՈՒԱՆՔԱՐԵԻ ՀԵՏ

Այսօր, փետրվարի 20-ին, ճաշից հետո ժամը 5-ին, Նորատունկյանի հետ միասին տեսնվեցինք Պուանքարեի հետ:

Նորատունկյանը, առաջինը խոսք առնելով, ծանրացավ Թյուրքաց Հայաստանի կազմության իրական կամ ենթադրյալ դժվարությունների վրա: Հայ բնակչության թվի պակասը հերքեց՝ ասելով, թե Կովկասում և այլուր 500 հազարի չափ հայ փախստականներ են սպասում՝ իրենց հայրենիքը վերադառնալու: Ժանդարմերիի համար հայտնեց, թե հայությունը կկարողանա պետք եղած թվով կամավորներ տրամադրել՝ Դաշնակիցների կաղրերով կարգն ապահովելու համար: Ֆինանսների համար ասաց, թե Ամերիկայի բարգավաճ հայության ներկայացուցիչները առաջարկում էին անցյալները Ազգերի Լիգային 5000 հայ կամավորներ և 25 միլիոն դոլլար, եթե հոգատար մի պետություն հանձն առներ Հայաստանը իր խնամքի տակ առնել ու կարգավորել:

– Փոքրամասնության իրավունքների սիստեմով,– ասաց Նորատունկյան,– անհնարին է Թյուրքիայում ապահովել հայության վիճակը, որովհետև թյուրքերը հազար հնար ունեն խախտելու այդ կարգի համաձայնության բոլոր կետերը. նրանք ջարդարարներ են, անվստահելի և անուղղելի. Անկարայի Ժողովի անդամները մեծավ մասամբ հանցագործներ են և հայերի դեմ ոճիրներ են կատարած:

Պուանքարե, որ լսում էր ակնհայտ տհաճությամբ, վերջին խոսքերից առաջ զայրույթով ձեռքը սեղանին վրա ցնցեց ու բացականչեց .

– Թողեք խնդրեմ անցյալը: Մենք հնար չունենք թյուրքերին պատերազմ անելու: Ես չեմ կարող ժամանակս կորցնել: Խոսինք իրականությունից:

Նորատունկյան. – Նպատակս Ձեզ թյուրքերի դեմ գրգռել չէ, այլ պարզապես իրականությունը բացատրել: Բայց ես վերջացրի Թյուրքաց Հայաստանի մասին: Պ. Ահարոնյանը կասի, թե ինչեր են կատարել նրանք Կովկասյան Հայաստանում:

Պուանքարեն ինձ դարձավ, բայց դեռ սրտնեղած արտաքինով փոքրիկ միջադեպից և դեմքը կարմրած:

Ձնջելու համար այս անախորժ տպավորությունը, ես ստիպված էի փոխել իմ ասելիքը և հեռվից մոտենալ նյութին:

Ահարոնյան. – Պ. Նախագահ, նախ՝ թույլ տվեք ինձ իմ անկեղծ երախտագիտությունը հայտնելու Ձեզ՝ պ. Գերնիեին ուղղած Ձեր նամակի համար՝ ի պատասխան Ֆրանսական պարլամենտի անդամների դիմումին, որով Դուք խոստանում եք հայկական Home–ը պաշտպանել առաջիկա կոնֆերանսում: Մեզ համար այդ նամակը սրտապնդիչ երևույթ է, որին վաղուց կարոտ էինք:

Պուանքարե. – (ժպտալով) Այո, բայց պետք չէ չափազանցել հույսերը: Պետք է գիտնաք, որ կան մեծ դժվարություններ:

Ահարոնյան. – Գիտեմ, և հենց դժվարությունների մասին պիտի խոսեմ, քանի որ գտնում եմ ավելորդ՝ կրկնել այստեղ մեր

իրավունքների արդարությունը և մեր հանձն առած զոհաբերությունների մեծությունը: Ֆրանսիական Հանրապետության նախագահ պ. Պուանքարեն լավ գիտեր այդ բոլորը, հետևապես Ֆրանսիայի վարչապետ Պուանքարեն նույնպես: Մենք հավատացած ենք, որ մեր հարցը Ձեզ ծանոթ է գուցե մեզնից ավելի:

Պուանքարե. – (ժպտալով) O, pas tant que ca[268]:

Միարոնյան. – Ձեզ հրաշալի ծանոթ են Կովկասյան ճակատում մեր կոիվները. մեր 200 հազար զինվորների գործը ռուսական և այլ ճակատներում: Ձեզ բաջածանոթ է մարեշալ[269] Ալենպիի վկայությունը Պաղեստինի ճակատում մեզանց կատարած դերի մասին և նորերս գեն. Լուդենդորֆ իր մի գրքում խոսում է նաև Բաքվում մեր զորքերի կատարած դիմադրության մասին, որ ուշացրեց մի քանի ամսով Գերմանիային նավթը և վճռապես ազդեց Գերմանիայի պարտության վրա: Այս բոլորի հանդեպ Սևրի դաշնագիրը մեր վարձատրությունն եղավ: Տարաբախտաբար, զինադադարը չիրագործեց թյուրքերի զինաթափումը: Մի սխալ, որից տուժում ենք այսօր ամենքս, և որ Ֆրանսիայինը չէ:

Պուանքարե. – (ակնհայտ հաճությամբ) Լիապես համաձայն եմ Ձեզ հետ: Դա ծանր սխալ եղավ և այսօրվա դժվարությանց գլխավոր պատճառն է:

Միարոնյան. – Եվ մեր մեծ աղետին, թյուրքերը կարողացան բոլշևիկյան օգնությամբ ոչ միայն պահել Թյուրքաց Հայաստանը, այլև անցնել գրավել Կովկասյան Հայաստանի մի կարևոր մասը: Ես այդ նախատեսել էի և բազմիցս հրավիրել Դաշնակիցների ուշադրությունը թյուրք-բոլշևիկյան գործակցության վտանգի վրա: Բայց ձայնս լսելի չեղավ: Փաստը մեր առջևն է: Բայց դա անցյալն է: Մենք կարծում ենք սակայն, որ հակառակ այս դժվարին կացության, հնարավոր է Հայկական Խնդիրը կարգադրել, մանավանդ որ դա չի հակասում անգամ թյուրքական շահերին, եթե նրանք խելահաս լինին:

Նորատունկյան. – Անգամ կովկասյան մահմեդական պետությունները պնդում են Թյուրքաց Հայաստանի ազատագրության վրա, ինչպես և հնդիկ մահմեդականները, որը վկայեց նորերս Լորդ Նորդքլիֆ:

Պուանքարե. – Ճշմարիտ է, բայց Անկարայում խոսք հասկացող հոսանքը զորեղ չէ: Դրա փոխարեն թյուրքերն այսօր այնքան կազմակերպված են: Մենք մեր օրակարգի մեջ ունինք հայկական Home-ը: Սակայն, խնդիրը թյուրքերին հարկադրելու միջոցների դժվարության մեջ է: Դաշնակիցները և, ի մասնավորի, Ֆրանսիան չեն կարող նոր պատերազմ հայտարարել Թյուրքիային:

Միարոնյան. – Պ. Նախագահ. թյուրքերին պատերազմ հայտարարելու պետք չկա: Մենք գիտենք, որ Դաշնակիցները հայտարարել են՝ ոչ մի սու, ոչ մի զինվոր: Մենք խնդրում ենք թյուրքերին առաջարկելիք պայմանների մեջ դնել և հայկական հողերի դատարկումը: Եվ հավատացած ենք, որ երբ պետությունները վճռապես ու միակամ այդ պահանջեն, թյուրքերը կզիջեն: Նրանք աղմկում են, սովոր են «քազարլըղ-ի»[270], շահագործում են պետությունների անտագոնիզմը[271], բայց պիտի խոնարհին, հենց որ պետությունները միահամուռ ու վճռապես պահանջեն: Միշտ այսպես է եղած ահա մեր Խնդիրը:

Պուանքարե. – Մենք աշխատում ենք համաձայնության գալ Անգլիայի հետ և հույս ունեմ կհասնենք: Ինչպես ասացի, Հայկական Home-ը օրակարգի մեջ է, որ առաջադրելու ենք թյուրքերին: Բայց կրկնում եմ, դժվարությունը այդ չէ, այլ այն, որ թյուրքերը կարող են մերժել, և մենք հնար չունենք նրանց հարկադրելու: Ես մարշալ Ֆոշի հեղինակավոր կարծիքն ունեմ: Թյուրքերն այսօր այնքան հզոր են, որ կարող են և՛ Անգլիայի դեմ դնել Միջագետքում, և՛ մեր դեմ Սյուրիայում, և՛ հույների, և՛ ձեր դեմ: Սա է փաստը: Եվ պետք է հաշվի առնել այս: Մենք չենք կարող նոր կոիվ հայտարարել Թյուրքիային, ի վիճակի չենք այդ անելու: Սակայն, Հայկական Home-ը կպահանջենք հնարավոր պայմաններում:

Նորատունկյան. – Մի խնդիր ևս: Ինչպես գիտեք, Կիլիկիայի հայությունը խույս տվեց իր երկրից: Պիտի խնդրեինք հնար տալ նրանց իրենց հայրենիքը վերադառնալ և այնտեղ ստեղծել մի հատուկ ռեժիմ նրանց պաշտպանության համար: Կիլիկիան հայության խոշոր կեդրոն է, որ կարող է Home դառնալ փախստական հայության: Իհարկե, մեր ցանկությունն է ունենալ Home-ը բուն Հայաստանում: Բայց եթե այդ անկարելի դառնա...

Պուանքարե. – (ջղայնացած) Ո՛չ, ո՛չ, Կիլիկիո մեջ առանձին ռեժիմ լինել չի կարող: Ընդհանուր քրիստոնյաների պաշտպանության հարց կա: Համենայն դեպս Կիլիկիան կարող է հուսալ նույնն ունենալու, ինչ որ Զմյուռնիո շրջանի քրիստոնյաները:

---

268 «O՝, ոչ այդչափ»:

269 *Մարշալ.*

270 *Բազար անել, սակարկել (թուրք.):*

271 *Անհաշտ հակառակություն,* հակամարտություն:

Միարոնյան. – Երկու խոսք ևս Ջենովայի կոնգրեսի մասին: Գիտեք, որ Սովետական պատվիրակությունը բերելու է իր հետ և մի հայ բոլշևիկ, որպես Հայաստանի ներկայացուցիչ: Որպես Հայաստանի լեգալ կառավարության ներկայացուցիչ, խնդրեմ, ի նկատի առնել, որ դա ծանր ոտնձգություն է մեր անկախության դեմ: Հուսամ՝ Ֆրանսիական կառավարությունն այդ թույլ չի տա:

Պուանքարե. – (վճռապես) Ո՛չ, ո՛չ, կովկասյան պետություններն Ասիայումն են և չեն կարող մասնակցել այդ կոնգրեսին: Արդեն իսկ մենք մերժեցինք Վրաստանին:

Տեսակցությունը տևեց 35 րոպե:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՉԻՉԵՐԻՆԻ ՀԵՏ

Ջենովա
մայիս 15, 1922
Hotel Nizza

Այսօր, մայիսի 15-ին, ճաշի ժամը 12-ից մինչև 1-ը տեսակցություն ունեցա Չիչերինի հետ Մ. Վարանդյանի և Ա. Գյուլխանդանյանի[272] հետ միասին:

Վարանդյան ներկայացրեց ինձ ու Գյուլխանդանյանին: Ես առաջինը խոսք առա:

Ես ասացի ֆրանսերեն.

– Թույլ տվեք ինձ, նախ, մի pro domo sua[273]:

Եվ նրան նկարագրեցի 1918 թվին թյուրքերի առաջխաղացման և Ռուս բանակի հեռանալու օրերին Թյուրքիո հայ ժողովուրդի համակրանքը դեպի ռուսները և թե ես անձնապես ինչ եմ արել այդ օրերին: Ավելացրի, որ միայն ռուսներին հովանու աջակցության պակասն եղավ պատճառ, որ մենք ստիպված եղանք մանդատեր փնտրել: Ռուսների վերադարձը դեպի Կովկաս, սակայն, թյուրքերի հետ, հայ ժողովրդին անասելի ցավ դարձավ և ծանր աղետների աղբյուր եղավ մինչև այժմ: Ռուս-թյուրք համաձայնությունը փաստ է այսօր: Ռուսը իր արևելյան նոր քաղաքականության հենարան է համարում Թյուրքիան, և մենք ստիպված ենք հաշվի առնել այդ փաստը: Մտածում ենք, սակայն, որ անհնարին չէ հաշտեցնել հայկական շահերը՝ ռուս-

[272] *Գյուլխանդանյան Աբրահամ – Հասարակական, քաղաքական գործիչ:*

[273] *Pro Domo Sua (լատիներեն) - Բառացի՝ Սեփական տնից, այսինքն՝ սեփական առիթով, սեփական գործերից:*

թյուրք համաձայնության տրամադրությունների հետ: Մենք կարծում ենք, որ Հայկական արևելյան նահանգները, կամ նրանց մի մասը հայերին հատկացվելը ավելի ևս կամրապնդեր ռուս-թյուրք համաձայնությունը և թյուրքերի գործը կհեշտացներ աշխարհում, վերցնելով մեջտեղից մի դժնդակ պրոբլեմ, որի համար ամբողջ քաղաքակիրթ աշխարհը դեմ է թյուրքերին: Մենք կարծում ենք, որ Մոսկվայի Սովետը, մնալով հանդերձ թյուրքին բարեկամ և նույնիսկ այդ բարեկամության վրա հենած, պիտի կարողանար մեզ մեծապես օգնել մեր պրոբլեմը լուծելու՝ ճնշում գործելով թյուրքերի վրա: Եվ այս տեսակետը համայն հայությանն է:

– Երեկ Դուք ընդունել եք պ. Նորատունկյանին, իմ կարգին,– ասացի,– և ես վստահ եմ, նա էլ նույն տեսակետն է պաշտպանել Ձեր առաջ:

Չիչերին. – Նախ ասեմ, որ պ. Նորատունկյան ձեզ չի ճանաչում: Նրա հետ մենք խոսեցինք և ես խոստացա անել հնարավորը թյուրքահայերի համար: Ինչ վերաբերում է Կովկասյան Հայաստանին, մենք զիջեցինք Կարսի շրջանը թյուրքերին ստիպված, որովհետև ձեր կառավարությունը այդ արդեն զիջել էր: Մեղքը մերը չէ, ձերն է: Այս պահուն այդ հողերը (Կարսի) թյուրքական է: Եթե դուք կարողանաք թյուրքերից այն վերցնել ձեր Home-ի համար, մենք ուրախ կլինենք: Տարբեր ձևով, մենք թյուրքերին բռնադատել չենք կարող: Մենք նրանց դաշնակիցներ ենք, և եթե խոսք բանանք Թյուրքաց Հայաստանի կամ Կարսի մասին, թյուրքերը պիտի մեզ մեղադրեն իմպերիալիզմի մեջ: Մենք չենք կարող մեր արևելյան քաղաքականությունը, որ հենված է թյուրք բարեկամության վրա, փոփոխության ենթարկել: Ուրախ կլինեմ, եթե դուք հաջողեցնեք: Եվ նույնիսկ Մոսկվա վերադարձիս կաշխատեմ բարոյապես ազդել թյուրք ներկայացուցիչների վրա հօգուտ ձեզ: Ցավում եմ, սակայն, որ դուք՝ և՛ ձեր պատվիրակությունը, և՛ ձեր կուսակցությունը գործում է ռուս Սովետի դեմ: Ձեր հակառակությունն այնքան մեծ է մեր դեմ, որ այն ժամին, երբ ձեր ներկայացուցիչները Ալեքսանդրապոլ էին Կարսի անկումից հետո, երբ Հայաստանում Սովետ էր հայ-տարարված, ձեր ընկերները Ալեքսանդրապոլում ստորագրեցին մի դաշնագիր, որի որոշ մի հոդվածը ուղղված է Ռուսաստանի դեմ:

Գյուլխանդանյան. – Ես ստիպված եմ Ձեզ հայտարարել, որպես հիշյալ դաշնագիրը ստորագրողներից մեկը, որ այդ ակտը ստորագրած ենք Երևանի Սովետի անդամների հրահանգով և

քելաղրանքով և բնավ մեր մտքովն անգամ անցած չէ հակառուս որևէ քայլ անել հիշյալ դաշնագրով: Ես տեսնում եմ, որ տարաբախտաբար Ձեզ թյուրիմացության մեջ են ձգել Ձեզ զեկուցողները:

Այնուհետև Չիչերինի զրույցն անցավ ավելի հանդարտ, պակաս ներվային տոնով, բայց և այնպես նա շարունակեց իր անհիմն մեղադրանքները Դաշնակցության դեմ, Թավրիզի մեր փախստականների դեմ, վերջում նորից խոստացավ «թյուրքերի մոտ բարեխոսել» հօգուտ Թյուրքաց հայության և հայ ազգային Home-ի:

Մենք դուրս ելանք խիստ հիասթափված:

ԺԸՆԵՎ

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍԵՆԱՏՈՐ ԴԵ ԲՐՈՒՔԵՐԻ ՀԵՏ

Սեպտեմբեր 4

Տեսնվեցի Դե Բրուքերի հետ այսօր: Միանգամայն համամիտ է մեր հուշագրի հիմնական գաղափարին: Ցավ հայտնեց մեր բացակայության համար վերջին տարիները:

«Ես ժպտով էի լսում,– ասաց նա,– ձեր հայրենակիցներից Լոմանց, որոնք եկած էին այստեղ անցյալներում պնդելու, թե Հայաստանը (Սովետական) անկախ է կատարելապես և թե նա միայն դաշնակցական կապերով է Սովետական Ռուսիո հետ կապված: Եթե սա մանևր էր փոխառություն ստանալու համար՝ լավ, բայց ու՞մ կհավատացնես: Ես տեսա, որ Ժորովին ներկա պ. Փիրումովը իր հայրենակիցների հետ խոսում էր ռուսերեն: Ասել է, իր մայրենի լեզուն չգիտեր: Տարօրինակ ներկայացուցիչ մի երկրի, որի լեզուն չգիտե: Այո՛, գաղթականական հարցը մի մասնավոր փորձ է, որ չի կարող և չպետք է շփոթվի բուն Հայկական Խնդրի հետ: Նանսեն խնդիրը մի փոքր ծուռ է դրել՝ Կովկասյան Հայաստանը Home անվանելով: Այս տարի կփորձենք շտկել նորեն»:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱԼԲԵՐ ԹՈՄԱՅԻ ՀԵՏ

Սեպտեմբեր 4

Ճաշից հետո, ժամը 5-ին, այսօր տեսնվեցի A.Thomas-ի հետ B.I.T.-ի[274] շենքի մեջ:

---

[274] *Հավանաբար՝ Բյուրոյի անվան հապավումը:*

Մեր հուշագիրը ստացել էր ու կարդացել և գոհ էր: Համաձայն է պաշտպանել այն: Ինձ ուշադրությամբ լսելուց հետո՝ ասաց .

– Բնավ հուսահատվելու չէ հասարակաց կարծիքից, թեկուզ մեր այս դժվարին օրերին: Խաղաղ ճամփաներով հարցեր լուծելու ժամանակները հասունանում են: Պատերազմը անհրաժեշտ պայման չէ արդարություն գտնելու համար: Հայկական հարցը ևս կարող է լուծվել խաղաղ եղանակով: Դրա համար աշխատանք պետք է անընդհատ: Ժամանակին Ժորես[275], Պրեսանսե[276], Դրնի Կոշեն ինչ որ անում էին, պետք է շարունակվի:

Գալով այստեղ անելիքին, գաղթականական հարցը, որով զբաղվում է մեր Bureau-ն[277], մի ուրույն ու մասնակի հարց է, որ պետք չէ խառնել գլխավորի՝ հայ ժողովրդի իդեալի հետ: Նանսեն պետք չէր Կովկասի Home մեջտեղ նետեր: Նա շատ ազնիվ մարդ է, բայց և ոչ խորը: Ես S.D.N-ի[278] մեջ խոսք առնելու առիթ չունեմ, բայց պիտի նախագահեմ Near East Reunion Annuelle-ին[279] ու ամսիս 7-ին, և իմ ճառը կլինի ճիշտ ձեր Memoire-ի իմաստով»:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՆԻԿՈԼԱՅՈՍ ՊՈԼԻՏԻՍԻ ՀԵՏ

Հունաստանի ներկայացուցիչը Փարիզում, ինձ ընդունեց երեկոյան ժամը 6-ին: Նրա մոտ գտա Լ. Բաշալյանին[280] և Ա. Մանդելշտամին[281]: Նրանք եկած էին խոսելու Թյուրքիայում մերոնցից հափշտակված կալվածների խնդրի մասին:

Պոլիտիս ընդհանուր տեսակետներ պարզեց թե՛ այդ մասնավոր խնդրի և թե՛ առհասարակ մեր Հարցի մասին:

275 *Ժան Ժորես – Հասարակական-քաղաքական գործիչ, սոցիալիստ, «Յումանիտե» թերթի հիմնադիրը:*

276 *Ֆրանսիս դը Պրեսանսե – Ֆրանսիական հասարակական-քաղաքական գործիչ, ֆրանսիական խորհրդարանի անդամ:*

277 *Բյուրո:*

278 *S.D.N. (Société Des Nations) – Ազգերի Ասոցիացիա:*

279 *Մերձավոր Արևելքի Վերամիավորման Տարեդարձ:*

280 *Բաշալյան Լևոն - գրող, հրապարակախոս, Ազգային պատվիրակության անդամ:*

281 *Մանդելշտամ Անդրեյ Նիկոլաևիչ – ռուսական դիվանագետ, իրավաբան, պատմաբան, Թուրքիայում Ռուսաստանի կողմից առաջարկվելիք հայկական բարենորոգումների նախագծի հեղինակ:*

Քաղաքական ներկա մոմենտում արդարություն գտնելու մասին նա շատ վատատես է: Մարդկության մորալի (բարոյականի) մակարդակն է իջել: Գալով թյուրքերին, պետք է գիտնալ, որ մեծ պետությունները շարունակում են քծնել Թյուրքիային: Եվ հասկանալի է, յուրաքանչյուրը միլիարդներ են թողած այնտեղ, և աշխատում է սիրաշահելու ճամփան՝ առանց կռվի, մաս-մաս շորթել:

Ըստ Պոլիտիսի, թյուրքերը միայն հայերին ու հույներին չկոդոպտեցին, այլև՛ մեծ պետություններին, որոնք անխոհեմություն ունեցան մի օր հայտարարել, թե Թյուրքիայի դեմ պատերազմելու համար՝ «ոչ մի շիլլինգ և ոչ մի զինվոր»[282]:

– Երբ Վենիզելոս դարձավ Ամերիկայից 1920 թվին, Պուանքարեն նրան իր մոտ հրավիրեց՝ նրա կարծիքը լսելու Փոքր Ասիո մասին: Վենիզելոս ասել է Պուանքարեին թե՝ «Մեր բանակը կպարտվի, այնուհետև կպարտվիք դուք, հաղթական Դաշնակիցներդ»: Պուանքարեն խնդացել է վերջին ֆրազի վրա. C'est l'expression d'amertume d'un patriote[283], ասել է Պուանքարեն: Եվ սակայն, Վենիզելոսի ասածը բառ առ բառ կատարվեց:

– Այսօր,– շարունակեց Պոլիտիս,– ո՛չ Ֆրանսիան, ո՛չ Անգլիան որևէ քայլ չեն անի Թյուրքիայի դեմ, ինչ անախորժ բան և գեշություն էլ կատարեն Անկարայի վարիչները: Տարբեր բան է, եթե Թյուրքիան Ազգերու Լիգի մեջ մտնի: Այդ ժամանակ շատ բան հնարավոր է: Եվ դա տեղի կունենա հավանաբար եկող տարի:

Ես. – Բայց նա կարող է դուրս գնալ, ինչպես այդ արեց Լոզանում, երբ իր առջև անախորժ հարցեր հանվեն: Բրազիլիան, Իսպանիան՝ օրինակ:

Պոլիտիս. – Դուրս կերթա: Այնքան էլ հեշտ չէ: Ստիպված պիտի ետ գա, ինչպես ձգտում են վերադառնալ մյուս դուրս մնացածները: Այսօր, սակայն, դարձյալ պարապ մնալու չեք: Պետք է թույլ չտալ, որ ձեր Հարցի վրա լռության տարիներ անցնեն: Պետք չէ թողնել, որ հասարակաց կարծիքի մեջ ամրապնդվի այն համոզումը, թե դա մի հին, մոռացված, փոշիացած խնդիր է, աղեկգեշ կարգադրված: Ահա այս տեսակետից S.D.N-ին կատարած ձեր դիմումները միշտ էլ արժեքավոր են:

282 *Նույնն է թե՝ «Ոչ մի սու և ոչ մի զինվոր»:*

283 «Ասիկա հայրենասերի մը դառնության բացատրությունն է»:

ՆՈՐ ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԴԵ ԲՐՈՒՔԵՐԻ ՀԵՏ

Սեպտեմբեր 6

Կրկին տեսակցություն: Նյութն է՝ թյուրքերի հավանական մուտքը Ազգերի Լիգի մեջ:

De Brucker չի հավատում, թե այս նստաշրջանին այդ տեղի ունենա: Նշաններ չկան: Սակայն, 1928-ին անհնար չէ և նույնիսկ հավանական է:

Ես մատնանշեցի մեզ սպառնացող վտանգը, քանի որ Ազգերու Լիգը պետք է վավերացնի և իր հովանու տակ առնի անդամ դարձած Թյուրքիո սահմանները: Ավելացրի, որ իմ գալու նպատակներից մեկը այդ վտանգի կանխելն է:

De Brucker-ի կարծիքով՝ Լոզանի դաշնագրից հետո, այս երկրորդ խոշոր վտանգն է: Մեծ պետությունները ընդունակ են ներս առնել թյուրքերին՝ զոհ բերելով կրկին հայերին: Հարկավոր է ժամ առաջ մի ֆորմուլ գտնել՝ գեթ ապահովելու համար հայ ժողովրդի իրավունքը:

Ես ցույց տվի հետևյալ ֆորմուլը. –

La S.D.N. (Société Des Nations) Tant en Reconnaissant les Frontières de la Turquie… Proclame et recommande la nécessité impérieuse d'un arrangement assurant au peuple Arménien un foyer national prevu par la résolution à telle … Date…[284].

– Լավ է, եթե թյուրքերն ընդունին,– ասաց Դե Բրուքեր,– Ինձ թվում է,– շարունակեց նա,– որ միջազգային իրավունքի մասնագետների պետք կա, որպեսզի ապացուցվի հայերի իրավունքը ընդդեմ Ազգերի Լիգի… հոդվածի, և որպեսզի Հայաստանը լեգալ իրավունք ունենա պահանջելու իր հողերը՝ առանց Ազգերի Լիգի … հոդվածի տրամադրությունը խախտելու: Ամեն պարագայի մեջ, լավ է, որ այժմեն Ազգերի Լիգը հասկանա, որ հայերը բնավ համակերպված չեն իրենց ըրած անիրավության, զրկանքներին և պիտի շարունակեն պահանջել, մինչև որ ստանան: Հետևապես, լավ է, որ ձեր հուշագիրը առաջ բերի ընդհանուր վիճաբանություններ, թեկուզ առանց որևէ résolution-ի[285], որը համարվի արդեն եղած:

---

[284] «Ազգերի Դաշնակցությունը *(Ասոցացիա)*, որքան ալ կճանչնա Թյուրքիո սահմանները… կհայտարարե և կհանձնարարե հրամայական անհրաժեշտությունը հայ ժողովրդին ապահովելու ազգային տուն մը, որ նախատեսված է … թվականի որոշումով»:

[285] *Լուծում, որոշում, ռեզոլուցիա:*

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՆԱՆՍԵՆԻ ՀԵՏ

Սեպտեմբեր 9

Միայն այսօր հասավ Նանսենը: Տեսնվեցի այսօր ժամը 12-ին:

Նրան սաստկորեն զբաղեցնում է իր հարուցած՝ Գաղթականների հարցը, որ դարձեր է անձնական վարկի խնդիր: Լավատես չէ: Ասաց, որ իր ներկայացուցիչը տեսնվել է Մոսկվայում Ս. Տեր-Գաբրիելյանի[286] հետ, որ հայտնել է, թե Երևանի կառավարությունը կհամաձայնի յուրաքանչյուր փոխադրվող ընտանիքի հատկացնել 1000 ռուբլի ծախք փոխադրության:

– Բայց, երբ ես հեռագրեցի Երևան՝ Համբարձումյանին (կառավարության պետ), վերջինս պատասխանեց, թե համենայն դեպս իրենց որոշումն այդ մասին՝ չի կարող հասնել Ազգերի Լիգի այս նստաշրջանին: Այսպիսով,– ասաց Նանսեն,– Երևանից ձեռնթափ եղա: Ավելացրեց, որ գերմանացիք տրամադիր են դրամի մեկ մասը տալ:

Շշուկներ են պտտում, թե Նանսեն խորապես վշտացած է Ազգերի Լիգի ընթացքից այս հարցում, մտադիր է հրաժարվել և դուրս գնալ Լորդ Սեսիլի պես:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ Պ. ԳԵՐԵՐՈՅԻ ՀԵՏ

Սեպտեմբեր 10

Բաշալյանի և Մանդելշտամի հետ, որոնք պարզեցին «ըյալ» գույքերի խնդիրը Թյուրքիայում, խնդրելով պ. Guéréro-ին, որպես անդամ Ազգերի Լիգի Խորհրդի, միջամտել այդ հարցը Լահեի միջազգային դատարանին տանելու համար:

Նա ցավ հայտնեց, որ իր միջամտությունը ուշացած է, քանի որ երեք օրից ինք ստիպված է թողնել Խորհուրդը: Խոստացավ, սակայն, այդ հարցը փոխանցել իր հաջորդին, որ նույնքան սիրով կշարունակի:

Այնուհետև անցանք իմ տված Mémoire[287]-ին:

Ես պարզեցի իմ գալու նպատակը՝ հուզել Ազգերի Լիգայում նորեն Հայկական Օջախի հարցը Թյուրքիայում: Խնդրեցի, որ

---

[286] *Սահակ Տեր-Գաբրիելյան – հեղափոխական, կուսակցական, պետական գործիչ, Կոմունիստական կուսակցության անդամ:*

[287] *Հուշագիր:*

ինքը խոսք առնի առաջինը: Կան ուրիշներ, որ կհետևեն:

Նա սիրով հանձն առավ:

– Եվ առավել,– ասաց,– որ իմ կինը հայ է:

Քանի որ միտքը De Brucker-ն էր տվել՝ դիմելու Guérér-ին, անցա և հաղորդեցի նրան այս արդյունքը:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՎԳՈՒՍՏՈ ՌՈՍՍԻԻ ՀԵՏ

Սեպտեմբեր 12

Ավգուստո Ռոսսին Արտաքին Գործոց նախարարի օգնականն է: Նախարարից (Գրանդի) տեսակցություն էի խնդրում, ինձ դրկեց Rossi-ին: Ինքը մեկնելու էր հաջորդ օրը և իրոք մեկնեց: Եկած էր, ըստ մամուլի, կարճ ժամանակով տեսակցություն պատրաստելու Մուսոլինի, Բրիանի և Չեմբերլենի հետ: Նրանց հետ տեսակցություն ևս ունեցավ:

Ռոսսին տեսա այսօր ժամը 4.30-ին, Berges հյուրանոցում:

Զրույցիս նպատակը երկու էր: Նախ՝ խնդրել Իտալական պատվիրակության միջամտությունը մեր տված հուշագրի իմաստով Assemblée-ի[288] մեջ և երկրորդ՝ իմանալ, թե որքա՞ն հավանական են իտալո-թյուրք conflit-ի լուրերը:

Մեր հուշագիրը և իմ գալու նպատակը պարզելեն վերջը, խնդրեցի, որ, ինչպես 1924 թվին, Իտալիան ևս իր ձայնը միացնի Հայկական Հարցի սկզբունքային պաշտպանության:

Ռոսսիի պատասխանը ինձ թվաց վարանոտ ու խեղճ:

– Դուք գիտեք,– ասաց,– որ մենք կասկածելի ենք նկատվում Ազգերի Լիգի որոշ շրջաններու, որպես այդ հաստատության չհավատացողներ: A tort ou à raison[289], մի կարծիք է կազմված, թե մենք հետամուտ ենք Ազգերի Լիգը փչացնելու: Անարդար ու անհիմն կարծիք, որ տարաբախտաբար, որոշ crédit[290] է գտել: Այդ պատճառով մենք ստիպված ենք առհասարակ զգույշ լինել և այնպիսի հարցեր չհարուցանել, որոնք կարող են Ազգերի Լիգի անզորությունը ցայտուն դարձնել: Ձեր Հարցը հենց դրանցից մեկն է: Այս պատճառով մենք ձեռներեց չենք լինի: Ինքս մասնավոր վճռական պատասխան տալ չպիտի կարողանամ: Կհայտնեմ այս բոլորը Շայոլային, որ ի վերջո գլխավոր պատասխանատուն է:

288 *Assemblée (ֆրանս.) - Համագումար:*

289 *A tort ou à raison (ֆրանս.) - Ճիշտ թե սխալ:*

290 *Crédit (ֆրանս.) - Վստահություն, վարկ:*

Այնուհետև նա ուզեց մոտից ծանոթանալ մեր երկրի արդի պայմաններին: Ձեռքիս քարտեզը փռած՝ ես նրան բացատրեցի Կովկասյան և Թյուրքիո Հայաստանի արդի կացությունը, մեր ձախորդությունները և մեր հույսերը: Եվ երբ նկարագրում էի մեր երկրի ավերածն ու ամայությունը, շոշափեցի և՛ քրդերու այժմու վիճակը: Նա հանկարծ հարցրեց.

– Իրա՞վ է, որ քրդական ապստամբությունը վերջնականապես ճնշվել է:

Ես բացատրեցի, թե դա այնքան էլ ճիշտ չէ և թե քրդական բռնկումները դեռ շատ երկար կարող են շարունակվել, նկատի առնելով երկրի աշխարհագրական պայմանները և քրդերի ցեղական խառնվածքը: Միաժամանակ պարզեցի հայ-քրդական այժմու հարաբերությունները:

Պարզ էր, որ Քրդական Հարցը նրան մասնավորաբար հետաքրքրում էր:

Զրույցի ընթացքին ի միջի այլոց հարցրի, թե որքա՞ն հավաստի էին մամուլի տված լուրերը իտալո-թրքական conflit-ի հավանականության մասին:

– Բնական է,– ասացի,– որ մամուլի լուրը միշտ ազդում է ամբոխների վրա, և ես չեմ թաքցնի ձեզնից, որ անգամ մեր ժողովրդի որոշ խավեր մինչև այսօր իսկ հույսեր են կապել այդ հեռանկարին: Գիտեք հայության զգացմունքը դեպի թյուրքերը: Այժմ էլ թյուրքերը, որոնց հետ գործակից ենք և համերաշխ և որոնք իրենց դատի պաշտպանությունը մեզնից են սպասում, նույնպես հաճախ մեզ են դիմում իմանալու, թե կարելի՞ է հուսալ այդ ուղղությամբ:

Ռոսսին ժպտաց, մնաց վարանոտ և տարտամորեն, մի բան ծածկող մարդու մտահոգությամբ պատասխանեց.

– Իրավ է, որ թերթերը գրեցին: Իրավ է, որ մեզ վերագրեցին ռազմական պատրաստություններ: Բայց այդ **բոլորը հերյուրված էր որոշ նպատակներով, որոշ պետության շահերն ապահովելու համար: Երբ նա գոհացավ, այդ խնդրի վրա լռություն եղավ:** Իտալիան որևէ արշավանքի պատրաստություն չի անում:

Ես հիշեցի Դե Բրուքերի ասածը նույն հարցի մասին: Ակնարկը Անգլիային էր և Մուսուլին:

Մեր զրույցը վերջացավ:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
JOURNAL DE GENEVE-Ի ԽՄԲԱԳՐԱՊԵՏԻՀԵՏ

Սեպտեմբեր 13

Journal de Genève-ի խմբագրապետ պ. Chappuisat-ին գնացի խնդրելու, որ հրատարակի մեր հուշագիրը իր թերթում, ինչ որ հանձն առավ շատ սիրով: Ապա զրույց եղավ Հայկական և առհասարակ Կովկասյան Խնդիրների մասին:

Նա հետաքրքրվեց իմանալ, թե ինչու՞ մենք Կովկասյան Bloc-ի մեջ չենք:

Ես պարզեցի մեր տեսակետը, թե մեր հարևանների հետ համերաշխության բացարձակապես համոզված կողմնակից ենք, բայց նրանք արդարորեն հաշվի չեն առնում մեր բացառիկ դիրքը, թյուրքական սպառնալիքը, մոտիկ անցյալի դասերը: Այս է խափանարար պարագան իրական համերաշխության:

– Իսկ հանդեպ ռուսների՞,– հարցրեց:

– Մենք էլ բացարձակ անկախության կողմնակից ենք, բայց վերի պարագան առայժմ մեզ խստորեն կաշկանդում է:

– Շատ լավ, հասկանում եմ և դուք այլ կերպ չեք կարող վարվել՝ առանց ձեր Դատը վտանգելու: Կարծու՞մ եք, սակայն, որ կովկասյան ազգերը իսպառ պիտի կտրին ռուսների հետ:

– Բարդ հարց է,– ասացի,– իսպառ կտրելը: Այո՛ և ո՛չ: Այո՛, որովհետև պետք է անկախ լինել, և ո՛չ, որովհետև բացարձակ անկախություն չունեն այսօր նաև մեծ պետությունները, որոնք տնտեսապես իրար իշխում են և իրարից կախված են: Մեզ թվում է, որ ռուսական մեծ պետության են և իրարից ստիպված կլինենք միշտ, թեկուզ իբր անկախ պետություն, հաշվի առնել այս պարագան:

– Գիտե՞ք ինչ,ես ուրախ եմ Ձեզ լսել: Ես հաճախ եմ փորձում այս պարզ ճշմարտությունը հասկացնել մեր վրացի բարեկամներին, բայց իզուր: Այդ մարդիկ իրական տվյալը արհամարհում են: Եվ անձամբ միշտ էլ պաշտպան մնալով ժողովուրդների ազատագրության՝ դժվարանում եմ հավատալ Կովկասի ժողովուրդների բացարձակ անկախության գեթ առայժմ: Սովետներից դուք, իհարկե, ոչինչ ունիք հուսալու: Բայց ապագա դեմոկրատիկ Ռուսիան, կարծում եմ, ձեզ հետ լեզու կգտնի: Այս է իմ տեսակետը:

– Այսպես է մտածում և՛ Ցիբետելլին,– ասացի,– վրացիներն էլ բաժանված են այս հարցում:

Զրույցը վերջացավ: Բաժանվելիս ասաց.

– Journal de Genève sera toujours à votre dispositions. Ici vous etes chez vous[291]:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՄԵՅՋԸՐ ՈՒՈԼԹԸՐ ԷԼԻՈՅԻ ՀԵՏ

Սեպտեմբեր 14

Լորդ Robert Cécil-ի հրաժարվելով, այս տարի Բրիտանական պատվիրակության հետ մեր կապը կտրված էր: Անդամներից ոչ մեկին չեմ ճանաչում: Բարեբախտաբար, Ժընև էր գտնվում վաղածանոթ Captain George Gracey, որին խնդրեցի ինձ հարաբերության մեջ դնել Բրիտանական պատվիրակության որևէ կարևոր անդամի հետ: Captain Grecey-ին շատ սիրալիր կերպով նամակ գրեց Major Walter Elliot-ին, խնդրելով ինձ ընդունել:

Շնորհիվ այս միջնորդության, ես կարողացա տեսնվել այսօր առավոտյան ժամը 9.30-ին (Hotel Richmond-ում) Walter Elliot-ի հետ:

Ենթադրելով, որ Կովկասյան ժողովուրդների (մեր հարևան) քաղաքական Bloc–ը[292] բրիտանական համակրություն ունի, ես սկսեցի հենց այդ խնդրից: Ասացի նախ՝ թե եկած եմ խնդրելու, որ Բրիտանական պատվիրակությունը աջակից լինի մեզ մեր հուշագրի իմաստը պաշտպանելու, երբ հարցը գա Ազգերի Լիգի Assemblée-ի մեջ: Ավելացրի, որ Home-ը անգլիական գաղափար է, և Ազգերի Լիգի առաջին քանաձևը այս մասին պատկանում է Լորդ Robert Cécil-ին: Ասացի նաև, որ մեր այս դիմումը ավելի հեռավոր նպատակ ունի: Կովկասի մեր հարևանները անկախության բնական ձգտումով միացած են մի ճակատով Ռուսաց դեմ: Մենք առայժմ ստիպված ենք դուրս մնալ թյուրքական սպառնալիքի պատճառով: Սակայն, պատրաստ ենք այդ Bloc-ին միանալ, եթե հարթվի հայ-թյուրքական կնճիռը: Եվ դա հնարավոր է, երբ թյուրքերը Ազգերի Լիգի անդամ դառնալ ուզենան: Եվ եթե այդ պահուն Ազգերի Լիգը և մանավանդ մեծ պետությունները, որոնք հայ ազգային Home-ը հռչակեցին, Թյուրքիային խաղաղ

---

291 «Ժուռնալ դը Ժընև» միշտ Ձեր տրամադրության տակ է: Հոս Դուք Ձեր տան մեջ եք:

292 *Բլոկ – Պետությունների կամ քաղաքական կուսակցությունների համաձայնություն՝ միասնական գործողությունների նպատակով:*

ճամփով պարտադրեն որոշումի իրագործումը: Մենք այժմեն ենք հարուցանում այս հարցը, որպեսզի կանխենք Լոզանի դաշնագրի անարդար անակնկալը: Եվ հետո, երբ մենք Թյուրքիո գալուն միայն հայտնվինք, մեր փորձերը և քայլերը կարող են նկատվիլ մի տեսակ սոսկ թշնամական sabotage[293] ընդդեմ մեր հին ոսոխի: Մյուս կողմից՝ մենք երկյուղ ունենք, որ Ազգերի Լիգը, որ վերջին տարիներուն հայկական բուն, արմատական խնդիրը մեկդի թողած, զբաղվեց գաղթականների պալլիաղյուններով[294], ի վերջո կարող է կարծիք ստեղծել, թե հայ ժողովուրդը զոհ է, կամ ընդունել է իր վիճակը, հնազանդվել է իր ճակատագրին: Կուզեինք այս ցավալի մտայնությունը ցրել և թարմացնել իրողությունների մեջ ոմանց խոստումները: Ազգերի Լիգի կրկնակ որոշումները 1920-1921 թվերին և հայ ժողովրդի դրանց կապված սպասելիքներն ու հույսերը: Անցողակի կասեմ, որ հայ ժողովուրդը կարող է մոռանալ թափած արյունը և վրեժխնդրական նկատումներով չտարվել, եթե իրեն վերադարձնեն գեթ իր հայրենի երկրի մի մասը Թյուրքիայում: Ահա քարտեզը (փոեցի քարտեզը), ահա ահագին տարածություններ ամայի, և մեր ժողովուրդը թափառական, անհող, և Ազգերի Լիգը Նանսենի հետ փորձում է ճահիճներ չորացնելով, հայ փախստականներ տեղավորելու: Այստեղ կարգադրվելիք մի ահագին անիրավություն կա: Մենք հավատում ենք, որ Ազգերի Լիգը եթե ունենա բրիտանական կառավարության և նրան համամիտ պետությունների աջակցությունը, պետք է որ կարողանա կարգադրել հայկական Home-ի հարցը: Խնդրում եմ ուշադրության առնել, որ այս հարցի կարգադրությունը նաև Կովկասյան բոլոր ժողովուրդների քաղաքական բախտին կանդրադառնա, հնարավոր դարձնելով Վրաստանի և մեր մյուս հարևանների և Հայաստանի հաստատուն միությունը: Այդ ժամանակ միայն մեր և թյուրքերի միջև կարող են զարգանալ բարի հարևանության զգացմունքները: Ահա՛ այս է իմ գալու նպատակը, և, ինչպես տեսնում եք, մեր խնդիրն ու քայլերը անցնում են մեր հայրենիքի սահմաններից և դառնում են Համակովկասյան շահեր, որով, հավատացած եմ, հետաքրքրվում է Բրիտանական կառավարությունը: Երբ Ազգերի Լիգը հարթի հայ-թյուրքական կնճիռը, միաժամանակ ստեղծած կլինի Համակովկասյան Միությունը:

293 *Sabotage - (ֆրանս.) Սաբոտաժ–Գործի դիտավորյալ տապալում, թաքուն, դիմակավորված հակազդեցություն:*

294 Կիսամիջոցներով:

– Ձեր տեսակետը հասկանում եմ և համարում եմ լիովին արդար և տրամաբանական: Իրավ, որ եթե թյուրքերի հետ գայիք, կնկատվեր մի փոքր տարօրինակ և անհաճո: Ձեր խնդրին ծանոթ եմ: Այս հուշագիրը ես կուսումնասիրեմ: Կխոսեմ պ. Չեմբերլենին ու ըստ այնմ կվարվենք: Դուք անշուշտ ընդունում եք, որ ես ավելին չեմ կարող ասել:

Զրույցը վերջացավ:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
«ԹԱՅՄՋ»-Ի ՆԱԽԿԻՆ ԽՄԲԱԳՐԱՊԵՏ ՍԹԻԴ-Ի ՀԵՏ

Ծանոթ էի Steed-ին Փարիզից և ուրախ եղա հանդիպելով նրան Ժընևում: Խնդրեցի տեսակցություն, որ հաճույքով ընդունեց:

Տեսնվեցի այսօր առավոտ, ժամը 11-ին, Hotel de la Paix: Գիտեի, որ Steed մեր Դատին եղած է միշտ համակիր, բայց դրանից ավելի ինձ հետաքրքրում էին նրա տեսակետները Արևելքի ու առհասարակ ժամանակակից քաղաքականության մասին աշխարհում:

Մեր զրույցը տևեց ամբողջ մի ժամ:

Ես նրան ասացի մոտավորապես այն, ինչ որ ասել էի Mr. Walter Elliot–ին:

I. **Կովկասյան Bloc**-ը. Ես գտնում եմ ձեր հետևած քաղաքականությունը Կովկասում իմաստուն՝ իրերի ներկա կացության մեջ: Թյուրքիո և Ռուսիո փոխհարաբերության մեջ դուք չեք կարող առանց ռիսկի ենթարկելու ձեր ժողովրդի ապագան, քայլել ձեր հարևանների հետ ռուսների դեմ: «C'a serait une folie»[295]: Ես այն կարծիքի եմ, որ ռուսների հետ, անշուշտ ո՛չ բոլշևիկնեչրի հետ, իրար հասկացողությունը հնարավոր է:

Ես. – Մեզ երկյուղ է ազդում Ուկրաինայի անջատումը Ռուսիայից, ինչ որ կարող է ունենալ իրը անմիջական հետևանք Ռուսիո բաժանբաժանումը:

Steed. – Ես բացարձակապես անհնարին եմ նկատում այդ անջատումը: Սվեցկում տեսնո՞ւմ եք: Նա մի երազող է: Առանց Ուկրաինայի Ռուսիան չի կարող ապրել և պետք է անխուսափելիորեն կռվի կամ անհայտանա կամ ընկճի նորեն Ուկրաինան: Բնական հարստություն, կակուղ կլիմա, ծով – բոլորը

295 *«C'a serait une folie» (ֆրանս.) - Սա խելագարություն է:*

Ուկրաինայում են: Ռուսիան չի կարող հրաժարվել այս բոլորից, նա կմեռնի առանց դրանց:

Ես. – Դուք ինձ զարմացնում եք: Ճիշտ այդպես են մտածում և՛ ռուս դեմոկրատները:

Steed. – Որևէ ռուսի հետ որ խոսած եմ, որ քիչ ու շատ հասկանում է մեկ պետության անհրաժեշտ ֆակտորները, նա **ուրիշ** կերպ դատել չի կարող:

Ես. – Մեզ հավատացնում են, որ Բրիտանական կառավարությունը հետապնդում է Ռուսիո անդամահատումը Ուկրաինայի անկախության ճամփաներով:

Steed. – Բնավ մի՛ հավատաք և բնավ ականջ մի՛ կախեք: Ես կզարմանամ, որ Բրիտանական կառավարությունը այդպիսի ծրագիր ունենա, որովհետև դա տղայական է: Ռուսիան ապագա ունի:

II. Մենք և թյուրքերը. –

Steed. – Թյուրքերը մարդ դառնալիք չունին: Ես նրանց մասին խոսել եմ իմ հիշողությունների առաջին հատորում: Թալաաթը իմ ներկայությամբ Վարդգեսին «սիրելի՛ բարեկամ» էր կոչում և սառնարյուն կերպով նրան սպաննել տվեց: Անհնարին ժողովուրդ է այս: Հոխորտում են առայժմ, բայց վերջ ի վերջո վիզերը պիտի ծռեն: Նրանց ռեֆորմները[296] ո՛չ մի արժեք չունեն: Մի փիատեր, ապագան ձերն է: Շարունակեցեք ձեր զգուշավոր քաղաքականությունը: Ժամանակը աշխատում է ձեզ համար: Այո՛, իրավունք ունիք. եթե Թյուրքիան Ժընև գա, ձեր Խնդիրը նորեն պիտի բարձրացնեք: Եվ լավ եք արել, որ եկել եք: Սա ճիշտ ճամփա է՝ ձեր ընտրածը:

Ես. – Մամուլը մի ժամանակ շատ թմբկահարեց իտալո-թուրք կոնֆլիկտի հավանականությունը:

Steed. – Իտալական բլուֆ: Այս մասին ինձ երկար խոսում էր և՛ բարեկամս՝ Victor Berard. «Seulement il était trop logique pour étre juste. Il se trompe malgre l'apparence et la logique»[297].

«Նախ՝ թուրքերը ռազմական կորովը տակավին պահում են, իտալացիք՝ ոչ: Երկրորդ Իտալիո ֆինանսականը մազից է կախված. արվեստական ձևով լիրան բարձր պահելը շատ թանկ է նստում Իտալիային, որ գերի է Ամերիկային: Նա շարժվել չի կարող: Պատերազմը դրամով կլինի: Իհարկե, Մուսոլինին ուզում է

[296] *Վերափոխում, բարեփոխում:*

[297] «Վիքթոր Բերար միայն շատ ծայրահեղորեն տրամաբանական էր արդար ըլլալու համար: Կխաբվի՝ հակառակ երևույթին և տրամաբանության»:

արտաքին հաջողությամբ ներքին դժվարությունները հարթել, բայց նա ի վիճակի չէ: Եվ դա կարող է նրան շատ թանկ նստել:

«Երբ Լոնդոն գաք, ինձ այցի եկեք, այս հարցերի մասին կխոսենք: Առայժմ այստեղից ես գնալու եմ Ամերիկա, ուր մեր Չեմբերլենը բավական ցրտություն է ցանել իր անխոհական ճառերով: Այս մարդիկ Ազգերի Լիգում խոսելիս միշտ մոռանում են, որ աշխարհում հեռագիր կա, և որ մի ժամից Պուլիդը կարդում է նրանց խոսքերը: Երեկ ես ճիշտ ա՛յս էի ասում Չեմբերլենին: Ձեր այս տարվա հուշագիրը ղրկեցեք ինձ, ես կօգտագործեմ ձեր իրձերի համապատասխան եղանակով:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՌԱՈՒԼ ԴԱՆԴՅՈՒՐԱՆԻ ՀԵՏ

Սեպտեմբեր 16

Կանադայի ներկայացուցիչները միշտ պաշտպան են եղած մեր Դատին, մասնավորապես պ.Dandurand: Նրա հետ տեսնվեցի այսօր Salle de Réformation-ի մեջ:

Ես պարզեցի նրան իմ mission-ը և մեր հուշագրի իմաստը: Ես անմիջապես նկատեցի, որ Սովետ Հայաստանը և Նանսենի ծրագիրը նրա միտքը իսպառ շփոթել են: Հայկական Հարցը նրա համար Նանսենի ծրագիրն է:

Շատ ուշադրությամբ և անվերջ հարցեր տալով ճգնում էր հասկանալ իմ բացատրած մեր քաղաքականությունը: Իբրև իրավագետ, անմիջապես կառչում էր իրական փաստերին: Եվ երբ իմ խոսքերից եզրակացրեց, որ մենք հետամտում ենք ետ ստանալ մեր հողերը Թյուրքիայից, նա մի գյուտ արածի պես հանկարծ ասաց:

– Բայց թյուրքերը չեն տա այդ հողերը:

Ես ասացի, որ մեր նպատակն է թյուրքերից այդ պայհանջն անել Ազգերի Լիգի միջոցով, երբ նա գա Լիգի անդամ դառնալու:

– Այդ հասկանում եմ,– ասաց,– բայց Ազգերի Լիգը ի՞նչ իրավական հող ունի այդպիսի պահանջ դնելու թյուրքերին:

Ես հիշեցրի Ազգերի Լիգին 21 և 22 թվերի կրկնակ որոշումները, որոնք իսպառ անկախ են Սևրի դաշնագրից:

– Հասկանում եմ,– ասաց,– բայց այսօր, ի՞նչ պիտի լինի մեր անելիքը:

– Այսօր,– ասացի,– Հայաստանի բարեկամները, նկատի առ-

նելով Նանսենի ծրագրի ձախողանքը, պետք է որ Հայկական Home-ի մասին եղած որոշումները կրկին իրենց ճառերի նյութ շինեն՝ թարմացնելու համար և՛ հասարակաց կարծիքը, և՛ Ազգերի Լիգի հիշողությունը, որ, ինչպես նկատում եք, շատ բան է մոռացության տվել:

Dandurand ասաց, թե կխոսի Նանսենի հետ և միասին կորոշեն իրենց անելիքը:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՆԱՆՍԵՆԻ ՀԵՏ

17 սեպտեմբեր

Այսօր առավոտ, ժամը 10.30-ին, Ազգերի Պալատում տեսակցություն ունեցա Նանսենի հետ: Ես պարզեցի նրան մեր հուշագրի իմաստը և իր գալու նպատակը: Իր առաջին իսկ բառերից ինձ համար պարզ եղավ, որ պ. Նանսեն, տարաբախտաբար, միանգամայն սխալ համոզումն ունի մեր ժողովրդի **քաղաքական** իրական ձգտումների մասին: Նրան մոլորեցրել են մեր հայրենակիցներից ոմանք՝ կա՛մ Երևանում, կա՛մ այստեղ՝ Ժընևում: Այս մասին մի քանի օր առաջ ինձ նախազգուշացնում էր Դե Բրուքերը, որ շատ մոտիկից գիտե Նանսենին:

Նանսեն, նախ, դառնորեն գանգատվեց մեծ պետություններից և Ազգերի Լիգից:

«Ահա չորս տարի է,– ասաց նա,– որ ինձ հանձնել են Ազգերի Լիգի բարձր Commissaire-ի mission-ը հայ և ռուս փախստականներին հոգալու համար: Չորս տարի է, որ ես ահագին ճիգեր եմ արել, ճամփորդություններ կատարել, ծրագրեր կազմել հայ գաղթականները Սովետական Հայաստանում գեթ մասամբ զետեղելու համար: Եվ ահա վերջին պահուն, երբ ես Մոսկվայի և Երևանի հաճությունն ունեմ նրանց ընդունելու, Ազգերի Լիգը մերժում է ինձ իմ պահանջած թեթև վարկը: Ո՛չ, ես այսպես թողնել չեմ կարող. սա մի վրդովեցուցիչ փաստ է: Ես երեկ խոսեցի Չեմբերլենի հետ և ասացի այս բոլորը: Նրա պատասխանը վիրավորական էր և անարդար: Նա, ուզածս վարկի մերժումը բացատրելու համար, ասում էր, թե՝ «Ի՞նչ անենք, մենք chaumeur-ներ[298] ունենք, մեր ֆինանսները ծանրաբեռնված են»: «Ձեր ֆինանսները ծանրաբեռնված են,– պատասխանեցի,– դուք chaumeur-ներ ունիք, մի

[298] Հավանաբար տպագրական վրիպակ է. կամ՝ chômeur- գործազուրկ, կամ՝ chaume-հյուղ:

փոքրիկ գումար խնայում եք հայ ժողովրդին, որ ո՛չ միայն իր կայքը, ստացվածքը չխնայեց ձեզ համար, այլև իր մեկ միլիոն զավակների կյանքը»: Արդարև, զզվելի անիրավություն է այս,– շարունակեց Նանսեն,– որ ես ստիպված եմ հրապարակ հանել մի գրքով, որից շատերը դժգոհ կմնան: Բայց փույթ չէ: Մեկ միլիոն հայ է ջարդված – մեկ միլիոն առնվազն,– շեշտեց նա,– և այսօր այդ ժողովրդի մնացորդների հետ՝ այսպիսի զզվելի վարմունք: Ո՛չ, սա անհանդուրժելի է: Եթե ուրիշ գրվածքի չեն հավատում, թո՛ղ կարդան դր. Լեփսիուսի գիրքը: Գերմանացի է, կասկածից դուրս է՝ ինչ որ գրել է Թյուրքիո կատարած սարսափների մասին: Ես գրում եմ, կտեսնեք, թե ի՛նչ կգրեմ:

Նանսենի վրդովմունքը այնքա՜ն մեծ էր, որ ես դժվարանում էի նրան օրվա գործնական խնդիրներին բերել:

Ես. – Եվ ահա հենց այս պատճառով է՝ մենք չենք կարող հրաժարվել Թյուրքաց Հայաստանից: Կովկասահայ հողերի քանակն ու որակը տեսած եք անձամբ: Սովետական կառավարությունը շատ վայր ի վերո լուրեր ու բեկլամներ[299] է անում իր արած-չարածի մասին, մեծ մասամբ՝ սուտ, չափազանցրած, բայց ճիշտ է ասում, երբ հայտարարում է, որ Սովետական Հայաստանում հող չկա ներգաղթի համար: Գուցե գիտեք, որ հակառակ 10-15 հազար գաղթականների, որ անցան Հայաստան վերջին տարիները, հարյուր հազարի չափ մարդ է հեռացել Հայաստանից: Պարզ է, որ ապրել չի լինում: Սրան դարման է պետք: Եվ դարմանը՝ Թյուրքաց Հայաստանն է: Նայեցեք այս քարտեզը (Մենք փռեցինք Հայաստանի քարտեզը): Ահա այս բոլոր տարածությունը ամայի է թյուրքաց ձեռքին, և նրանք երբեք չպիտի կարողանան բնակեցնել:

Նանսեն. – Ամայի է և այս,– նա ձեռքը տարավ Կարսի և Սուրմալուի վրա:

Ես. – Անշուշտ, իրավունք ունիք: Արդ՝ չե՞ք գտնում, որ ժամանակը հասած է, քանի որ Ձեզ մերժում են այդքան չնչին աջակցություն, մեր ճիգերը ուղղենք դեպի Թյուրքաց Հայաստան:

Նանսեն. – Ես էլ գիտեմ, որ այդ հողերը պարապ են: Ես գնացի մինչև Արաքսի ափերը և նայում էի Սուրմալուին, ամբողջը դատարկ է: Կարծեմ Մասիսի շուրջը քյուրդեր կան:

Ես. – Նրանց էլ վերջերս թյուրքերը գաղթեցրին, փչացրին:

Նանսեն. – Բայց հայերն ինձ ասում էին միշտ, թե **պետք չէ**

[299] *Գովազդ, ռեկլամ:*

Թյուրքիային գրգռել նորանոր պահանջներով. հայերին նոր վնասներ կտան:

Ես. – Պարոն Նանսեն,– ասացի,– թյուրքերն էլ ի՞նչ պիտի անեն, որ չեն արել: Դա միանգամայն սխալ հայեցակետ է: Հայ ժողովրդի միակ ցանկությունն իր հայրենի հողերի վերագրավումն է, և դրանից նա չի հրաժարվի երբեք: Հայկական Դատը միայն հայ փոքրաթիվ գաղթականների տեղավորման խնդիր չէ:

Նանսեն. – Օ, ոչ, ես էլ ճիշտ Ձեզ պես եմ հասկանում Հայկական Դատը, բայց ինչպե՞ս անել, քանի որ թյուրքերը կմնան անզիջող:

Ես. – Հասկանում եմ Ձեր հարցը: Մեր էլ մտահոգությունն այդ է: Մեր ցանկությունն է՝ գեթ առայժմ, թույլ չտալ, որ մեր Հարցի վրա այս սկսված կիսամիջոցներով մոխիր ցանվի և հասարակաց կարծիքը մոլորվի: Եվ հետո, Ազգերի Լիգի երկու հստակ որոշումները կան 1921 և 1922 թվերին Հայ Ազգային Օջախի մասին: Այս ժողովը չի կարող ժխտել իր նախընթաց որոշումը:

Նանսեն. – Սևրի դաշնագիրը չվավերացվեց, սակայն:

Ես. – Այդ որոշումները՝ Ազգերի Լիգի, կապ չունին Սևրի դաշնագրի հետ, որ արդեն իսկ խախտված էր 1921 թվի Լոնդոնի Conférence-ին և, սակայն, դրանից հետո էլ Ազգերի Լիգը 1922-ին պնդեց Հայ Ազգային Home-ի վրա:

Նանսեն. – Հասկանում եմ, իրավ է: Բայց էլի մնացին թյուրքերը: Ի՞նչպես շորթել նրանցից հայկական հողերը: Կամավ չեն զիջի:

Ես. – Ասացի, նախ, առայժմ հարկավոր է պատրաստել Ազգերի Լիգի տրամադրությունը: Այստեղ իսպառ անծանոթ են մեր Խնդրին և, ըստ երևույթին, այն գոցված են համարում: Երկրորդ՝ կա Թյուրքիո անդամակցության հավանականությունը Ազգերի Լիգին:

Նանսեն. – Եկող տարի հավանաբար...

Ես. – Ահա այդ առթիվ Հայկական Օջախի խնդիրը պետք է, որ հանվի Ազգերի Լիգի և Թյուրքիո առաջ, որպես եղած որոշում, որից Թյուրքիան, չպիտի թույլ տալ, որ խուսափի: Հակառակ պարագային, եթե Թյուրքիան ընդունվի առանց որևէ պայմանի, դա կլինի մեզ համար երկրորդ և ավելի սարսափելի հարված Լոզանից հետո:

Նանսեն. – Ձեզ հասկանում եմ: Թողե՛ք, որ խորհիմ: Համենայն դեպս, ես պիտի խոսեմ Assemblée-ում:

Ես ասացի, որ իր խոսքին հետևողներ կլինեն:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՖԻՆԼԱՆԴԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՀԵՏ

Սեպտեմբեր 19

Շնորհավորեցի իրենց ընտրությունը Ազգերի Լիգի Խորհրդի մեջ և շնորհակալություն հայտնեցի իր կառավարության բարյացակամ վերաբերմունքի համար՝ հանդեպ հայ փախստական անհատների, որոնք անցել են իրենց սահմանները:

Նա ասաց, որ մոտիկից ծանոթ է Հայկական Հարցին, կարդացել է Մանդելշտամի գիրքը և մի ուրիշը, երկհատոր, անունը չհիշեց, որոնք իր վրա խորը տպավորություն են թողել:

Այնուհետև մենք անցանք Հայկական Հարցի ներկա վիճակին: Ես բացատրեցի և հանձնեցի իրեն մեր հուշագիրը և բացատրական նոտան:

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՐԻՍՏԻԴ ԲՐԻԱՆԻ ՀԵՏ

Սեպտեմբեր 24

Այսօր, սեպտեմբեր 24-ին, տեսնվեցի պ. Բրիանի հետ (Արտաքին Գործոց նախարար Ֆրանսայի):

Ես նրան մի քանի խոսքով բացատրեցի հայ ժողովրդի ակնկալությունները և հույսերը և, մյուս կողմից, Ազգերի Լիգի բռնած ընթացքը մեր հանդեպ, որ խորապես նվաստացուցիչ լինելով, որևէ շահ չունի: Ակնարկեցի ծրագրած կոչին, որ Ազգերի Լիգի Խորհուրդը որոշել է վերստին ուղղել ազգերին գաղթականների համար:

– Եվ, մյուս կողմից,– ասացի,– որ իսպառ մոռացության տրված է Հայկական Հարցը, և այն, որ Ազգերի Լիգը երկու անգամ որոշում է կայացրել Հայ Ազգային Home-ի համար:

Բրիան. – Բայց ի՞նչպես իրագործել Home-ը:

Ես. – Գիտեմ, այդ հարցը ծանրակշիռ է: Բայց չէ՞ որ թյուրքերի հավանական մուտքը կա Ազգերի Լիգի մեջ:

Բրիան. – Ոչ, Թյուրքիայի մուտքը Ազգերի Լիգի մեջ դեռ այդպես շուտ չի լինի, համենայն դեպս ո՛չ մոտիկ ժամանակներում: Բայց ենթադրենք, որ դա լինելու է, օրինակ, եկող տարի:

Ես. – Այդ ժամանակ հայկական տեսակետից երկու պարագա կա, որ պետք է հաշվի առնել. ա) այն, որ Լոզանի դաշնագրով Թյուրքիո և Հայաստանի սահմանները ձգված են բաց և, պետու-

թյունները ճանաչելով Թյուրքիո բոլոր սահմանները հիշյալ Դաշնագրով, լռելյայն չեն ճանաչել Թյուրքիո արևելյան սահմանները: Անշուշտ, սա առանց դիտավորության չէ. բ) Ազգերի Լիգան երկու անգամ՝ 1921 և 1922 թվին, վճռապես ճանաչել է, որ հայերը իրենց Ազգային Օջախը պետք է ունենան Թյուրքաց Հայաստանում: Այս որոշումներից նա չի կարող հրաժարվել: Այստեղ է մեր Խնդրի էությունը: Հետևապես, երբ որ Թյուրքիան ներկայանա, Ազգերի Լիգը պարտական է հարուցանել Հայոց Ազգային Home-ի խնդիրը և լուծել խաղաղ ճամփով: Այսօր ինչ որ կատարվում է Ազգերի Լիգի մեջ, հայերի համար իրապես բարեգործություն է և բնավ չի կարող և չպետք է նկատվի որպես Հայկական Հարցի զարգացումն:

Բրիան. – Ես Ձեզ հասկացա: Ես Ձեզ հետ համաձայն եմ, որ կատարվածը Հայկական Խնդրի լուծումը չէ և որ դա պարզ բարեգործություն է: Համաձայն եմ նաև, որ երբ Թյուրքիան ներկայանա Ազգերի Լիգի անդամությունը խնդրելու, պետք է որ Հայկական Հարցը նրա առջև դրվի: Այս ճիշտ տեսակետ է և արդար: Իսկ այսօր...

Ես. – Այսօր բնական է, որ դժվար է մեր Հարցի գործնական լուծումը envisagé[300] անել, բայց և չպետք է թույլ տալ, որ նա մոռացվի: Ահա երեք շաբաթ է՝ ես այստեղ եմ, բազմաթիվ մարդիկ եմ տեսել և ցավով նկատում եմ, որ մեր Խնդիրը մոռացված է կամ մոռացվում է: Այս երևույթի դեմ պետք է այդպես հակազդել նորանոր հայտնություններով: Ահա ա՛յս է մեր այսօրվան ուղածը:

Բրիան. – Այո, անհնարին և անօգուտ չէ այդ անել:

Հաջորդ օրը հանուն Ֆրանսիական պատվիրակության արված հայտարարությունը՝ պ. Bastid-ի, համապատասխան էր այս զրույցին:

---

[300] *Envisage (ֆրանս.) - Կանխատեսում :*

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԴԵ ԲՐՈՒՔԵՐԻ ՀԵՏ

Սեպտեմբեր 27

Այսօր գնացի մնաք բարի ասելու Դե Բրուքերի և շնորհակալություն հայտնելու իր հայանպաստ ծիգերի համար: Նա ցավ հայտնեց, որ ավելին չկարողացավ անել ներկա պայմաններում:

– Սակայն,– ավելացրեց նա,– էականն ասվեց, և պետք է հետապնդել: Ձեր խնդիրը նման է,– ասաց,– Դանցիկի Corridor-ին[301]: Ամենքը գիտեն, որ նա պիտի ջնջվի հօգուտ Գերմանիայի, բայց ոչ ոք վճռապես չի դնում այդ հարցը, անգամ Գերմանիան: Ժամանակի պետք կա: Այդպես էլ Հայկական Հարցը: Ոչ ոք չի ուզում այսօր այն դնել և լուծումն պահանջել, բայց և ամենքը գիտեն, որ դա մի Խնդիր է, որ պետք է մի օր լուծվի:

---

[301] *Դանցիկի միջանցք – Դանցիկը լեհական Գդանսկ քաղաքն է: Վերսալի Հաշտության պայմանագրով (1919) դարձել է «Ազատ քաղաք Դանցիգ», որին կառավարել է Ազգերի Լիգան:*

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբրահամ (Աստվածաշնչյան) – 65
Ադոնց – 161, 163
Աթարբեկյան (Աթարբեկով) – 162-164
Ալենպի՝ մարշալ – 220
Անարոնյան Ավետիս – 7, 80, 85, 88, 98, 100, 102-105, 117, 146, 183-184, 186-187, 191, 202, 213-214, 216-222
Անարոնյան Վ. – 7
Անդրանիկ (Զորավար) – 115
Անոն Կիյուշի – 60
Աջեմյան (Աճեմյան) Մ. – 12-13, 27, 29, 70, 103-104
Ավալով Զ. – 73-75, 89, 95, 167
Արարատյան – 152, 159
Արդության – 100
Արմեն Գարո տես Փաստրմաջյան Գարեգին Հարությունի

Բաբաջանյան (տես նաև՝ Պապաջանյան) – 25
Բագրատունի զորավար – 121, 137, 152, 179, 182, 209
Բալդաչցի – 172-179, 204
Բալֆուր (Balfour) Արթուր Ջեյմս – 14-16, 33, 39
Բախմեղին – 29
Բաշալյան Լևոն – 226, 229
Բաստիդ (Bastid) – 242
Բարթու – 127
Բաուման (Bowman) – 17-18, 20-21
Բեյքեր Ռոյ Սթյուարտ (Roy Steward Baker) – 17
Բերար Վիկտոր – 14, 31, 178, 236,
Բերթելո — 44, 52-54, 68, 97, 114-115, 127-128, 135-136, 146, 151-152, 184
Բեքիր Սամի – 154, 159-160, 166, 189-190
Բոնոմ – 208
Բրայս Լորդ - 189
Բրեմոն՝ գնդապետ – 128, 194, 202
Բրիան Արիստիդ – 166-167, 172, 174-175, 179, 188-203, 208, 213, 216, 230, 241
դի Բրուքեր – 215, 225, 228, 230-231, 238, 243
Բուլոն Ֆրանկլին – 190, 209-213
Բուրժուա Լեոն – 21-22, 38-39, 213
Բուքստոն (Buxton) Ալեքսանդր – 71

Գալելի – 146
Գալի (Galli) – 60, 96, 108-109, 132, 153
Գամբետյան Յ. – 156
Գեգեչկորի (Գիգեչկորի) – 206, 209-210
Գերերո (Guéréro) – 229-230
Գերնիե – 219
Գիբբոնս (Gibbons) – 12-13
Գիրս – 27-29, 33
Գյուլխանդանյան Աբրահամ – 80, 83-84, 222-223
Գյուլպենկյան Պ.Գ. – 158-159
Գոշիդա Իսաբուրո (Isaburo Goshida) – 60
Գորդոն (George Anderson Gordon) – 121-123
Գորեչիա – 93
Գորկի Մաքսիմ – 209
Գվարճալածե – 93
Գրանդի – 230
Գրեյսի Ջորջ (George Gracey/Grecey) – 233
Գրէվալածե – 89
Գրիբեն՝ գնդապետ – 49-50, 60
Գրիգոր վարդապետ – 66
Գում (Gunt) Ժան – 15, 25, 130
Գունարիս – 177-179, 204
Գուրո՝ գեներալ – 189, 193

Դամադ Ֆերիտ փաշա՝ Մեծ վեզիր – 39, 106
Դանդյուրան (Dandurand) Ռաուլ – 237, 238
Դեմորսիե (Demorsié) – 127
Դենիկին – 48, 51-52
Դերմոև – 207
Դի Մարտինո – 37
Դիլլոն Էմ. – 24
Դրյումոն (Դրումմոնդ) Էրիկ (Drummond Eric) – 72, 131
Դրո (Կանայան) Դրաստամատ Մարտիրոսի – 80, 83-84, 88
Դումեր – 127

Զամոյսկի (Կոմս) – 133-134
Զավեն պատրիարք – 63-64, 67, 69-70, 78, 87-88, 104, 106
Զաուիրվայն – 211
Զոհրապ – 48

Էլիոտ Մեյջոր Ուոլթոր (Walter Elliot) – 233, 235
Էնֆիաճյան – 117

Թալաաթ,Թալեաթ (Talaat) Մեհմեդ փաշա – 236
Թեքեյան Վահան Գալուստի – 87, 117
Թիլլե (Տիլլի) Ջոն (John Tilley) – 40, 50, 137-139
Թոմա Ալբեր – 68, 225
Թոմսոն գեներալ – 32, 36-37
Թոյնբի (Toynbee) Առնոլդ Ջոզեֆ – 19
Թոփչիբաշև Ալի Մարդան բեյ – 29-30, 69, 73-74, 167, 207, 209-210

Ժիրոֆլով – 211
Ժորես (Jaurés) Ժան – 226

Իոնեսկու Տակո – 124
Իսլամով Շեյխ յուլ – 89

Լանսինգ – 15-16, 18-19, 21, 23
Լապրադել (Lapradelle) – 113-114
Լեյգ – 125-126, 136-137
Լեպիսիեր (Lepissier) – 129
Լևոն VI Զ – 11
Լեպսիուս (Lepsius) Յոհաննես – 239
Լիտվինով – 165
Լլոյդ Ջորջ (Lloyd George) Դեյվիդ – 18, 40-41, 44, 48, 52, 55, 77, 97, 99-100, 109, 157, 190, 208
Լյուդինդորֆ (Լյուդենդորֆ)՝ գերմանացի զորավար – 202, 220

Խատիսյան Ալեքսանդր Հովհաննեսի – 25, 32, 59, 74, 78, 83-84, 88, 138, 142, 152, 159-161, 217
Կակլամանոս – 131
Կամբոն Ժյուլ – 103
Կամբոն Պոլ – 68
Կաստոլդի (Castoldi) – 63, 69
Կարաբեքիր Քյազըմ փաշա – 155, 212
Կլեմանսո (Clémenceau) Ժորժ Բենժամեն – 14-15, 25, 38-39, 44-45
Կոթենիոտիս – 59
Կոչակ – 27-28, 35
Կոշե Դրնի – 226
Կոստանդին – 178
Կորգանյան (Կորգանով, Ղորղանյան)՝ գեներալ – 21, 25, 50, 52, 60, 63-64, 69, 89, 91-92, 115-116, 121-122, 140-141, 206
Կորինի – 108
Կրասսին – 161, 163-165

Հազի փաշա – 118
Հակոբյան Սիմոն – 91-92
Համազասպ (Սրվանձտյան Համազասպ Խաչատուրի) – 80, 83-84
Համբարձումյան – 229
Համիդ Աբդուլ – 190
Հայաչի (Կոմս) – 146, 152-153
Հանրմյան – 115
Հաջինսկի – 30
Հասքել՝ ամերիկյան գնդապետ – 37, 40
Հաբբոբոբ՝ ամերիկյան զորավար – 47
Հարթինգ – 15
Հարվեյ – 181-182
Հարրիկ – 171
Հերբեթ Ժ. (J. Herbette) – 11, 217-218
Հիմանս – 109, 114, 130
Հիսուս – 65

Ղազարյան Գ. – 7, 132
Ղուկասով Պավել Օսիպիչ – 163

Ճավիտ բեյ – 158-159

Մալլետ Լուի – 14, 18-19, 26-27
Մալլինետ Լուի – 15
Մալլո՝ գնդապետ – 48
Մալքոմ (Մալգոմ) – 63, 88, 153, 183
Մակլակով – 29, 33-35
Մամիկոնյան Ստեփան – 38, 74
Մանդելշտամ Անդրեյ Նիկոլաևիչ – 27, 226, 229

Մասեհյան Հովհաննես (Օհաննես) խան – 12-13, 70-71, 73-74, 76
դը Մարտել (Կոմս) – 134
Մաք-Մեզոն – 36
Մելաս Լեօն (Leon V. Melas) – 129 - 130
Մեխտիև – 73, 89
Մետաքսաս – 169-170, 172
Մեռսիե (Կարդինալ) – 197
Միլլրան՝ Միկերան – 68, 97, 102, 118, 137
Միլյուկով – 163
Միրզոյան Ա. – 210
Միրզոյան Տիգրան – 207
Մխրէ – 92
Մկրտչյան – 110
Մյուրե Ա. – 40
Մոնթգոմերի (Montgomery) Ջորջ – 22-23
Մոնրո – 23
Մորգենթաու Հենրի – 36
Մորիս՝ զորավար – 140-141
Մսրյան Դավիթ – 132
Մուսուլինի – 230, 236

Յուսուֆ բեգ – 65

Նանսեն (Nansen) Ֆրիտյոֆ – 225, 229, 234, 237-240
Նէվիոուզ – 86-87, 110-112, 114-115, 117
Նիկոլսոն Ա. – 71
Նիտտի – 97-98, 100
Նորատունկյան – 89, 92,104,106-107, 110-111, 117, 182-183, 185-186, 189, 191, 194-206, 209, 218-221, 223
Նորդքլիֆ՝ Լորդ – 220

Շաթելվորթ – 36
Շայոլա – 57, 97, 230
Շապուհյան – 232
Շերիֆ փաշա – 42
Շեքսպիր – 12

Չայան – 112, 129 - 130, 132, 170, 177
Չայկովսկի – 42-43
Չանքերթենի – 132
Չարդիգնի (Chardigny)՝ գնդապետ – 60, 63-64, 66-67
Չեմբերլեն (Չեմբերլին) – 230, 235, 237-238
Չերնոև Թափա – 159, 167, 169
Չորչիլ՝ Մեծ Բրիտանիայի Ջին. նախարար – 38, 47-48, 50-51
Չիչերին Գեորգի Վասիլևիչ – 222-224
Չխեիձե – 73-76, 89-91, 93-95
Չխենկելի – 187
Չոպանյան Արշակ – 87, 196

Պալեոլոգ – 105-106
Պապաջանյան Ս. – 88, 98, 152, 205
Պապաս Ժան (Jean Papas) – 129
Պերետտի (Պերիտտի) – 134-136, 196, 215-217
Պիշոն Ս. – 9-10, 14-15, 22
Պոիդեբար (Poidebard) – 105
Պոլիտիս Նիկոլայոս – 226-227
Պոռոս Նուբար փաշա – 9, 12-16, 18-19, 23, 27, 31, 41-45, 52, 54-55, 57-61, 63, 67, 69-71, 73-74, 76-79, 82-84, 86-89, 92, 95-97, 101-104, 109-115, 117, 144-146, 151-158
դը Պրեսանսե (Pressensé) Ֆրանսիս – 226
Պուանքարե – 217-222, 227
Պուլիդ – 237

Ջանգիր աղա – 65

Ռաջչի (Մարքիզ) – 15
Ռոսսի Ավգուստո – 230 - 231

Սամադ խան – 170
Սեմպոռն – 32
Սեսիլ Ռոբերթ (Robert Cecil) – 55, 139, 141, 229, 233
Սըվազլի – 209
Սթիդ – 235, 236
Սինապյան – 110-112, 152, 196, 205
Սոյուսբիրի – 55
Սոնինո – 15
Սվաճյան 132
Սվեցկի – 235
Սուքանով – 36, 80
Սֆորցա (Կոմս) – 57, 108-109, 146, 152-155

Վալլաս Հյու (Hugh Campbell Wallace) – 120-121, 124
Վանզիտտար Ռոբերթ (Vansiittart Robert) – 60-63, 69, 84-92, 94-95, 146, 156-158, 166, 183, 187-188
Վանսիպե (Wansipe) – 215
Վարանդյան Միքայել – 13, 38, 57, 91, 152, 161, 209, 222
Վարդես – 48, 236
Վարդրոպ – 80-82, 85
Վենիզելոս Էլեֆթերիոս – 31, 58-59, 72, 97, 101, 107-108, 115-116, 118-120, 122-123, 128-130, 227
Վեսթերման (Westerman) – 12-13, 16-18, 20, 22-23
Վիլսոն (Wilson) Թոմաս Վուդրո – 17-19, 21, 23, 30-31, 38, 101, 106-107, 113, 115-116, 119-120, 122-123, 151-152, 200, 203, 207, 213
Վինավեր – 36
Վրացյան Սիմոն – 161

Տեր-Գաբրիելյան Սահակ – 129
Տեր-Հակոբյան՝ պրոֆ. – 23
Տեֆֆիկ փաշա – 102-103
Տիգրանյան Ս. – 20
Տիտոնի – 39, 130-131
Տյուրմեր Պ. – 139
Տորրիտա Տեղլա (Մարքիզ) – 213-215

Ռեչիտ բեյ – 118
Ռիզե Թէֆիկ բեյ – 118
Ռոմանոս – 58-59

Ցիրեսելի – 232

Ուայթ – 15, 43
Ուիլսոն տես Վիլսոն

Փաստրմաջյան Գարեգին – 27, 48, 159
Փափազյան Վահան (Կոմս) – 205
Փիրալյան – 89, 91
Փիրումով – 225

Քամերեր – 60, 62, 68-69, 146, 152
Քաջազնունի Հովհաննես Ռուբենի – 33, 35
Քեմալ Մուստաֆա – 39, 41, 47-49, 51, 72, 98, 108, 116, 138, 143, 155, 186, 193, 199, 211-212
Քոռ Ֆիլիպ – 40-41, 46-48
Քորզոն – 40-41, 48, 50, 77-87, 89, 94, 97, 109, 138, 146, 150-152, 158, 166, 182-188, 208, 213
Քյազիմ Կարա Բեքիր փաշա տես Կարա Բեքիր փաշա
Քոչարյան Հ. – 7

Օհանջանյան Համո (Համազասպ) – 13, 27, 29, 41-42
Օսբորն – 139, 142-145, 180-181
Օ'Քոնոր – 189

Ֆից-Մորիս (Fitz Maurice) – 48
Ֆնդկլյան Գ. – 156
Ֆոչ՝ Մարշալ – 97, 101, 221

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ագուլիս - 81-82
Աղանա - 135, 152, 194, 199
Աղրբեյջան - 25-30, 33, 37, 47-48, 50-51, 64, 71, 74, 81, 91, 95, 100-101, 108, 133, 159, 165, 167, 173, 201
Աթենք - 120, 169
Աթիներ - 61, 65, 93-94
Ալեքսանդրապոլ - 22, 148, 150, 152, 158, 160, 223
Ալեքսանդրիա - 62
Ախալքալակ - 27, 30, 79, 90, 93
Ամանոս - 56, 199
Ամանոսի Հայ Հանրապետություն -115
Ամերիկա՝ ԱՄՆ - 15, 19-20, 23-25, 28-29, 31, 36, 38-39, 41, 43, 48-49, 71, 82, 137, 171, 175-176, 178-179, 181-182, 196, 201,208, 219, 227, 236-237
Անատոլիա - 115, 137-138
Անգլիա - 15, 19, 20, 25, 38-43, 47, 52, 60-61, 72, 79, 82, 85, 116, 119, 131, 136-138, 178-180, 212, 218, 221, 227, 231
Անդրկովկաս - 30, 80, 126, 133, 180, 187
Անկարա - 157-159, 161, 166, 175-176, 190, 194, 198, 203, 211-212, 219-220, 227
Անվերս՝ Անտվերպեն քաղաքի (Հյուս. Բելգիայում) ֆրանսերեն անվանումը - 132
Ավդանիստան - 162
Ասիա -11, 26, 29, 62, 222
Ատալիա՝ քաղաք Կիլիկիայում - 24
Արաբիա - 56
Արաքս գետ - 150, 239
Արաքս երկաթուղային կայարան - 150
Արդահան -10, 92, 183, 193, 212
Արդեններ՝ բարձրություն Բարձր Բելգիայում - 114
Արևմտյան Ասիա (Western Asia) - 17
Արճեշ - 81
Արփաչայ գետ - 150
Աֆոն-Գարահիսար - 130

Բաթում - 20, 38, 61-62, 72, 85, 90-95, 105, 108, 134, 140
Բալկաններ - 67, 201
Բաքու - 20, 25, 27, 32, 55, 62, 81, 89, 165, 180, 187, 202, 220
Բելգիա - 72, 114, 197, 201, 215
Բեյրութ - 62
Բեսարաբիա - 10, 33
Բիբլոս - 66, 69, 101, 160, 198, 200
Բյութանիա - 169
Բորչալու - 79, 93
Բրազիլիա - 227
Բրեստ-Լիտովսկ - 10
Բրիտանիա - 84, 212
Բրյուսել - 115, 130, 132
Բուլոն - 107

Գդանսկ - 243
Գերմանիա - 18, 44, 208, 214, 220, 243
Գոնիա - 64

Դանցիկ - 243
Դերսիմ - 66
Դիարբեքիր - 135
Դյորթ-Յոլ (Ռումբանիե) - 194, 202
Դրիբոլի (Տրիպոլի) - 200

Եգիպտոս - 20, 201
Ելիսեյան դաշտեր - 203
Եվրոպա - 7, 17, 35, 46, 54, 101, 115, 137, 171, 175
Երևան - 81, 83, 86, 88, 99, 104-105, 117, 126, 129, 137, 163, 223, 229, 238
Երզնկա - 56, 62-63, 70, 100, 151, 200

Զանգեզուր - 79-82, 84
Զանգիբասար - 80, 84
Զեյթուն - 199
Զմյուռնիա - 31-32, 63, 108, 138, 173, 191, 201, 209, 221

Էջմիածին - 80-81, 84
Էսթոնիա - 134
Էրզրում - 53, 56, 63, 70, 92-93, 96-101, 109, 125, 128, 137, 140, 155, 160, 198

Թավրիզ - 224
Թեհրան - 170
Թիֆլիս - 20, 32, 59 126
Թյուրքա-Հայաստան տես *Հայաստան (Թյուրքաց)*
Թրակիա - 138, 173
Թուրքիա (Թյուրքիա) - 24-25, 36, 39, 47, 53-54, 56-57, 63, 67, 71-72, 80, 92, 99, 106, 109, 120, 126, 131, 133, 138, 143, 147, 149-151, 157, 162, 165-166, 168-169, 172-173, 175, 177, 180, 183, 185, 193, 196, 205-206, 210, 216-219, 221-222, 226-229, 233-237, 239-242

Ժրմն - 131, 141, 139, 225, 233, 235-236, 238

Իսպանիա - 227
Իտալիա - 15, 39, 42, 48, 60, 82, 119, 131, 166, 179, 214-215, 230, 236

Լազիստան - 61, 65, 93, 204
Լահե - 229
Լատվիա - 134, 162
Լեհաստան - 10, 26, 62, 69, 133-134, 165, 184
Լեռնաստան - 26
Լիտվա - 134, 162
Լյեժ՝ գավառ Բելգիայում - 114
Լոզան - 6, 8, 227-228, 234, 240-241
Լոնդոն - 7, 12, 38, 40-41, 44-45, 50, 54-55, 57-59, 63, 68-69, 71, 73, 77, 85-89, 96, 122, 131, 137, 139-140, 142, 144-146, 153, 156-161, 168, 177-182, 187-188, 190, 196, 199, 202, 204, 209, 213, 237, 240
Լոռի - 27, 30, 79, 93

Խարբերդ - 60-64
Խրամ գետ - 13
Խուրշիդ - 200

Կանադա - 42
Կաղզվան - 10, 127, 193
Կանն - 207, 213, 215
Կարս - 10, 26, 92, 135, 137, 148, 158, 180, 183, 192-193, 207, 212, 223, 239
Կիլիկիա - 11-14, 16, 18, 20, 24-25, 28, 36, 41, 43, 46, 52-53, 55-56, 63, 68, 78, 105, 107, 115, 124-129, 135-136, 143-145, 147, 151-152, 175-176, 179-186, 189-190, 192-199, 201-203, 210, 212, 216, 218, 221
Կոլիստինյանց վանք - 11
Կ. Պոլիս - 18, 24, 47-48, 62-63, 99, 104, 106, 108, 115, 132, 136, 138, 140, 143, 157, 160, 173, 201
Կովկաս - 18-21, 24-27, 32, 36-38, 64, 66, 73-74, 76, 79, 81, 89, 134, 143, 149, 162, 167-168, 173, 178, 180-181, 184, 188, 200, 207-208, 213, 217-218, 222, 226, 232-233, 235
Կովկասյան Հայաստան տես *Հայաստան (Կովկասյան)*
Կովկասյան Հանր. - 126
Կովկասյան Հանր. Ֆեդերացիա - 159-160
Կովկասյան Միություն - 168

Հալեպ - 16, 20
Հաճըն - 78, 199
Համակովկասյան Միություն - 234
Հայաստան - 19-21, 23-26, 28, 29, 32-34, 36, 38, 41-42, 46-51, 53, 56, 60, 62, 64, 66-69, 72, 79, 85, 91-96, 98-99, 101, 108-109, 114-118, 120-121, 124-125, 127-139, 142, 144-145, 147-149, 152, 155, 157- 158, 162, 164, 166-168, 171-175, 179, 181-183, 195, 199-200, 202-208, 211, 213-219, 221-223, 228, 237, 239
Հայաստան (Թյուրքաց)՝ Թյուրքա-Հայաստան - 10,13-14,17-18, 27, 29, 31, 33, 35, 37, 42, 79, 100, 113-114, 142,145,147-149,155-156,158,161-162,168,182,193,213-214, 217-218, 220, 223, 231, 239
Հայաստան (Կովկասյան)՝ Կովկասյան Հայաստան - 10, 13, 20-21, 29, 31, 33, 37, 42, 113, 143, 145-148, 154-156, 158, 162, 168, 182-183, 193, 195, 200-201, 206, 219-220, 223, 225, 231

Հայաստանի Հանրապետություն - 5, 7, 9, 10, 13-14, 16-19, 21, 24- 25, 100, 102, 177
Հայաստան (Հարավային) - 186
Հայաստան (Հյուսիսային) - 78, 186
Հայաստան (Միացյալ) - 28, *34, 114, 117, 178*
Հայաստան (Սովետական) - 180, 183, 225, 237-239
Հայաստան (Վերին) - 199, 203
Հայկական Կայսրություն - 12
Հայոց ծոց - 115
Հաջին - 199, տես նաև *Համրն*
Հեքքար - 121
Հէջջազ - 119
Հյուսիսային Լեռնականներ - 30
Հյուսիսային Կովկաս - 17, 30, 64
Հյուսիսային Կովկասի Հանրապետություն - 30
Հնդկաստան - 20
Հոլանդիա - 42, 90
Հռոմ - 40, 57-58, 92, 108, 131, 142, 178, 180, 209, 213
Հունաստան - 107, 120, 172, 175, 178-179, 201, 226

Ղարաբաղ - 13, 20, 25-27, 30, 32, 37, 50-51, 79, 82

Ճապոնիա (Ճափոն) - 15, 60, 119, 146, 208
Ճորոխ - 92-94, 96, 200

Մամախաթուն - 70
Մամուրե ուլ Ազիզ տես *Խարբերդ* - 135
Մանչեստր - 142, 156
Մասիս - 239
Մարաշ - 115, 129, 199
Մարզվան - 199
Մեծն Բրիտանիա - 137, 180, 185
Մեսոպոտամիա - 136
Մերձավոր Արևելք - 138
Միջագետք - 41, 56, 136, 138-139, 221
Միջերկրական ծով - 11-13, 28, 46, 138
Միջին Ասիա - 173
Մոսկվա - 138, 163-165, 193, 223, 229, 238
Մոսուլ քաղաք Իրաքում - 231
Մուշ - 69, 160, 198

Նախիջևան - 20, 79, 81-82,150
Նեղուցներ - 136, 138
Նովո-Մելիմ - 127
Նուխի - 81

Շամախի - 81
Շարուր-Դարալագյազ - 20
Շվեդիա - 90
Շվեյցարիա - 42, 54, 62, 90

Պաղեստին - 136, 220
Պարսկաստան - 12, 20, 43, 64, 139, 162, 208
Պոլիս տես *Կ. Պոլիս*
Պոնտոս - 58-59, 107, 119, 136, 200, 203-204

Ջենովա - 208, 222

Ռումանիա (Ռումինիա) - 10, 33, 124, 185
Ռուսաստան (Ռուսիա) - 12, 28-29, 34-35, 42, 54, 64, 134, 143, 147, 155,157, 160-162, 164, 184, 188, 208, 223, 225-226, 232, 235-236
Ռուսաստան (Սովետական) - 133,176, 183-184

Սամսոն քաղաք-նավահանգիստ - 24
Սան Ռեմո (Սան-Ռեմո) - 92, 96, 151
Սարդարապատ - 8
Սարիղամիշ - 127
Սաուդյան Արաբիա - 119
Սեբաստիա - 64
Սեն-Դենի գերեզմանատուն Փարիզում - 11
Սև ծով - 54, 56, 62, 64, 67, 91, 96, 128
Սևր - 6, 8, 117, 157, 162, 172, 174, 177-178, 181, 185-186, 191, 193, 195, 201-202, 206-207, 214, 218, 220, 237, 240
Սիպտկնոց լեռներ - 66
Սղերդ - 121
Սյունիք - 167
Սյուրիա (Սիրիա) - 11, 56, 136, 176, 194, 221
Սպա - 114-115
Սուրմալու - 20, 80-81, 84, 150, 183, 193, 239

Վան - 12, 69, 101, 158, 160, 198
Վանա ծով - 200
Վաշինգտոն (Ուշինգթըն) - 120
Վարշավա - 134
Վերսայլ - 15, 243
Վոռ գետ Բելգիայում - 114
Վրաստան - 30, 33, 50, 64, 79, 91, 95, 148, 156, 159, 167, 201, 222, 234

Տավրոս - 56
Տավրոս (Հայկական) - 200
Տերսիմ (Դերսիմ) - 60-61
Տիգրանակերտ (Դիարբեքիր) - 64, 135
Տիգրիս գետ - 135
Տրապիզոն - 58-62, 101, 116, 119, 121-125, 128, 136-137, 140-141, 151, 154, 156-157, 200, 203
Տրիպոլի - 60

Ռիզե (Ռիզա) - 61-62, 64, 93-94, 122, 160

Ուկրաինա - 235-236
Ումրանիե տես *Դոորթ-Յոլ*
Ուշինգթըն (Վաշինգտոն) - 171, 176

Փարիզ -16, 29, 33-34, 39, 42, 44, 48, 52, 55, 58, 61, 63, 78, 84, 86, 89, 96, 102-103, 106, 108-109, 117, 119, 121, 123-124, 127, 129, 132, 134, 137, 139, 141-142, 159, 166-167, 170, 172, 196, 203, 205, 208-209, 213-214, 226, 235
Փոքր Ասիա - 227
Փոքր Հայք - 199

Քենսինգտոն - 85
Քյուրդիստան - 67, 173, 231

Օսմանյան Կայսրություն - 118

Ֆինլանդիա - 10, 33-34, 241
Ֆրանսիա - 9-12, 18, 25, 33, 38-39, 41-43, 46, 48, 52-56, 60, 68, 72, 78, 82, 105, 115-116, 119, 126, 129, 131, 134-135, 137, 145, 147, 152, 166, 174-176, 178-179, 181, 185, 190-192, 194-201, 203, 212-213, 215-218, 220-221, 226-227

ԱՀԱՐՈՆՅԱՆ ԱՎԵՏԻՍ ԱՌԱՔԵԼԻ

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՎՐ ԵՎ ԼՈՋԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԳԻՐ

1919-1927

Հրատարակության պատրաստեց՝ Լ. Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Կազմի ձևավորումը՝ Կ. Հ. ԱՎԱԳՅԱՆԻ

Ստորագրված է տպագրության 10.07. 2001 թ.:
Չափը՝ 84 x 108 $^{1}/_{32}$: Թուղթ՝ օֆսեթ:
Հրատ. 12,9 մամուլ, տպագր. 7,88 մամուլ= 13,24
պայմ. մամուլի: Տպաքանակ՝ 500 : Պատվեր՝ 80:

Երևանի համալսարանի հրատարակչություն. Երևան, Ալ. Մանուկյան 1

Երևանի համալսարանի տպարան. Երևան, Աբովյան 52

9(47.925)
Հ-42

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ